

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յոհան Գալթունգ

**ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՎ
ՓՈԽԱԿԵՐՊԵԼ.**

*Կոնֆլիկտաբանական աշխատանքի
մերաժուրյուն*

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Գ 160

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝ սոց. գ. թ., դոցենտ Ս. Վ. Աստվածատուրով
Անգլերենից թարգմանեցին՝ Լարա Առաքելյանը
Էլեն Քերոբյանը

Յոհան Գալթունգ

Գ 160 ՀԱՂԱՅԱՐԵԼ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊԵԼ. կոնֆլիկտաբանական աշխատանքի ներածություն/Յոհան Գալթունգ: - Եր., ԵՊՀ հրատ., 2017, 314 էջ:

Նորվեգացի աշխարհահռչակ գիտնական, կոնֆլիկտաբան Յոհան Գալթունգի հետազոտությունները հակամարտությունների, բանակցությունների և խաղաղության կառուցման հիմնախնդիրների ոլորտում արդեն վաղուց բազմաթիվ գիտական ուղղությունների, միջազգային և ազգային կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև այդ հիմնահարցերին նվիրված գիտական աշխատությունների համար ընդունվում են որպես հիմք: Սույն գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակումը Յ. Գալթունգի մտահղացումն էր և իր իսկ առաջարկը, որը հղել էր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետին:

Գիրքը նախատեսված է կոնֆլիկտաբանության, բանակցային արվեստի, խաղաղության հետազոտությունների ոլորտում մասնագիտացած և մասնագիտացող սոցիոլոգների, քաղաքագետների, լրագրողների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-5-8084-2215-5

© ԵՊՀ հրատ., 2017
© Յոհան Գալթունգ, 2017

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	6
ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ (Ս. Վ. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՈՎ)	9
ՆԵՐԱԾՈՒՅԹՈՒՆ	12
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. ՄԻԿՐՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ՝ ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ	19
ՕԴԱՆԱՎՈՎ ՃԱՄԺՈՐԴՈՂ ԶՈՒՅԳ	21
ՋԳԵՍՏ	23
ԱՐԵՎ	37
ՋԳԵՍՏԱՊԱՀԱՐԱՆ	46
ԱՆՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ	50
ՄԻԵՍՍԱ ԵՎ ՖԻԵՍՍԱ	64
ԿՈԱՅԵՔ՝ ՈՎ Է ԳԱԼՈՒ ՃԱՇԻՆ	67
ԾՆՈՂՆԵՐԸ, ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ԼԱՎ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ	71
ԿԻՆԸ, ՏՂԱՄԱՐԴԸ ԵՎ ԼԱՎ ԿՅԱՆՔԸ	74
ՖՐՈՅԴԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ	78
ԵՐԵՔՇԱԲԹԻ. ՄԵԶՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՄ	82
ՈԱՍԱՅԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻՑ ՋԵՐԾ ԴՊՐՈՑ	83
ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	87
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	90
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	94
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	101
ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ	104
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ	107
ԿԱՆԱՅՔ, ՏՂԱՄԱՐԴԻՎ ԵՎ ԼԱՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	110
ՇՎԵՅՑԱՐԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ	115
ՄԱՐՔՍԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ	118
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. ՄԱԿՐՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԵՐԻ ՄԻՋԵՎ	124
ԷԿԱՂՈՐ ԵՎ ՊԵՐՈՒ. ԵՐԿԱԶԳԱՅԻՆ ԳՈՏԻ, ԲՆԱԿԱՆ ԶՐՈՍԱՅԳԻ	134

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԵՆԼԱՆԴԻԱ. ՆՈՐՎԵԳԻԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՆ «ՄՈՌԱՑԵԼ» ԵՆ ԻՆՈՒԻԹՆԵՐԻՆ	136
ՀԱՎԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ. ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՅ	140
ԿՈԼՈՒՄԲԻԱ. ԿԱՌՈՒՑԵՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԵՎ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	143
ՌՈՒԱՆԴԱՆ ԵՎ ՄԵԾ ԼՃԵՐԸ. ԵՐԿՕՎԿԻԱՆՈՍ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	149
ՕԼՍԹԵՐ. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ	153
ԷՆԻՍԿԱԴԻ. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ	160
ՀԱՐԱՎՍԼԱԿԻԱ. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ	164
ԻՍՐԱՅԵԼ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ. ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՄԱՅՆՔ	172
ՕՍԼՈՅԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԹԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՑ ԴԵՊԻ ԹԵՐԻ ԵԼՔ	178
ՍԱՆԴԵԼԱ, ԴԵ ԿԼԵՐԿ ԵՎ ՏՈՒՏՈՒ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ	180
ՀԻՆԳՇԱՔԹԻ. ՄԵԳԱ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ	190
I ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ. ԲԵՎԵՌԱՑՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՐԵՎԵՌԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ	194
II ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱԿ-Ը՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ	197
ՀՅՈՒՄԻՍ ԵՎ ՀԱՐԱՎ. ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՈՑՆԵՐ	200
ԳԼՈՔԱԼԱՑՈՒՄ. ԱՅՈ՝ ՆԵՐՔԵՎԻՑ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՐԵՆ	204
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՄԱՐԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ	207
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾ ԷՐ	211
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԼԱՄԸ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՌՈՒՄ ՄԻՄՅԱՆՑ	215
ԱՄՆ-Ը, ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ԵՎ ՄԱՑԱԾ ԲՈԼՈՐԸ. ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ, ԱՅՆՈՒՂՅԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ, ԿՐՈՆ	221

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԳՈՂԵՐԸ.	
ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ.....	226
ԳԱՆԴԻԻ «ՈՉ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ». ԴԻՄԱԴՐԵՔ ՉԱՐԻՆ,	
ՊԱՇՏՊԱՆԵՔ ՄԱՐԴԿԱՆՑ	231
ՈՒՐԲԱԹ. ԽՈՐԸ ՄՇԱԿՈՒՅԹ, ԽՈՐԸ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԽՈՐԸ	
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	239
ԽՈՐԸ ՄՇԱԿՈՒՅԹ.....	241
ԽՈՐԸ ՎԱՐՔԱԳԻԾ	256
ԽՈՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	258
ՇԱԲԱԹ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ	
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	263
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ	270
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	279
ԿԻՐԱԿԻ. «ԹՐԱՆՍԵՆԴ» ՄԵԹՈԴԻ ԱՄՓՈՓՈՒՄ	292
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	306
ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ	307

ՆԱԽԱԲԱՆ

Հեղինակն ավելի քան 40 տարի համդես է եկել որպես միջ-նորդ, խորհրդատու և մասնակից կենցաղայինից մինչև աշխարհաքաղաքական մակարդակի մի շարք կոնֆլիկտներում: Հետագայում նրա փորձն օգտագործվել է ամբողջ աշխարհով մեկ անցկացվող կոնֆլիկտաբանական դասընթացներում:

Կոնֆլիկտները չեն լինում ավելի բարձր կամ ավելի ցածր մակարդակի: Բոլոր կոնֆլիկտները հավասար են և ունեն գերազանցման («սահմաններից դուրս գալու») ու փոխակերպման միջոցով վերհամման միևնույն իրավունքն այնպես, որ կողմերը կարողանան հաշտվել լուծման հետ: Աշխարհաքաղաքական կոնֆլիկտները «ավելի բարձր մակարդակում» չեն, որովհետև պետական գործիչները և դիվանագետներն ունեն բարձր սոցիալական կարգավիճակ: Բոլոր կոնֆլիկտները հավասար են. դրանք չափազանց լուրջ են բոլոր շահագրգիռ կողմերի համար: Կոնֆլիկտները հաղթանակ տանելու կամ պարտություն կրելու խաղեր չեն, այլ հաճախ պայքար են մարդկային բոլոր հիմնարար պահանջներին՝ գոյատևման, բարեկեցության, ազատության, ինքնության համար:

Այս գիրքն ընթերցելու համար չեն պահանջվում հատուկ գիտելիքներ: Ընթերցողից ընդամենը պահանջվում է մի փոքր ճիգ: Փակեք գիրքը, երբ կոնֆլիկտը ձևակերպվել է, և խորհեք՝ ի՞նչ խորհուրդ կտայիք դուք, ի՞նչ կասեիք, ի՞նչ կանեիք: Այնուհետև շարունակեք կարդալ: Որպես նմանօրինակ առաջադրանք՝ ինքնուրույն գտեք մեկ այլ նման օրինակ և խորհեք դրա շուրջ:

Նախ, մի քանի խոսք այն մասին, թե ինչպես են այս օրինակները կիրառվում «ԹՐԱՆՍԵՆԴ» (www.transcend.org) միջնորդական կազմակերպության կողմից ամբողջ աշխարհում անցկացվող դասընթացներում: Մի սենյակ, երկխոսության համար նախատեսված հինգ կիսաշրջանաձև սեղաններ, վեցական անձ՝ տեղավորված յուրաքանչյուրի շուրջ: Բոլորը նստում են դեմքով դեպի

դասախոսը, ով կանգնում է շրջանի կենտրոնում: Նա նկարագրում է կոնֆլիկտն ընդհանուր գծերով՝ ովքե՞ր են կողմերը, որո՞նք են նրանց նպատակները, որտե՞ղ են անհամատեղելիությունները (հակասությունները): Այնուհետև համծնարարություն է տրվում բոլոր մասնակիցներին. ի՞նչ կառաջարկեին նրանք: Կամ էլ երկխոսության համար սեղաններից ընտրվում են ցանկացած երեքի մասնակիցները:

Հինգ, տասը, տասնհինգ ռուպե տևող երկխոսության ընթացքում յուրաքանչյուր սեղան ընտրում է ներկայացուցիչ: Առաջարկները ներկայացվում են, գրի առնվում, տեղի է ունենում քննարկում, արվում են մեկնաբանություններ: Բազմաթիվ լեզուներով քննարկումներ են իրականացվել աշխարհի մի շարք վայրերում: Բացի այդ, «ԹՐԱՆՍԵՆԴ» խաղաղության համալսարանը (ԹԽՀ) նաև առցանց է (www.transcend.org/tpu) և առաջարկում է մի քանի դասընթացներ: Դարձյալ բոլոր մայրցամաքներից ԹԽՀ մասնակիցները բաժանվում են երկխոսության խմբերի, մեկին ընտրում են գրառումներ կատարելու համար, և աշխատանքը սկսվում է: Երկխոսության հիմնական թեմաներն արտացոլված են *«խաղաղության որոնումներ»* (London: Pluto Press, 2nd edition 2002) և *«խաղաղություն՝ խաղաղ միջոցներով»* աշխատություններում (London: Sage, 1998): Մի փոքր խմբում, որտեղ բոլորն ունեն խոսելու հնարավորություն, քննարկումն ավելի ստեղծագործական է, քան մեկ մարդու պարագայում:


Այս գիրքը կարող է ընթերցել նաև հետազոտական խումբը, որ քննարկում է յուրաքանչյուր դեպք: Պարտադիր չէ, որ խումբը համաձայնվի հեղինակի հետ, բայց երաշխավորվում է, որ մասնակիցները շատ բան կսովորեն:

Գրքի գլուխները կրում են շաբաթվա օրերի անվանումները՝ այդպիսով շատ թե քիչ արտացոլելով այն ամենն, ինչ տեղի է ունենում մեկ շաբաթվա ընթացքում: Ծախսեք յոթ օր գրքի վրա՝ միայնակ կամ խմբում (ուսումնական խմբում): Այն Ձեզ՝ որպես սկսնակի կամ մասնագետի, կտա կոնֆլիկտաբանական աշխա-

տանքի հիմք՝ օգնելու այլ մարդկանց և ձեզ: Մի խոսքով, սա տարրական կոնֆլիկտաբանական հիգիենայի ներածությունն է:

Գիրքը հիմնված է ոչ թե երևակայական, այլ իրական կոնֆլիկտների վրա, և դրանց մեծ մասը ներառում է հեղինակի՝ որպես հրավիրյալ միջնորդի փորձը: Երկուշաբթին նվիրված է ներանձնային և միջանձնային (միկրո) կոնֆլիկտներին, երեքշաբթին՝ հասարակության ներսում առկա (մեզո) կոնֆլիկտներին, չորեքշաբթին՝ պետությունների և ազգերի միջև (մակրո) կոնֆլիկտներին, հինգշաբթին՝ տարածաշրջանների և քաղաքակրթությունների միջև (մեգա) կոնֆլիկտներին: *Միկրո, մեզո, մակրո, մեգա՝* մոտիկից դեպի հեռուն: Ուրբաթը և շաբաթը նվիրված են այլ թեմաների, որոնք ընդհանուր են չորս մակարդակների համար, իսկ կիրակին նվիրված է ամփոփմանն ու եզրակացությանը:

Հաջողություն: Խորհե՛ք լավատեսական մտքերի շուրջ՝ օգտվելով գծապատկերից, որի մասին գրքում դեռևս շատ կկարդաք:



*Յոհան Գալթունգ
Կյոթո/Ալֆազ
Ապրիլ 2001/Հունվար 2004*

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Նորվեգացի աշխարհահռչակ գիտնական Յոհան Գալթունգի (Johan Vincent Galtung, ծնվել է 1930 թ.-ին, Օսլոյում, Նորվեգիա) գրչին պատկանող գիրքը, որը ներկայացվում է հայ ընթերցողի դատին, անհերքելի ավանդ ունի խաղաղության հիմնախնդիրների հետազոտությունների գիտական ուղղության ձևավորման և կայացման գործում: Հեղինակի բազմաթիվ գրքերը թարգմանվել և թարգմանվում են տարբեր լեզուներով: Սրանց շարքում իր ուրույն տեղն ունի սույն ձեռնարկը:

Այսօր աշխարհում կան կոնֆլիկտաբանական հետազոտությունների տարբեր դպրոցներ և դրանց համապատասխան տարբեր մեթոդաբանական մոտեցումներ: Յ. Գալթունգի ջանքերի շնորհիվ մաս գոյություն ունի կոնֆլիկտների հետազոտության ձևավորված և կիրառվող հասկացության ապարատ: Միաժամանակ, այս գրքով Յ. Գալթունգը ներկայանում է սեփական հայեցակարգի վրա հիմնված կոնֆլիկտների վերլուծության ձեռնարկով, որը, զարգացնելով կոնֆլիկտաբանական մտածողություն, փայլուն այլընտրանք է բնագավառի այլ դասագրքերին:

Ձեռնարկը հասցեագրված է քաջատեղյակ ընթերցողին: Սակայն, քաջ գիտակցելով ընկալման դժվարությունները, հեղինակը գրքի սկզբում ներկայացնում է իր հայեցակարգային մոտեցումների բովանդակությունը, որոնց շնորհիվ հասկանալի են դառնում կոնֆլիկտաբանական հետազոտության վերլուծության նրբությունները, տարբեր կոնֆլիկտային տարբեր իրավիճակների պատճառները և դրանց կարգավորման առանձնահատկությունները:

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման ամիսաժեշտությունը այն է, որ մենք նախևառաջ ապրում ենք կոնֆլիկտային տարածաշրջանում և անչափ մտահոգված ենք կոնֆլիկտների հանգուցալուծման հեռանկարով: Այդ առումով, հիշարժան է Յ. Գալթունգի առաջին կարճատև այցը Հայաստան 1997 թ. հու-

լիսի սկզբին: Այդ ժամանակ Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնին կից Տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոնում նրա վաղեմի բարեկամ պրոֆ. Լյուդմիլա Զարուբյունյանի նախաձեռնությամբ փորձագիտական հանրությանը և պետական կառույցների ներկայացուցիչներին հեղինակը ներկայացրեց դարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման սեփական տեսակետը:

Երկրորդ կարևոր համգամանքը այն է, որ գիրքը համալրում է հայալեզու կոնֆլիկտաբանական գրականության ձևավորվող գրադարանը:

Իհարկե, ձեռնարկում զետեղված կոնֆլիկտների որոշ օրինակներ ունեն իրենց յուրահատկությունը և պետք է ընկալվեն կոնկրետ մշակութային համատեքստում: Բացի դրանից, որոշ մակարդակի և կոնկրետ կոնֆլիկտների լուծման՝ հեղինակի առաջարկությունները կարելի է վիճելի կամ անիրատեսական համարել: Սակայն, գիրքը կոնֆլիկտաբանական աշխատանքի յուրահատուկ լաբորատորիա է՝ ստեղծված խորը հետազոտողի և տաղանդավոր մարդու կողմից, որը մտահոգված է աշխարհում տարածվող բռնությամբ: Մեծ գիտնականի ջանքերն անշեղորեն ուղղված են եղել խաղաղության նվաճման ճանապարհին հանդիպող կոնֆլիկտների և դրանց հետևանքների հաղթահարմանը: Այդ իմաստով գրքում ամփոփված է նաև կոնֆլիկտների լուծման ոլորտում գործնական հանդիպումների և խորհրդատվական աշխատանքի արդյունքում կուտակված հեղինակի հարուստ փորձը:

Հատուկ շնորհակալության են արժանի թարգմանչուհիները, որոնց անձնվեր աշխատանքի շնորհիվ հաջողվել է հաղթահարել հեղինակի մասնագիտական բարդ լեզվի և կոնֆլիկտաբանական հասկացությունների՝ հայերենին համապատասխանեցման դժվարությունները: Բացի դրանից, հեղինակի էրուդիցիան, կոնֆլիկտների ընդգրկման լայնությունը, տեղեկատվության ծավալը լրացուցիչ բարդություն էին ստեղծում թարգմանության համար:

Կարծում ենք՝ գրքի գլխավոր արժեքն այն է, որ գիրքը կդառնա լավ ձեռնարկ ապագա կոնֆլիկտաբանների համար: Դրանում յուրաքանչյուր ոք կգտնի իր համար կոնֆլիկտի վերլուծության հետաքրքիր օրինակը, ինչը կօգնի մեզանից յուրաքանչյուրին ըմբռնմամբ ու նրբությամբ վերաբերել կոնֆլիկտներին առօրյա և մասնագիտական կյանքում:

*Ս. Վ. Աստվածատուրով,
Երևանի պետական համալսարանի
սոցիոլոգիայի ֆակուլտետի
Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, ս.գ.թ.*

Ներածություն

Հարգելի ընթերցող, այժմ ձեզ անհրաժեշտ է ընդամենը մի թղթյա ժապավեն, ասենք 20 սմ երկարությամբ և 20 սմ լայնությամբ, ու մատիտ: Ժապավենի վերևում գրեք Ա, իսկ հակառակ կողմում՝ ներքևում, գրեք Բ: Այնուհետև բարձրաձայն կարդացեք ներքոգրյալ երկու ցանկություններն ու կրկնեք այնքան, մինչև իրապես *զգաք*, որ դրանք ձեր ցանկություններն են:

Ես ցանկանում եմ գծել գիծ, պարտադիր չէ ուղիղ, որը կմիացնի Ա-ն և Բ-ն:

Ես ցանկանում եմ, որ գիծը չհատի ժապավենի եզրը:

Ձեր խնդիրն ընդունում է երկու նպատակների միջև հակասության ձև: Դուք կարող եք գծել գիծ Ա-ից մինչև Բ, բայց այն կհատի եզրը: Նույնիսկ եթե դուք միացնեք եզրերն այնպես, որ ժապավենն ընդունի փոքրիկ կարկանդակի ձև, Ա-ն և Բ-ն դեռ կլինեն հակառակ կողմերում: Դուք կարող եք խուսափել եզրը հատելուց, բայց այդ դեպքում չեք հասնի Ա-ից մինչև Բ: Դուք կարող եք փորձել գտել փոխգիշերում՝ գնալով Ա-ից գրեթե մինչև եզրը, իսկ այնուհետև շրջել ժապավենն ու գնալ գրեթե եզրից մինչև Բ: Բայց այդ դեպքում Դուք խարդախում եք, քանի որ գիծը չի միանում: Դուք կարող եք զայրանալ և հրաժարվել գիծ քաշելուց (Հնդկաստան), ռմբակոծել գիրքը (ԱՄՆ), կշտամբել հեղինակին՝ որպես ամբարտապան (Նորվեգիա), կարճ ասած՝ Դուք կարող եք հրաժարվել խնդիրը լուծելուց: Կամ կարող եք շարունակել կարդալ, մինչև կդառնաք նրանցից մեկը, ովքեր գիտեն Մյոբիուսի ժապավենի մասին կամ ունեն այն տաղաշնորհը, որ անհրաժեշտ են կոնֆլիկտաբաններին ավելի շատ, քան մյուս բոլորին՝ երևակայություն և ստեղծագործականություն: Դուք պահում եք ժապավենը մի ձեռքում և շրջում եք մի եզրը մախքան երկու եզրերը միացնելը: Այժմ Ա-ն և Բ-ն նույն կողմում են: Հակասությունը գերազանցվել է, այն այլևս գոյություն չունի: Շրջում, փոխակերպված փոքրիկ կարկանդակ, և խնդիրը լուծված է:

Բայց սա կոնֆլիկտ չէ: Դե, այստեղ կամ կոնֆլիկտի արմատներ՝ հակասություն: Այժմ պատկերացրեք, որ մի կողմն ասում է՝ «Հատենք եզրը», մինչդեռ մյուս կողմն ասում է՝ «Այնքան էլ կարևոր չէ, որ գիծը միանա», երրորդն ասում է՝ «Փոխզիջում», իսկ չորրորդը՝ «Ծիծաղելի խնդիր է, մենք ավելի կարևոր անելիքներ ունենք»: Դրանք մարտահրավերից խուսափելու չորս եղանակներն են: Այնուհետև հինգերորդն ասում է՝ «Փորձենք Աուգուստ Մյոբիուսի (ու՜մ պատվին էլ անվանվել է ժապավենը) ցանկացած գերազանցման կենտրոնական տարրը՝ *և՛ մեկը, և՛ մյուսը*՝ նույնիսկ շրջմամբ»:

Այժմ մոտենում ենք գրքի էությանը: Այն պարզ է, բայց աստիճանաբար կարդարանա՝ առաջ շարժվելուն զուգընթաց: Կարևոր է հասկանալ հիմնական գաղափարները, այլ ոչ թե անմիջապես «տեսնել» լուծումը:

Բայց նախ մի քանի խոսք կոնֆլիկտի նպատակների և կողմերի մասին: Նպատակները կարող են լինել դրական կամ բացասական՝ ինչ-որ բան, որին պետք է հասնել կամ ինչ-որ բան, որից պետք է խուսափել: *Նպատակները և կյանքը*՝ կենդանի էակները՝ մարդիկ և կենդանիները, բույսերը և մանրէները, դուք և ես, ամբաժանելի են: Նպատակ ունի միայն նա, ով ապրում է: Առանց նպատակի կյանքը դադարում է գոյություն ունենալ: Մահացող մարդու վերջին նպատակներից մեկը կարող է լինել ինքնին նպատակի բացակայությունը՝ հավերժական հանգիստը: Նպատակները տանջում են մեզ: Գոյություն չունի սահմանափակում այն գործունեության մեջ, որը մենք ձեռնարկում ենք մեր նպատակներն իրականացնելու կամ բավարարելու համար:

Այնտեղ, որտեղ կամ նպատակներ, հաճախ կլինեն նաև հակասություններ նույն օրգանիզմի ներսում կամ օրգանիզմների միջև՝ այստեղ և հիմա, այստեղ և այնտեղ, հիմա կամ ավելի ուշ: «Կան առանց հակասությունների մարդիկ: Նրանց անվանում են դիակներ», - ասում են չինացիները: Կյանքը, նպատակը և հակասությունն անբաժանելի են: «Կոնֆլիկտների կանխումն» անի-

մաստ է, բայց «բռնության կանխումը» չափազանց կարևոր է և օգտակար: Այս գիրքն իր ուրույն տեղն ունի բռնության կանխման գործում:

Եթե ասենք, որ սարի նպատակն է վեր խոյանալը, ապա դրանով սարին կյանք կվերագրենք: Կազմակերպությունները չեն կարող ունենալ նպատակներ, իսկ քաղաքապետերը, վարչապետերը և կորպորացիաների գործադիր տնօրեններն ունեն նպատակներ, քանի որ ունեն կյանք:

Երբ անհատը կամ խումբը հրապարակում է քաղաքների կամ պետությունների նպատակների վերաբերյալ իր դիրքորոշումը, նա հաճախ օգտագործում է «շահեր» բառը: Դրանով նա ցույց է տալիս, որ սրանք նպատակների ցանկից պատահաբար ընտրված նպատակներ չեն, այլ խորապես խարսխված են կազմակերպության հիմքում:

Շահերը հաճախ առաջնորդների նպատակների խիստ քողարկված ձևակերպումներ են, օրինակ այն, որ երկիրը, քաղաքը, կազմակերպությունը պետք է լինեն ավելի մեծ և հզոր:

Որոշ նպատակներ առաջնահերթ են մյուսների նկատմամբ, որովհետև դրանք բացարձակ, անհրաժեշտ պայմաններ են անհատական օրգանիզմների շարունակվող կյանքի համար: Եթե դրանք չեն բավարարվում, կյանքը և մարդկային արժանապատվությունը դառնում են անհնար: *Գոյության պահպանումը, բարեկեցությունը, ազատությունը, ինքնությունը* հիմնարար պահանջմունքներ են: Դրանք ավելի խորն են և արժեքներից վեր: Սենք կարող ենք ընտրել մեր արժեքները, իսկ ընտրությունը մեր ազատության մասն է: Արժեքները դառնում են մեր ինքնության մասը, և դրանք ունենալն ինքնին արժեք է: Բայց հիմնարար պահանջմունքները տարբերվում են: Դուք չեք ընտրում ձեր հիմնարար պահանջմունքները, հիմնարար պահանջմունքներն են ընտրում ձեզ: Դրանք բավարարումը ձեր գոյությունը դարձնում է հնարավոր: Եթե բանակցում եք ձեր կամ այլ մարդկանց հիմնարար պահանջմունքների շուրջ, ձեզ կամ այլոց դատապարտում եք՝ մար-

դուն ոչ վայել կյանքի, ապա իրականացնում եք բռնություն: Բանակցությունները հնարավոր են նպատակների և արժեքների շուրջ, բայց ոչ հիմնարար պահանջմունքների: Հիմնարար պահանջմունքները պետք է հարգվեն, դրանք սակարկելի չեն:

Մյուս շահերը, ինչպիսիք են ուժն ու մեծությունը, չպետք է անպայմանորեն լինեն հիմնարար պահանջմունքների բավարարման միջոցներ: Բայց մենք կարող ենք պահանջել, որ դրանք չանարգեն մեր հիմնարար պահանջմունքները: Եթե դա տեղի է ունենում, իրավիճակը լրջանում է: *Հիմնարար պահանջմունքների անարգումը բռնություն է:*

Հիմնարար պահանջմունքները կարգավորում են ձեր և ձեր շրջապատի միջև հարաբերությունները. այն, ինչ մուտք է գործում ձեր օրգանիզմ և դուրս գալիս (հիշե՛ք մաշկը): Ո՞վ է վերահսկում դա՝ դո՞ւք, թե՞ ուրիշ մեկը: Սա միայն մարմնի վերաբերյալ հարց չէ, այլ նաև *հոգու՝* որպես ընկալվող տպավորությունների և հույզերի շտեմարանի, որոնք երբեմն արտահայտությունների միջոցով բաց են թողնվում:

Գոյություն ունի նաև *ոգի*, որն ունակ է արտացոլելու, թե ինչպես են մարմինը և հոգին խորապես *ծրագրավորվել*, և թե ինչպես փոխել ծրագիրը: Մենք չենք վերագրում այս ընդունակությունը կենդանիներին, բույսերին և մանրէներին, բայց հաշվի ենք առնում, որ դրանք ևս ծրագրավորված են «բնագոյներով»: Հիմնարար պահանջմունքները չեն կարող բանակցությունների առարկա դառնալ: Մենք ամարգում ենք կենդանիների և բույսերի հիմնարար պահանջմունքները՝ օգտագործելով, ոչնչացնելով դրանք: Ներդաշնակությունը՝ փոխադարձ հիմնարար պահանջմունքների բավարարումը, մի բան է, որ առկա է միայն ընտրանի կենդանիների հետ մեր հարաբերություններում:

Կոնկրետ օրինակներն այժմ կուղեկցեն մեզ դեպի կոնֆլիկտի հայեցակարգեր և տեսություններ: Մենք կսկսենք ներանձնային (երկընտրանքներ) և միջանձնային (վեճեր) կոնֆլիկտներից: Դուք կծանոթանաք դրանց հետ: Սա վերաբերում է նաև այնպիսի

խմբերի միջև կոնֆլիկտներին, ինչպիսիք են սեռերը, դասակարգերը և ռասսաները: Բայց փորձեք հավասարապես հետաքրքրվել նաև պետությունների և ազգերի, տարածաշրջանների և քաղաքակրթությունների միջև կոնֆլիկտներով: Դուք կարդում, լսում, տեսնում եք դրանք լրատվամիջոցներում: Դրանք ներկայացվում են որպես խաղեր պետությունների, կորպորացիաների միջև, բայց դրանք վերաբերում են ձեզ՝ բոլոր ընթերցողներին, ունկնդիրներին, հանդիսատեսին: Ժողովրդավարությունը պահանջում է *ձեր* հետաքրքրվածությունը և գիտելիքները: Սա մահվան և տառապանքների, պետությունների և կորպորացիաների ուժային խաղերի դեմ ուղղված ուղերձն է մեր ժամանակների ժողովրդական խոշոր ապստամբություններից՝ խաղաղության շարժումից և Պորտո Ալեգրիի շարժումից: Շարժումները ցնցում են բոլոր նրանց համար, ովքեր բանակցում են միլիոնավոր մարդկանց հիմնարար պահանջներին շուրջ: Բայց այսօր պետության/կապիտալի և հասարակ ժողովրդի միջև հակասությունները ձեռք են բերում գլոբալ բնույթ և գործում մեզամակարդակում՝ տարածաշրջանների, քաղաքակրթությունների միջև:

Կանգ առնենք կոնֆլիկտի առանցքային խնդրի վրա: Կան նպատակներ, որոնք չեն կարող բավարարվել, դրանք արգելափակված են: Այլ կերպ ասած, առկա է *ֆրուստրացիա*, ինչը բավական վատ է: Բայց *կոնֆլիկտը* գնում է մի քայլ առաջ: Կան երկու նպատակներ, բայց մեկը խանգարում է մյուսին և իրականացվում «Ուրիշի» կողմից: Նպատակի նկատմամբ վերաբերմունքը վերածվում է «Ուրիշի» նկատմամբ վերաբերմունքի: Ուրիշը կարող է նույնիսկ լինել մեր մասը, և այդ դեպքում մենք կարող ենք խոսել երկընտրանքի մասին: Ինչպես ասել է Գյոթեն՝ «Իմ կրծքում կա երկու հոգի»: «Ինչո՞ւ միայն երկու», - առարկել է մի ֆրանսիացի տղամարդ:

Այնուհետև վվերաբերմունքն արագորեն կհամակվի ուժեղ հույզերով՝ ատելությունից մինչև անտարբերություն և սեփական

դավաճանության նկատմամբ արհամարհանք, եթե մարդը հրաժարվի նպատակից կամ պարզապես փախչի դրանից:

Կոնֆլիկտները շոշափում են ամեն ինչ՝ մեր զգացմունքները, մտքերը, պահանջում են մեզանից այն ամենը, ինչ մենք պետք է առաջարկենք, եթե ոչ, ապա մեր հույզերը հեշտությամբ կարտահայտվեն բռնության տեսքով՝ անարգելով այլ մարդկանց հիմնարար պահանջմունքները վերբալ և ֆիզիկական բռնությամբ, կամ էլ՝ երկուսը միասին:

Այս գրքում կուսումնասիրվեն իրական կյանքից վերցված 40 դեպք: Սկսենք մարնջի հին, լավ օրինակից, որը գրվել ու հրատարակվել է որպես առակ՝ *«Թռչող մարինջը պատմում է իր պատմությունը»* վերնագրով, որը նկարագարովել է Անդրեաս Գալթունգի կողմից:

Մի անգամ ես օգտագործեցի այս օրինակը Լոնդոնում չարության մասին համաժողովի ժամանակ, որին մասնակցում էին երեխաներ, ծնողներ և ուսուցիչներ: Կար տասը սեղան, յուրաքանչյուրի շուրջ՝ երկու մարդ և յուրաքանչյուր սեղանին դրված էր մեկ մարինջ: Մենք սկսեցինք ամենաերիտասարդներից և շարունակեցինք ամենատարեցների հետ՝ տեսնելու, թե ինչպես են նրանք նայում «իրավիճակին»: «Կոնֆլիկտ» բառից դիտավորյալ խուսափում էինք: Առաջինը կարծիք հայտնեց մի ութամյա աղջիկ: «Ես կեղևահան կանեի մարինջը,- ասաց նա,- և կհաշվեի կտորների թիվը: Եթե թիվը զույգ է, ես կբաժանեի կտորները երկու հավասար խմբերի: Եթե թիվը կենտ է, ապա ես զգուշորեն կբաժանեի վերջին կտորը երկու փոքր մասերի»:

Աղջկա պատասխանը միանգամայն ճիշտ է, բայց ոչ այնքան ստեղծագործական, ինչքան նրանց պատասխանները, ովքեր ցանկացան մարինջը մասերի բաժանել դանակով: Վերջինները հիմնականում տղամարդիկ էին: Կանայք ավելի հակված էին կեղևահան անելուն, իսկ այնուհետև կտորները հավասարապես բաժանելուն:

Ոմանք առաջարկեցին քամել նարնջի հյութն ու բաժանել այն երկու բաժակների մեջ՝ հավասար չափով:

Այնուհետև՝ եղան նաև այնպիսիք, ովքեր ցանկացան մետաղադրամ նետելով լուծել խնդիրը որևէ մեկի օգտին, իսկ ոմանք նույնիսկ նարինջը զնելու ցանկություն հայտնեցին: Մի տղա ցանկացավ կռվել նարնջի համար: Դա սխալ պատասխան էր: Մեզ անհրաժեշտ էին ելքեր, որոնք ընդունելի կլինեին երկու կողմերի համար՝ կայուն ճանապարհ դեպի ապագա՝ առանց վրեժ-խնդրության կամ փոխհատուցման վերաբերյալ մտքերի:

Որոշ ժամանակ անց ավելի ստեղծագործական առաջարկներ ի հայտ եկան: Որոշ երեխաներ ցանկացան խաղալ նարնջով: Հնդկաստանցի երկու աղջիկներ պարզապես ցանկացան նայել նարնջին՝ ասելով, որ նարինջը շատ գեղեցիկ է, իսկ միասին նայել նշանակում է կիսել այն: Կային նաև այնպիսիք, ովքեր ցանկացան կեղևից բաժակներ պատրաստել, օգտագործել կեղևը թխվածքների պատրաստելու համար, որոնք կարող էին վաճառվել, աճուրդի հանվել կամ օգտագործվել վիճակախաղում: Վերջապես, կային նաև այնպիսիք, ովքեր ցանկացան տնկել կորիզները և հավաքել բերքը 20 տարի անց: Առաջարկվեցին առնվազն 16՝ որակապես տարբեր ելքեր:

Ինչքան ավելի լայն է լուծումների շրջանակը, այնքան ավելի շատ են բռնության նկատմամբ այլընտրանքները: Եվ սա հիմնական հարցն է, եթե մենք ուզում ենք կանխել կոնֆլիկտի վերածումը բռնության: Պետք է օգտագործել կոնֆլիկտից առաջացող էներգիան ստեղծագործական լուծումներ գտնելու համար:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. ՄԻԿՐՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ՝ ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ

Ինչ-որ իմաստով նույնիսկ տարօրինակ է, որ մարդկությունն ավելի վատը չէ:

Այն, որ մեր նպատակները երբեմն անիրատեսական են, և մենք ստիպված ենք ֆրոստրացիա ապրել, բավական վատ է: Բայց սա, իհարկե, ապրելու արվեստն է՝ պահել աղեղն այնքան բարձր, որ նետը թռչի երկար տարածություն և հարվածի թիրախին, բայց ոչ այնքան բարձր, որ նետը չհասնի նշանակետին կամ աղեղալարը կտրվի:

Գոյություն ունի նաև նպատակների անհամատեղելիության հետևյալ հարցերը՝ ո՞րն է իմ՝ որպես մարդու, նպատակները. դա բարեկեցությունն է՝ հարստանալ այն առումով, թե ինչ *ունեմ* ես, թե՞ հարուստ ներաշխարհի ունենալ այն իմաստով, թե ինչ *եմ* ես: Երկուսն էլ, բայց եթե այդ երկուսն էլ կանգնած են միմյանց ճանապարհին: Ես պետք է լինեմ բարի և օգնեմ իմ մրցակցին, թե՞ լինեմ հավակնոտ և հաղթեմ նրան: Երկուսն էլ, բայց ինչպե՞ս: Նման ընտրությունների հետևում կան սկզբունքներ, որոնք միասին կազմում են կյանքի մեր փիլիսոփայությունը: Ոմանք կարող են օրվա լույսին դիմանալ ավելի լավ, քան մյուսները: Լավ միտք է վերցնել մի թերթ և դրա վերևում գրել «Կյանքի իմ փիլիսոփայությունը», այնուհետև լրացնել թերթը և ուշադիր նայել դրան: Ինչպե՞ս եք դուք արձագանքում նման վարժությանը: Գուցե ձեր հոգու խորքում կա առնվազն երկու հոգի, որոնցից յուրաքանչ-յուրն ունի կյանքի սեփական փիլիսոփայությունը: Եթե փորձեք ճնշել դրանցից մեկին, կարող եք վնաս հասցնել ձեր հոգեկան առողջությանը: Ավելի լավ է տեսնել՝ կարո՞ղ եք ձևափոխել, մեղմել, միջնորդել, գերազանցել, լրացնել երկուսի մեջ առաջացած բացերը:

Իսկ ի՞նչ կասեք այն նպատակների մասին, որոնք մեզ ներքաշում են այլ մարդկանց դեմ պայքարելու: Ասացեք ինձ, թե ինչ-

պես եք դուք արձագանքում կոնֆլիկտին, և ես շատ բան կասեմ այն մասին, թե ինչքան խաղաղություն կա ձեր ներսում: Հրաբխային ժայթքումը՝ «կոնֆլիկտ հարուցող նպատակների քննարկումը», կարող է մաքրել օդը: Բայց ի՞նչ կասեք ժայթքման զոհի մասին: Ձեր «խուլերիկ վարքը» չպետք է սովորություն դառնա:

Այնպես որ, հանգստացեք, ոչինչ մի ցույց տվեք արտաքուստ, նույնիսկ ձեր հոգու խորքում, և մարդիկ կսիրեն ձեզ, որովհետև դուք երբեք մարտահրավեր չեք նետում նրանց: Բայց դա ևս չպետք է դառնա սովորություն, այլապես ձեր «սանգվինիկ, անխռով ինքնությունը» կարող է խնդիրներ առաջադրել հենց ձեզ համար: Չիրականացված նպատակներով պայմանավորված հիասթափությունը, վրդովմունքը կամ այն, ինչը կանգնած է եղել ձեր ճանապարհին, կարող են ձեր ներսում առաջացնել այլ մարդկանց նկատմամբ վտանգավոր արձագանքներ: Դուք կարող եք, ի վերջո, հեշտությամբ վերածվել մշտապես «վիրավորվածի»:

Ձեր կոնֆլիկտային ոճը կարող է արտահայտել վիրավորվածություն, որը վերհանելու փոխարեն, դուք դրա շուրջն եք կառուցել ձեր կյանքը: Նման վիճակը հասել է համաճարակային չափերի այնպիսի ինտրովերտ մշակույթներում, ինչպիսիք են նորվեգականը և Ճապոնականը: Խուլերիկ, դյուրաբորբոք մարդը կարող է խուսափել սրանից, երբ նա զգում է, որ «ծառայում է արդարությանը» և կարող է օգտագործել իր սեփական բռնկումները որպես երջանկության աղբյուր: Սակայն այդ կերպ նա նաև շահագործում է իր բռնկումների զոհերին:

Այնուամենայնիվ, կոնֆլիկտի ոճերն ավելի շատ են, քան առանձնացված խուլերիկ և սանգվինիկ տարբերակները: Սրանք հույզերի կառավարման միայն երկու եղանակներ են, որոնք սառեցված են կոնֆլիկտում գոյատևելու անձնական ռազմավարություններում: Դրանց միջև ընդհանրությունը կոնֆլիկտի սկզբնաղբյուր հանդիսացող հակասությունը կառավարելու անընդունակությունն է: Ոճերը կոնֆլիկտի մակերևույթին են՝ մեր մարմնի լեզվում, այնտեղ, թե ինչ ենք ասում՝ վերբալ բռնության

դեպքում, իսկ ավելի ծայրահեղ դեպքերում այնտեղ, թե ինչ ենք անում՝ ֆիզիկական բռնության դեպքում: Բարձր ջերմաստիճանը՝ խուլերիկ, և ցածր ջերմաստիճանը՝ սանգվինիկ անձնավորությունների շրջանում գլխավոր խնդրի առնչությամբ հաղթանակ տանելու երկու տարբերակներ են. մարտահրավերի ընդունում, կոնֆլիկտի լուծում, հակասության հաղթահարում:

Պահանջվում է նաև մեկ այլ միջոց, որ բոլորս ունենք՝ մեր մտավոր ընդունակությունը: Կոնֆլիկտները կարելի է վերլուծել, դրանք կարելի է հասկանալ: Կոնֆլիկտները շոշափում են ամեն ինչ՝ մեր հույզերը, մտքերը և այլն: Այդ պատճառով պետք է փորձենք ոչ միայն տեղի տալ հույզերին, այլև արձագանքել դրանց: Մեզ անհրաժեշտ է կանխարգելիչ մտավոր աշխատանք նախքան հույզերը կհամակեն և հաղթանակ կտանեն ուղեղի նկատմամբ:

Այս գիրքն առաջարկում է մտավոր տեխնիկա հասարակության բոլոր մակարդակի կոնֆլիկտներում մամն կանխարգելիչ աշխատանք կատարելու համար: Կոնֆլիկտների և խաղաղության հետազոտումն ընդգրկում է ողջ բնագավառը և չի հանդիսանում արտաքին քաղաքականության նկատմամբ ինչ-որ ծախս-կողմյան մոտեցում, ինչպես համարում են որոշ մարդիկ: Այսպիսով, սկսենք այնտեղից, որտեղ մարդիկ զգում են իրենց առավել հարմարավետ՝ առօրյա կյանքի մի պարզ օրինակից:

ՕՂԱՆԱԿՈՎ ՃԱՄՓՈՐՊՈՂ ԶՈՒՅՎ

Զույգը՝ տղամարդ և կին, հաճախ տասը-տասներկու ժամանոց ուղևորություններ է կատարում օդանավով: Նրանք սիրում են նստել կողք կողքի, որպեսզի հնարավորություն ունենան որևէ խմիչք խմելու, խոսելու այն մասին, թե որքան վատն է ավիաընկերության սնունդը, թե որքան խելագար է աշխարհը, մի խոսքով՝ խոսելու ամեն ինչի մասին:

Բայց նրանք ունեն մի խնդիր. տասը ժամը բավականին երկար ժամանակ է, և երբեմն նրանք ցանկանում են ոտքերի թնրածությունն անցկացնել քայլելով կամ գնալ բնական կարիքները հոգալու, ինչն ավելի դյուրին է անել, եթե տվյալ անձը զբաղեցնում է միջանցքին մոտ գտնվող տեղը, ինչի շնորհիվ ստիպված չի լինի ամեն անգամ դուրս գալիս ներողություն խնդրել հարևանից: Բայց ո՞վ է զբաղեցնելու միջանցքին մոտ գտնվող այդ տեղը:

Տղամարդ – Դա պետք է լինեն ես: Բոլորը գիտեն, որ տղամարդիկ, հատկապես երբ նրանք մի քիչ ծերանում են, ավելի հաճախ պետք է գնան բնական կարիքները հոգալու:

Կին – Ես կարծում էի, որ տղամարդիկ կարող էին լինել ավելի քաղաքավարի և դրսևորել ասպետություն՝ մի փոքր արտոնություն տալով կանանց...

Տղամարդ – Ահա՛ թե ինչ, այդպիսով մենք կարո՞ղ ենք դրա դիմաց ավելի շատ շահագործել ձեզ սոցիալապես ու տնտեսապես:

Կին – Ոչ, ոչ, այդպես չէ: Դուք՝ տղամարդիկ չե՞ք միշտ զբաղեցնում անցումին մոտ գտնվող տեղերը: Եվ ինչո՞ւ միշտ մենք պետք է լինենք ներողություն խնդրողները:

Կոնֆլիկտաբան – Դե, սա կոնֆլիկտ է: «Կոնֆլիկտը նպատակների հակասությունն է»՝ այս դեպքում «տղամարդու համար անցումին մոտ գտնվող տեղի» և «կնոջ համար անցումին մոտ գտնվող տեղի» միջև: Կողմերը տղամարդն ու կինն են, նպատակները՝ անցումի մոտ գտնվող տեղը, և առկա է հակասություն, որովհետև կա անցումի մոտ գտնվող միայն մեկ տեղ, իսկ կինն ու տղամարդը ցանկանում են նստել կողք կողքի: Կարո՞ղ

- եք առաջարկել որևէ լուծում:
- Տղամարդ –* Մենք կարող ենք փոխել տեղերս կես ճանապարհին կամ ամեն հաջորդ ուղևորության ժամանակ:
- Կին –* Չեմ կարծում, որ դա լուծում է խնդիրը: Վեր կենալու և նստելու կարիքը կշարունակի շատ լինել: Այդ դեպքում ես ավելի շուտ կիրառարվեմ օդանավով ճամփորդելուց:
- Տղամարդը և կինը միաժամանակ, համարձակի –* Իսկ եթե նստենք անցումի երկու կողմերում: Որոշ քիչ հեռավորություն, բայց շփում, խմիչք և...
- Կին –* Եվ, գուցե, մի փոքր ավելի քիչ կխոսենք աշխարհի խելագարության մասին:
- Տղամարդ –* Եվ, գուցե, ավելի քիչ՝ ավիաընկերության զգվելի սննդի մասին:
- Կոնֆլիկտաբան –* Դուք գտել եք և՛ մեկը, և՛ մյուսը, բայց շատ մարդիկ չափազանց շատ են ցանկանում «նստել միմյանց կողքի»՝ միջանցքին նայելու և միջանցքին գտնվող երկու տեղերը տեսնելու համար, շատերը դժվարությամբ են ընդունում, որ լուծումը հենց երևակայական այդ բանտից փախչելն է:

ԶԳԵՍՏ

Մայրիկի պատմությունը – Ես 43 տարեկան եմ: Քսանհինգ տարի առաջ ես ավարտել եմ դպրոցը և այսօր երեկոյան հրավիրված եմ համադասարանցիների հետ հանդիպման: Ես անհամբերությամբ սպասում եմ, բայց մի քիչ մտահոգվում եմ: Ես հազնելու եմ մի զգեստ, որն իմ տարիքի համար չափազանց երիտա-

սարդական է: Այն պիրկ է և մի քիչ կարծ. կասկածներ ունեն այդ հարցում: Բայց ես ունեմ դուստր, ով 18 տարեկան է, ինչպես ես, երբ ավարտեցի դպրոցը: Ես դաստիարակել եմ նրան այնքան լավ, ինչքան կարող էի՝ կենտրոնանելով կյանքում երկու կարևոր նպատակների վրա՝ *լինել նրբանկատ ու ազնիվ*:

Այսպիսով, ես հազնում եմ զգեստը, թակում եմ դուռը և մտնում նրա սենյակ: Դուստրս պատրաստվում է բանավոր քննության: Նա գիտի, որ սա կարևոր օր է ինձ համար: Ես մի քանի քայլում եմ դեպի առաջ, կանգնում, նայում եմ նրան շողոքորթ աչքերով՝ աղաչելով մի փոքր մեղմություն: Այնուհետև՝ ասում եմ հանգիստ, բայց հստակ կերպով. «Ի՞նչ ես կարծում»:

Կոնֆլիկտաբան – Դե, ո՞րն է ձեր խորհուրդը: Հիշե՛ք, որ պատասխանը պետք է լինի և՛ նրբանկատ, և՛ ազնիվ, ոչ թե կան մեկը, կան մյուսը: Եվ դուք պետք է պատասխանեք արագ: Դուք ունեք միայն հինգ վայրկյան: Եթե տարակուսեք, դյուրագրգիռ մայրիկը հեշտությամբ կարտասվի՝ չհասկանալով, թե ինչ խնդիր կա զգեստի հետ կապված:

Դստեր պատմությունը – Մայրիկս ներս է մտնում այն ժամանակ, երբ ես նստած անգիր եմ սովորում: Նա հրաշալի, լավ մայր է, բայց մի փոքր անվստահ: Նա ցանկանում է, որ ես կարծիք հայտնեմ իր զգեստի վերաբերյալ, որն իրականում ավելի հարմար կլիներ ինձ: Ի՞նչ պետք է ես ասեմ: Բավականին հեշտ է լինել նրբանկատ, -«Մայրիկ, դու հրաշալի տեսք ունես, զգեստը շատ է սագում քեզ», - բայց նա այնքան էլ հիմար չէ, որ կուլ տա այդ խայծը: Կամ ես կարող եմ լինել անկեղծ և ասել. «Մայրիկ, դու խկապե՞ս պատրաստվում ես գնալ համադասարանցիների հետ հանդիպմանը հազնված այնպես, ինչպես այն ժամանակ, քանի՞ տարի առաջ էր դա՝ քսանհինգ»:

Ինչքան կուզենայի, որ բջջային հեռախոսս զանգահարեր, որ ես ստիպված չլինեի պատասխանել նրան: Դա մի փոքր ժամանակ կտար ինձ այդ մասին մտածելու:

Դուստր – Մայրիկ, այն իսկապես գեղեցիկ է, բայց գուցե քեզ համար չէ. այո, այն ինձ իսկապես դուր է գալիս, բայց մյուս կողմից...

Մայրիկ – Դու ուզում էիր ասել «տարի՞քը»: Եթե այդպես է, պարզապես ասա՛ այդպես:

Դուստր – Ոչ, ես դա նկատի չունեի, դու միշտ էլ երիտասարդ տեսք ունես: Դու հիանալի տեսք ունես, բայց մյուս կողմից, ի՞նչ կասես վզարկուի մասին:

Մայրիկ – Այլ կերպ ասած, ինչ-որ բան այն չէ: Պարզապես, ասա՛ դա:

Դուստր – Ոչինչ էլ վատ չէ, բայց գուցե կապույտ զգեստն ավելի՞ հարմար կլիներ:

Մայրիկ – Կապույտ զգեստը: Այն այնքան հնաոճ է: Այսինքն՝ այդպիսի՞ զգեստն է քո կարծիքով ինձ հարմար: Ինչ-պիսի՞ դուստր ունեն ես:

Կոնֆլիկտաբան – Այստեղ դստեր կողմից ջանքեր են գործադրվում լուծելու կոնֆլիկտը: Նա պայքարում է իր իսկ՝ ազնվության և նրբանկատության դեմ: Նպատակները քայքայում են նրա սիրտը, որովհետև նա յուրացրել է դրանք: Դրանցից որևէ մեկին դավաճանելը, անկախ նրանից, թե որին, անհետևանք չի լինի նրա համար: «Ամմաքուր խիղճը» այն փոքր մետն է, որը խրվում է մեր «հոգու» խորքը, անկախ նրանից, այդ բառը պաշտպանում է «միտքը», «ոգին», թե երկուսն էլ: Նա ցանկանում է խուսափել իրավիճակից և պաշտպանվել իրեն բջջային հեռախոսով, ու այդ կերպ նա երկու նպատակներին էլ կդավաճանի: Այնուհետև նա փորձում է փոխզիջումը՝ անկեղծ և նրբանկատ մեկնաբանությունների խառնուրդ՝ հուսալով, որ միասին դրանք գլուխ կբերեն հմարքը: Նա լի է բարի մտադրություններով, բայց դրանցից ոչ մեկը չի բավարարում ո՛չ նրան և ո՛չ էլ մայրիկին:

Այս երկընտրանքի հետևում կա մոր և դստեր միջև մոր կոնֆլիկտ: Դուստրն անում է ամեն ինչ անկեղծ լինելու համար՝ միևնույն ժամանակ չլինելով աննրբանկատ, կամ լինելու նրբան-

կատ՝ միևնույն ժամանակ չլինելով անազնիվ: Բայց մայրիկին պարզապես դուր չի գալիս պատասխանը: Նա դառնում է անհամ- դուրժող դստեր հանդեպ:

Կոնկրետ իրավիճակ է և հստակ հակասություն՝ կոնֆլիկտ երկու նպատակների միջև: Կա՞ նախադասություն, որը կարող էր գերազանցել այս հակասությունը՝ միավորելով նպատակները: Շրջմա՞մբ, ինչպես Մյոբիուսի ժապավենի դեպքում:

Մի քանի տարի առաջ սա առաջին վարժությունն էր ժնևում ՄԱԿ-ի դեսպանների համար անգլերեն, ֆրանսերեն և իսպանե-րեն լեզուներով անցկացվող երեք դասընթացներում: Նրանցից ակնկալվում էր գտնել արտահայտություն՝ «դիվանագիտական պատասխան», մի բան, որը դիվանագետները հավանաբար ու-նեն մասնագիտության բերումով: Բայց նրանք ի վիճակի չէին դա անել: Դիվանագետներից մեկն առաջարկեց, և միայն մասամբ որպես կատակ, որ խնդրի լուծման բանաձևը գտնելու համար անհրաժեշտ է միջազգային ներկայացուցչական հանձնաժողով հրավիրել: Բարեբախտաբար, կան ավելի լավ և ավելի էժան մե-թոդներ:

Մեկ այլ վայրում շատ ավելի ոչ ֆորմալ կրթությամբ մասնա-կիցներ՝ մեծ մասամբ կանայք, ծալեցին իրենց ձեռքերը և ասա-ցին սրա ման մի բան. «Մայրիկ, դու հիամալի անձնավորություն ես և, իմ կարծիքով, կապույտ զգեստը շատ լավ է արտացոլում քո անհատականությունը»:

Ուշադրություն դարձնենք այս պատասխանի երեք ասպեկտ-ներին. այն Ը նրբանկատ է, Ը՝ ազնիվ ու շեշտադրում ունի մայրի-կի անհատականության ճիշտ նկարագրության վրա.

1. Հաջողվում է խուսափել մայրիկի և նրա զգեստի միջև սկզբնական հակասությունից, որն արտացոլվում է նրբանկա-տության և ազնվության միջև հակասությամբ: Նախադասությունը դուրս է գալիս, գերազանցում է այս հակասությունը: Հաջողվում է խուսափել դստեր «բայց զուցե կապույտ զգեստը» արտահայ-տության աղետալի «բայց» բառից, այլ կերպ ասած, «ոչինչ վատ

չէ» ժխտումից, որը նախորդում է դրան: Փոխարենն օգտագործվում է «և» կապը: *խուսափեք ժխտումներից:*

2. Նախադասությունը կողմնորոշված է դեպի *ապագան*, ոչ թե ներկան կամ անցյալը:

3. Նախադասությունը *կառուցողական է՝* գործողության հստակ ցուցմամբ:

Եթե մայրիկն ընդունում է այդ նախադասությունը, ապա երկու նպատակների բավարարմամբ խնդրի կայուն լուծումը ստացված է:

Անհրաժեշտ արագորեն մի քիչ տաղանդ է մման ձևակերպման հասնելու համար, ինչը կթուլացնի լարված իրավիճակը՝ չգրկվելով բովանդակությունից, ինչպես «Մայրիկ, եթե դու լավ ես զգում այդ զգեստով, ուրեմն այն հարմար զգեստ է քեզ համար» անհոգ ձևակերպումը:

Ինչպե՞ս զարգացնել մման տաղանդ: Ձեզ անհրաժեշտ է.

- խնդրի շատ արագ սահմանում՝ գտնել և՛ մեկը, և՛ մյուսը պարունակող պատասխան,
- ստեղծագործականություն՝ մման պատասխան գտնելու համար,
- լուծման ներկայացում՝ որպես առաջարկ, ոչ թե վերջնագիր:

Եվ այդ ամենը հիմզ վայրկյանից էլ քիչ ժամանակահատվածում՝ մայրիկի «Ո՞րն է խնդիրը» հարցից խուսափելու համար: Նման իրավիճակներից ձեռքբերված սոցիալական փորձն օգտակար է: Այլ կերպ ասած՝ օգտակար է ոչ միայն շատ գրքեր կարդալը, այլև լիարժեք կյանքով ապրելը, ինչը շատ ուսանողների մշտական խնդիրն է, ովքեր չափազանց երիտասարդ են և հաճախ սովորել են ավելի շատ, քան զգացել: Նմուշը ճանաչելու համար անհրաժեշտ է ոչ միայն սոցիալական խելամտություն, այլ նաև ճանաչողական խելամտություն, ինչը հմարավորություն կտա որևէ խնդրի բախվելիս համեմատել և, օրինակ, արձանագրել՝ «սա հիշեցնում է ինձ մի խնդիր, որի հետ ես բախվել եմ անց-

յալ շաբաթ»: Նախքան շարունակելը, ուշադրություն դարձնենք *ոչ մեկի և ոչ էլ մյուսի*՝ ո՛չ նրբանկատ և ո՛չ էլ ազնիվ պատասխաններին վրա, որոնք ավելի ուշ կդառնան բավականին կարևոր՝


Դուստր – Մայրիկ, չճաշե՞նք վաղը միասին:

Կոնֆլիկտի տեսությունը պետք է առաջարկի ավելին, քան միայն ծայրահեղ անհրաժեշտ կարողությունների նույնականացումը: Մեզ նաև անհրաժեշտ է այնպիսի մեթոդ, որը կարող են կիրառել նրանք, ովքեր դեռ չեն զարգացրել այդ ունակությունները: Մեզ անհրաժեշտ է համակարգային մեթոդ ոչ միայն այն ելքերը քարտեզագրելու համար, որոնց մենք կարող ենք հանգել կոնֆլիկտում, այլ նաև այն գործընթացների ամփոփման համար, որոնք կհանգեցնեն մեզ նման ելքերի:

Քարտեզին հասնելու համար օգտագործենք դեկարտյան կոորդինատների համակարգը: Այն խիստ անհրաժեշտ է և այս գրքում կհայտնվի մի քանի անգամ: Ընթերցողը կզարմանա, թե ինչքան շատ բան կարելի է քաղել այդ փոքր գծապատկերից: Բայց ստուգեք գծապատկերի բոլոր կետերը:

Հորիզոնական առանցքում տեղադրում ենք իրականացման աստիճանը *ազնվություն* նպատակի համար (ոչինչ, ինչ-որ բան, ամեն ինչ, կամ՝ $0 - 1/2 - 1$), իսկ ուղղահայաց առանցքում՝ նույնը *նրբանկատություն* նպատակի համար: Գծապատկերի ներսում կարող ենք մշել բոլոր ինը համադրությունները, բայց կներառենք միայն հինգ ամենակարևորները:

*Կոնֆլիկտի տեսության հիմնական գծապատկերը.
երկու անհամատեղելի նպատակներ, հինգ ելքեր*



Կոնֆլիկտը ազնվության և նրբանկատության միջև է, իսկ դրանք ակնհայտորեն բացառում են միմյանց: 5.-ն անհնարին է: Լուծումն այն է, որ փոքր շրջման միջոցով ցույց տրվի, թե նրանք այլևս չեն բացառում միմյանց: 5.-ը դառնում է հնարավոր:

Այժմ համեմատենք այս հինգ կետերի մի շարք ձևակերպումներ, որոնք բոլորն էլ ունեն ուղերձ և ասելիք:

Յ/Յ	ԴԻՐՔ	ԵԼՔ	ԳՈՐԾԸՆԹԱՑ	ԳՈՒՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔ
1.	1,0	Կա՛մ, կա՛մ	Հաղթանակ	Պայքար	1
2.	0,1	Կա՛մ, կա՛մ	Հաղթանակ	Պայքար	1
3.	0,0	Ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը	Հեռացում	Հետաձգում	2
4.	$\frac{1}{2}$, $\frac{1}{2}$	Կե՛ս, կե՛ս	Փոխզիջում	Բանակցություններ	1
5.	1,1	Ե՛վ մեկը, և՛ մյուսը	Գերազանցում	Երկխոսություն	0

1.-ը և 2.-ը պարզ են, դրանք նույնն են. նպատակներից մեկն իրականացվում է, իսկ մյուսը՝ ոչ: Բայց մենք առանձնացնում ենք դրանք: Սրանք երկու տարբեր նպատակներ են կամ երկու տարբեր կողմեր/անձինք նույն նպատակով, ինչպես սեղանի վրա դրված միակ նարնջի վայելումը:

Գծապատկերում օգտագործել ենք բառեր պատերազմի լեզվից, ինչպիսիք են «հաղթանակը» և «պայքարը»: Հաղթանակը մատնացույց է անում հաղթողին, իսկ հաղթողը ենթադրում է պարտվող: Ընդունելի լինելը և կայունությունն անհամատեղելի են պարտության հետ, եթե հաղթանակը չի դիտարկվում որպես Աստծո կամքի արտահայտում: Պարտվողը հաճախ վրիժառությունից (մյուս կողմին վնասել/ցավ պատճառել) և փոխհատուցումից (վերաբաշխել, բայց այս անգամ՝ իր օգտին) բացի ոչ մի բանի մասին չի մտածում: Իսկ հաղթողը հեշտությամբ ծեռք կրերի կրկին հաղթելու ցանկության շատ վատ սովորություն, կրկին ու կրկին կցանկանա հաղթել: Հաղթանակը քաղցր է, բայց այն կա-

րող է նաև լինել շատ թանկարժեք, երբ պարտվողը և հաղթողը թիրախ են դարձնում միմյանց ու սկսում վենդետա պատմության ընթացքում: Այսպես, ԱՄՆ-ն հարված ստացավ «ահաբեկիչներից» սեպտեմբերի 11-ին: Կարո՞ղ էր սա լինել վրիժառություն կամ փոխհատուցում, «հակադարձ բռնկում» Միացյալ Նահանգների «հաղթանակի» դիմաց: Եթե այդպես է, ապա ո՞վ էր պատասխանատու դրա համար:

Ավելի ուշ մենք ցույց կտանք, որ և՛ հաղթանակը, և՛ պայքարը կարող են ունենալ հստակ, ոչ բռնի իմաստ, և որ որոշակի պայմաններում դրանք խիստ անհրաժեշտ են՝ որպես կոնֆլիկտի հնարավոր ելքեր:

3.-ը կարող է նշանակել մի քանի բան: «Ժամանակը դեռ չի եկել» բանաձևը հաճախ օգտագործվում է քաղաքական գործիչների կողմից, ովքեր իրենք իրենց հասունացած չեն համարում խնդրի լուծման համար, բայց սպասում են, որ «բավականաչափ հասունացած» որակվելու համար «Ժամանակը» կգա:

Նույնը կարող է նաև լինել եղանակ՝ ընդունելու այն, որ այս պահին մենք բոլորս անընդունակ ենք գտնելու լուծում, «բավականաչափ հասունացած» չենք: Այս դեպքում թողե՛ք խնդիրը սպասման մեջ, փորձե՛ք հասնել ինչ-որ համաձայնության դրա հետաձգման շուրջ, իսկ այնուհետև...

Ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը մույնպես կարող է լինել լուծում, ինչպես այն դեպքում, երբ ՄԱԿ-ն ասում է «ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը» երկու պայքարող կողմերին ու ինքնուրույն կառավարում տարածքը, ինչպես ԿՄԱԿԺԿԱ-ն Կոսովոյում: Մենք կարող ենք վերաբերվել սրան որպես *բացասական գերազանցման*, ինչպես դատեր կողմից վերևում հիշատակված «վաղը միասին ծաշելու» ձևը, որը նախապատվություն չէր տալիս ո՛չ մեկին և ո՛չ էլ մյուսին:

4.-ը հաճախ այդքան գովաբանվող *փոխզիջումն է*: «Եթե երկու կողմ էլ մի փոքր զիջեն, ապա կգտնեն լուծում», «Նա փոխզիջման մարդ է», «Բանակցությունները տապալվեցին, որովհե-

տև բացակայում էր փոխգիշման գնալու ցանկությունը»։ սրանք շատ հաճախ հանդիպող արտահայտություններ են:

«ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդի դեպքում, ուստի և՛ այս գրքում, «փոխգիշումը» չի որակվում որպես դրական բառ: Փնտրեք իսպաներենի կամ իտալերենի բառարաններում, և այդ բառի երկակի մշակությունը կդառնա շատ պարզ. զիջելու ցանկություն, բայց նաև՝ վաճառվելու ցանկություն: Փոխգիշումը մխիթարություն է թույլի համար, ով այնքան քիչ գիտի այն մասին, թե ինչ կարող է դուրս գալ կոնֆլիկտից, որ կարծում է, թե փոխգիշումը միակ այլընտրանքն է: Իրականում փոխգիշման արդյունքում նվաճվում է մի համաձայնություն, որը չի բավարարում կողմերից և ոչ մեկին, ու հաճախ երկու կողմերն էլ հույս են ունենում, որ մյուս կողմն առնվազն հավասարապես դժգոհ է գտնված ելքից, ուստի նրանք միավորվում են ընդհանուր դժգոհության, փոխադարձ շնորհավորանքների շուրջ՝ կենաց խմելով այդ ընդհանուր դժգոհության համար:

5.-ը *դրական գերազանցումն է*, որը փոխակերպման բանալին է «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդում: Սրա համար շատ բան է պահանջվում: Խնդիրը կայանում է և՛ մեկը, և՛ մյուսը ստեղծելու մեջ: Այս մեթոդում գոյություն չունի ո՛չ 50/50 փոխգիշում, ո՛չ հաղթանակ, ո՛չ էլ հեռացում՝ չնայած որոշ դեպքում այս բոլոր ելքերը կարող են իրենց տեղն ունենալ: Այս մեթոդը թույլ է տալիս դնել բարձր նպատակներ, կատարել ցատկ, բայց դա պահանջում է երևակայություն, ստեղծագործականություն:

Շատ կոնֆլիկտային մշակույթներում գոյություն ունի ուժեղ կապ փոխգիշման և բանակցությունների միջև: Մենք ամբողջովին չենք մերժում փոխգիշումը և բանակցությունները, բայց ստորադասում ենք դրանք գերազանցմանը, սահմաններից դուրս գալուն ու երկխոսությանը:

«ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» վերնագրերի ներքո ներկայացվող թվերը պատկերացում են տալիս մեզ այն մասին, թե ինչքան հեռու ենք մենք գնացել և ինչքան աշխատանք է մնում կատարե-

լու յուրաքանչյուր ելքի համար: Դա նման է տնտեսական աճը տնտեսական բաշխման հետ բազմապատկելուն (0՝ բացարձակ անհավասարությունից մինչև 1՝ բացարձակ հավասարություն)՝ պատկերացում կազմելու համար, թե ինչ դիրք է գրավում երկիրը տնտեսապես. 10% աճը 0.5 բաշխմամբ բերում է 0.5 եկամուտ, որը կարող է նաև նշանակել 5% աճ՝ կատարյալ բաշխմամբ:

Հինգ կետերի համար մենք ստանում ենք հետևյալը՝

1., 2. Եթե մենք ընտրում ենք *պայքարը*, ապա կարող ենք հասնել հաղթանակի՝ մի նպատակը նվաճված է, որը նշանակում է, որ գործի կեսն է արված, բայց կա վտանգ, որ հաղթանակը կարող է լինել իսկապես շատ թանկարժեք: Հաղթանակի հետևանքը կարող է լինել վրիժառությունը, փոխհատուցումը և մեծամտությունը:

3. Եթե մենք ընտրում ենք *հետաձգումը*, ապա ոչ մի նպատակ չի իրականացվում: 0-ի գումարը տալիս է 2-ի մնացորդային աշխատանք՝ առավելագույնը: Ամեն ինչ հետաձգվել է: Կոնֆլիկտը դեռ առկա է և կարող է նմանվել թարախակալված վերքի, որովհետև նպատակները չեն իրականացվել: Չիրականացված նպատակը, ըստ սահմանման, հանգեցնում է ֆրուստրացիայի, և, եթե այդ նպատակը հիմնարար պահանջմունք է, այն կարող է ստվեր գցել մյուս բոլոր բաների վրա: Այնուհետև ֆրուստրացիան հանգեցնում է ագրեսիայի: Հետաձգման խաղը կարող է դառնալ խաղ կրակի հետ: Բայց փաստարկը այն չէ, որ ֆրուստրացիային պետք է ուշադրություն դարձնել միայն բռնությունը կանխելու նպատակով: Ավելի ճիշտ փաստարկն այն է, որ պետք է ուշադրություն դարձնել հիմնարար պահանջմունքին, ինչպես չքավորությանը երրորդ աշխարհում՝ անկախ նրանից «մենք» վտանգի մեջ ենք, թե՛ ոչ:

Հետաձգումը՝ հեռանալը, շատ հազվադեպ է կրում որևէ կայունություն: Բայց բացասական գերազանցումը ինչ-որ չափով կարող է լինել ընդունելի և կայուն, որովհետև նոր իրականություն է ստեղծում:

4. Եթե մենք ընտրում ենք *փոխգիշումը*, ապա ընդունելի լինելու հնարավորությունը շատ ավելի բարձր է: Բայց կայունությունը կլինի ժամանակավոր, որովհետև կոնֆլիկտը դեռ առկա է: Դարձյալ պետք է կատարել աշխատանքի կեսը: Բայց սա 1.-ից և 2.-ից տարբերվող կես է: 4.-ը գոնե համաչափ է՝ երկու կողմերն էլ տառապում են:

5. Եթե մենք հասնում ենք *դրական գերազանցման*, ապա աշխատանքը կատարված է: Այստեղ էլ խնդիրը կարող է լինել այն, որ մենք չափազանց հեռու ենք գնացել «սահմաններից դուրս գալու» մեր ջանքերում: Հնարավոր է, որ առաջարկը եղել է չափազանց ստեղծագործական՝ ըմբռնելի լինելու համար, իսկ լուծումը չափազանց արտասովոր է:

Վերադառնանք զգեստի սցենարին: Դյուրին է ձևակերպել ազնիվ կամ նրբանկատ պատասխան: Բայց այն, ինչը և՛ ազնիվ է, և՛ նրբանկատ, չի առաջանում ինքնին: Ինչ-որ տեղ ձևակերպումն արգելափակված է: Բայց այնուհետև տեղի է ունենում ցատկ: Արգելքը կամ խոչընդոտը գերազանցվում է. «Մայրիկ, դու հիանալի անձնավորություն ես, և կապույտ զգեստը շատ լավ արտացոլում է քո ողջ անհատականությունը»: Դստեր կոնֆլիկտը ազնիվ և նրբանկատ լինելու միջև անսպասելի համդիպում է և՛ մեկին, և՛ մյուսին՝ պարզապես շրջանցելով պիրկ զգեստի ողջ խնդիրը՝ մի այլ սկզբունք և զգեստ առաջարկելու միջոցով: Այդ կերպ նա փոխակերպում է ողջ կոնֆլիկտը:

Բայց վերոնշյալը չի երաշխավորում, որ «Ես դեռ երիտասարդ եմ» և «Զգեստը բոլորովին չի սազում ինձ» գաղափարների միջև մայրիկի կոնֆլիկտի լուծումը կայուն ընդունվել է վերջինիս կողմից: Նա իսկապե՞ս պատրաստվում է փորձել կապույտ զգեստը: Այն իսկապե՞ս կսազի նրան: Խնդիրները կարող են առաջանալ նաև կապույտ զգեստի հետ կապված: Մայրիկը կարող է ունենալ ավելի խորը խնդիրներ: Գուցե նա ցանկանում է իր դստեր և մյուսների կողմից ստանալ ընդհանուր հավանություն առաջին զգեստի համար՝ որպես նրա համար կատարյալ, որովհետև ինքը կատարյալ է, և երկու կատարելություն լրացնում են միմյանց:

Գերազանցման միջոցով մենք փոխակերպել ենք կոնֆլիկտը՝ դարձնելով այն ավելի կառավարելի: «Լուծում» բառը չափազանց բացարձակ է, ինչպես հստակորեն սահմանված մաթեմատիկական խնդիրների լուծման դեպքում: Իրական կյանքն ավելի բարդ է: Բայց կապույտ զգեստի ուղղությամբ փոխակերպման միջոցով կոնֆլիկտն ինչ-որ ձևով անհետանում է, ինչպես ցողն առավոտյան արևի տակ: Իսկ մայրիկը կառչում է փոխակերպումից, որովհետև ցանկանում է դուրս գալ այն անելանելի կացությունից, որում նա հայտնվել էր՝ դստերը ճնշման տակ դնելով: Ժամանակակից աքսեսուարը կլուծեր հնաոճ կապույտ զգեստի խնդիրը: Բարեբախտաբար, նա գնում է համադասարանցիների հետ հանդիպմանը լավ տրամադրությամբ. գոնե մենք հույս ունենք, որ այդպես է:

Այնուհետև, դուստրը զանգահարում է իր սիրեցյալին և ասում. «Ափն ազատ է»:

Եվ դրանից հետո մայրիկն ու դուստրն ապրեցի՞ն երկար ու երջանիկ: Դե այո, մինչև հաջորդ կոնֆլիկտի ի հայտ գալը: Այնուհետև ծագում է հարց՝ արդյո՞ք նրանք որևէ բան սովորեցին: Գուցե նրանք կարող էին առանձին կամ միասին վերադառնալ սկզբնական կոնֆլիկտին: Գուցե մայրիկը կարող էր խորհել, թե ինչու չընտրեց կապույտ զգեստն անմիջապես և ինչու նման ճնշում գործադրեց դստեր վրա: Իսկ դուստրը կարող էր հարցնել ինքն իրեն, թե ինչու չգտավ պատասխանն ավելի արագ: Միայն այս ամենից հետո է, որ կոնֆլիկտը «վերհանվում» է և գերազանցումն ընդունվում է անվերապահորեն: Միայն սրանից հետո է, որ կարող ենք խոսել կայուն ելքի մասին: Ցանկացած փոխակերպում միայն նախնական է: Սկզբնական կոնֆլիկտը դեռ առկա է, մինչև չգոլորշիանա՝ ենթարկվելով ջերմային լավ մշակման:

Մեկ այլ օրինակ՝ կապված բջջային հեռախոսի հետ:

Ավելի շուտ անխոհեմ, անկիրթ, տհաճ է նա, ով չի անջատում իր բջջային հեռախոսը հանդիպման, դասախոսության, ներկայացման, համերգի, օպերայի ժամանակ, օրինակ, «Արդայի» թեժ

պահին, օրինակ Թբիլիսիում: «Ես սպասում եմ կարևոր հաղորդագրության»՝ հիանալի է, լավ, մնացեք տանը կամ սպասեք հաղորդագրությանը դրսում:

Հարցը այն է, թե ինչպես ասել դա աշխատանքային խմբի 25-30 եռանդուն մասնակիցներին: Ահավասիկ, որոշ նորմեր և կանոններ.

- Դուք պետք է պաշտպանեք խումբին և ձեզ մեծ ընդհարումներից:
- Դուք չպետք է լինեք չափազանց մեղադրող և բարոյախոսող:

Այլ կերպ ասած՝ դուք պետք է ասեք այլ առանց այս ասելու: Գրավոր հաղորդագրությունը կամ Ժեստերի լեզուն փոքր-ինչ դատապարտող են, օրինակ՝ դատապարտող է սեփական հեռախոսն անջատելու պահը ժպիտով արձանագրելը:

Իմ նորվեգացի ընկերը՝ խաղաղության հիմնահարցերի հոյակապ հետազոտող Յորգեն Յոհանսենն առաջարկել է լավ լուծում. «Հիշե՛ք կրկին միացնել ձեր բջջային հեռախոսները սեմինարից հետո, որպեսզի բաց չթողնեք որևէ կարևոր հաղորդագրություն»: Գերազանց է: Կառուցողական է և, միևնույն ժամանակ, ապագային կողմնորոշված, որովհետև հեռախոսը պետք է անջատված լինի, որպեսզի մենք կարողանանք այն կրկին միացնել:

Հաղորդագրությունն ընդունվում է ժպիտով և ընկալվում է:

Կրկին առաջանում է նույն հարցը՝ ինչպե՞ս սովորենք մեծանուններ:

Կյանքը դպրոց է, լավ, բայց այդ դեպքում կան շատ մարդիկ, ովքեր նույնիսկ մանկապարտեզ չեն հաճախել: Իմ սեփական փորձը ցույց է տալիս, որ ոչ մի ազգ այնքան սոցիալապես փորձառու չէ, ինչքան ամերիկացիները, թերևս, որովհետև նրանց բազմակարծիք հասարակությունը ստիպում է գտնելու կոնֆլիկտն անհետացնող կամ, գոնե, կոնֆլիկտ չառաջացնող բանաձևեր:

Գերազանցումը, կարճ ասած, և՛ մեկը, և՛ մյուսը բանաձևը գտնելու արվեստն է: Այդ կերպ կոնֆլիկտը փոխակերպվում է, որովհետև մենք ձևափոխել և շրջել ենք նպատակները: Եթե այս փոխակերպումն ընդունված է և կայուն, ապա կարող ենք խոսել «լուծման» մասին: Թանկարժեք զգեստը, որը մայրիկի հնարավորություններից նշանակալիորեն դուրս էր և այդ պատճառով՝ անկայուն, չէր լինի լուծում: Ամեն ինչ կարող էր վատթարանալ: Փոխակերպումը կարող էր տանել մեզ մոխրից դեպի կրակը. «Կապույտ զգեստն իմ մայրիկի զգեստն էր, որը նա կրում էր այն օրը, երբ մահացավ»: Այդ դեպքում մենք կարող ենք խոսել ոչ թե կոնֆլիկտի փոխակերպման, այլ «սխալ ձևավորման» մասին: Կոնֆլիկտը մտել է փակուղի: Ստեղծագործականությունը լավ է, բայց խորն ապրումակցումը նույնպես անհրաժեշտ է:


Վերջապես, ամեն տեղ մի փնտրեք հակասություններ:

Ուսանող – Ես այնքան շատ եմ ցանկանում ունենալ ավելի հարուստ ներաշխարհ: Ես ցանկանում եմ զբաղվել մեդիտացիայով, *կարդալ* միստերիաներ, *ապրել* միստերիաներ: Բայց ես նաև սիրում եմ իմ սքեյթ-բորդը և Պորշեն: Առանց դրանց դժվար է ապրել:

Նորվեգիայում կար մի առած: Կոնֆլիկտն իրենց աշխարհին նվիրածների և իրենց Աստծուն նվիրածների միջև էր: Կալիֆորնիայում մեծան կոնֆլիկտ լինել չի կարող: Այնտեղ կարելի է զբաղվել մեդիտացիայով սքեյթբորդի վրա կամ Պորշեում: Նյութական իրերը շատերի համար մանրուքներ են, այդ իսկ պատճառով անպայման չէ, որ լինեն հոգևորի հետ հակասության մեջ:

ԱՐԵՎ

Ժամանակին կային երկու հարևաններ՝ Ա և Բ: Նրանք ապրում էին գեղեցիկ այգիներով շրջապատված գեղեցիկ տներում, որոնց հատակագծերը պատկերված են գծապատկերում.



Ա-ն և Բ-ն արմատականներ են, բայց՝ տարաբնույթ:

Ա-ն *այգու արմատական է* և հենց մոր մի փոքրիկ թփուտ է տնկել իր տան դիմաց: Նա բավականություն է ստանում՝ նայելով, թե ինչպես է այն աճում, ինչպես փոքրիկ ծաղը, որն աստիճանաբար պատվում է մորթով: Բ-ն *սուրճի արմատական է*, և նրա համար օրվա գերագույն պահը մայրամուտին մի գավաթ սուրճ խմելու պահն է, որը հիշեցնում է նրան հին, լավ օրերը, երբ նրա առանձնատունը միակն էր այդ տարածքում՝ առանց հարևանների:

Ընթերցողն արդեն զգում է մոտալուտ ողբերգությունը: Թփուտն աճում է վերահսկողությունից դուրս՝ բարձրությամբ, լայնությամբ, բոլոր ուղղություններով, այդ թվում՝ նաև խորությամբ և, առաջին հերթին, խտությամբ: Ա-ն բավականություն է ստանում իր նպատակի ամբողջական իրականացումից՝ ամբողջությամբ փթած թփուտից: Միևնույն ժամանակ, Բ-ն տեսնում է

իր նպատակը՝ սուրճ մայրամուտին, բայց դա արդեն պարզապես սուրճ չէ, մնացել է միայն դրա ստվերը:

Կոնֆլիկտաբան – խնդրում են, առաջ շարժվեք և գտեք կոնֆլիկտի փոխակերպում, որը ներառում է լուծում երկու կողմերի համար, այլ կերպ ասած, ինչ-որ բան, որն ընդունելի և կայուն է ողջ Ա-Բ համակարգում: Իհարկե, գոյություն ունի ավանդական (ԱՄՆ) ելք. Բ-ն գնում է շղթայակապ սղոց խլացուցիչով և գիշերվա ընթացքում կտրում փարթամ թփուտը հիմքից, իսկ այնուհետև արմատախիլ անում, որից հետո Ա-ն հանում է ատրճանակն իր սեղանից, որը գուցե նախատեսված էր իր կնոջ կամ իր համար, և սպանում Բ-ին: Սա կայուն, բայց ոչ փոխադարձաբար ընդունելի լուծում է:

Մենք անմիջապես զգում ենք փոխգիջման անհամապատասխանությունը: Թփուտն էտված է, կտրված և ֆիլտրում է թույլ արևը դեպի Բ-ի առանձնատուն, մինչդեռ Ա-ն տխուր մայում է իր հատված թփուտին: Ինչպես նշվել էր, այս գրքի դրույթներից մեկն այն է, որ (գրեթե) բոլոր փոխգիջումներն ունեն այս չմեղմացնող բնույթը, նույնիսկ եթե շատ հազվադեպ փոխգիջումը միակ ընդունելի ելքն է բոլոր կողմերի համար:

Այս կոնֆլիկտին լուծում փնտրողները հաճախ բաժանվում են երկու խմբի: Կան մարդիկ, ովքեր հասկացել են գործի էությունը և կարծում են, որ դա դեպի ուղղակի գերազանցում ցատկելու հարց է, որը ղեկավարվում է ներըմբռնմամբ, և որ ելքը կախված է հանճարեղությունից: Երբեմն՝ այո: Բայց մյուս խումբն ըմբռնել է գործի էությունն ավելի լավ: Նրանք սկսում են գծել հիմնական գծապատկերը՝ երկու առանցքներով և հիմք կետերով, որոնցից յուրաքանչյուրը բղավում է. «Ո՞վ են ես կոնկրետ», «Ի՞նչ են նշանակում այս կոնֆլիկտում»: Այդ հիմնական գծապատկերը համակարգային մեթոդի կրողն է, որը փիլիսոփաներն անվանում են էվրիստիկա, իսկ մաթեմատիկոսները՝ ալգորիթմ: Շտապենք ավելացնել միայն, որ չի երաշխավորվում, թե պատկերը միշտ առաջ կբերի ելք, որը կարող է ընդունվել: Սակայն, եթե նման բան գո-

յություն ունի, այն սովորաբար կարող է դասակարգվել հինգ կետերով: Այն նման է հին չինական ասացվածքին, թե ինչպես օգնել սթրեսում գտնվող մարդկանց. «Ես ձեզ կարող եմ ծուկ տալ: Բայց ավելի լավ է ձեզ սովորեցնել ծուկ բռնել»: Լավ է ասված, բայց դա ենթադրում է, որ, նախևառաջ, լծում կամ գետնում ծուկ կա:

Սկսեք գծապատկերում առկա ծայրահեղ կետերի սահմանումից՝ այն կետերի, որոնցում արմատականներից յուրաքանչյուրը ստանում է այն, ինչ պահանջում է, իսկ մյուսը՝ ոչինչ: Ա-ի երջանկությունը և Բ-ի դժբախտությունը հեշտությամբ նկարագրվում են, ինչպես և հակառակը: Բայց Բ-ի երջանկությունը կլինի կարճատև, որովհետև թփուտի աճը «բնական» է և այդ պատճառով Ա-ի աչքերում դա մի բան է, որը պետք է ընդունվի: Սակայն թփուտի հատումը հանցագործություն է ինչպես բնության, այնպես էլ մարդու սեփականության դեմ, և այդ պատճառով անընդունելի է: Ծայրահեղականները հաճախ ներկայացնում են իրենց որպես «բնական»:

Ձախ կողմի ներքևում գտնվող այդ փոքր ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը կետերը կարևոր են: Այն կարող է լինել լուծման կամ մի քանի լուծումների հատկանիշներ: Այսպես, հարևանը՝ Գ-ն, կարող է սիրալիր զրուցել նրանց հետ և անել այնպես, որ նրանք հրաժարվեն իրենց նպատակներից՝ հօգուտ Գ-ի տանն Աստվածաշնչի ուսումնասիրության: Կամ նա կարող է ընդունել և՛ թփուտը, և՛ սուրճը, բայց հրավիրել նրանց վայելելու դրանք իր՝ զգալիորեն ավելի մեծ այգում: Կամ Դ և Ե հարևանների հետ նա կարող է գրավել երկու այգիներն էլ, հեռացնել թփուտը և սուրճի սեղանը՝ Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության խաղաղության հարկադրման, ոչ թե խաղաղապահության մասին 7-րդ գլխի համապատասխան: Որից հետո Ա-ն և Բ-ն հնազանդորեն կհրաժարվեն իրենց նպատակներից՝ համապատասխանաբար թփուտից և սուրճից:

Երեք դեպքերն էլ գերազանցում են այնքանով, որքանով ստեղծում են նոր իրականություն, բայց դրանք նաև բացասական

են, քանի որ ժխտում, չեղյալ են հայտարարում կոնֆլիկտի կողմերի սկզբնական նպատակները՝ անգամ, եթե այդ ժխտումը դրականորեն է աշխատում կողմերի համար:

Մնում է 5-ը՝ և՛ մեկը, և՛ մյուսը՝ շրջմամբ: Կա մի քանի տարբերակ: Բ-ն կարող էր փոխել իր նախասիրությունը՝ հոգուտ առավոտյան լույսի՝ մայրամուտին սուրճ խմելու փոխարեն վայելել սուրճ արևածագին: Լուծման այս տարբերակը կարևոր է, քանի որ այն ազատում է մեզ այն ավանդական ենթադրությունից, թե «երկու կողմերն էլ պետք է զիջեն, ինչ-որ բանից հրաժարվեն, որպեսզի լուծումն աշխատի»: Համաչափությունն ինքնանպատակ չէ, այն թույլ մարդու կոնֆլիկտային փոխոստիակության մասն է իրականում: Մեր նպատակն է ոչ թե ճնշել հավասարությունը, այլ գտնել ինչ-որ բան, որը երկու կողմերն էլ կարող են ընդունել, և այնքան կայուն, որ այն դառնա համոզիչ, ակնհայտ: Ընդունելի լինելու և կայունության մկատմամբ այս դիրքորոշումը կողմերի մեջ է, ոչ թե համաչափության վերաբերյալ ենթադրություններով լի արտաքին միջնորդի: Ընդհանուր առմամբ, համաչափությունը լավ ուղեցույց է, իսկ անհամաչափությունը վատ մեկնակետ, բայց ոչ այս դեպքում:

Մարդկանց մեծ մասը տեսնում է մի այլ լուծում. սուրճի սեղանը կարող է օգտագործվել որպես կամուրջ հողամասերի միջև՝ սահմանի վրա՝ թփուտից դեպի հյուսիս-արևելք: Ա-ն և Բ-ն հենց այդտեղ, սուրճի համար կհանդիպեն առավոտյան և երեկոյան: Ա-ն կնստի հյուսիսային կողմում այնպես, որ կարողանա մայել իր փարթամ թփուտին ու վայելել դրա գեղեցկությունը, իսկ Բ-ն՝ հարավային կողմում՝ դեռևս փոքր-ինչ ալերգիա ունենալով թփուտներից: Սրանով դուրս կբերվի ստվերման գործոնը, քանի որ առաջարկում առկա է և՛ մեկը, և՛ մյուսը՝ թփուտը և արևային սուրճը: Բացի այդ, կողմերը շահում են բարի դրացիություն, գուցե նաև՝ ընկերություն:

Եվ դրանից հետո նրանք ապրու՞մ են երկար ու երջանիկ: Դե, հնարավոր է, որ Բ-ն չի ցանկանում արթնանալ բավական վաղ՝

արևածագին, սուրճ խմելու համար: Յնարավոր է, որ Ա-ն ընդհանրապես սուրճ չի խմում, և որ նրանցից ոչ մեկը չի ցանկանում խմել սուրճ մյուսի ուղեկցությամբ: Լուծումը իր հետ բերում է ինչ-որ փոփոխություն, որոշ չափով՝ «նոր իրականություն», զուցե նույնիսկ չափից շատ նոր իրականություն՝ անկախ նրանից կողմերը հասնում են դրան ինքնուրույն, թե կոնֆլիկտաբանի օգնությամբ:

Տեսնենք, թե էլ ինչ տարբերակներ ունենք:

Գ-ն կարող է կրկին բեմ դուրս գալ՝ իր սեփական գաղափարներով: Բայց դրանք հազիվ թե կայուն լինեն, նույնիսկ եթե ընդունվեն: Գ-ն պետք է զոհաբերի իր ժամանակի և այգու մեծ մասը: Յնարավոր է նաև, որ կողմերը հրաժարվեն իրենց նպատակներից, այլ ոչ թե հանձնեն կոնֆլիկտը Գ-ին: Ա-ն կարող է հրաժարվել իր թփուտից՝ արմատախիլ անելով այն, իսկ Բ-ն կարող է հրաժարվել իր սուրճից և հեռացնել սեղանը: Երկուսն էլ դժբախտ են, բայց կարող են փոքր-ինչ մխիթարվել, որ այս ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը համաչափ են: Նրանք, շատ թե քիչ, հավասարապես դժբախտ են: Ինչ-որ առումով առկա է բացասական գերազանցում:

Այս պահին կոնֆլիկտաբանը կրկին բեմ է դուրս գալիս՝ խթանելու ավելի խորը երկխոսություն: Երկխոսությունը միշտ հարցադրումներ անելն է, որոնումը, բայց միևնույն ժամանակ առկա է ուղղվածություն: Ուշադրության կենտրոնում այլևս կոնֆլիկտի *ախտորոշումը*՝ քարտեզագրումը չէ: Մենք ենթադրում ենք, որ այժմ կողմերը լավ են պատկերացնում հիմնական գծապատկերը: Մենք նաև չենք փնտրում *բուժում*՝ լուծումներ, ելքեր, որոնք կարող են ընդունվել, քանի որ դրանք արդեն սեղանի վրա են: Այժմ մենք ուսումնասիրում ենք *կանխատեսումը*՝ կանխագուշակումները: Եթե Ա-ն իսկապես պատրաստվում է փորձել պահպանել իր փարթած թփուտը, կոնֆլիկտաբանի համար խելամիտ չէ հարցնել.

- Ա, ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս կարծազանքի Բ-ն երկարա-
ժամկետ հեռանկարում:
- Նա պետք է լուռ համաձայնի:
- Դուք այդպե՞ս կվարվեիք, եթե լինեիք նրա փոխարեն:
- Իհարկե ո՛չ: Բայց ես իսկական տղամարդ եմ, իսկ նա՝ ո՛չ:
- Կարծում եք բարի դրացիական հարաբերություններ կա-
րո՞ղ են հետևել այս ամենին:
- Գուցե ոչ, բայց դա գործին չի վերաբերում: Սա ի՛մ այգին
է, ի՛մ թփուտը:
- Այլ կերպ ասած, տարիները կհաջորդեն իրար առանց
հարևանի՞, ով կօգնի ձեզ արտակարգ իրավիճակներում:
- Չը՛մ: Լուրջ բան եք ասում: Ինչպես հրդե՞հը, օրինակ:

Երկխոսության մեջ բեկումնային պահը սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ մյուս կողմի պատասխանը հաստա-
տականից վերածվում է հարցականի: Ա-ն, կարծես, մի քիչ եսա-
սեր է, և վերջին հարցը հարվածում է նշանակետին:

Կարիք չկա նշելու, որ կոնֆլիկտաբանը պետք է ունենա
քարտեզը՝ հիմնական գծապատկերը մտքում և ցանկացած պա-
հի ի վիճակի լինի կազմելու բոլոր ելքերը՝ համեմատությունները
խաղարկելու համար: Սա հաճախ հանգեցնում է արդյունքների և,
ինչքան ավելի լավ լուծումներ են ի հայտ գալիս, այնքան ավելի
լավ, ինչպես այստեղ:

Ձգալիորեն ավելի բարդ է, եթե կոնֆլիկտը միայն ակնհայտ
վերաբերում թփուտին և սուրճին: Դա հասկանալու համար մեզ
անհրաժեշտ չէ քրքրել Ա-ի և Բ-ի հոգու խորքերը կամ այլ մարդ-
կանց՝ Ս-ի, Ն-ի, Մ-ի հետ կոնֆլիկտները, որոնք նրանք պրոյեկ-
տում են իրավիճակի վրա: Գոյություն ունի մի այլ կոնֆլիկտ, որը
շատ հաճախ ծառայում է որպես ֆոն տեղի ունեցող կոնֆլիկտի
համար, և այդ կոնֆլիկտը թփուտի ու սուրճի վերաբերյալ չէ՝ ան-
կախ նրանից, թե ինչքան կարևոր դրանք կարող են լինել: Դա
կոնֆլիկտ է *իրավացիության, սեփական արդարամտության* վե-
րաբերյալ: Ուշադրությունն այլևս այնպիսի հստակ նպատակների

վրա չէ, ինչպիսիք են թփուտը և սուրճը, այլ այս նպատակների արդարացման, օրինականացման: Օրինակ.

Ա. Սա ի՞նչ հողամասն է, ի՞նչ ընտրությունը, և թփուտն ի՞նչ կողմում է:

Բ. Այն ձեր կողմում է, բայց ստվերն ընկնում է ի՞նչ հողամասի վրա և ինձ վնաս է պատճառում:

Ո՞ր հիմնավորմանը կաջակցի դատական գործընթացը: Պատասխանը ստանալու համար մենք գնում ենք դատարան՝ տեսնելու, թե ինչի կհասնեն փաստաբանները և դատավորը: Դատական գործը հենց իրավացի, անմեղ, ոչ պատասխանատու ճանաչվելու վերաբերյալ է՝ ի տարբերություն անիրավացիին, մեղավորին, պատասխանատուին: Սա կարևոր է:

Բայց դատական գործընթացը չի կարող հանգեցնել գերազանցման և փոխակերպման: Երկու կողմերը չեն կարող միաժամանակ ճանաչվել իրավացի, ոչ էլ կարող են ճանաչվել մասամբ իրավացի: Գերազանցումը և փոխգիշումը խնդրահարույց են դատական գործերում: Ըստ էության, մնում է երեք տարբերակ. դատական՝ «Ա-ն իրավացի է, իսկ Բ-ն՝ ոչ», «Բ-ն իրավացի է, իսկ Ա-ն՝ ոչ», հեռացում՝ «Գործը կարճվել է» կամ էլ «Կողմերին առաջարկվում է ինքնուրույն լուծում գտնել»: Այլ կերպ ասած, «Ա-ն հաղթում է», «Բ-ն հաղթում է», ինչպես մենամարտում, մրցաշարում, պատերազմում, կամ «չլուծված՝ նրանք հեռացան»: Դատարաններն ունեն կոնֆլիկտի ելքերի սահմանափակ հավաքածու՝ միայն երեքը հիմնով: Օրենքն օրինականության վերաբերյալ է, ոչ թե լուծումների:

Ի՞նչ է տեղի ունենում պարտվողի հետ: Նա կարող է բողոքարկել: Բայց երբ այդ հնարավորությունը սպառվել է, այնուհետև ի՞նչ: Տեսականորեն դատական համակարգը բավականին օրինական է՝ օրինականացնելու օրինականության վերաբերյալ որոշումը: Բայց դյուրին չէ լինել մեկի հարևանը, ով հաղթել է դատական գործ և ամբողջությամբ վայելում է «ես իրավացի էի» միտքը: Ընդունելի լինելն անհրաժեշտ է դատարանի որոշումը

կայուն դարձնելու համար, և կանգնած է պարտված կողմի վրիժառության ու փոխհատուցում ստանալու ճանապարհին: Ելքը պայմանավորում է նաև կողմերի միջև սոցիալական հարաբերությունները, իսկ վատ սոցիալական հարաբերությունները կարող են իրենց հերթին հանգեցնել ընդունելի լինելու և կայունության ցածր մակարդակի:

Կայունությունը սոցիալական հարաբերություններում, ընդհանուր առմամբ, անհամատեղելի է կոնֆլիկտային գործընթացներին, որոնք սահմանում են հաղթողներ ու պարտվողներ, մասնավորապես՝ դատական գործերի ժամանակ: Այս փաստարկը թուլանում է, եթե կողմերը չեն պատրաստվում հանդիպել միմյանց դատական գործից հետո, ինչպես բաժանման կամ ամուսնալուծության վարույթների դեպքում: Նրանց հանդիպումները հաճախ կլինեն կարճատև, բռնի, ապակառուցողական: Կարճ ասած, գոյություն ունեն լավ փաստարկներ հարևանների միջև դատական գործերից խուսափելու համար: Ավելի լավ է դիմել գերազանցմանը, փոխակերպմանը:

Դիտարկենք ժառանգության վերաբերյալ դեպք: Եթե խոսքը հարազատ եղբայրների և քույրերի միջև պարզ բաշխման մասին է, ըստ բանաձևի, որը նրանք, ի վերջո, ընդունել են, ապա դա այնքան էլ խնդրահարույց չէ: Բայց, եթե յուրաքանչյուր կողմ պնդում է, որ ամենամեծ բաժինը պետք է ինքն ստանա, որովհետև «ծնողները ամենաշատն իրեն են սիրել», ապա դժվար է գերազանցել հակասությունը: «Ամենաշատը Ս-ին» պնդումը կբացառի «ամենաշատը Ն-ին» պնդմանը:

Բայց արդյո՞ք հանդգնած ենք դրանում: Գուցե այն, ինչ պետք է ժառանգվի՝ անշարժ ու շարժական գույքը և փողը, կարող է բաժանվել երկու մասի: Կողմերը կարող են վերցնել այն, ինչն ամենամոտն է իրենց սրտին: Նպատակները կարող են բաժանվել ենթանպատակների: Մի փոքր տարբերակմամբ նույնիսկ տրամաբանորեն անժխտելի հակասությունները թուլանում են:

Տղա. «Ես սիրում եմ պապիկին (90 տարեկան) և նրա պատմություններն ավելի շատ, քան հայրիկին (50 տարեկան)»: Բայց ի՞նչ կասես ձկնորսության մասին: «Դե, հայրիկն ավելի լավն է այդ գործում»: «Այնպես որ, գուցե, ամառվա կեսը կարելի է անցկացնել հայրիկի հետ, իսկ մյուս կեսը՝ պապիկի»: Հարթ, համաչափ փոխգիջում: Բայց հաջորդ տարի բոլոր երեքը գնում են հանգստանալու միասին: Հայրիկը ծուկ է բռնում, պապիկը պատմում է պատմություններ, և նրանք բոլորը վայելում են միմյանց ընկերակցությունը:

Գոյություն ունեն «արևի թեմայի» բազմաթիվ տարբերակներ: Նախևառաջ, վերցնենք անձրևի տարբերակը: Քարտեզը դեռ ուժի մեջ է, բայց հողամասերն այժմ գտնվում են լանջի վրա, և Ա-ի հողամասն ավելի բարձր դիրքում է: Առանձնատների տարածքում հաճախ է անձրևում, բայց այգիները կլանում են ջուրն ու ուղարկում այն ներքև՝ դեպի ստորգետնյա ջրերը: Մի օր, սակայն, Ա-ն իր հողամասի տարածքը ասֆալտապատում է կամ սալիկապատում, քանի որ դա, ըստ նրա, ավելի գեղեցիկ է: Թփուտները վերածվում են սենյակային բույսերի: Բայց անձրևաջուր այլևս չի կլանվում, հոսում է ներքև՝ դեպի Բ-ի հողամաս, և վերջինիս այգին ճահճանում է, իսկ նկուղում մի ոտնաչափ ջուր է գոյանում:

Այստեղ կա հնարավորություն, որն առկա է նաև թփուտի և սուրճի շուրջ կոնֆլիկտում. Ա-ն և Բ-ն բառացիորեն հեռանում են: Նրանք զգում են, որ առջևում վեճերի տարիներ են, վաճառում են իրենց առանձնատներն ամենաբարձր գինն առաջարկողին այն օրը, երբ արևը պայծառ շողում է և տեղափոխվում են: Կոպիտ ասած, վերևում ասված ամեն ինչ հիմնավորված է նաև այս կոնֆլիկտի համար: Բայց գերազանցումը պետք է լինի շատ կոնկրետ: Այսպես, նրանք կարող էին ունենալ համատեղ ջրամբար: Ա-ից դեպի Բ-ի հողամասն անցնող ջրահեռացման առվի և խողովակների համակարգը կվերացներ Բ-ին հասցվող վնասը:

Դիտարկենք մեկ այլ տարբերակ: Այժմ Ա-ի առանձնատունը գտնվում է ավելի ցածր դիրքում, քան Բ-ինը և ավելի մոտ օվկիա-

նուսին՝ լողափին: Արևմուտքում մայր մտնող արևը հիանալի տեսարան է ապահովում, և Բ-ն ու նրա ծնողները նախկինում վայելել են այդ տեսարանը մինչև այն օրը, երբ պարզ դարձավ, որ Ա-ն պատրաստվում է կառուցել ավտոտնակ «Բ-ի առանձնատան և մայրամուտի միջև», քանի որ ավտոտնակը տեղավորելու համար հողամասը, պարզապես, չափազանց փոքր է:

Հնարավոր լուծումներից մեկը հեշտությամբ տեսնում են որոշ մարդիկ, ավելի դժվարությամբ կամ երբեք՝ ուրիշները. երկու հարևանները կարող էին գտնել ծախսերը կիսելու բանաձև, կառուցել կիսով չափ ստորգետնյա ավտոտնակ, իհարկե, կկազմակերպեին հսկայական երեկույթ՝ տոնելու ծովափնյա ավտոտնակը և կապրեին երկար ու երջանիկ, մինչև տիկնամցից մեկի քսանհինգամյակը:

ԶԳԵՍԱՊԱՀԱՐԱՆ

Յոհան (խաղաղության հիմնահարցերի հետազոտող, կոնֆլիկտաբան) – Մենք ունենք առանձնատուն Իսպանիայում, և մեր ընկերները հաճախ այցելում են մեզ՝ սովորաբար մի զույգ և սովորաբար համակարգչով: Հետմոդեռնիստական կյանքում շատ են փնտրում վարդակներ և հեռախոսի խրոցակներ՝ աշխարհագրական հեռավորությունը հաղթահարելու համար: Մենք որոշեցինք մեր այցելուների համար կառուցել քոտեջ այգում՝ մահճակալով, սեղանով, երկու հոգու համար նախատեսված մոդեմներով, բացի այդ որոշեցինք կառուցել խոհանոցի նստարան, սանհանգույց և այդ ամենը շատ փոքր հողամասում:

Յուսիկո (Յոհանի ծալոնացի կինը, խաղաղության հիմնահարցերի հետազոտող և կոնֆլիկտաբան) – Գաղափարը լավն էր: Բայց, երբ ես տեսա գծագիրը, ինչ-որ բան ակնհայտորեն պակաս թվաց: Ես անմիջապես հարցրեցի՝ որտե՞ղ է զգեստապահարանը: Յոհանի ծայնից և շողշողացող աչքերից պարզ էր, որ նա

չէր մտածել այդ մասին՝ վրիպել էր, բայց որպէս տղամարդ չէր ցանկանում ընդունել դա: Նրա պատասխանը տարօրինակ էր.

Յոհան – Ձգեստապահարա՞ն: Սա Իսպանիան է, հյուրերին հազիվ թէ, ընդհանրապէս անհրաժեշտ լինի որևէ հագուստ, բացի լողավարտիքից և լողազգեստից: Լողավազանը հենց քոտեջի առջևում է:

Ֆրանկո – Լռութիւն: Հայացք:

Յոհան – Լավ, գուցէ նրանց անհրաժեշտ են որոշ հագուստներ: Բայց նրանք կարող են դրանք դնել մեկ կամ երկու ճամպրուկի մեջ, իսկ ճամպրուկները կարող են դրվել մահճակալի տակ:

Ֆրանկո – Լռութիւն: Հայացք:

Յոհան – Լավ: Նրանց անհրաժեշտ է զգեստապահարան: Բայց դրա համար չկա բավականաչափ տարածություն հատակին: Եվ ես չեմ կարող ազատվել սեղաններից մեկից, որովհետև հետո մեր բոլոր ֆեմինիստ ընկերները կասեն, որ գիտեն, թե մեր կարծիքով ով է լինելու այն մեկը, ով չի օգտագործելու համակարգիչը: Աղետ է: Բայց մենք ունենք զգեստապահարան ավտոտնակում: Հյուրերը կարող են դուրս գալ քոտեջից, աստիճաններով իջնել ավտոտնակ և դնել իրենց հագուստներն այնտեղ գտնող զգեստապահարանում:

Ֆրանկո – Դա ընդհանրապէս բնորոշ է տղամարդկանց: Մասնավորապէս, Յոհանին: Այնուհետև կրկին հայացք:

Տրամադրությունը մռայլ էր: Մենք գնացինք քնելու, բայց ունենք համաձայնություն, որ վեճերը չեն տեղափոխվում հաջորդ առավոտ:

Խնդիրը այն էր, որ քնելը, ինչը սովորաբար լավ բանաձև է և՛ մեկի, և՛ մյուսի ձևավորման համար, չօգնեց: Ֆրանկոն երազում

տեսնում էր շրջակայքում չբացված ճամպուրակներով անհանգիստ քայլող հյուրերին, իսկ Յոհանը՝ քոտեջ ներխուժող, մի սեղանը խժռող, ապա հատակին թավալվող հրեշավոր զգեստապահարանը:

Հաջորդ օրն ատաղձագործ ժողեն (իսպանացիների համար՝ Պեպե) ժամանեց հարևան գյուղից: Նա պետք է ամրացներ խոհանոցի նստարանը: Յոհանն ասաց. «Պեպե, մենք խնդիր ունենք» և նկարագրեց կոնֆլիկտը՝ զգեստապահարանի համար չափազանց փոքր տարածության վերաբերյալ: Երկու վայրկյան անց.

Պեպե – Խնդի՞ր: Ես բոլորովին խնդիր չեմ տեսնում: Այն ամենն, ինչ դուք պետք է անեք, պարզապես...

*Կոնֆլիկտա-
բան* – Այո, ի՞նչ ասաց Պեպեն:

Ծայրահեղ դիրքերը պարզ են. Յոհանը պնդում է իրենը՝ ոչ մի զգեստապահարան, իսկ Ֆրանկոն իրենը՝ զգեստապահարան լինելու է, և ինքն է որոշելու, թե որտեղ է դրվելու այն, իսկ երկու սեղանները ավելորդ են: Միանգամայն պարզ է, թե ինչպիսին կլինեն փոխգիջումը. երկու փոքր սեղաններ՝ բավականաչափ մեծ՝ համակարգիչների, բայց ոչ բավական մեծ փաստաթղթերի և գրքերի համար ու մեկ շատ փոքր զգեստապահարան՝ չափազանց փոքր բավականաչափ կախիչներ տեղավորելու համար: Երկու կողմն էլ դժգոհ կմնար: Որտե՞ղ է գերազանցող լուծումը:

Որոշ մարդիկ անմիջապես տեսնում են լուծումը, մյուսները՝ ոչ: Ակնհայտ է, որ մի անգամ ձևակերպվելով, այն իր հետ բերում է նոր ճարտարապետական իրականություն.

Պեպե – Օգտագործեք պատերը: Տեղադրեք պահարաններ առաստաղին մոտ՝ վերնաշապիկների ու բլուզների, գուլպաների ու ներքնազգեստների համար, նաև մի քանի երկաթյա ձողեր՝ կախելու կախիչներ, զգեստների, բաճկոններ ու նմանատիպ իրեր:

Եզրակացություն – Յոհանն ու Ֆոմիկոն ավելի շատ սոցիալական երևակայություն ունեին, քան ճարտարապետական, մինչդեռ Պեպեն կարող էր օգտագործել իր պրոֆեսիոնալիզմը և փորձը տների, նրանց սեփականատերերի և զգեստապահարանների առնչությամբ:

Կոնֆլիկտաբան զույգն ակնհայտորեն որոշակի համակվածություն ուներ հատակի՝ երկչափ, ոչ թե եռաչափ տարածության հանեպ՝ շատ անհարմար Յոհանի համար՝ հաշվի առնելով նրա մաթեմատիկական կրթությունը: Առավել ևս, որ նա այդքան շատ է սիրում պատմել երկու պատմություն՝ մեկը Հարավային Բևեռում գտնվող մի մարդու մասին, իսկ մյուսը՝ աղքատ մկնիկի:

Ժամանակին Հարավային Բևեռում կար մի մարդ, ով երկնքից ծայն էր լսել. «Դուք պետք է շարժվեք տասը սանտիմետր, բայց ձեզ չի թույլատրվում գնալ դեպի հյուսիս: Եթե դուք չկարողանաք անել դա, դուք կվերածվեք սառույցի»:

Յուրաքանչյուր քայլ դեպի առաջ քայլ է դեպի հյուսիս: Սակայն սառցե արձան դառնալու ցանկությամբ այլընտրանքն ակնհայտ է:

Մի ժամանակ կար մի փոքրիկ մկնիկ, որին սադիստ հոգեբանը տեղադրել էր լաբիրինթոսի մեջ՝ գնահատելու «վարքագիծը խաչածն ճնշման ներքո»: Բոլոր ելքերի դիմաց տեղադրվել էին պանրի և մսի չափազանց գայթակղիչ կտորներ: Բայց դրանց և մկնիկի միջև կային թթուներ, էլեկտրական շոկ, կրակ և այլ խոչընդոտներ: Բարեբախտաբար մկնիկն ուներ բջջային հեռախոս և զանգահարեց կոնֆլիկտաբանի՝ ստանալու խորհուրդ, թե ինչպես կարելի է նվաճել դրական նպատակները, իսկ բացասականներից՝ խուսափել: Կոնֆլիկտաբանն անմիջապես հարցրել էր՝ կա՞ արդյոք առաստաղ լաբիրինթոսում: Այն բացակայում էր: «Սկսի՛ր վազել», - ասել էր կոնֆլիկտաբանը, - «վազի՛ր այնքան արագ, ինչքան կարող ես, այնուհետև ցատկի՛ր»: Եվ մկնիկն անվնաս հայտնվել էր հենց նրբահամ կերակուրի դիմաց:

Վերը նշված երեք օրինակներն էլ ստեղծագործականություն են ենթադրում՝ բացահայտելով *մոռացված չափումը* կամ փոփոխականը: Բոլոր երեք դեպքերում չափումը երկրաչափական է՝ բարձրություն, դեպի վեր: Երեք դեպքերն էլ ցույց են տալիս, թե ինչպես ենք մենք կապված երկչափ հատակին, սառցադաշտին, երկրագնդի մակերևույթին: Եթե էյնշտեյնը կիրառել է քառաչափ տարածություն իր հարաբերականության տեսությունը ձևակերպելու համար՝ գերազանցելով դասական նյութոնյան ֆիզիկան՝ կապված եռաչափ էվկլիդյան տարածության հետ, ապա մենք պետք է առնվազն կարողանանք մայել դեպի վեր և զննել եռաչափ տարածությունը:

Մինչև այժմ հիշատակվել է ստեղծագործականության երկու աղբյուր: Առաջինը՝ ներկայացնել նախորդ փորձից հայտնի որևէ լուծում՝ «դա ինձ հիշեցնում է» սկզբունքով, իսկ այնուհետև պրոյեկտել այդ լուծումը մի կոնֆլիկտից մյուսի վրա: Երկրորդը՝ հարցնել՝ կարո՞ղ էին լինել որևէ ենթադրություններ, որոնք միավորում են կոնֆլիկտի կողմերին, և խոչընդոտո՞ւմ է այդ համաձայնությունը ստեղծագործականությանը: Նման ենթադրությունները սովորաբար ակնհայտ են, մույնիսկ՝ հանրահայտ, չունեն ձևակերպման կարիք, անգիտակցական են: Այլ կերպ ասած, կոնֆլիկտաբանը պետք է սովորի լսել այն, ինչ չի ասվել, պետք է կարողանա տեսնել անտեսանելին, բացահայտել ենթադրությունները և զգուշորեն շրջել դրանք:

ԱՆՀԱՎԱՏԱՐՍՈՒԹՅՈՒՆ

Մենք անցնում ենք զգեստապահարանից դեպի անհավատարմություն՝ երկուսն էլ ամուսնության հնարավոր բաղադրիչներն են:

Կինը –

Դա շարունակվել էր մի քանի տարի իմ լավագույն ընկերուհու հետ: Ես միակ մարդն էի, ով

չգիտեր այդ մասին: Մի օր նա մոռացել էր ջնջել ինքնապատասխանիչից հանդիպման տեղի և վայրի մասին հաղորդագրությունը: Կանացի ծայն, որը ես ճանաչեցի: Գնացի հանդիպման վայր, թաքնվեցի մի ծառի հետևում, և իմ վատագույն կասկածները հաստատվեցին: Ես այնքան բարկացած էի, որ կարող էի երկուսին էլ սպանել, բայց չունեի ատրճանակ: Այժմ ամեն ինչ կործանված է, ամեն ինչ, իսկ մենք ունեինք այնպիսի հրաշալի երեխաներ, լավ ծնողներ, ընկերներ, հարևաններ, գործընկերներ, հիանալի առանձնատուն...

Տղամարդը –

Իմ կինը լավագույնն է աշխարհում, բայց պատահեց այն, ինչ պետք է պատահեր: Եղածը կնոջս օգտին չէր, միանգամայն պարզ է, բայց այն, ինչ ես արեցի, նրա դեմ էլ չէր: Պարզապես այդպես ստացվեց: Հոգեբանորեն լիովին հնարավոր է սիրել երկու կանանց և ֆիզիկապես լիովին հնարավոր է սիրով զբաղվել երկու կանանց հետ, բայց սոցիալապես դա անհնարին է: Ես գիտեմ դա, ես հասկանում եմ դա: Այժմ ամեն ինչ քայքայված է, ամեն ինչ: Իսկ մենք ունեինք սքանչելի առանձնատուն, հրաշալի երեխաներ, լավ ծնողներ, ընկերներ, հարևաններ, գործընկերներ, և ես կորցրեցի այդ ամենն ու երկու հրաշալի կանանց միայն հիմար ինքնապատասխանիչի պատճառով:

Մյուս կինը –

Նա դավաճանել է իր կնոջը, իսկ ես դավաճանել եմ իմ լավագույն ընկերուհուն: Նույնիսկ չգիտեմ, թե որն է ավելի վատ: Ինձ սողունի մման եմ զգում՝ շատ անազնիվ: Ես արդեն

վաղուց են ինձ այդպես զգում, բայց նախկինում ուղղակի ի վիճակի չէի կանգ առնել: Նա այնքան քնքուշ, այնքան բարի էր իմ նկատմամբ, մի օր անգամ ինչ-որ բան ասաց այն մասին, թե հնարավոր է, որ իր կինը նույնպես սիրեցյալ ունի: Ես սփոփանք գտա այդ խոսքերի մեջ: Նա երբեք չի համեմատել մեզ, բայց ասաց, որ երկուսիս էլ սիրում է: Ես սփոփանք գտա մահ դրանց մեջ: Մենք լավագույն ընկերուհիներ էինք մանկապարտեզից, մենք կիսել ենք ամեն ինչ, իսկ այժմ ամեն ինչ կործանված է՝ նրանց ամուսնությունը, մեր ընկերությունը: Ես ամենաստոր արարածն եմ: Իսկապես, ես կցանկանայի պարզապես անհետանալ: Բայց ես չափազանց վախկոտ եմ:

Սա քննվող առաջին օրինակն է, որտեղ տեսանելի է բռնությունը՝ սպանության և ինքնասպանության հստակ մտքերով մարդկանց կողմից, ովքեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս են կրել միմյանցից և վիրավորված են: Մյուս օրինակներն ավելի նման են հանելուկների՝ պարզ կամ բարդ, բայց շատ հուզական չեն: Այս օրինակում առկա երեք կերպարները պարզապես օգնության կարիք ունեն, մասնավորապես՝ կինը և տղամարդը, ովքեր տեսնում են իրենց քայքայվող ամուսնությունը:

Հարցը այն է, թե ինչպես դա անել: Երբեմն իմ՝ որպես կոնֆլիկտաբանի, խնդիրն է աշխատել մահ նման կոնֆլիկտների հետ: Որոշակի փորձ է կուտակվել, և կարելի է կիսվել դրանով այլոց հետ:

Սեմինարների ժամանակ մի շարք պատասխաններ են ի հայտ գալիս՝ սկսած անհապաղ ամուսնալուծությունից մինչև անհապաղ հաշտություն՝ ներողությամբ և ներմամբ: Բայց, ինչպես միշտ, մենք պետք է փորձենք ցուցաբերել համակարգային

մոտեցում: Ոչ մի կոնֆլիկտ սուրբ չէ: Ոչ մի կոնֆլիկտ չի կարող խուսափել այն փոքր գծապատկերից: Մեզ ընդամենն անհրաժեշտ է պարզել կողմերի նպատակները, և այդ առումով վերոնշյալ երեք հայտարարությունները կարող են քողարկել հիմնախնդիրները, այլ ոչ թե պարզաբանել դրանք: Երեքն էլ ներկայացվում են չափազանց պարզեցված ձևով:

Գուցե կինը կարող էր իրեն սիրահետող մի տղամարդու (այդ թվում նաև՝ իր ամուսնու լավագույն ընկերոջը) պատկերացնել որպես իր սիրեցյալ: Այդ դեպքում, հնարավոր է, որ բարոյական հաշիվը կլիներ ավելի հավասարակշռված, եթե ամուսինը սկսեր դավաճանել իրեն, որպեսզի ինքը կարողանար թաքնվել դավաճանության հետևում:

Հնարավոր է, որ ամուսինը նախանձում էր լավագույն ընկերուհուն, որովհետև նրա կինը այդքան շատ էր վստահում նրան:

Եվ հնարավոր է, որ կանայք, նույնիսկ եթե լավագույն ընկերուհիներ էին, կարող էին մանկությունից լինել մրցակցային հարաբերություններում: Ընկերուհիներից մեկն ամուսնացած էր քաղաքում լավագույն համբավ ունեցող տղամարդու հետ, ով ամենագրավիչն էր, ուներ լավագույն կարիերան, ամենամեծ առանձնատունը, ամենահզոր մեքենան: Մյուս ընկերուհին ամուսնացած չէր: Նրա՝ որպես ամենաստոր արարածի ինքնաներկայացման մեջ, կարող է տեղ ունենալ նաև հաղթանակի խայթոցը:

Կարճ ասած, նպատակներն այնքան էլ պարզ չեն, երբ դիտարկվում են խորությամբ: Բայց, եթե մենք ներառենք այս ամենը, չե՞նք ուղղորդի բոլոր երեքին հոգեվերլուծության:

Այո, եթե մենք հավատում ենք, որ դեպի խաղաղություն ճանապարհն անցնում է անցյալի բացահայտման գործընթացի միջով: Բայց փոխարենը «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդում ճանապարհը դեպի առաջ պետք է ընթանա՝ կառուցողական ապագայի պատկերների միջով:

Դարձյալ սկսենք կոնֆլիկտաբանության գլխավոր կանոնից՝ որպես մեկնակետ վերցնենք կողմերի ինքնաներկայացումը և

նրանց սեփական վերլուծությունը: Օգտագործենք մի պարզ օրինակ. եթե կողմը ներկայացնում է իրեն որպես «ազատագրման ճակատ», ապա կոնֆլիկտաբանը չպետք է վերաբերվի նրան որպես «ահաբեկչի»: Այստեղ եզրահանգում ենք հետևյալին.

Կինը – Ամուսնությունն անկեղծ է միայն այն դեպքում, երբ հիմնված է հավատարմության վրա:

Տղամարդը – Ամուսնությունը կարող է շահել՝ թարմացվելով անհավատարմությամբ:

Մյուս կինը – Ես միայն կցանկանայի նախկինում ի վիճակի լինել կանգ առնելու:

Օգտագործենք վերոնշյալ պնդումները՝ որպես մեկնակետ, նույնիսկ եթե առաջին կնոջ պնդումը կարող է համարվել չափազանց գաղափարախոսական, տղամարդուն՝ մեղադրանքից խուսափելու իր փորձում չափազանց նորարարական՝ («Ես դա արել եմ հանուն մեզ՝ մեր հարաբերություններին ավելի երկար կյանք հաղորդելու համար») և երկրորդ կնոջ պնդումը՝ պարզապես անազնիվ: Սեքսուալ քաղցն ավելի ուժեղ մղում է, գուցե նույնիսկ ավելի ուժեղ, քան սովորական քաղցը: Բայց սա ոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում է անազնվության փաստարկը:

Նախ մի կողմ թողնենք երկրորդ կնոջ գործոնը և կենտրոնանանք ամուսինների վրա: Հավատարմությունը բացառում է անհավատարմությունը, կնոջ նպատակը բացառում է տղամարդու նպատակը, այնպես որ մենք ունենք հստակ հակասություն: Կարող է այն գերազանցվել: Գոյություն ունի քաջ հայտնի փոխզիջում. տղամարդը սահմանափակում է իր անհավատարմությունը տարեկան մինչև X շաբաթների, իսկ կինն իր հավատարմությունը՝ 52-X շաբաթների կամ դրա նման մի բան: Կինը հրաժարվում է բացարձակության մասին իր գաղափարներից, իսկ տղամարդը կամավոր սահմանափակում է իր գործողությունները: Նրանք կարող են ձևավորել մակ լրացուցիչ կանոններ, ինչպիսիք են. «Ո՛չ որևէ ծանոթի հետ», «Ես չեմ ցանկանում իմանալ, թե նա ով է»,

«Երբեք մի բացահայտիր մանրամասնություններ», «Առաջնահերթ միշտ ես եմ»:

Առարկությունը կարող էր լինել այն, որ կինը գիշում է ավելի շատ բան, քան տղամարդը: Հակառակը կլիներ այն դեպքում, եթե տղամարդը ամբողջովին նվիրվեր իր ամուսնությանը և հաճույքների վրա վատնվող էներգիան ուղղեր ինքնագարգացմանն ու կնոջ հանդեպ սիրուն:

Բայց սա գերազանցում չէ, որովհետև հավատարմության և անհավատարմության միջև հակասությունը վիթխարի է: Իհարկե, մենք կարող ենք մի փոքր շրջել հասկացությունները, օրինակի համար, ներկայացնելով հավատարմությունը եռանկյունու մեջ՝ թույլ տալով, որ մյուս կինը մուտք գործի հարաբերությունների մեջ և վերածի ամուսնության մեջ անհավատարմությունը հավատարմության, ինչպես «ménage à trois»¹-ի մեջ: Բայց պատկերացրեք, որ երեքն էլ, կամ նրանցից երկուսը, կամ էլ միայն մեկը չի կարող ընդունել այս բանաձևը. ի՞նչ անել այդ դեպքում:

Փորձենք ռացիոնալ կոնֆլիկտների համար ընդհանուր կանոնը և տարբերակներ: Մինչև այժմ մենք հետևել ենք սովորական լեզվին մեր միակողմանի մշակությամբ և մեկնաբանել անհավատարմությունը սեքսուալության տեսանկյունից. մարմնի կամ մարմնի մի փոքր մասի անհավատարմություն: Դուրս գանք այդ շրջանակից: Ի՞նչ կասեք մտքի, ոգու, տնտեսական և սոցիալական անհավատարմության մասին:

Ի՞նչ պետք է անի կոնֆլիկտաբանը տեսակետների շրջանակն ընդլայնելու համար: Շատ հիմար մոտեցում է ամուսինների զրասենյակ հրավիրելը, լուրջ, սակայն ավելի լավ է արդյո՞ք կարեկցող վարք որդեգրելն ու խորը տխրությամբ լի ծայնով արտասանելը. «Պատմեք ինձ, թե ինչ է իրականում տեղի ունեցել»:

Նախևառաջ, սա ամուսիններին իրար դեմ կհանի և կստեղծի բարենպաստ պայմաններ լեզվակռվի համար, որում նրանք հա-

¹ ménage à trois (ֆրանս.) – սիրային եռանկյունի (թարգ., *նշումը թարգմանիչի*):

վանաբար արդեն, գիտակցաբար և անգիտակցաբար, շատ լավ վարժված են:

Երկրորդ, նրանք կարող են դառնալ անազնիվ, որովհետև այժմ նրանք ունեն ուշադիր ունկնդիր՝ կոնֆլիկտաբան: Քամի որ կանայք հուզական հարցերի մասին հաճախ խոսում են ավելի շատ, ավելի վարժ և ավելի համոզիչ, քան տղամարդիկ, տղամարդը կարող է կիրառել մի պարզ ռազմավարություն՝ թույլ տալ նրան խոսել ինչքան հնարավոր է շատ, իսկ այնուհետև աչքերով ազդանշան տալ կոնֆլիկտաբանին. «Այժմ դուք կարո՞ղ եք հասկանալ իմ խնդիրը»: Կինը կարող է ունենալ համապատասխան ռազմավարություն՝ «Նախ դու», և վստահ լինել, որ տղամարդը կլինի նույնքան լուռ, հասարակ, անազնիվ և նույնքան պարզ, ինչպես միշտ, իսկ այնուհետև աչքերով ազդանշան տալ կոնֆլիկտաբանին. «Այժմ դուք կարո՞ղ եք հասկանալ իմ խնդիրը»:

Բայց ամենակարևորը երրորդն է: Ոչ վաղ անցյալի վրա բացասաբար կենտրոնանալով՝ մենք վերջին հաշվով շատ ենք հեռանում դրական, կառուցողական ապագայից, որը, ինչպես նշվել է, հիմնական հարցն է «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդում: Գերազանցումը ենթադրում է հույս, իսկ հույսը դրական, կառուցողական ապագայի տեսլականներում է, այլ ոչ թե տրավմատիկ անցյալի վերածնակերպման մեջ:

Կոնֆլիկտաբանը ոչ թե պետք է բանավեճ կազմակերպի ամուսինների միջև, այլև սկսի խորը երկխոսություններ ամուսինների հետ առանձին-առանձին: Եթե ձևակերպենք վերոնշյալը քերականության լեզվով, ապա նա պետք է խոսի «ապագա, կառուցողական», ոչ թե «անցյալ, ապակառուցողական» ձևերով.

- Ո՞րն է լավ ամուսնության վերաբերյալ Ձեր պատկերացումը:
- Դա հնարավոր չէ նրա հետ՝ հաշվի առնելով այն, որ նա ունի սիրային կապ:

- Կարո՞ղ եք որոշ ժամանակով դա մի կողմ դնել, մենք կանդրադառնանք դրան ավելի ուշ: Այժմ, ի՞նչպես եք դուք պատկերացնում լավ ամուսնությունը:
- Պետք է լինի հավատարմություն, մա չի՝ կարող ունենալ սիրուհիներ:
- Իսկ կի՞նը:
- Նույնը, իհարկե, վերաբերում է մաև կնոջը:
- Դուք մկատի ունեք, որ եթե կա երկուստեք սեքսուալ հավատարմություն, ամեն ինչ լա՞վ կլինի:
- Ոչ, բայց դա նախապայման է: Պետք է լինի մաև սեր:
- Ի՞նչ իմկատի ունեք:
- Ձերմություն ոչ միայն ֆիզիկական մարմնում, այլև հոգում:
- Շատ լավ: Ձգացմունքների, հիշողությունների, ակնկալիքների կիսում, այնպես չէ՞:
- Ճիշտ այդպես: Մարմինների միությունը հենց դա հաստատելու համար է:
- Բայց ի՞նչ կասեք ընդհանուր մպատակի մասին: Ինչ-որ բան, որը դուք, իսկապես, կարող եք միասին անել:
- Դա ակնհայտ է՝ տուն ստեղծելը, երեխաներ լույս աշխարհի բերելը:
- Բայց տունը կարող է դառնալ առօրեական մի բան, իսկ երեխաները վաղ թե ուշ կլքեն հայրենի տունը: Իսկ այնուհե՞տև:
- Այո... ոչ՝ ես իսկապես չեմ մտածել այդ մասին: Դա հենց այն իրավիճակն է, որում մենք այժմ գտնվում ենք, մենք քառասունն անց ենք...
- Ինչպիսի՞ ծրագրեր դուք ունեք այժմ:
- Դե, իմ ամուսինն ունի իր կարիերան, և բիզնեսը լավ է ընթանում: Ես հետաքրքրվում եմ կրոնով՝ բուդդայականությամբ:
- Որևէ ընդհանուր բան կա՞:

- Ոչ, մենք քայլում ենք առանձին, տարբեր ճանապարհներով՝ դուք դա՞ ի նկատի ունեք, դուք մատնանշում եք, որ դա՞ էր նրա անհավատարմության պատճառը:
- Շարունակենք որոշ ժամանակ խոսել՝ ընդհանուր առմամբ, ոչ թե ձեր երկուսի մասին:

Շատերը գլխով կանեն՝ ընդունելով վերոգրյալի մեծ մասը: Սերը երկու մարդկանց մարմինների և հոգիների միությունն է: Բայց կա նաև ոգի, որն ընդունակ է ազդել մարմնի և հոգու վրա ու առաջադրել նոր նպատակներ՝ «վերածրագրավորելով» (վերախմաստավորելով) իրեն: Խնդիրն անպայմանորեն այն չէ, որ սխալ ծրագիր է բաժանում նրանց: Հնարավոր է, որ նրանք չունեն որևէ ծրագիր: *Համատեղ կյանքի ծրագիրը*, մինչև երեխաները կլքեն հայրենի տունը, բայց, նախևառաջ, համատեղ ծրագիրը՝ պահպանելու միմյանց այնքան երկար, ինչքան հնարավոր է:

Իհարկե, երկու կողմն էլ կարող են ունենալ իրենց անհատական ծրագրերը, ինչպես միմյանց, այնպես էլ այլոց հետ: Բայց եթե դա փոխարինում է համատեղ ամուսնական ծրագրին՝ մշակութորեն, կրոնապես, քաղաքականապես, տնտեսապես, սոցիալապես, ապա մենք կարող ենք մոտենալ հոգևոր անհավատարմությանը: Ամուսինը պետք է լինի ոգիների միության համար առաջին ընտրությունը: Եթե ոչ, ապա այն, ինչ նրանք փնտրում են իրենց արկածներում, կարող է լինել մարմինների միությունից հեռու ինչ-որ բան՝ հոգիների մտերմություն կամ համատեղ ծրագիր: Սկիզբը կարող է լինել «անհավատարմությունը»՝ որպես ծրագիր: «Դա միայն սեքս է» պնդումը դառնում է մի բան, որին պետք է վերաբերվել թերհավատությամբ և մտածել, որ նրանք ավելին են փնտրում:

- Դուք սիրո՞ւմ եք ձեր ամուսնուն՝ չնայած այս ամենին:
- Այո՛, և դա է, որ ցավ է պատճառում: Բայց նա չի սիրում ինձ:
- Ինչո՞ւ եք այդպես կարծում:

- Նա անհավատարիմ էր: Կարո՞ղ էր նա լինել անհավատարիմ, եթե իսկապես սիրեր ինձ:
- Դուք համոզվա՞ծ եք: Գուցե դուք չունեի՞ք բավականաչափ ընդհանրություններ համատեղ կյանք վարելու համար: Իսկ ի՞նչ կասեք ֆինանսական հարցերի մասին, սոցիալական ասպեկտների մասին: Տնային տնտեսությունը որպես համատեղ ձեռնարկություն՝ եք վարում՝ ամբողջովին թափանցի՞կ ու առանց գաղտնի հաշիվների: Աջակցո՞ւմ եք միմյանց սոցիալապես, երբ ընկերների և գործընկերների հետ եք:
- «Տնային տնտեսության վարման համար փողը» ես ստանում եմ նրանից. դա բավականացնում է, որ կարողանամ մի փոքր խնայել և ունենամ իմ անձնական հաշիվը: Իսկ ես աջակցում եմ նրան ամեն ինչում, նույնիսկ եթե նրա բիզնեսը ինձ չի հետաքրքրում: Իսկ միակ բանը, որ նա անում է բուդդայականության նկատմամբ իմ սիրո հետ կապված, ծիծաղելն է:

Բավական է: Ակնհայտ է, որ նրանք ունեն շատ այլ խնդիրներ: Իսկ սրանից հետո համապատասխան երկխոսություն է տեղի ունենում ամուսնու հետ՝ ոչ միայն լսելու սեքսուալ անհավատարմության մասին նրա տեսակետը, այլ նաև ձեռք բերելու նրա ամուսնական փիլիսոփայությունը, թե ինչպես է նա տեսնում իրենց հարաբերությունները, երբ ուշադրությունն ամուսնության այլ ասպեկտների վրա է:

Սեքսուալությունից այժմ մենք հասել ենք հինգ տեսակի հավատարմության և անհավատարմության (մարմնի, հոգու, ոգու, փողային հարցերի և սոցիալական ասպեկտների): Երկու զուգընկերների համար մենք ստանում ենք տասը նպատակ: Այդպես մենք ունենում ենք երեք ձեռքբերում.

1. Մենք հարաբերական ենք դարձրել սեքսուալ անհավատարմությունը՝ դրել ենք այնպիսի համատեքստում, որ այն չի գերիշխում:

2. Մենք ունենք լավ ամուսնության մոդել՝ ավելի շատ հավատարմություն, քան անհավատարմություն:

3. Մենք ունենք վատ ամուսնության մոդել. ավելի շատ անհավատարմություն, քան հավատարմություն՝ +10-ից մինչև -10: Եվ մենք կոնկրետ խորհրդի համար հիմք ունենք.

- Մի՛ ընդունեք ամուսնական անհավատարմությունը չափազանց լուրջ: Եթե մնացած բաները լավ են՝ միմյանց նկատմամբ ջերմություն եք զգում, ունեք համատեղ կյանքի ծրագիր, վարում եք տնային տնտեսությունը բիզնեսի մեջ՝ ամբողջովին թափանցիկ, և աջակցում եք միմյանց բոլոր հանգամանքներում, ապա թույլ մի տվեք, որ անհավատարմությունը ոչնչացնի այն, ինչը լավ է ու ներդաշնակ:
- Միայն սեքսուալ առումով պահպանվող մենամուսնությունը բավարար չէ: Դուք կառչում եք հատկապես դրանից, որովհետև մյուս բոլոր բաները սխալ կերպ են ընթացել: Կամ դուք պետք է սկսեք խորապես աշխատել մյուս չորս չափումների վրա, կամ ես խորհուրդ կտայի, որ բաժանվեք, քանի դեռ ինչ-որ բան իսկապես սխալ կերպ չի ընթացել՝ չնայած սեքսուալ հավատարմությանը: Այն դարձել է համատեղ ծրագիր, որով դուք հպարտանում եք, բայց այն նաև ինչ-որ սառը ու վերահսկողական մի բանի մաս է, որը գերակշռում է ձեր հարաբերություններում՝ պահպանվելով կրոնական բանաձևերով, որոնց ձեզանից ոչ մեկն իրապես չի հավատում:

Դաժան խոսքե՞ր: Գուցե դրանք պետք է հարմարեցվեն երկ-խոսության կողմերին: Բայց կա մի բան, որն ավելի վատ է, քան դաժան խոսքերը: Բանտում վատնված երկու կյանքեր, որտեղ երկուսն էլ միաժամանակ և՛ կալանավոր են, և՛ պահակ:

Ի՞նչ կասեք մյուս կնոջ մասին: Ամեն ինչ դավադրաբար նպաստում է նրա դերը մոռացության մատնելուն: Մինչ այժմ ուշադրության կենտրոնում են եղել ամուսինները: Նրանք են, որ փնտրում են օգնություն և աջակցություն ընկերներից, խորհրդատուներից, դատարաններից՝ վերջին հաշվով իրավացի ներկայանալու համար: Մյուս կինը տեսնում է, որ իր շահերից է բխում զսպվածություն պահպանելը: Հայրիշխանական մշակույթում նա կդիտարկվեր որպես օձ՝ խոտի մեջ, «որն անտանելի գայթակղեց այդ խեղճ մարդուն»:

Բայց նա մոռացության չի մատնվի, եթե կոնֆլիկտաբանը կատարի իր աշխատանքը: Կոնֆլիկտի *բռնոր* կողմերի հետ երկխոսությունը, նրանց նպատակների քարտեզագրումը, կողմերի ստեղծագործականության խթանումը, ստեղծագործական առաջարկներով հանդես գալը կոնֆլիկտաբանի պարտականություններն են: Հնարավոր է, որ նրա հարաբերությունները տղամարդու հետ, հաշվի առնելով ամեն ինչ, ավելի խոստումնալից են, քան ամուսնական հարաբերությունները: Բայց ենթադրենք, որ դա այդպես չէ: Եթե կոնֆլիկտաբանը մասնակցել է ամուսնության պահպանմանը, ապա ի՞նչ կասեք ընկերության պահպանման մասին: Չի՞ կարող սա նույնպես ուժեղ կապ լինել երեք չափումների հետ՝ լինելով արժեքավոր պահպանման համար:

Բայց ինչպե՞ս: Պետք է շատ զգուշորեն ուսումնասիրել՝ արդյո՞ք երեքն էլ այս կամ այն փուլում կարող են ունենալ ապագայի տեսլական, որտեղ նրանք կարող են այս ամենը թողնել անցյալում, եղածին վերաբերել հումորով ու կառուցել թե՛ ամուսնություն, թե՛ ընկերություն՝ գուցե նույնիսկ կառուցել այն միասին՝ եռանկյունու մեջ, որը հարստացված է խորը փորձով: Վիշտը և ուրախությունը կիսելը, սոցիալապես միմյանց աջակցելն ընկերություն կծնավորեին:

Բայց ընկերությունն ավելի պարզ բան է, քան ամուսնությունը: Մենք դեռևս կարող ենք խոսել հինգից երեքի մասին՝ հոգու, ոգու և սոցիալական հավատարմության: Եվ առջևում ընկած ճա-

նապարհը չի կոչվում «Ժամանակը բուժում է բոլոր վերքերը»: Եթե վերքերը դարձել են ավելի քիչ տեսանելի, դա կարող է լինել այն պատճառով, որ այժմ դրանք գտնվում են հոգու խորքում: Եվ այստեղ է, որ պետք է վերականգնման աշխատանք կատարվի: Համատեղ կյանքի ծրագիրը խիստ անհրաժեշտ է: Մենք ուսումնասիրում ենք ապագան, որպեսզի ունենանք անցյալ վերադառնալու ավելի շատ հնարավորություններ: Առջևում ընկած ճանապարհը պետք է անցնի բոլոր կողմերի հաշտության, ճշմարտության և ներման միջով: Բայց ինչպե՞ս:

Նախևառաջ, դիտարկենք հակասությունները: Ներել՝ չի նշանակում մոռանալ, խորը վերքերը չեն կարող մոռացվել: Բայց կան որոշ գերազանց ձևակերպումներ. «Թողնենք դա անցյալում», «Դա այլևս ավարտված է, եկեք շարժվենք առաջ», «Նոր էջ բացենք մեր հարաբերություններում»: Սա կարող է ընկալվել որպես անցյալի սխալները չկրկնելու, անցյալին չամդրադառնալու պայմանագիր, մինչև այդ սխալները չկրկնվեն:

«Ներիր», - ասում է նրանցից մեկը: Եվ տղամարդը կամ կինը կարող է ավելացնել. «Կարո՞ղ ես ընդունել իմ ներողությունը», «Այո՛, կարող եմ»: Պարզ բառեր են, այո, բայց երբեմն շատ դժվար է արտասանել դրանք: «Կարո՞ղ ես ներել ինձ» արտահայտությունն ավելի խորն է և նույնիսկ ավելի է կողմնորոշված դեպի ապագան: Քրիստոնեական մշակույթում այն հիշեցնում է Աստծուն ուղղված մարդկանց աղոթքը. «Ներիր մեզ մեր մեղքերը, ինչպես մենք ենք ներում նրանց, ովքեր մեղանջում են մեր նկատմամբ»: Սա աղոթք է եռանկյունու մեջ հաշտության մասին. «Եթե ես ներեմ, Տեր Աստված, կհատուցե՞ս՝ ներելով ինձ» և/կամ «Որովհետև դու ներում ես մեզ, մենք նույնպես պետք է ներողամիտ լինենք»: Լավ է, եթե դա օգնում է: Բայց ներողությունները, ներումը, փոխհատուցման ինչ-որ ձևերը չեն ենթադրում հավատ Աստծո նկատմամբ, ով հաշվետարարություն է ամուսնի յուրաքանչյուր մարդու և ամեն ինչի համար: Ընդհակառակը, կրոնական չափումը նույնպես կարող է կանգնել ուղղակի ներման և հաշտության

ճանապարհին, որովհետև «միայն Աստված կարող է ներել»: Արդյունքում մարդիկ կառուցում են իրենց կյանքը տրավմայի շուրջ, որը մի անգամ նրանց վշտացրել է և վիրավորել. խնդրեք և ստացեք ներողություն ու ներում: Այնուհետև կատարեք հաշտության ինչ-որ ծես՝ աչքերի մեջ նայելուց, իրար ձեռք սեղմելուց և ջերմ գրկախառնվելուց մինչև լավ երեկույթ կամ ավելին: Երկու կողմերն, այնուհետև, կարող են կանգնել ուղղված մեջքով՝ ազատվելով ծանր բեռից:

Որպեսզի սա տեղի ունենա, որոշ ճշմարտություն պետք է դրվի սեղանին: Իսկ ողջ ճշմարտությունը կարող է ավելի վատթարացնել իրավիճակը: Այն ինչ թաքնված է, հաճախ ավելի լավ է թողնել թաքնված, այնպես որ ավելի լավ է չլինել չափազանց անկեղծ: Զգուշությամբ կիրառվող մի քիչ հումորը կարող է օգտակար լինել:

Մեզ մնում են մի շարք հնարավոր լուծումներ, ինչպես նաև մի շարք հնարավոր մոտեցումներ կամ մեթոդներ: Համգամայնությունը կարող են լինել խճճված՝ երեխաների, (ամուսինների) ծնողների, ընկերների, հարևանների, գործընկերների ներգրավմամբ: Անտարբեր միջավայրը կարող է լինել փաստարկ բաժանման համար, եթե մի ժամանակ զույգին միասին պահող կապերը մաշվել են կամ բացակայում են: Հարաբերությունների պահպանման մեջ ակտիվ և ամուղջ հետաքրքրություն ունեցող սոցիալական միջավայրը պետք է լրջորեն ընդունվի որպես համատեղ «սոցիալական կապիտալ»:

Այստեղ մենք հասնում ենք կարևոր տեսական և գործնական կետի. ոչինչ այնքան գործնական չէ, ինչքան լավ տեսությունը: Վերը «խճճել» բառն է կիրառվել: Կոնֆլիկտի տեսության մեջ սա դրական բառ է: Առավել անհամգոստացնող կոնֆլիկտները երկու կողմերի միջև տրամաբանական կոնֆլիկտներն են, ինչպիսին է հավատարմության/անհավատարմության նպատակներով ամուսինների միջև կոնֆլիկտը: Ամեն ինչ դառնում է չափազանց բացահայտ, չկա ճկունություն, չկա որևէ բան, ինչ կարող է սակարկ-

վել, առևտրի օբյեկտ լինել կամ դրա նման մի բան: Ողջ մտավոր գործունեությունը, բոլոր հույզերն ուղղված են դեպի այդ դրամատիկ հակասությունը, և կողմերը զգում են իրենց Ադամի և Եվայի կարգավիճակում՝ միայնակ ամբողջ աշխարհում:

Ներմուծեք ավելի շատ նպատակներ՝ գուցե առկա նպատակների տարբերակման միջոցով, ներմուծեք ավելի շատ կողմեր, ում համար կոնֆլիկտի ելքը բավականին կարևոր է: Դրանից հետո կկարողանանք ավելի մոտենալ գերազանցմանը և փոխակերպմանը:

Որպես *բարդության* չափում մենք կարող ենք օգտագործել կողմերի և նպատակների քանակի գումարը: Դա այնպիսի բան է, որը մենք պետք է ունենանք մտքում, երբ քարտեզագրում ենք կոնֆլիկտը: Ինչքան ավելի բարդ է կոնֆլիկտը, այնքան ավելի շատ են հակասությունների հնարավորությունները: Բայց ինչքան շատ են հակասություններն, այնքան ավելի շատ են մյուսի հետ գործարք կնքելու հնարավորությունները («Լավ, ես կխոստանամ լինել հավատարիմ, եթե դու ավելի շատ հետաքրքրություն դրսևորես իմ բիզնեսի նկատմամբ»): Բայց այստեղ մենք կանգ ենք առնում: Այս գիրքը գլխավորապես *սարգ*՝ երկու նպատակներով կոնֆլիկտների մասին է:

ՍԻԵՍՍԱ ԵՎ ՖԻԵՍՍԱ

Տղամարդը ճապոնացի է, իսկ կինը՝ ֆիլիպինցի: Նրանք նորապսակներ են և ապրում են Տոկիոյում: Ամուսինների համատեղ կյանքը շատ լավ է ընթանում երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին: Կիրակի օրը զույգի համար աղետ է:

Տղամարդը կարծում է, որ ամբողջ շաբաթվա քրտնաջան աշխատանքից հետո կարող է «տնակյացի» նման կիրակի օրն իր

հանգիստը վայելել հեռուստացույցի դիմաց՝ բազմոցի վրա:
Կարճ ասած՝ *սիեստա*:

Կինը կարծում է, որ ամբողջ շաբաթվա քրտնաջան աշխատանքից հետո կարող է իր հանգիստը վայելել՝ հավաքույթ կազմակերպելով տասը-տասներկու ընկերների հետ, որը կտևի ժամը 10:00-ից մինչև 16:00-ն ու համեմված կլինի խմիչքներով, տաք ուտեստներով, երաժշտությամբ, պարերով և զվարճանքով: Կարճ ասած՝ *ֆիեստա*:

Մոտենում է հերթական կիրակին: Երկուսն էլ սարսափով մտածում են, թե ինչ է տեղի ունենալու: Իհարկե, ոչինչ էլ տեղի չի ունենալու, պարզապես մութ ստվերի մման նրանց միջև հերթական անգամ նշմարվելու է մի չլուծված խնդիր:

Ամուսինը – Իմ կենսակերպով եմ մարդիկ ապրում ճապոնիայում, որտեղ էլ մենք ապրում ենք: Բացի այդ, ատում եմ դա ասել, բայց այստեղ տղամարդն է որոշումներ կայացնում:

Կինը – Իմ կենսակերպով եմ մարդիկ ապրում Ֆիլիպիններում: Շաբաթվա վեց օրը օրինապահ ճապոնուհի եմ, և դա պետք է բավական լինի: Հայրիշխանության օրերն ավարտվել են, շաբաթվա մեջ գոնե մեկ օր ես իրավունք ունեմ ինքս ինչ-որ բաներ որոշելու:

*Կոնֆլիկտա-
բան* –

Դե, այժմ ի՞նչ ենք անելու:

Ծայրահեղ դիրքերը պարզ են.

*Ամուսնու կի-
րակի օրը* – Լռությամբ, հեռուստացույցի թրթռացող էկրան, դրա դիմաց թրթռացող աչքեր, և ինքը դանդաղ ընկղմվում է բազմոցի մեջ, միրհում՝ հանգստանալով երկար երկաթուղային ճամփորդություններից, աշխատանքային օրերից, բարեր այցելություններից:

Կնոջ կիրակի Կյանք և ծիծաղ, գույն և ձայն, երջանիկ մար-
օրը – դիկ:

Նախքան հյուրերի ժամանումը տղամարդն առանձնանում է մնջարանում:

Փոխգիջումը, այն է՝ կիրակի օրվա կեսը՝ մվիրված յուրաքանչյուրի կամ մի կիրակին՝ տղամարդու, իսկ հաջորդը՝ կնոջ գործունեությանը, ինչպես միշտ, չի բավարարում երկու կողմերից և ոչ մեկին: Նույնը վերաբերում է *բացասական գերազանցմանը*՝ յուրաքանչյուր կիրակի այգում զբոսանքին:

Բայց այնուհետև մենք հանգում ենք *դրական գերազանցման*: Որպես կոնֆլիկտաբան՝ ես ունեի առավելություն, որովհետև անցել էի «սա ինձ հիշեցնում է»-ի միջով: Հոնոլուլույում՝ Հավայան կղզիներում, ունեմ ընկերներ՝ մի գույգ: Ամուսինն անգլերեն և կենսագրության տեսության պրոֆեսոր է, իսկ կինը՝ ոչ հարուստ անձանց իրավաբան:

Ամուսինը սիրում է ամերիկյան ֆուտբոլ ու ցանկանում է տարին մի անգամ՝ Սուպերբավաթի եզրափակիչին՝ կիրակի օրը, անցկացնել հեռուստացույցի առջև: Նա հրավիրում է իր գործընկերներին: Նրանք նստում են վիսկիով լի բաժակները ձեռքներում և սկսում քաջալերել սիրելի մարզիկներին. «Հաղթիր մրան», «Ծիշտ այդպես, հիմա»:

Կինը, ինչպես ես, ատում է ամերիկյան ֆուտբոլը, առնականությունը, բռնությունը և հրավիրում է իր ընկերներին երեկույթի մույն օրը, մույն սենյակում: Սենյակի կենտրոնում հեռուստացույցն է, և խաղը դիտում են բազմոցից, որովհետև երեկույթը տեղի է ունենում սենյակի եզրերում՝ թեթև համեղ ուտեստներով, բույրերով և գույնով: Ինչպես Հավայան կղզիներում, խմիչքները զգալիորեն ավելի բազմազան են, քան վիսկին և շվեդական սեղանը: Արդյունքում դանդաղ փոխանակում է տեղի ունենում երեկույթի երկու կողմերի միջև: Կնոջ երեկույթի մասնակիցների մի մասը շարժվում է դեպի հեռուստացույցը՝ իր նախապաշար-

մունքները հաստատելու համար: Տղամարդու երեկույթի մասնակիցներից ոմանք շարժվում են դեպի բույրերը և գույները: Ընդհանուր առմամբ, խմբերից յուրաքանչյուրը հավատարիմ է մնում երեկույթի իր տարբերակին, բայց նրանք նաև բաց են թե՛ մեկի, թե՛ մյուսի նկատմամբ՝ հոգուտ բոլորի:

Այսպիսով, սիեստայի և ֆիեստայի դեպքի համար հենց վերոնշյալ լուծումը դարձավ առաջարկ: Երկու դեպքերում տարբերություններ, իհարկե, կան. Տոկիոյում հեռուստացույցը դրված է անկյունում, իսկ բազմոցը շրջված է՝ թիկունքով սենյակին: Արդյունքում տարածքը հազիվ բավականացրեց ֆիեստայի համար, որովհետև այն պետք է կիսվեր սիեստայի տարրի հետ: Ամեն դեպքում, կողմերի միջև փոխանակումը հաճախակի էր. ամուսինը մի քիչ մասնակցություն ունեցավ ֆիեստային, իսկ կինը դիտեց հեռուստատեսային որոշ նորություններ ու եղանակի տեսությունը:

Լուծումն աշխատեց, որովհետև բացասական գերազանցման (3.՝ կիրակի օրը միասին զբոսանքի գնալու) և փոխզիջման (4.՝ մի կիրակին սիեստայով, հաջորդը՝ ֆիեստայով անցկացնելու) փոխարեն առկա էր դրական գերազանցման տարբերակը (5.՝ միասին կիրակին նույն սենյակում անցկացնելը): Ողջ հիմնական անկյունագիծը՝ *խաղաղության անկյունագիծը* 3. + 4. + 5., փոխակերպման ցանկ դարձավ: Վերջում զույգը հանգեց 5.-ին, և նրանք ապրեցին երջանիկ շաբաթվա բոլոր օրերի, այդ թվում՝ կիրակի օրերի ընթացքում:

ԿՈՒՋԵՔ՝ ՈՎ Է ԳԱԼՈՒ ՃԱՇԻՆ

Ճապոնական արմատներով հավայացի մի փայլուն ուսանողուհի՝ ճապոներենի կատարյալ իմացությամբ, եկավ իմ գրասենյակ և պատմեց ինձ, թե ինչ էր տեղի ունեցել.

- Փերլ-Յարբորի դեպքերից հետո հայրս կալանավորված էր համակենտրոնացման ճամբարում, ինչպես ճապոնական արմատներ ունեցող ամերիկացիների մեծ մասը ԱՄՆ-ում: ճապոնական արմատներ ունեցող ամերիկացիները դիտարկվում էին որպես պոտենցիալ դավաճաններ, ավելին, նրանք կարող էին օգտագործվել որպես հաղթաթուղթ պատերազմի ամերիկացի բանտարկյալների դեմ: Պատերազմից հետո նրանք ազատ արձակվեցին: Բայց 50 տարի պետք է անցներ, մինչև նախագահ Քլինթոնը ներողություն կխնդրեր, և փոխհատուցում կտրվեր նրանց, ովքեր դեռ ողջ էին:
- Յայրս շատ ակտիվ էր այդ պայքարում: Նրա փաստարկն այն էր, որ, նույնիսկ եթե մենք ունեինք ճապոնական ծագում, նույնքան լավ ամերիկացիներ էինք, որքան մյուսները: Իսկ ողջ համակենտրոնացման ճամբարը ռասիզմի հիմքի վրա էր կառուցված, միակ փաստարկն արտաքին տեսքի տարբերություններն էին: Ի վերջո, հորս փաստարկները որոշ ազդեցություն ունեցան Վաշինգտոնի վրա: Կոնգրեսն օրենք ընդունեց փոխհատուցման մասին:
- Երեկ աղետալի բան տեղի ունեցավ: Ես հարցրել էի ծնողներիս, թե արդյոք իմ սիրեցյալը կարող է մեզ հետ ճաշել, և ծնողներս հաճույքով համաձայնել էին: Ընկերս սևամորթ է՝ աֆրոամերիկացի, Յավայան կղզիներում զինվորական ծառայություն է անցել՝ մինչև Վիետնամ գնալ, հրաժարվելն ու ուսանող դառնալը: Յայրս բացեց դուռը: Երբ տեսավ իմ սիրեցյալին, բղավեց. «Նրա՛ հետ ես դու հանդիպում: Երկուսդ էլ դուրս կորե՛ք և երբեք չվերադառնա՛ք»: Ամեն ինչ շատ նման էր Սիդնեյ Փոլթիերի հետ տեղի ունեցածին՝ *«Կռահեք՝ ով է զալու ճաշին»* ֆիլմում:
- Մենք անհետացանք: Յայրս խելագարվել էր: Ընկերս զարմացած էր, բայց նաև շփոթված, որովհետև նա չէր ցանկանում ինձ համար խնդիրներ ստեղծել: Ես նրան

շատ եմ սիրում և չեմ պատրաստվում լքել նրան աշխարհում որևէ բանի՝ նույնիսկ հայրիկիս սիրո համար: Այս պահին իրավիճակն այնպիսինն է, որ ստացվումն է, թե ես պետք է լքեմ նրանցից որևէ մեկին՝ հայրիկիս կամ սիրեցյալիս: Դուք տեսնո՞ւմ եք որևէ այլ ելք:

Չեղինակ – Դե, հարգելի ընթերցող, դուք տեսնու՞մ եք ինչ-որ ելք: Երկխոսության ընթացքում ո՛չ մեկը և ո՛չ մյուսը, այն է՝ թե՛ սիրեցյալին, թե՛ հայրիկին լքելը՝ որպես յուրատեսակ բողոք, ելքերի հնարավոր տարբերակների ցուցակի վերջում էր դիտարկվում: Փոխզիջումը, այն է՝ երկու հարազատ մարդկանց հետ էլ շատ հազվադեպ հանդիպելն ի սկզբանե չընդունվեց: Քանի որ կոնֆլիկտն ունի ավելի քան բացարձակ բնույթ, («Դու պետք է ընտրություն կատարես նրա և իմ միջև»), մենք պետք է սկսենք տարբերակել:

Հաշվի առնենք նաև, որ աղջկա մոտ բողոքներ են առաջացնում.

- Բայց հայրիկի դիրքն անհիմն է, անօրինակա՛ն: Նա ռասիստ է՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին լինելու մեջ ինքն էր մեղադրում Վաշինգտոնի կառավարությանը: Նա պետք է նախ ինքն իր ռասիզմն ընդունի: Նա՛ է միակը, ով տվյալ դեպքում պետք է ներողություն խնդրի և օգնի կյանք մտնող երիտասարդներին:

Այս արծագանքը հասկանալի է, բայց հազիվ թե լինի լավ մեկնակետ կոնֆլիկտի լուծման համար, քանի որ այն ավելի շատ պատկանում է բանավեճի մշակույթին, քան երկխոսությանը: Բանավեճը կռիվ է վերբալ, ոչ թե ֆիզիկական զենքերով (ֆրանսերենում՝ *battre*՝ պարտության մատնել): Հաղթանակը սովորաբար հասնում է նրան, ով կարող է բռնել մյուսին ավելի շատ հակասությունների մեջ. «Հինգ րոպե առաջ դուք ասացիք սա, այժմ դուք ասում եք ճիշտ հակառակը», «Այն ինչ դուք ասում եք, չի համապատասխանում ՄԱԿ-ի վերջին զեկույցին»: Երկխոսությու-

նը՝ «*dia logos*»-ը՝ բառերի ճակատամարտն է, որտեղ հաղթելու մրցակցություն չկա: Կողմերն աշխատում են միասին՝ խնդրի լուծում գտնելու համար: Եվ առաջին քայլը ոչ թե հաղթական կերպով հակասությունը մատնանշելն է, այլ կառուցողական և ապագային կողմնորոշված որևէ արարքը:

Անցյալը շատ ավելի դյուրին է վերհանել, երբ աշխատանք է տարվել ընդունելի ապագայի ուղղությամբ: Շատ ավելի դյուրին է աշխատել թունելում, որի վերջում լույսի շող է երևում:

«Ի՞նչ եք մաղթում ձեր դստերը» հարցն ավելի լավ մեկնակետ է, քան «Ի՞նչ ունեք ձեր դստեր սիրեցյալի դեմ» հարցը: Այս պարագայում շատ արագ պարզ է դառնում, որ հայրն աղջկան անձնական երջանկություն է մաղթում, բայց նա նաև ցանկանում է, որ դուստրը, ինչպես ինքը, լինի ճապոնական մշակույթի կրողը Միացյալ Նահանգների հասարակության մեջ, որ նրա երեխաները սովորեն ճապոներեն ու ինֆորմացիա ունենան և՛ ճապոնական, և՛ ամերիկյան մշակույթների մասին: Սիրեցյալի հետ խնդիրը մաշկի գույնը չէ, ոչ էլ «խառը արյունը»: Բայց հայրիկը ենթադրում է, որ սևամորթ ամձն ավելի քիչ կհասկանա ճապոնական մշակույթից և հազիվ թե դրական վերաբերի դրան:

Պարզ է, որ հայրիկի համար հակառակ փաստարկների ճշմարտացիությունն ապացուցելու դեպքում հարցը կլուծվեր: Պարզապես պետք է ցույց տալ, որ սևամորթ ամերիկացին նույնպես ապրում է երկու մշակույթներում՝ սովորական ամերիկյան և փոքր-ինչ առանձնահատուկ: Նա ունի սեփական երաժշտությունն ու արվեստը, ապրում է աֆրոամերիկյան մշակույթի տրավմատիկ հիշողություններով և առասպելներով: Սա նոր խնդիր չէ: Բայց հոր պահանջն է, որ զույգը լինի եռամշակութային, ոչ թե երկմշակութային: Հնարավոր է նաև, որ նա պայման դնի, որ զույգի երեխաները լինեն միաժամանակ թե՛ աֆրոամերիկյան, թե՛ ճապոնական մշակույթների կրողները և այդ կերպ ի վիճակի լինեն հարմարավետ շարժվելու խիստ բազմազան ամերիկյան հասարակության սոցիալական տարածությունում:

Բայց ինչպե՞ս հայտնել վերոնշյալը հայրիկին, երբ շփումը դստեր և նրա սիրեցյալի հետ խաթարված է: Լուծումը ճապոնացի Ջեն քահանան էր՝ հայրիկից տարիքով ավելի մեծ և վերջինիս մշակութային արժեքներում խորապես արմատավորված մեկը: Նա տվեց նրան ժամանակ, որն անհրաժեշտ էր լուծման հանգե-
լու համար:

Գերազանցման բանալին հասկանալն էր: Խնդրի էությունը ոչ թե ռասան էր, այլ մշակույթը: Հայրը ոչ թե ցանկանում էր, որ թոռներն անպայմանորեն ճապոնացու մաշկի գույնն ունենան, այլ ուզում էր, որ նրանք լինեն ճապոնական մշակույթի կրողնե-
րը: Հնարավորությունը գիտակցելը դարձավ կոնֆլիկտի լուծման ուղիղ ճանապարհ:

ԾՆՈՂՆԵՐԸ, ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՎ ԼԱՎ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ

Հարգելի՛ էմմ Լենդերս,

Ի՞նչ անեմ ծնողներիս հետ: Նրանք երբեք ինձ հանգիստ չեն տալիս, միշտ փնթփնթում են՝ «Կախի՛ր հագուստդ», «Հավաքի՛ր սենյակդ», «Հնարավորություն տո՛ւր մյուսներին օգտագործելու հեռախոսը»: Անընդհատ փնթփնթոց է, խաղաղություն և հան-
գիստ ուղղակի չկա: Խնդրում եմ օգնեք ինձ՝ ի՞նչ անեմ:

Ոչ մի խաղաղություն

Հարգելի՛ Ոչ մի խաղաղություն,

Կախե՛ք ձեր հագուստը: Հավաքե՛ք ձեր սենյակը: Հնարավո-
րություն տվե՛ք մյուսներին օգտագործելու հեռախոսը:

Էմմ Լենդերս

Սա լավ պատասխան է, քանի որ ծնողների այնպիսի նպա-
տակները, ինչպիսիք են «հագուստ կախի՛չների վրա, կոկիկ սեն-
յակ և մուտքային ու ելքային հեռախոսազանգեր ընտանիքի բո-

լոր անդամների համար», շատ հաճախ օրինական նպատակներ են, իսկ այնպիսի նպատակները, ինչպիսիք են «ես ցանկանում եմ /ժ/ հագուստի հետ անել այն, ինչ ցանկանում եմ, դա իմ սենյակն է, ես պետք է խոսեմ ընկերներիս հետ», ոչ միշտ են գտնվում օրինականության մույն մակարդակում: Այլ հարց է, թե ինչպիսի գործընթաց է օրինականացնում երեխաների առնչությամբ ծնողների նպատակները: Սա հաճախ անվանում են «մեծացնել երեխաներին»: Վախեցնող արտահայտություն է՝ ինչպե՞ս մեծացնել՝ նրանց վեր ձգելու միջոցով, ինչի՞ց՝ մազերի՞ց, ինչու՞:

Սեռական հասունության ընթացքում երեխաները դեպքերի մեծամասնությունում իրենց առնչությամբ ծնողների նպատակները հաճախ դիտարկում են որպես անօրինական:

Դուստր/որդի՝ 16 տարեկան – Նրանք խառնվում են մույնիսկ ամենաչնչին բաներին՝ ինչպես ենք հագնվում, ում հետ ենք հանդիպում, գիշերը ժամը քանիսին ենք վերադառնում տուն, որ ժամին ենք գնում քնելու, երբ ենք անջատում լույսը: Ես չեմ կարող հանդուրժել ամեն ինչի հանդեպ այս վերահսկողությունը: Ես բավական մեծ եմ ինքնուրույն լվացվելու համար: Լավ, գուցե ես թույլ կտամ որոշ սխալներ, բայց դրանք կլինեն իմ սխալները, և ես կկարողանամ սովորել դրանցից: Ես չեմ կարող զարգանալ՝ կախված լինելով անցյալի այս վերապրուկներից: Ես տեղափոխվում եմ այլ բնակարան առանձին ապրելու համար: Մորաքույրն ունի սենյակ, մա կարող է այն տրամադրել ինձ:

Յայր/մայր՝ 40 տարեկանն անց – Խնդիրն այն է, որ մեր որդին/դուստրը դեռևս բավականաչափ հասուն չէ՝ իմանալու գրավիչի ու հիմարի, անօրինականի և պարզապես օրենքով արգելվածի միջև սահմանը: Մեր դուստրը/որդին ատում է տուն գալը, ճիշտ ժամին քնելու գնալն ու մի շարք նման բաներ, ուստի թույլատրելը, որ մա ինքնուրույն որոշումներ կայացնի, կարող է աղետալի հետևանքներ ունենալ հենց իր համար: Մենք չենք կարող թույլ տալ, որ մա ապրի իր մորաքրոջ հետ, մույնիսկ եթե նրանք

համակրում են միմյանց, քանի որ վաղ թե ուշ խնդիրներ կառաջանան կապված դրամի, սննդամթերքի, լվացքատան հետ...

Կոնֆլիկտաբան – Դա համընդհանուր թեմա է: Խորհուրդը հետևյալն է՝ սպասել մինչև խնդիրն ինքնուրույն կլուծվի, որովհետև երեխաները որոշ ժամանակ անց կտեղափոխվեն՝ սովորելու, աշխատելու համար: Երեխաները նույնպես լիովին անկեղծ չեն: Նրանք պահանջում են անկախություն, բայց մի քիչ վախեցած են: Ծնողներն էլ են մասամբ անազնիվ: Նրանք վախենում են կորցնել իշխանությունը, վախենում են, որ կկարոտեն իրենց երեխաներին և, ի վերջո, վախենում են միայնակությունից: Երեխաները ցանկանում են հեռանալ՝ իրենց անկախությունը մշակելու, իսկ ծնողները ցանկանում են իրենց մոտ պահել երեխաներին՝ նրանց վերահսկելու և սեր տալու ու ստանալու համար «ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ վերջիններս փոքր էին»: Հեռավորության ցանկությունը մի կողմից և մոտիկության ցանկությունը՝ մյուս, տրամաբանորեն բացառում են միմյանց:

Այս հակասության հնարավոր գերազանցումներից մեկը զուտ տեխնիկական-ճարտարապետական է. առանձին սենյակ ծնողների բնակարանում՝ սանհանգույցով, փոքր խոհանոցով ու սառնարանով: Սենյակ, որը դուռ կունենա դեպի առանձնատան/բնակարանի մյուս մասերը, բայց նաև կունենա մուտքի առանձին դուռ: Նման հատակագծերը շատ տարածված են ԱՄՆ-ում, ավելի հազվադեպ՝ ճապոնիայում և եվրոպական երկրների մեծ մասում: Գուցե նման վերանորոգումը թանկ կարժենա, բայց հաստատ չի լինի ավելի թանկ, քան կլինեն տեղափոխման ծախսերը:

Դեռահասների կողմից անկախության հայտարարությունները գալիս են ավելի երիտասարդ տարիքից, երկսերունդ բնակարանները/առանձնատները նույնպես կդառնան ավելի տարածված: Հին ժամանակներում գյուղական վայրերում լուծումը մի կողմում կառուցված քոտեջն էր: Այսօր նման լուծման համար հողատարածք ձեռք բերելն այնքան էլ հեշտ չէ: Ամեն դեպքում

մշտապես վերահսկողության և փոխօգնության միջև հավասարակշռությունը կտեղափոխվի, բայց սկզբունքը, որ հեռավորությունը ու մոտիկությունը պետք է հաշտեցվեն, կմնա:

Խնդիրը նույնն է մի երկրի ներսում երկու, երեք ազգերի համար: Ինքնավարությունը՝ ինքնակառավարումը, ենթադրում է սեփական տարածք (սեմյակ): Բայց այդ տարածքները կարող են լինել նույն երկրի (բնակարանի, առանձնատան) ներսում՝ հարաբերականորեն բաց սահմանով ու սեփական ելքով դեպի արտաքին աշխարհ: Ազգային անկախության շարժումների նպատակը հաճախ հենց սեփական մուտքն է դեպի օվկիանոս կամ այլ երկրներ: Փակ անկլավները ժողովրդականություն չեն վայելում: Եթե ծնողները/երկրները ցանկանում են տալ երեխաներին/ազգերին հավասար արժանապատվություն, լուրջ ընդունելով ու լսելով նրանց, ապա պետք է իմանան, որ բարի մտադրություններով խորհուրդն ավելի պատրաստակամորեն կընդունվի, քան պարտադրանքը, ինչպես սամիաների և թամիլների կողմից, ավելին՝ նաև պաղեստինցիների կողմից:

ԿԻՆԸ, ՏՂԱՄԱՐԴԸ ԵՎ ԼԱՎ ԿՅԱՆՔԸ

Կինը – Իմ խնդիրը հեշտությամբ ձևակերպելի է. ես ազահ եմ: Ես ուզում եմ ամեն ինչ: Ես ուզում եմ շարունակել պրոֆեսորի իմ կարիերան համալսարանում, անել հետազոտություն, կարդալ, գրել գրքեր, հաճախել համաժողովների, սեմինարների, դառնալ փորձագետ, ստանալ պաշտոնական միջնորդավճարներ: Ես կուզեմայի ունենալ ամուսին՝ հպարտությանս արժանի մի մարդ, ով կսիրեր ինձ նույնքան շատ, որքան ես՝ նրան: Ես չեմ ցանկանում ունենալ ֆինանսական հոգսեր, բայց հավատացե՛ք ինձ՝ ես չեմ մտածում միայն իմ մասին, ես նաև կուզեմայի քաղաքական առումով աշխատել այլ մարդկանց համար: Ես ուզում եմ ունենալ գեղեցիկ ու հարմարավետ տուն, որը կարող է լինել ըն-

կերների հետ հանդիպման հիմնալի վայր: Նաև կցանկանայի ունենալ գեղեցիկ ու խելացի երեխաներ: Ձեր աչքերում ես տեսնում եմ, որ ուզում եք տալ այդ հարցը. այո, գուցե, դա երբեմն արկածախնդրություն է:

Ես նաև ուզում եմ ճամփորդել, տեսնել աշխարհը, ուզում եմ վայելել արվեստը, գրականությունը, երաժշտությունը, ցուցահանդեսները, ուզում եմ դառնալ ներքուստ ավելի հարուստ անձ, քանի որ իրականում դեռ երեխա եմ, ով անտեսել է իր ներքին կյանքը ու չգիտի ինչ անել:

Առաջ շարժվեք, փորձեք գտնել և՛ մեկը, և՛ մյուսը ներառող լուծում:

Տղամարդը – Իմ խնդիրը հեշտությամբ ձևակերպելի է. ես ազահ եմ: Ես ուզում եմ ամեն ինչ: Ուզում եմ շարունակել գործարարի իմ կարիերան, բայց նպատակը հարուստ լինելը չէ: Նպատակը մյուսներին հաղթելն է, այդ բնագավառում շուկային տիրանալը, նույնիսկ եթե պետք լինի հասնել դրան արյան գնով: Ես ուզում եմ ունենալ կին, տուն և երեխաներ ու ամեն ինչ, այդ իմաստով ես փոքր-ինչ պահպանողական հայացքների տեր եմ: Ձեր աչքերում ես տեսնում եմ, որ դուք ուզում եք տալ այդ հարցը. այո, գուցե, դա երբեմն արկածախնդրություն է:

Ես ուզում եմ ճամփորդել, տեսնել աշխարհը: Ես ուզում եմ վայելել արվեստը, գրականությունը, երաժշտությունը, ցուցահանդեսները, ուզում եմ դառնալ ներքուստ ավելի հարուստ անձ, քանի որ իրականում դեռ երեխա եմ, ով անտեսել է իր ներքին կյանքը ու չգիտի ինչ անել:

Առաջ շարժվեք, փորձեք գտնել և՛ մեկը, և՛ մյուսը ներառող լուծում:

Կոնֆլիկտաբան – Դեպքերն այնքան էլ արտասովոր չեն: Երկու դեպքում էլ նպատակները հերթի են կանգնում:

Ինչպես միշտ, մենք պետք է սկսենք կոնֆլիկտի վերլուծությունից և բերենք խնդիրը՝ կրկնակի ժլատությունը՝ «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդի կողմից պահանջվող մորմալ ձևի՝ գծապատկերի: Ինչ-որ

բան կա ճանապարհին՝ սակավությունը: Նրանք ունեն երկընտրանքներ, և դասական լուծումն ինչ-որ բանից կամ մեծ մասից հրաժարվելն է, քանի որ «հնարավոր չէ ունենալ կյանքում ամեն ինչ»:

Բացի խնդրահարույց անհավատարմությունից, կնոջ և տղամարդու նպատակներում չկան բաներ, որոնք բացառում են միմյանց տրամաբանական առումով: Տղամարդն ավելի եսասեր է՝ ես-ինձ-իմ, իսկ կինը՝ ավելի համերաշխ երեխաների և «մյուսների» հետ՝ մենք-մեզ-մեր: Բայց, ընդհանուր առմամբ, նրանք նման են: «Ներքին կյանքը» մասամբ նոր ժամանակաշրջան է, մասամբ՝ այնքան հին, ինչքան աշխարհը: Դա չի նշանակում, որ այն պետք է նսեմացնել: Վերևում բերված օրինակը Կալիֆորնիայից ցույց է տալիս, որ չկա բացարձակ համատեքստից անկախ կոնֆլիկտ հարուստ արտաքին և հարուստ ներքին կյանքի միջև:

Խնդիրն ավելի շատ այս բոլոր նպատակների միջև հարաբերությունների մեջ է և նրանում, ինչը մենք ընդհանրապես անվանում ենք ռեսուրսներ: *Փողը* դրանցից մեկն է. ճամփորդությունը և արվեստը կարող են լինել դրամապահանջ: *Ժամանակը* ևս պահանջվող ռեսուրս է. և՛ արտաքին, և՛ ներքին կյանքը կարգի բերելը կարող են լինել ժամանակատար: *Էներգիան* երրորդ անհրաժեշտ ռեսուրսն է. դուք համոզված եք, որ կարող եք պայքարել այն ամենի համար, ինչին ձգտում եք հասնել: *Ինքնակառավարման ընդունակությունը* չորրորդն է: Կան հարցեր, որոնք պետք է պատասխան ստանան. ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւմ հետ, իսկ երբեմն նաև՝ ո՞ւմ դեմ, և այստեղ է, որ կոնֆլիկտն է առաջ գալիս: Մենք խոսում ենք կենսակերպի մասին, իսկ դա ներքին և արտաքին գործողությունների շղթա է, որը հյուսվում է այս բոլոր բառերի միջոցով, որոնք միայն ներկայանում են այդքան անմեղ: Հարուստ կյանքը պահանջում է մեզանից մեղմ, չափավոր, վարչական ընդունակություն՝ կարգավորվելու նպատակների հերթն այնպես, որ դրանք չմիավորվեն մեր հոգու պաշտպա-

նության դեմ՝ նվաճելով մեզ, վերածելով մեզ անմշակ հողատա-
րածության:

Ահա այստեղ է գլխավոր խնդիրը: Այն հոգեբանական է և
գտնվում է մեր սահմանափակ հոգեբանական ընդունակության
մեջ: Նպատակները հերթի են կանգնում: Բայց նպատակը բավա-
րարումն է: Եթե նպատակն էյֆեյան աշտարակի ֆոնին ճամփոր-
դական ուղեկիցների հետ լուսանկար ունենալու հնարավորու-
թյունն է, ապա լուսանկարը տալիս է բավարարվածություն: Եթե
նպատակն էյֆեյան աշտարակից երևացող տեսարանի, աշտա-
րակի վերնամասում գտնվող ռեստորանում ուտելիքի վայելումն
է, ապա այդ դեպքում լուսանկարը կարող է նույնիսկ կանգնել
ճանապարհին՝ արգելափակելով նպատակը:

Դա մաս ճիշտ է այստեղ. նպատակները կարող են արգելա-
փակել միմյանց՝ նվազեցնելով յուրաքանչյուրի վայելքը: Այսպի-
սի ձևակերպմամբ մենք համզում ենք մի կողմից մի շարք նպա-
տակների և մյուս կողմից բավարարման աստիճանի միջև ընտ-
րությամբ: Մենք հրաժարվում ենք որոշ նպատակներից և վայե-
լում այն, ինչ հնարավոր է ներկայում:

Սխալ է: Հնդկական իմաստությունն ասում է. այս հակասու-
թյունը կարող է հաղթահարվել մոռացված չափման՝ ժամանակի
ներմուծման միջոցով: Խնդիրը ոչ թե վայելքի համար ժամանա-
կի՝ «*kairos*»-ի մեջ է, այլ կյանքի ընթացքում ժամանակի ընթաց-
քի՝ «*chronos*»-ի, որպես օրակարգ, օրագիր, ամսվա, տարվա
ծրագիր՝ կյանքի ծրագիր: Հնդկական կանոնը բաժանում է կյան-
քը չորս փուլերի՝ «*dharma*»-ի, «*artha*»-ի, «*kama*»-ի, «*moksha*»-ի,
և կյանքը կենտրոնացնում է մի նպատակի վրա մյուսից հետո. բա-
րոյականություն/գիտելիք, տնտեսական գործունեություն, վայելք
և իմաստություն/ազատագրում: Այդ իմաստությունն այնուհետև
կիսվում է երեխաների հետ: Արևմուտքում մենք նույնպես ունենք
չորս փուլեր՝ մանկություն, կրթություն, աշխատանք, կենսաթոշա-
կի անցում՝ ՄԿԹԱԿս: Մ-նը և Կս-ը գալիս են առանց որոշակի

պարտականությունների և կողմնորոշված են վայելքներին, բայց իմաստության շատ քիչ փոխանակմամբ Կս-ի փուլում:

Հնդկական երկու կանոններ այժմ կարգավորում են նպատակների հերթը՝ ցրելով նպատակները ժամանակի մեջ.

Միշտ ունեցեք բոլոր չորս նպատակները մտքում՝ որպես ուղեցույցներ ձեր կյանքում, ոչ թե պարզապես դրանցից մեկը: Եթե դուք փնտրեք դրանցից միայն մեկը, դուք չեք հասնի նույնիսկ դրան: Դրանք փոխկապակցված են:

Առանց կորցնելու որևէ նպատակ տեսադաշտից փոխեք ձգողականության կենտրոնը ձեր կյանքի ընթացքում մի փուլից դեպի մյուսը՝ «dharma»-ից դեպի «artha», «kama»-ից՝ «moksha»:

Երբեք դրանք բոլորը, երբեք դրանցից միայն մեկը: Սա երջանկության վատ բանաձև չէ, և հենց այն դարձավ նպատակ վերը նշված կոնֆլիկտի երկու կողմերի համար՝ ի լրումն միմյանց և այլոց երջանկության ճանապարհին չկանգնելուն:

ՖՐՈՅԴԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ

Մենք դիտարկեցինք ներանձնային և միջանձնային մի քանի կոնֆլիկտներ:

Ավելի ուշադիր հայացք գցելով դրանց՝ կտեսնենք, որ դրանցից յուրաքանչյուրում կողմերն ունեն իրենց նպատակները, բայց այնքան սերտորեն են կապված միմյանց, որ տեղյակ են մաս կոնֆլիկտի մյուս կողմի նպատակների մասին: Նույնիսկ եթե նպատակառուղված հետապնդում են սեփական նպատակները, նրանք կույր չեն Մյուսի նկատմամբ:

Վերոնշյալը կարող ենք համդիպել Զիգմունդ Ֆրոյդի ուսումնասիրություններում: Այստեղ մեր նպատակն է ուսումնասիրել, թե ինչ էր մա իսկապես ուզում ասել: Մեր նպատակն է գծապատ-

կերով առճակատել նրա մտակառույցներից ամենահայտնիները՝ Գեր-Ես-ի և Այն-ի, Մշակույթի/ Կառուցվածքի և Բնության՝ մեր ներսում Ուրիշի, միջև պայքարը:

Առանցքներից մեկում ունենք հասարակության պահանջները՝ Մշակույթի նորմերն ու Կառուցվածքի կողմից սոցիալական ցանցի միջոցով գործադրվող ճնշումները: Դրանք ուղղորդում են անձին որոշակի ուղղություններով՝ հեռու մյուսներից: Իսկ մյուս առանցքում ունենք կենսաբանորեն արմատավորված հիմնարար պահանջմունքները՝ «բնագղները»՝ Բնությունը, որն էլ իր հերթին է ճնշում գործադրում: Կրոնները սովորաբար հիմնված են բարու և չարի միջև պայքարի վրա, պարզևատրում են բարու կողմնակիցներին և պատժում նրանց, ովքեր զիջում են չարին: Այլ կերպ ասած, լայն ու նեղ ճանապարհ՝ Աստված և սատանա, Ֆրոյդն անվանում է դրանք Գեր-Ես և Այն:

Բայց Ֆրոյդը թշնամաբար չի տրամադրված բնագղների նկատմամբ, ոչ էլ անվերապահորեն ընդունում է «հասարակությունը»՝ պատվիրանները, նորմերը: Նրա ուսմունքներում հիմնական ակնարկը Գեր-Եսի կողմից Այն-ին չափից դուրս գերիշխել թույլատրելու հետևանքն է: Վիեննայի բուրժուազիայի շրջանում նրա ուշադրությունը բևեռված էր սեքսուալության ճնշման վրա, այլ ոչ թե այն բանի, թե ինչ է տեղի ունենում հասարակության ստորին հատվածում, երբ խորը չքավորության մեջ գտնվող գործազուրկ անձն ի վիճակի չէ գողանալ խիստ բաղձալի հացի կտորը և մահանում է քաղցից: Ֆրոյդն ավելի հեռու գնացած կլիներ, եթե կիրառեր իր համճարը հիմնարար պահանջմունքների ողջ սպեկտրի նկատմամբ: Այսպես, ի՞նչ է տեղի ունենում միանձնուհու հետ, ով նվիրում է իրեն Աստծուն և խուսափում սեքսուալությունից, ծննդաբերությունից և կրծքով կերակրելուց: Կամ, ընդհանրապես, ի՞նչ է տեղի ունենում կնոջ հետ, ով խուսափում է ծննդաբերությունից և կրծքով կերակրելուց:

Ինչպես միշտ, ծայրահեղ դիրքերը պարզ են. առանց որևէ բնագղների մարդն ի հակադրություն առանց սահմանափակում-

ների և վերահսկողությունների մարդու: Մենք կարող ենք գտնել առաջինի մոտավոր համապատասխանությունները որոշ վանքերում, իսկ երկրորդինը՝ գողերի շրջանում: Բայց կարող է առարկություն ծնվել: Չէ՞ որ ճգնավորությունը վանքում կարող է վերաճել պահանջմունքի, իսկ գողությունն ու թալանը կարող են կարգավորված լինել ոչ միայն բնագղներով, այլև վրիժառության նորմերով: Մարդկային վարքագծում նման ծայրահեղություններին տրվում են որոշակիորեն տարածության մեջ՝ առաջինի և որոշակիորեն ժամանակի մեջ՝ վերջինի համար: Եթե մարդիկ այս երկու ծայրահեղություններով առաջնորդվեին ամենուրեք և բոլոր ժամանակներում, կժխտվեր մարդկային կյանքը, անցյալը և ներկան թալանով կոչնչացվեին, իսկ վանքերը կդարձնեին մարդկության ապագան անգավակ:

Ե՛վ բնագղներից, և՛ նորմերից հեռացումն ունի անվանում՝ *մահ*: Նույնիսկ եթե մարդկային մարմինը տեխնիկապես պահվեր կենդանի, այն կգործառներ բանջարեղենից էլ ավելի ցածր մակարդակում: Նորածին երեխան լի է պահանջմունքներով, իսկ նորմերը դանդաղորեն ամրանում են նրա մեջ՝ կապվելով պահանջմունքների բավարարման հետ:

Փոխգիշումը կյանքն է, որով ապրում է մեր մեծամասնությունը՝ ծայրահեղ կետերի ուղղությամբ տատանումներով՝ խելամտորեն հնազանդ կամ նորմերին, կամ բնագղներին: Ժամանակի ընթացքում զարգանում է անհատականությունը՝ եսը: Ֆրոյդն անվանում է այն էգո: Վարքագիծը կդառնա սովորություն: Շեղումների ժամանակ որոշ նախազգուշական նշաններ կփայլատակեն. «գրավիչ, բայց վտանգավոր», «ճիշտ, բայց ծանծրալի»: Տարափոխումները կբխեն երկու ազդանշանների նկատմամբ փոփոխվող ուշադրությունից:

Բայց ի՞նչ կասեք *գերազանցման* մասին: Ես չեմ կարծում, որ Ֆրոյդն ունի որևէ պատասխան: Այն-Գեր-Ես հակասությունն ինքնին արժեքավոր է՝ հակասություն, որի հետ մենք կարող ենք ապրել, պայքար, որը կարող է ստիպել մեզ աճել: Հարուստ և հարս-

տացնող կյանքն այս աճի նպատակն է՝ խելամիտ Ես-ով, որն ունի խելամիտ հարաբերություններ և՛ հոգու, և՛ մարմնի հետ: Մարդկանց հետ սիրո և համերաշխության գործընթացը նպատակն է: Մենք բոլորս պետք է գտնենք մեր պատասխանները և սովորենք միմյանցից: Իսկ Նիցշեի «Übermensch»-ը¹ բարուց և չարից դուրս գեր-գեր-ես-ը, որը գերազանցում է շարքային մարդկանց (կամ շարքային ազգերի) համար սահմանված բոլոր նորմերը, ճիշտ պատասխան չէ:

¹Übermensch (գերմ.) - *Գերմարդ* (թարգ.)

ԵՐԵՔՆԱԲԹԻ. ՄԵԶՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ

Այժմ մենք անցնում ենք միկրո մակարդակից մեզո մակարդակին՝ անձնականից սոցիալականին, հոգեբանությունից սոցիոլոգիային, սոցիալական փիլիսոփայությանն ու քաղաքագիտությանը:

Ի՞նչ է դա նշանակում: Մենք մինչ այժմ գործ ենք ունեցել մարդկանց հետ: «Ռասան» և «դասակարգը», տնտեսական և քաղաքական «ուժերը», պաշտպանությունը, դպրոցական և առողջապահական «այլընտրանքները», «զենդերը» սոցիալական կառուցվածքներ են: Ուսումնասիրման ենթակա ութ հակասությունները մաս բաժանարար գծեր են: Ի՞նչ ներդրում կարող է ունենալ այս ամենում իր անվանն արժանի կոնֆլիկտի տեսությունը:

Մեր ուշադրությունն այլևս կենտրոնացած չէ առանձին անձանց և նրանց հակասությունների վրա, այլ մարդկանց կատեգորիաների, խմբերի և այլ խմբերի հետ նրանց հակասությունների վրա: Մենք ունենք որոշ գաղափարներ այն մասին, թե ինչ են նրանք ներկայացնում իրենցից և ինչպես են նրանք վերաբերվում այլ խմբերին: Անհատների մասին մենք հաճախ ասում ենք, թե նրանք պատկանում են այս կամ այն խմբին և, ըստ այդմ, վերագրում ենք նրանց որոշակի հատկանիշներ: Մենք զբաղվում ենք վերացություններով և ընդհանրացումներով, ապամարդկայնացնում ենք: Ինչ-որ տեղ հեռավորության վրա ցեղասպանություն է նշմարվում, որը սահմանվում է որպես *զանգվածային բնության սպանություն*:

Սակայն մենք ընդհանրացումներ ենք անում մաս անձնականի մասին: Հոգեբաններն ունեն անձերի բնութագրեր և պարտադրում են դրանք կոնկրետ անձանց: Կարո՞ղ ենք մենք ապրել առանց մեր, այլ մարդկանց, եղանակի մասին ընդհանրացումների:

Լուծումը գտնվում է երկխոսության մեջ՝ որպես կոնֆլիկտի մեջ ավելի խորը ներթափանցելու եղանակ: Երկխոսությունը ան-

հատների հետ է, ոչ թե կատեգորիաների: Մենք ապահովմանի-
զացնում ենք անձնական Դու-ն՝ դիտարկելով այդ անհատին որ-
պես կատեգորիայի ներկայացուցիչ՝ Այն: Իսկ դա փոխում է երկ-
խոսությունում Ես-Դու հարաբերությունը Ես-Այն հարաբերության:
Պատասխանը Ես-Դու բազմաթիվ երկխոսություններ ունենալու,
ընդհանուր և անձնական տարափոխումների նկատմամբ բաց լի-
նելու մեջ է: Ինչպես կտեսնենք, միասին վերցրած այս ամենը կա-
րող է լուծումների աղբյուր լինել:

Այժմ դիտարկենք ութ սոցիալական հակասությունները: Մեկ-
նակետերը պարզ, քաջ հայտնի դիրքեր են: Մեր խնդիրն է ուսում-
նասիրել, թե ինչ կարող է առաջարկել խաղաղության անկյունա-
գիծը գերազանցման և փոխակերպման համար:

ՈԱՍԱՅԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻՑ ՋԵՐԾ ԴՊՐՈՑ

Շառլոտսվիլում՝ Վիրջինիայում՝ Թոմաս Ջեֆերսոնի հայրենի
քաղաքում, որը ժամանակին նոր, անկախ ԱՄՆ-ի խորհրդանիշն
էր, 1958 թվականին իրավիճակը լարված էր, նույնիսկ կարելի է
ասել՝ պայթյունավտանգ: 1954 թ. մայիսի 17-ին Գերագույն դա-
տարանը վճռել էր, որ սպիտակամորթ և սևամորթ աշակերտների
համար առանձնացված դպրոցները երբեք չէին կարողանալու լի-
նել հավասար և կարգադրել էր ինտեգրել դպրոցները՝ «կան-
խամտածված արագությամբ»:

Բնակչությունը բաժանված էր երեք հիմնական խմբերի՝
հետևյալ նպատակներով.

Աֆրոամերիկացիներ – Գերագույն դատարանի վճիռը պե-
տության օրենքն է, ինտեգրվել:

Ինտեգրմանը կողմնա- կից սպիտակամորթներ. Գերագույն դատարանի վճիռը պե-
տության օրենքն է, ինտեգրվել:

Մեկուսացմանը կողմ- Ո՛չ այստեղ, ո՛չ հիմա, ո՛չ այսպես.

*Ոսկից սպիտակամորթ- մենք պատրաստ չենք:
Ուր –*

Այսպիսով՝ սա կոնֆլիկտ էր երեք կողմերով, երկու նպատակներով ու նշանակալի մեծամասնությամբ, որը, չեզոք դիրք գրաված, ինչպես միշտ, սպասում էր: Սպիտակամորթները համախմբվել էին «Մարդկային հարաբերությունների խորհրդում» ու «Պետական իրավունքների և անհատական ազատությունների սպիտակամորթ քաղաքացիների խորհրդում»։ առաջինը՝ ավելի շատ մոտիկություն ստեղծելու համար էր, երկրորդը՝ տարածություն, հեռավորություն պահպանելու և անխուսափելի ինչքան հնարավոր է երկար հետաձգելու համար:

Բայց կար նաև մի այլ տարբերություն երկու սպիտակամորթ խմբերի միջև: Ինտեգրման կողմնակիցները մեծամասամբ միգրանտներ էին հյուսիսից՝ ինտելեկտուալներ առանց տեղական արմատների: Մեկուսացման կողմնակիցները ֆերմերներ և բանվորներ էին, ովքեր ապրել էին հարավում սերնդից սերունդ: Նրանց տեսանկյունից քաղաքն իրենցն էր՝ ինտեգրման կողմնակիցները միգրանտներ էին, իսկ սևամորթները, ովքեր մի ժամանակ պահանջված էին, այժմ համարվում էին չպահանջված, մասամբ նույնիսկ՝ վտանգավոր:

Կար մի կարևոր բացառություն՝ Սառա Փեթթոն Բոյլը՝ ՎԱԸ (Վիրջինիայի առաջին ընտանիքներ) անդամ, ով ուներ այդ նահանգի իսկական զավակը համարվելու անբասիր հավատարմագրեր: Այնուամենայնիվ, նա ինտեգրման գերակտիվ կողմնակից էր: Մի գիշեր նրա պատուհանից դուրս Քյու Քյուքս Քլենը վառեց խաչ՝ որպես նախազգուշացում: Կոնֆլիկտից կախված էր բռնության մութ ամպրոպաբեր ամպ:

Կային ստրկության և խռովության, քաղաքացիական պատերազմի, հաղթանակի և պարտության շատ ուժեղ հույզեր և հիշողություններ:

Մեկուսացման կողմնակիցներն ասում էին այն միտքը, որ կարող էին ևս մեկ անգամ պարտվել քաղաքացիական պատերազմում, ինչից խուսափելու համար նրանք պայքարեցին իրավաբանների հետ՝ օգտագործելով ամեն տեսակի հնարքներ անխուսափելիի դեմ:

Ինտեգրման կողմնակիցները փորձեցին, ոչ առանց խնդիրների, դառնալ լավ մոդել սևամորթ-սպիտականորթ հարաբերությունների համար՝ դրա միջոցով ցույց տալով մյուսներին, որ մերձավորությունից վախենալու պատճառ չկա: Ոչ ոք չէր համարձակվում հրապարակայնորեն որևէ բան ասել, որը կարող էր սանձազերծել բռնի արձագանք: Մեկուսացման կողմնակիցների դիրքն անօրինական էր, Գերագույն դատարանի վճռից հետո այն արգելված էր օրենքով: Բացահայտ անհնազանդությունը կարող էր սադրել դաշնային գործողություն: Մյուսների դիրքն օրինական էր՝ օրենքով սահմանված, բայց կարող էր սադրել բռնություն ներքևից: Այդ ամենը սևամորթների վերաբերյալ էր, բայց նրանք, այսպես թե այնպես, չունեին իշխանություն: Տեղային մակարդակում նրանք սպասում էին: Նրանք լավ կազմակերպված էին Նյու-Յորքից (Սևամորթների առաջխաղացման ազգային ասոցիացիա՝ ՍԱԱԱ) և Ատլանտայից, Ջորջիայից (Հարավային առաջնորդության գիտաժողով՝ ՀԱԳ): Նրանք բոլորը սպասում էին: Գերագույն դատարանը տարիներ շարունակ նույնպես սպասում էր: Իսկ այժմ նրանք հանկարծակի հարկադրված էին արտահայտել իրենց դիրքը գործողությամբ: Կար ինչ-որ խոսակցություն փոխզիջման մասին՝ նախ սկսել համալսարաններից, այնուհետև՝ մնացածը, սկսել այնտեղից, որտեղ «պայմանները ճիշտ են», այնուհետև՝ մնացածը: Բայց այս պրոցեսը կարող էր երկար տարիներ տևել:

Մեկուսացման կողմնակիցները նրանք էին, ովքեր հնարեցին գերազանցումը, ընդ որում, ոչ բռնի. նրանք չցանկացան «ենթարկել իրենց երեխաներին ռասաների խառնակմանը» պետության կողմից ֆինանսավորվող դպրոցներում ու ստեղծեցին մասնա-

վոր դպրոցներ, որոնք միայն նրանց համար էինք, ովքեր ունեին բավականաչափ փող և կայուն ռասիստական հայացքներ: Մյուսները, ովքեր ավելի քիչ ունևոր էին և ավելի քիչ հաստատակամ իրենց ռասիստական համոզմունքներում, խոնարհվեցին անխուսափելիի առաջ:

Այս կոնֆլիկտն ուսումնասիրողների հիմնական ներդրումն այն էր, որ նրանք կոնֆլիկտի բոլոր կողմերի համար տեսանելի դարձրեցին և հասարակական կարծիքի հարցումների միջոցով ցույց տարվեցին, որ մարդիկ ինտեգրումն անխուսափելի էին համարում, որ ոչ ոք չէր ցանկանում բռնություն, և որ մասնավոր դպրոցները ընդամենը հարցի ժամանակավոր լուծում էին:

Լուծումները երբեմն կարող են ծագել անսպասելի տեղերից: Մեկուսացման կողմնակիցներին համարում էին գերկոշտ, բոլորովին զիջել չցանկացող: Բայց նրանք գերազանցեցին կոնֆլիկտը՝ ներկայացնելով մոր սոցիալական իրականություն՝ մասնավոր դպրոցներ:

Կարող է հարց առաջանալ, թե որքանով է այս փորձառությունը հաջողված: Ֆրանսիական երկաթուղային խաչմերուկներում հաճախ կարելի է տեսնել նախազգուշացնող հետևյալ հաղորդագրությունը. *«Un train peut en cacher un autre»*¹: Մի գնացքը գալիս է աջ կողմից, անցնում, բայց քողարկում է ձախից եկող գնացքը: Երկաթգիծը հատել ցանկացողի համար, ով տեսնում է, որ աջ կողմից գնացքը հենց մոր անցավ, արագ անցնելու հաճույքը կարող է բավականին կարճ տևել:

Մի կոնֆլիկտը կարող է թաքցնել մեկ ուրիշը, որն անցնում է իր հետքերով: Այս պնդմանն արձագանքներից մեկը կարող է լինել հետևյալը. «Եկեք դեմքով դառնա՞նք մոր կոնֆլիկտին, երբ հասնենք դրան: Մենք չենք կարող հետաձգել մի կոնֆլիկտի գերազանցումը/փոխակերպումը, որովհետև դրան կարող է հաջորդել մեկ ուրիշը»: Բայց եթե այսպես վարվենք, կամ կլինենք չա-

¹ *«Un train peut en cacher un autre»* (ֆրանս.) - *«Մի գնացքը կարող է թաքցնել մյուսին»* (թարգ.)

փազանց կաթվածահար կոնֆլիկտին դիպչելու (երկար ու բարակ զբաղվելու) համար, կամ կասենք՝ «Նախ պետք է մաքրենք ամեն ինչ ներքևից»։ Իսկ մենք չենք կարող դա անել, կամ պակասում է դա անելու քաջությունը։ Արդյունքը կարող է մահ լինել այն, որ ոչինչ չի արվում։ Ավելի լավ է տեղյակ լինել վտանգի մասին և փորձել զբաղվել նախազգուշացմամբ, ինչպես համաշխարհային հեղափոխությանը/Մեսիային սպասող կոմունիստները/քրիստոնյաները։

Շառլոտսվիլը տուժել էր «պրյուրալիստական անտեղյակությունից»՝ մարդկանց իրական դիրքորոշումների վերաբերյալ անտեղյակությունից և չափազանցված վախից։ Կոնֆլիկտն ուսումնասիրողի կողմից հասարակական կարծիքի վերաբերյալ հասանելի դարձրած տվյալները պառակտված, բայց, ըստ էության, խաղաղասեր բնակչության մասին, խրախուսեցին ապամեկուսացումը։ Ատելության և բռնության նախապատրաստման վերաբերյալ տվյալները կհանգեցնեին հակառակին՝ հակամիջոցների ու, թերևս, բռնության։

ԱՆՊԱՍԱԿԱՐԳ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Միջադեպը դասական դասակարգային կոնֆլիկտ է։ Փոքր ընկերություն՝ բաղկացած սեփականատիրոջից և աշխատողից, ահա ամենը։ Արտադրության միջոցները պատկանում են սեփականատիրոջը, իսկ աշխատողը վարձատրվում է արտադրանքի վաճառքից ստացվող եկամուտից։ Խնդիրն այն է, որ աշխատանքային պայմանները խղճուկ են՝ սեմյակում մշտապես միջանցիկ քամի է, տիպիկ հոտեր և թունավոր նյութերով աղտոտված միջավայր։ Թոքերը ենթարկվում են թունավոր գազերի և սառը, խոնավ օդի ազդեցությանը։ Աշխատողը վատ վիճակում է գտնվում, բայց երբ մազանգահարում է և ասում, որ հիվանդ է, աշխատանքը կանգ է առնում, եկամուտը նվազում՝ չնայած առանց այդ էլ

խղճուկ աշխատավարձին: Այնուամենայնիվ, դա ավելի լավ է, քան աշխատավարձի իսպառ բացակայությունը:

Աշխատողը – Աշխատանքային պայմանները խայտառակ են: Եթե չլինի պատշաճ օդափոխություն և պատի մեջ առկա անցքերն ու ճեղքերը չվերանորոգվեն, ապա գործադուլ կանեն և կմախագուշացնեն մյուս բոլորին, որ հրաժարվեն աշխատել նման պայմաններում:

Սեփականատերը – Ահա՛ այն պատվերները, որ մենք ստացել ենք, ահա՛ մեր հաշիվները: Բարձրագլած խնդիրների պատասխանն ակնհայտ է՝ անհրաժեշտ վերանորոգումների համար չկա բավականաչափ փող:

Շատ աշխատողներ տարիներ շարունակ լսել են նմանատիպ «հեքիաթներ», և միայն երբեմն են դրանք ճշմարիտ: Աշխատանքային պայմանները բարելավել չցանկացող սեփականատիրոջ և դրանք փոխել ցանկացող աշխատողի միջև հակասությունը համակարգի մեջ է: Այդ կոնֆլիկտը կարող է ենթարկվել բացասական գերազանցման՝ ընկերությունը փակելու միջոցով, ինչի արդյունքում ո՛չ աշխատողը, ո՛չ էլ սեփականատերը որևէ բան չեն ստանա: Իսկ մեկի հաղթանակն ակնհայտորեն պարտություն է մյուսի համար: Փոխզիջման տեղ չկա. սեփականատերը կարող էր անել ինչ-որ փոքր վերանորոգում, իսկ աշխատողը կարող էր ընդունել դա կարճ ժամկետով: Բայց հիշյալ պահին փոխզիջումն արդեն իսկ մերժվել է երկուսի կողմից էլ. որպես չափազանց քիչ արվող աշխատանք՝ մեկի և չափազանց թանկարժեք՝ մյուսի համար:

Տվյալ իրավիճակում գործադուլն ու ընկերության փակումն անխուսափելի են թվում: Գերազանցումը հրատապ է ոչ միայն կոնֆլիկտի երկու կողմերի համար, այլ նաև երրորդ կողմի՝ հաճախորդների և չորրորդ կողմի՝ մատակարարների համար: Կա-

րո՞ղ է գերազանցման բանալին գտնվել վերջին երկուսից որևէ մեկի մոտ:

Կոնֆլիկտաբանը գրուցում է բոլոր չորս կողմերի հետ և բացահայտում, որ նրանք բոլորը խիստ հետաքրքրված են, որ ընկերությունը շարունակի գործել, բայց դա այնքան մեծ հետաքրքրություն չէ, որ կողմերը համաձայնեն վարկ վերցնել: Աշխատողը շատ քիչ է հասկանում, թե ինչպես է ընկերությունը կառավարվում, իսկ սեփականատերը շատ քիչ բան գիտի աշխատողի աշխատանքի և դրա հետ կապված խնդիրների մասին: Չմայած ընկերության փոքրությամբ՝ սեփականատերն ու աշխատողն ապրում են երկու տարբեր աշխարհներում:

Գերազանցում. աշխատողի և սեփականատիրոջ միջև տարբերությունը կարող է վերացվել այն դեպքում, եթե երկու կողմերը մուտք գործեն ընկերություն՝ որպես հավասարներ՝ դարձնելով ընկերությունը համատեղ աշխատանքի արդյունք: Նախկին սեփականատերը շաբաթվա չորս օրը կանցկացնի հաստոցների մոտ և ավելի լավ կհասկանա աշխատանքի ենթատեքստը, ֆիզիկապես ավելի լավ կզգա, թե ինչքանով է հնարավոր աշխատել հոտերի և միջանցիկ քամու առկայության պարագայում: Նախկին աշխատողը շաբաթվա մեկ օրը կանցկացնի գրասենյակում և կիմանա, թե ինչքան քիչ է հասկանում հուսալի մատակարարման, նվիրված աշխատանքի, գնորդների, բավականաչափ դրամական հոսքեր գտնելու մասին: Նա նաև կհասկանա, որ գրասենյակում չկա բավականաչափ աշխատանք լրիվ դրույթով աշխատողի համար այն բանից հետո, երբ ընկերությունը նրա համար ներդրում է կատարել հաշվապահական հաշվառման դասընթացում: Այլ կերպ ասած, ընկերությունը վերակազմակերպման մեջ է՝ ութ օր հատակին և երկու օր գրասենյակում՝ յուրաքանչյուրը շաբաթական հինգ օր՝ հակառակ նախկին հինգ գումարած հինգին: Արդյունքը. արտադրողականության և արտադրության զգալի աճ ու հումքի հոսք մի ուղղությամբ և դրամական՝ մյուս ուղղությամբ: Նախկին սեփականատերը կարող է օգտագործել իր նոր դիրքը՝

նախկին աշխատողին կրկին վարձելու համար, երբ շահութաբերությունը բարելավվի:

Կոնֆլիկտը ոչ միշտ կգտնի նման հաջող դրական գերազանցում: Կարող է թվալ, թե նման գերազանցումն ավելի հեշտ է կազմակերպել փոքր ընկերություններում, բայց տնտեսական ցիկլում սահմաններն ավելի թափանցիկ դարձնելը լավ ընդհանուր բանաձև է ցիկլում ավելի լավ հոսքեր ապահովելու և դրա միջոցով կոնֆլիկտների ու, ընդհանուր առմամբ, այդ ցիկլի փոխակերպման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Այժմ անդրադառնանք այն մեծ տնտեսական բանավեճին ու պայքարին, որ իրենց կնիքն են թողել անցյալ դարի վրա և, գուցե, կվերսկսվեն այս դարում: Արտադրության միջոցների և ֆինանսների նկատմամբ սեփականությունը պետք է լինի մասնավոր, կոլեկտիվ (ինչպես համատեղ ընկերության դեպքում), թե՞ պետական: Սեփականությունը տալիս է տնտեսական ցիկլում ապրանքների օգտագործման իրավունք՝ հումքից մինչև սպառում: Սեփականատերն ունի որոշ ռեսուրսներ: Ինչպե՞ս և որտե՞ղ է նա պատրաստվում դրանք ներդնել: Նա թույլ կտա՞ շուկային որոշել առավելագույն *շահույթի տանող* ճանապարհը, թե՞ նա պետք է թույլ տա, որ որոշիչ դեր խաղան *հիմնարար մարդկային պահանջմունքները*՝ անհատական և/կամ կոլեկտիվ:

Այս բանավեճը քաջ հայտնի է և, գուցե, նույնիսկ ծանծրության երանգ է ստացել: Այնուամենայնիվ, կամ հենց այդ պատճառով, հետաքրքիր է տեսնել, թե ինչքան պարզունակ է այն եղել իրականում, և ինչպես գծապատկերի կիրառումը կարող է բերել տնտեսական կոնֆլիկտների փոխակերպման մոր հեռանկարների:

Նախ մշենք, որ սեփականության խնդիրը նույնը չէ, ինչ ընկերություն կառավարելու խնդիրը: Իհարկե, մասնավոր սեփականատերը կարող է պլանավորել գործը՝ շեշտադրում անելով ոչ միայն պահանջարկի, այլև մարդկային պահանջմունքների վրա: Պետությունը նույնպես կարող է կառավարել ընկերություն, որտեղ ուշադրության կենտրոնում շահույթն է: Բայց սովորաբար պետությունն օրինականացնում է իրեն՝ ասելով, որ բոլորի հիմնարար պահանջմունքների և բարեկեցությանն ուղղված կողմնորոշում ունի, իսկ մասնավոր հատվածը ենթադրաբար վայելում է Ադամ Սմիթի կողմից տրված երաշխիքը, որ շահույթի նկատմամբ իրենց եսասիրական կողմնորոշումը կբխի յուրաքանչյուրի շահից, որ մեկ միլիոն եսասիրությունները հավասար են այլասիրության ավելի շատ, քան եթե ուշադրության կենտրոնում լինեին հիմնարար պահանջմունքները:

Այժմ պարզեցնենք այս ամենը և ձևակերպենք որպես կոնֆլիկտ *մասնավորի-շուկայականի-շահույթի և պետության-պլանայինի-պահանջմունքների* միջև: Երկու կողմերի դիրքերը ձևակերպված են վերևում: Մենք խոսում ենք, այսպես կոչված, աջակողմյան և ձախակողմյան ուժերի մասին, բայց կողմերում կոնկրետ մարդիկ են՝ մսից և արյունից: Մեզո կոնֆլիկտները հեշտությամբ վերածվում են միկրո կոնֆլիկտների:

Եթե ինչ-որ մեկն աջակողմյան գաղափարախոսության տեսանկյունից պայքարում է մասնավորի-շուկայականի-շահույթի համար՝ հուսալով, որ պետությունը դեռ ի վիճակի կլինի ուղղելու շահույթը դեպի հիմնարար պահանջմունքներն ու վերաբերվում սրան որպես «Երրորդ ճանապարհի», ուրեմն նախկինում մի շարք ձախակողմյան կուսակցություններ փոխակերպել են իրենց աջակողմյան կուսակցությունների: Հաշվի է առնվում այն, թե ինչ են նրանք անում, ոչ թե այն, թե ինչպես են անվանում իրենց: Խլելով աջակողմյան կուսակցությունների ծրագրերը՝ նրանք խլել են նաև ընտրողներին այդ կուսակցություններից:

20-րդ դարն ականատես եղավ քաղաքական ճոճանակի, որը տատանվում էր շուկայականից դեպի պլանայինը՝ սոցիալ-ժողովրդավարական խառը տնտեսության փոխզիջման միջոցով, իսկ այնուհետև՝ կրկին դեպի ետ: Բայց սրանք հինգ դիրքերից միայն երեքն են: Ի՞նչ է տեղի ունեցել բացասական և դրական գերազանցման հետ: Եվ ի՞նչ չքավորի դիետա է սա՝ ճաշացանկ հինգ ճաշատեսակից միայն երեքով:

20-րդ դարում կառուցված տնտեսական քաղաքականության միավորը ազգային, տարածաշրջանային կամ, նույնիսկ, գլոբալ էր (1990-ական թթ.), ինչը նշանակում էր, որ հեռացումը կոնֆլիկտից կենթադրեր տեղական տնտեսություններ, այլ կերպ ասած, ավանդական գյուղական տնտեսություններ: Հեռացումը հավասար էր պատմության անիվը ետ շրջելուն: Դե, ինչո՞ւ ոչ: Ռացիոնալ է ժամացույցը ետ տալ, երբ մենք գտնվում ենք մեկ այլ ժամային գոտում: Հնարավոր է դա ճիշտ այն տեղն է, որտեղ մենք գտնվում ենք: Բայց հարցը ոչ թե վիճելն է, այլ բացակայող երկու դիրքերը բանավեճում իմաստալից դարձնելը՝ և՛ վերբալ, և՛ հայեցակարգային:

Բայց դեռ հարց այն է, թե որտեղ է դրական գերազանցումը՝ և՛ մեկը, և՛ մյուսը: Լավագույն էմպիրիկ օրինակները, հավանաբար, ճապոնական և Արևելյան Ասիայի տնտեսություններն են մինչև այն պահը, երբ ԱՄՆ-ը պնդեց վերակազմավորման, ինչը նշանակում էր միանշանակ փոփոխություն մասնավորի-շուկայականի-շահույթի ուղղությամբ: Այդ ալիքն այժմ հանդիպում է ամբողջ աշխարհում՝ «սեփականաշնորհում» անվան տակ: Սա ծայրահեղական մոտեցումներից մեկն է:

Ճապոնական և՛ մեկը, և՛ մյուսը պետության կողմից պլանավորման և խթանման միջոցով միկրո վերահսկողությամբ շուկայական տնտեսություն էր: Շուկային էր պատկանում վերջին խոսքը ներքին տնտեսական ցիկլում, պետությանը՝ համաշխարհային տնտեսությունում: Աշխատողների հիմնարար պահանջմունքները երկուսի հոգածության տակ էին: Համակարգն ի վիճակի էր

բավարարելու հիմնարար պահանջումներն ավելի լավ, քան զուտ շուկային կողմնորոշված տնտեսությունը և ստեղծեց ավելի մեծ տնտեսական աճ, քան զուտ պլանային կողմնորոշվածությամբ տնտեսությունը: Խորհրդային տնտեսագետներից մեկը մի առիթով ասել է. «Այս անիծյալ ճապոնացի կապիտալիստներն ավելի լավ են գլուխ հանում տնտեսական պլանավորումից, քան մենք»: Իսկ նա կամ նրա ամերիկացի գործընկերները կարող են ավելացնել. «Այս անիծյալ ճապոնացի սոցիալիստներն ավելի լավ են գլուխ հանում շուկայական տնտեսությունից, քան մենք»:

Այսպիսով, մենք մոտենում ենք հիմնական անկյունագծին՝ 3. + 4. + 5.՝ հեռու շուկայի և պլանի ծայրահեղ դիրքերից, հեռու երեք ճաշատեսակից բաղկացած ճաշացանկից՝ դեպի բարդ, խառը տնտեսություն:

Այդպիսի տնտեսությունը կներառեր ավանդական, *տեղական հատվածը*, մասնավորապես, հիմնարար պահանջումներին համար՝ սննդամթերքը (թարմ օդով և ջրով), կացարանը և հագուստը, հիմնարար առողջությունը (տեղական բուժիաստատություններ), հիմնարար կրթությունը: Սրա մեծ մասը կլիներ հիմնված փոխանակման, այլ ոչ թե փողի վրա, իսկ եթե անգամ հիմնված լիներ փողի վրա, ապա կգործեր ոչ թե ազգային, այլ տեղական արժույթը:

Ազգային հատվածում կարող էր լինել սոցիալ-ժողովրդավարական տեսակի խառը տնտեսություն, որն արտադրում է արտադրության և սպառման միջոցներ ներքին պահանջարկի համար:

Երրորդ բաղադրիչը կարող էր լինել և՛ մեկ, և՛ մյուս հատվածը բարձր մակարդակում, որ դասական ճապոնական մոնոչի նման ուղղված կլիներ *գլոբալ տնտեսություն* արտահանմանը (տես *խաղաղություն խաղաղ միջոցներով*, մաս III):

Իսկ այս երեքի համադրությունը կոնֆլիկտի փոխակերպման բանալին կդառնար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչ է իր հետ բերում կոնֆլիկտի նկատմամբ վերոնշյալ մոտեցումը քաղաքական համակարգերին:

Այսօր շատերն այն կարծիքին են, թե շուկայի և պլանի միջև պայքարը հաղթել է շուկան: Եթե սրանք ուղեղի կոշտ սկավառակում առկա միակ այլընտրանքներն են և կոչվում են «կապիտալիզմ» ու «սոցիալիզմ», եզրակացությունն այս պահին կարող է ճիշտ լինել: Եթե ներառենք մյուս երեք հնարավորությունները, այն կդառնա ավելի խճճված:

Սակայն ժողովրդավարության և բռնապետության միջև հակասությունը հստակորեն հաղթել է ժողովրդավարությունը: *Բռնապետությունն անօրինական է:* Գործնականում մենք դեռ ունենք գեմդերային, սերմդային, ռասայական, դասակարգային և ազգային հիմք ունեցող բռնապետություններ, բայց ոչ ոք չի գալիս դրանք պաշտպանելու: Հովվապետերը, ծերերը նախընտրում են լռել: Նույնը վերաբերում է ռասիզմին, որը մի ժամանակ եղել է գաղութատիրության հիմքը: «Պրոլետարիատի բռնապետությունը» նույնպես ունի քիչ կողմնակիցներ այսօր՝ չնայած այն փաստին, որ «բուրժուազիայի բռնապետությունը» դեռ լայն տարածում ունի:

Բայց ամեն դեպքում կարելի է ներկայացնել «քաղաքականությունները» մեզ արդեն հայտնի գծապատկերով և տեսնել՝ արդյոք խաղաղության անկյունագիծը կարո՞ղ է ունենալ առաջարկելու ինչ-որ հետաքրքիր բան: Չէ՞ որ նույնիսկ «Ժողովրդավարության» ներսում կան տարբեր դիրքեր և խորը հակասություններ:

Ծայրահեղ դիրքերը պարզ են. ժողովրդավարությունը *ղեկավարումն է բոլորի կողմից*, իսկ բռնապետությունը *ղեկավարումն է ինչ-որ մեկի*, սովորաբար՝ տղամարդու կողմից: Այն, որ դրանք բացառում են միմյանց, կարծես ակնհայտ է: Բայց իրականում կա

պատմականորեն ապացուցված դրական գերազանցում՝ ղեկավարում մեկի կողմից, ով դիտարկվում է որպես *«la volonté générale»*¹ մի անձ, ում մարդիկ ցանկանում են տալ իրենց իշխանությունը և հետևել նրան կրակի ու ջրի միջով: Նման մարդիկ էին Նեխոն Մանդելան՝ ապարտեիդի ավարտին, Քվամե Նքրումահը՝ գաղութատիրության ավարտին, գուցե նաև Նապոլեոն Բոնապարտը՝ ահաբեկման ավարտին: Բայց ժողովրդի կողմից տրված մանդատը կարող է նաև ետ կանչվել: Վերոնշյալ երեքից միայն Մանդելան հասկացավ, որ ժամկետն անսահմանափակ չէ:

Այսօր ժողովրդավարության՝ որպես «յուրաքանչյուրի կողմից ղեկավարման» սկզբունքի լավագույն դրսևորումներից մեկը շվեյցարական *ուղղակի ժողովրդավարությունն* է: Այն ենթադրում է, որ յուրաքանչյուրը մասնակից է կառավարմանը ոչ միայն հանրաքվեների, այլ նաև մախաձեռնությունների միջոցով: Ստորագրելով հանրագիր՝ քաղաքացիները կարող են պահանջել հանրաքվե: Այլ ժողովրդավարություններում մենք գործ ունենք փոխգիշումների հետ: Տեղի է ունենում քվեարկություն կառավարման ձևի ընդհանուր ուղղության շուրջ՝ կուսակցության ծրագրային հայտարարություններ կոչվող փաթեթներում ներկայացված լուծումներով: Բայց այդ քվեարկությունը տեղի է ունենում միայն չորս տարին մեկ անգամ, իսկ պատուհանը բաց է լինում մեկ կամ երկու օր ու կոչվում է «ընտրություններ»: Մանրամասները մնում են օլիգարխիային՝ մի քանի ղեկավար մարմիններին, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, որոնց հաճախ անվանում են «քաղաքական դասակարգ» կամ «կաստա»:

Սա կարող ենք *անուղղակի ժողովրդավարություն* կոչել, բայց այն ունի նաև իր ուղղակի անվանումը, որը, գուցե, այնքան էլ գրավիչ չի հնչում՝ *պառլամենտակրատիա*:

Բռնապետությունը բացառվում է մեր քննարկումներում՝ լինելով անօրինական: Բայց բռնապետությունն ու ժողովրդավարությունը աղքատ, երկու ճաշատեսակներից բաղկացած ճա-

¹ «la volonté générale» (ֆրանս.) – *կոլեկտիվ կամքի մարմնավորում* (թարգ.)

շացանկի են մման: Հարցն այն է, թե ինչպիսի՞նն է ժողովրդավարությունը:

Ժողովրդավարությունը, մեկ անձին տրված ամբողջ իշխանությամբ, ով վայելում է բոլորի վստահությունը, ճգնաժամի պայմաններում կարող է չափազանց հետաքրքիր օրինակ լինել: Նացիստական Գերմանիայի կողմից զավթված Նորվեգիան չունեիր այնպիսի դեմք, ով օժտված կլինեիր թե՛ իշխանությամբ, թե՛ ժողովրդական քվեով: Թագավորն ամենամոտն էր այդ տեղին, բայց նա չունեիր մանդատ: Կար ընդդիմադիր քաղաքական գործիչ, ով ևս մոտ էր այդպիսինը լինելուն, բայց նա ևս մանդատ չունեիր: Վիդքուն Քիսլինգն՝ որպես ժողովրդավարությանը իշխանություն, բայց ոչ՝ մանդատ: Նա դիտարկում էր իր իշխանությունը՝ որպես ժողովրդավարության ավանդական նորմերից դուրս գալու միջոց, ստեղծում էր իր սեփական նորմերը՝ որպես օրինականացում, այլ կերպ ասած՝ Ֆյուրերի սկզբունքը Նիցշեի ստվերի տակ:

Վերջին հնարավորությունը՝ ո՛չ ժողովրդավարություն և ո՛չ էլ բռնապետություն, սովորաբար անվանում են *անարխիա*: Քաղաքական կառուցվածքը կասեցված է: Ցանցը դառնում է շատ բարակ, ընդհուպ մինչև՝ քայքայում, և մնում են միայն մշակութային նորմերն ու հիմնարար պահանջումները: Եթե նորմերը նույնպես կասեցվում են, մնում են հիմնարար պահանջումներն ու եսասիրական ծախս-շահույթ վերլուծությունը: Այս իրավիճակը կոչվում է *անոմիա*: Արդյոք սա չէ՞ հետմոդեռնիստական հասարակության ֆենոմենը:

Մենք ձգտում ենք, ինչպես «տնտեսական այլընտրանքների» դեպքում, ցույց տալ, թե ինչ կարող ենք վերցնել հիմնական գծապատկերից: Այնտեղ, որտեղ միմյանց դեմ են ուղղված երկու ուժեր՝ ժողովրդավարությունը և բռնապետությունը, միշտ կլինեն հինգ հնարավորություններ, ոչ թե երկու: Մենք ձեռք ենք բերում խղճուկ, նույնիսկ հիմար բանավեճ՝ իջեցնելով ամեն ինչ «ժողովրդավարությունն ընդդեմ բռնապետության» կամ «կապիտա-

լիզմն ընդդեմ սոցիալիզմի» մակարդակի: Իրականում, որպես ժողովրդավարության տարբերակներ, մի քանի անգամ ավելի շատ երևույթների մասին կարելի է խոսել՝ ուղղակի ժողովրդավարություն, անուղղակի ժողովրդավարություն, անարխիա: Դրանք կարող են միավորվել այնպես, որ ավելի լավ արտացոլեն այն, ինչ տեղի է ունեցել անցյալում կամ այն, ինչ կարող է ապագայում տեղի ունենալ:

Խնդիր կարող են լինել խորը մշակույթները, որոնք ատում են 5 թիվը և սիրում՝ 2-ը: Նման խորը մշակույթները կոչվում են դուալիստական: Դրանք թույլատրում են միայն երկու կատեգորիաներ՝ ճիշտ-սխալ, լավ-վատ: Սա մեծ մասամբ վերաբերում է ամերիկյան և ռուսական մշակույթներին:

Վերոգրյալի սահմանման ամերիկյան ձևը կլինեի հետևյալը: Մի ժամանակ կային երկու քաղաքական համակարգեր՝ բռնապետություն ու ժողովրդավարություն, և ժողովրդավարությունը հաղթեց, մի ժամանակ կային երկու տնտեսական համակարգեր՝ սոցիալիզմ ու կապիտալիզմ, և կապիտալիզմը հաղթեց: Առաջինը տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, վերջինը՝ Սառը պատերազմից հետո: Բայց այս սահմանումները չափազանց պարզեցված են:

Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի պլանավորման բաժնի պետի նախկին տեղակալ Ֆրենսիս Ֆուկույաման իր *«Պատմության ավարտը»* աշխատության մեջ Մարքսի և Էնգելսի նման եզրակացնում է, որ մարդկության նախապատմությունը կավարտվի, և որ իրական պատմությունը հիմնված կլինի ընտրական ժողովրդավարության ու շուկայական ազատականության վրա: Օգտագործելով դուալիզմն իբրև ուղեցույց՝ պատմությունն իրոք կարող է այսպիսի տեսք ունենալ: «5» թիվը, գուցե, շատ բարձր չէ, բայց այն զգալիորեն ավելի շատ հնարավորություններ է տալիս, քան մտածողական բանտը՝ «2» թիվը: Միխայիլ Գորբաչովի համար գրեթե անհնարին պետք է լինեի բացատրել ռուս ժողովրդին «սոցիալական ժողովրդավարության» իմաստը:

Նա ներկայացրեց դրա մեծ մասը մինչև պաշտոնից հեռացվելը, բայց ռուսները նույնպես, ինչպես ամերիկացիները, մտածում էին երկու կատեգորիաներով, ուստի և համգեցին նույն եզրակացությանը. եթե սոցիալիզմը սխալ էր, ապա կապիտալիզմը պետք է լինի ճիշտ, որովհետև գոյություն ունեն միայն երկու կատեգորիաներ:

Ինչո՞ւ է ժողովրդավարությունն այդքան խնդրահարույց երրորդ աշխարհում: Ինչո՞ւ են տեղի ունենում այդքան շատ հեղաշրջումներ և հակահեղաշրջումներ: Կան բազմաթիվ բացատրություններ, բայց դրանցից մեկն առավել համոզիչ է: Ժողովրդավարությունն՝ ընդհանրապես, և ընտրությունները՝ մասնավորապես, պետության տեսության մասն են: Հարց է, թե ով է, սահմանափակ ժամկետով՝ չորս, ութ տարի, կառավարելու պետության պարզևները, ունենալու մուտք դեպի նախարարների համար նախատեսված կացարաններ, մեքենաներ, սահմանելու հարկային դրույքաչափեր և մաքսային ու ակցիզային տուրքեր, վերահսկելու բնական ռեսուրսները և պարտքերի դիմաց դրանց նկատմամբ մուտքն արտասահմանյան ընկերություններին վաճառելու հնարավորությունը: Սրան գումարեք զինվորականների և ոստիկանության նկատմամբ վերահսկողությունը: Ինչքան աղքատ է ժողովուրդն, այնքան ավելի շատ այս անսպառ ռեսուրսը կգալթակղի քաղաքական գործիչներին:

Գործող կառավարությունը կարող է օգտագործել պետության ռեսուրսները ծայներ գնելու համար: Ընդդիմությունը գիտի այս մասին և կազմակերպում է հեղաշրջում «երկիրը կոռուպցիայից մաքրելու» անվան տակ: Հեղաշրջումից հետո նրանց առջև կանգնում է նույն խնդիրը, նրանք նույնպես ուզում են ավելի շատ օգտվել երկրի կերակրատաշտից: Դեպի առաջ տանող ճանապարհը բռնելու համար նրանք իրենց երկրի փրկիչներ են ներկայացնում. նրանք այն մարդիկ են, ովքեր իսկապես ցանկացել են մաքրել ամեն ինչ անարդարությունից, իսկ այնուհետև կատարել են նույն հանցագործությունները, ինչ նախորդ իշխող համակար-

գը, մինչև առաջ կգա փրկիչների նոր սերունդ՝ նույն օրինակա-
նությամբ:

Ինչպե՞ս խուսափել հեղաշրջումներից: Հարուստ երկրներն ունեն իրենց մեթոդները: Նրանք, ովքեր ընտրվում են, ստանում են բավարար վարձատրություն՝ կատարելու իրենց օրենսդիր, գործադիր կամ դատական պարտականությունները, բայց ոչ այնքան, որ այս պարգևները դառնան սեփական իրավունքներն անսահմանափակ դարձնելու միջոց: Աղքատ երկրներում միջին աշխատավարձը բավարար չի լինի նման պարտականություններ իրականացնելու համար: Պատասխանն այն չէ, որ շատ ավելի քիչ արժե մի բռնապետի վճարելը, քան ժողովրդավարական ընտրված մի ողջ քաղաքական դասի: Պատասխանը ժողովրդավարությունն է՝ առանց վերևում չափազանց շատ պարգևների: Ինչպե՞ս, դարձնելով բուրգն ավելի հարթ, ապակենտրոնացնելով պետությունը, առաջարկելով ավելի շատ իշխանություն տեղական մակարդակներում, ավելի քիչ պարգևներ՝ ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչներին և, միևնույն ժամանակ, թույլ տալով, որ ավելի շատ որոշումներ կայացվեն հենց ժողովրդի կողմից՝ տեղական և ազգային հանրաքվեներում:

Մի քանի տարի առաջ ես կանգնած էի Լիլլեհամմերի քաղաքային հրապարակում՝ Նորվեգիայում, ունկնդրում էի առաջիկա ընտրություններում վարչապետի երկու թեկնածուների՝ երկու հնուտ, փորձառու քաղաքական գործիչների, ովքեր շարադրում էին իրենց դիրքերն ու շեշտում իրենց տարածայնությունները: Ես գլխավորապես մտածում էի այն կետերի շուրջ, որոնց հետ համաձայն չէի: Քանի որ երկու քաղաքական գործիչներն էլ հիմնականում համաձայն էին արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերում, քաղաքականության այդ ասպեկտը չհիշատակվեց: Եվ քանի որ ընտրողները հակված են ձևավորել իրենց կարծիքները տարածայնությունների հիման վրա, նրանք բանավիճելու փոխարեն սկսեցին փորձել պարտության մատնել միմյանց բառերով, ներդնել իրենց պերճախոսությունը երկխոսության մեջ՝

նպատակ ունենալով գտնելու, թե ինչպես իրենց հակասությունները կարող են գերազանցվել, իսկ հեռանկարները՝ միավորվել ավելի բարձր միասնության մեջ: Այն, ինչի մասին նրանք խոսում էին, այնքան սխալ չէր, որ դրա մեջ ոչ մի լավ բան չլիներ, բայց, գուցե, ոչ էլ այնքան լավն էր, որ դրա մեջ սխալ բան չլիներ: Այլ կերպ ասած, եթե նրանք լրացնեին, այլ ոչ թե հակասեին միմյանց, կարող էին ավելի բարձրացնել Նորվեգիան՝ երկու հայտնի դիրքերի միջև ճոճամակի մման տատանվել թույլ տալու փոխարեն: Բայց դրա համար հակառակորդի ուժեղ կողմերը պետք է դիտարկվեին որպես հնարավոր դարման սեփական թերությունների համար: Խնդրահարո՞ւյց է:

Ընտրողները կարող են պահանջել որոնող, գերազանցող երկխոսություններ, այլ ոչ թե շների մարտեր, իսկ այնուհետև քվեարկել այն թեկնածուի օգտին, ով ավելի շատ է ի վիճակի սովորել իր հակառակորդից՝ համարելով նրան գործընկեր: Ավստրալիայում կան շարժումներ, որոնք ավստրալացի ընտրողներին հենց սա են խրախուսում անել:

Երկխոսության ժողովրդավարություն, այլ ոչ թե բանավեճի ժողովրդավարություն: Իմ մտքերը գնացին դեպի խոշոր մաթեմատիկոս Դեյվիդ Հիլբերտը, ով ասել է, որ մարդիկ ունեն շատ թե քիչ լայն մտափորձոն, բայց որոշ մարդկանց դեպքում այդ մտափորձոնը նեղանում է այնքան, մինչև հասնում է մեկ կետի մակարդակի, որը շատերն անվանում են իրենց տեսակետ: Գուցե մի քիչ համատեղ աշխատանքն այդ մտափորձոնը լայնացնելու համար ավելի շատ օգուտ կտար ժողովրդավարությանը, քան դիրքերի, տեսակետների շքերթը: Այդ դեպքում կառավարությունը կլիներ երկխոսության վրա կենտրոնացած կոալիցիա: Ինչո՞ւ ոչ:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Այժմ ժամանակն է խոսելու անվտանգության քաղաքականության մասին: Պետություններ, ազգեր և այլ խմբեր հարձակվում են միմյանց վրա, բռնի միջոցներով՝ բռնցքներից մինչև միջուկային ռումբերի սպառնալիքով, վնասում են հակառակորդ կողմին թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես: Այս ամենի կանխման միջոցների համակարգն է, որ կոչվում է *պաշտպանություն*: Հարցն այն է, թե ինչպես է դա հանգեցնում անվտանգության շուրջ քաջ հայտնի կոնֆլիկտի: Փորձենք այդ կոնֆլիկտի ինչ-որ փոխակերպում, քանի որ այն արտահայտվում է պաշտպանության մասին բանավեճերում և տեսենք, թե ինչքան հեռու կարող ենք գնալ:

Ավանդական պաշտպանության բանավեճում ծայրահեղ դիրքերը հետևյալներն են.

Ճուտ ռազմական պաշտպանություն և զուտ ոչ բռնի պաշտպանություն:

Ճուտ ռազմական պաշտպանությունը ենթադրում է բռնի միջոցներով մյուս կողմի ստեղծած ռազմական համակարգը ոչնչացնելը: Այս դիրքի համար կան չորս մոտեցումներ՝ ռազմական ուսմունքներ.

1. Հարձակվողական հարձակում, որ կազմակերպվում է առանց որևէ ծանրակշիռ կասկածի, պարզապես այն պատճառով, որ «հակառակ կողմը չարիք է»:

2. Պաշտպանական հարձակում՝ կանխարգելիչ պատերազմ, որ կջարդի հակառակ կողմին:

3. Հարձակվողական պաշտպանություն, որ ենթադրում է պատասխան հակառակ կողմի հարձակմանը նրա տարածքում:

4. Պաշտպանական պաշտպանություն, որ ենթադրում է պատասխան հակառակ կողմի հարձակմանը, բայց արդեն սեփական տարածքում:

Խնդիր. հարձակվողական հարձակումը, պաշտպանական հարձակումը և հարձակվողական պաշտպանությունը ենթադրում

են հեռահար զենքերի գոյություն, որոնք ընդունակ են գործել թշնամու տարածքում, սակայն դրանց գոյությունն իսկ կարող է դիտարկվել որպես սադրանք՝ անկախ մտադրությունից:

Ձուտ ոչ բռնի պաշտպանությունը ենթադրում է զրկել մյուս կողմին հարձակման պտուղներից ոչ բռնի միջոցներով: Այս դիրքի համար կան երեք հիմնական մոտեցումներ.

1. Հիմնագործակցություն և քաղաքացիական անհնազանդություն, որ կզրկի հակառակ կողմին սոցիալական, տնտեսական և քաղաքական նպատակներից:

2. Ինչքան հնարավոր է, դառնալ անխոցելի՝ կառուցելով հորիզոնական ցանցեր, պահեստավորելով սննդամթերք, դեղորայք և այլն, կարճ ասած, լինելով լավ մախապատրաստված հնարավոր հարձակմանը:

3. Երբեք չվիրավորել ու չվնասել հակառակ կողմին, բայց հանդիպել նրան, ինչպես մի մարդը հանդիպում է մյուսին, երկխոսության մեջ լինել ընկերական, բայց և վճռական այն հարցերում, որոնք վերաբերում են չհամագործակցությանը:

Ծայրահեղ դիրքերը կապաշտպանեին և կկիրառեին այս երկու այլընտրանքներից մեկը և միայն մեկը: Առաջինը՝ զուտ ռազմական պաշտպանությունը այսօր գերակշռում է աշխարհի մոտ 170 երկրներում: Երեսուն երկրներ չունեն բանակ, այլ կերպ ասած, նրանք «հեռացել են» խնդրից: Վերջինների մոտ կեսն ունի պաշտպանական համաձայնագիր մեկ այլ երկրի հետ: Ինչ վերաբերում է զուտ ոչ բռնի պաշտպանությանը, այն չի հայտնաբերվել որևէ երկրի պաշտպանական համակարգում: Այլ կերպ ասած, ելքի հինգ հնարավորություններից միայն երկուսն են փորձարկվել:

Այստեղ մենք կկենտրոնանանք փոխզիջման և գերազանցման վրա: Փոխզիջումը հայտնի է մաս որպես «պաշտպանության համակցություն»։ զինվորականներ սահմանի վրա, և եթե դա բավարար չէ հարձակումը դադարեցնելու համար, ապա ոչ բռնի պաշտպանությունը կգրավի իշխանությունը երկրի ներսում:

Այս երկընտրանքում շրջադարձ ստանալու համար պետք է դիտարկենք ավելի խորքում գտնվող դիրքերը: Շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեն տարբերություն է դնում բացարձակության և փոխադարձության միջև. Բացարձակը և Փոխադարձությունը՝ որպես Մյուսին տեսնելու երկու ճանապարհներ:

Բացարձակը հակառակորդին անվերապահորեն վերաբերում է որպես չարիքի: Այս մոտեցման հետևորդներն առհասարակ չեն փորձում վերլուծել սեփական արարքները, քանի որ գտնում են, թե իրենց վարքը կապ չունի դիմացինի բռնության հետ: Ուստի նրանք համարում են, որ միակ ելքը հակառակորդին շարքից հանելն է՝ օգտագործելով մասնավորապես (1)-(2) ուսմունքները:

Փոխադարձությունը, որն ավելի հասուն մոտեցում է հարցին, հակված է նախ պարզելու՝ գուցե ինքն արել է ինչ-որ բան, որը կարող էր դարձնել Մյուսին այդքան բռնի, և գուցե կարելի է դեռևս անել որևէ այլ բան նրա բռնությունը մեղմացնելու համար: Ընկերական դիրքորոշումը, նրան խոսելու հնարավորություն ընձեռելը, պատմությունը նրա տեսանկյունից լսելը, կարճ ասած, երկխոսությունը բանավեճի փոխարեն հեշտությամբ դառնում է պատերազմի շարունակություն վերբալ միջոցներով: Նման տեսակի երկխոսությունը, որտեղ բոլոր կողմերը կարող են արտահայտել իրենց մտքերը և ձևակերպել իրենց նպատակները, կարող էր, թերևս, հանգեցնել կոնֆլիկտի փոխակերպման, եթե հակասությունները հնարավոր լինեին գերազանցել: Եթե բռնություն է տեղի ունեցել, ապա անհրաժեշտ է նաև հաշտություն՝ մի գործընթաց, որը մույնիսկ ավելի բարդ է, քան կոնֆլիկտի փոխակերպումը:

Բայց մի քիչ պաշտպանություն մույնպես անհրաժեշտ է: Այլ կերպ ասած անհրաժեշտ է ունենալ կարճ հեռավորության պաշտպանության զենքեր և/կամ ոստիկանական/պարտիզանական պատերազմի նախապատրաստություն, դրան ավելացրած ոչ բռնի պաշտպանության բոլոր երեք ձևերը՝ 1, 2 և 3:

Նման երկիրը երեք ուժեր կունենար, որոնց կարելի է ապավինել: Եթե երեքից մեկը ծախողվեր, ապա դեռ կլինեին երկու հուսալի ուտքեր որոշ ժամանակ առաջ քայլելու համար: Հիմնական խնդիրը պաշտպանական քաղաքականությունը չէ, այլ ավելի շուտ խորը մշակույթը, որը ձգտում է բացարձակության և հեռու է փոխադարձությունից. միլիտարիզմ *կամ* պացիֆիզմ, ոչ թե և՛ մեկը, և մյուսը: Սա կլինի Ուրբաթի թեման:

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

*Աշակերտ Ա՝
կռվարար –*

Ես ատում եմ դպրոցը, ուսումը, կարգապահությունը, հարկադրված լինելը: Ես տառապում եմ դպրոցում, մահու չափ ծանծրանում: Կուզենայի ամբողջն այրել՝ որոշ վատագույն ուսուցիչներով հանդերձ:

Աշակերտ Բ՝ զոհ –

Ես սիրում եմ դպրոցը: Ես այնքան շատ բան եմ սովորում ամեն օր՝ լեզուներ, պատմություն, մաթեմատիկա: Ամեն ինչ հրաշալի կլիներ, եթե չլիներ Ա-ն, ով տանջում է ինձ: Նա չի հանդուրժում որևէ մեկին, ով սիրում է դպրոցը:

Կոնֆլիկտաբան –

Դա ճիշտ է Ա, դուք հարձակվում եք Բ-ի վրա, որովհետև նրան դո՞ւր է գալիս այն, ինչ դուք ատում եք: Դպրոցին հարվածել չեք կարող, փոխարենը դուք հարվածում եք Բ-ի՞ն՝ իմանալով, որ նա չի կարող պատասխան հարված հասցնել ձեզ:

Աշակերտ Ա՝ կռվարար –

Ասեք, ինչ ուզում եք: Ես չեմ պատրաստվում այդ պատճառով ատել այս դպրոցն ավելի քիչ: Շարունակե՛ք ձեր վերլու-

Կոնֆլիկտաբան –

ծությունը, պարզապես շարունակե՛ք: Այսպիսով, ի՞նչ ենք մենք անում այստեղ: Օրինակը ճապոնիայից է, բայց երևույթը կրում է գլոբալ բնույթ: Մենք ուսումնասիրում և պատժում ենք կռվարարներին, ուսումնասիրում և աջակցություն ենք տալիս նրանց զոհերին, ուսումնասիրում և բարելավում ենք երկուսի միջև հարաբերությունները:

Աշակերտների հայտարարությունները մատնանշում են հենց դպրոցի ներսի խնդիրը: Ավանդական դպրոցը շատ լավ համապատասխանում է Բ-ին, իսկ Ա-ն պետք է գտնի իր համար որակավորում չպահանջող աշխատանք, օրինակ՝ միանա մոտոցիկլետային մի խմբի ու հեռացվի դպրոցից: Կոշտ ուսուցիչը Ա-ին կպատժի, մեղմ ուսուցիչը կիրավորի դասարանային հանդիպում և կսկսի միջնորդել Ա-ի ու Բ-ի միջև: Բայց այս ամենն ունի մի ընդհանրություն. ուշադրությունը դպրոցի վրա չէ, այլ Ա-ի և Բ-ի:

Այդ պատճառով սկսենք առաջին ցատկից. Ա-ին և Բ-ին հանցագործ և զոհ դիտարկելու փոխարեն դիտարկենք նրանց որպես երկու դպրոցական քաղաքական գործիչների:

Ա-ն իրավացի է – դպրոցը կարգապահ դարձնող է, *տարածքի* (շինություններ, դասարան, գրատախտակ), *ժամանակի* (ժամը, դրանց միջև թույլները) և *հեղինակության* (ուսուցիչ, լիազորություններ, դպրոցական ծրագիր) նկատմամբ հարգանք ներշնչող: Այն, ինչ դասավանդվում է, սովորաբար համընկնում է տղամարդկանց գաղափարախոսության հետ, մասնավորապես՝ սպիտակամորթ տղամարդկանց՝ բարձր ու միջին խավի: Ընտրության բացակայությունից ավտորիտարիզմի հոտ է գալիս: Արդյունքը այլընտրանքային դպրոցների բազմազանությունն է:

Բայց Բ-ն նույնպես իրավացի է – շատերը կրթական առաջընթաց են արձանագրում հենց սովորական դպրոցներում, որտեղ կրթական բազմազանությունը, գուցե, այնքան էլ մեծ չէ:

Ա-ն կարծես ցանկանում է դպրոց՝ ավելի մեծ ընտրության ազատությամբ, որտեղ միայն գիտելիքը և հմտությունները չէ, որ կարևորվում են: Բ-ն կարծես թե ցանկանում է կրթական հստակ բովանդակությամբ ուղեցույցներ: Կոնֆլիկտի լուծման առաջարկը, թվում է, պարզ է: Պետք է առաջարկել այլընտրանքային դպրոց Ա-ին և ավանդական՝ Բ-ի համար: Բայց կոնֆլիկտն իսկապես կլուծվի՞, եթե երկու կողմերն էլ հասնեն իրենց նպատակներին:

Դա նման չէ՞ օդանավով առանձին ճամփորդող զույգին կամ ննջարանում ամուսնու *սիեստային* և հյուրասենյակում կնոջ ֆիեստային: Մենք դարձնում ենք կոնֆլիկտը չափազանց դյուրին, եթե արհամարհում ենք կողմերի միջև *կապը*՝ միասին լինելու գաղափարը:

Մենք փնտրում ենք մի դպրոց, որտեղ երկուսն էլ կզգան իրենց, ինչպես տանը: Մեր նպատակը փոխզիջումը կամ բացասական գերազանցումը չեն: Վերջինը կլինեն առհասարակ բոլոր դպրոցները վերացնելը: Մեր նպատակը դրական գերազանցումն է: *Թույլ դրական գերազանցումը* կտար աշակերտներին վաուչեր, որով նրանք կարող էին վճարել տարբեր դպրոցներում՝ ըստ իրենց ընտրության: Օրինակ՝ մեկ տարի արտերկրի այլ դպրոցում ուսանելը, ընդհանուր առմամբ, ընդունված է: Ինչո՞ւ չուսանել մեկ տարի իր իսկ քաղաքի մեկ այլ դպրոցում:

Ուժեղ դրական գերազանցումը կկառուցեր դպրոցների ավելի շատ տեսակներ (ավանդական, Շթայներ/Վալդորֆ, փորձարարական) միևնույն դպրոցի շենքում, իսկ այնուհետև թույլ կտար աշակերտներին ընտրել դասընթացները և ինքնուրույն որոշել, թե արդյոք նրանք ցանկանում են մնալ, թե շարունակել որոնումը: Իհարկե, կարող է թվալ, թե սա անվերջ պրոցես է, և աշակերտները ոչ մի դասընթացի վրա կանգ չեն առնի, բայց մեղր

պատրաստող մեղուն, որը թռչում է մի ժաղկից դեպի մյուսը, կլանում է նեկտար մի շարք տեղերից, կարող է նույնիսկ կատարել ավելի շատ փոշոտում, քան այն մեղուն, որի համար «Մեղր պատրաստողների նախարարությունը» հաստատել է միայն մեկ տիպային երթուղի:

Խնդիրը բանավիճող մշակույթի կա՛մ, կա՛մ-ն է: Ավելի բազմակարծիք հասարակությունը կօգտագործեր երկխոսության մշակույթի և՛ մեկը, և՛ մյուսը՝ թույլ տալով, որ մարդկային բազմազանությունն արտացոլվի սոցիալական բազմազանության մեջ: Հենց այս կերպ են առաջ եկել համալսարանները՝ տալով ուսանողներին ուսումնական ծրագրերի պլանավորման ավելի մեծ ազատություն: Ժամանակն է, որ դպրոցները հետևեն դրանց օրինակին:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության բանավեճը դպրոցի բանավեճն է հիշեցնում: Համընդհանուր ճանաչում ունեցող կրթական հաստատությունը հայտնի է *բարձրագույն ուսումնական հաստատություն* անվանմամբ, առողջության նկատմամբ համընդհանուր ճանաչում ունեցող մոտեցումը հայտնի է *գիտական բժշկություն* անվանմամբ: Վերջինը դասավանդվում է բժշկական ֆակուլտետներում և շնորհիվ արտոնագիր՝ բժշկական գործունեությամբ զբաղվելու համար: Այլընտրանքը, որպես կանոն, *այլընտրանքային բժշկությունն է:*

Կոնֆլիկտաբան – Կրկին խնդիրը գիտական և այլընտրանքային բժշկությունների միջև հակասությունը հասկանալն է: Երկուսի նպատակն էլ առողջությունն է, նույնիսկ եթե սահմանումները մի քիչ տարբեր են: Երկուսն էլ օգտագործում են ախտորոշումը-կամխատեսումը-բուժումը՝ որպես սխեմա: Երկուսն էլ այն

կարծիքին են, որ հիվանդի նպատակը պետք է առողջանալը լինի, ինչի համար նա պետք է համագործակցի բժշկի հետ: Գիտական բժշկությունը կապված է դեպքերի վրա հիմնված մտածողության վրա և դիտարկում է հիվանդին ավելի շատ՝ որպես ախտանիշների հստակ փաթեթ կրող մեկը: Այլընտրանքային բժիշկներն ավելի շատ կենտրոնացնում են մեկ անձի և կոնկրետ համատեքստի վրա:

Գիտական բժշկություն.

Մասերը – Օրգանիզմը օրգանների և գործառույթների համակարգ է, իսկ բուժումը պետք է հստակ լինի՝ ուղղված կոնկրետ օրգաններին ու գործառույթներին:

Անդառնալիություն – Այնտեղ, որտեղ բնությունն ի գործ է, բուժումը բաղկացած է լինի հստակ վիրաբուժական միջամտությունից՝ քիմիոթերապիա և այլն: Ժամանակակից գիտությունը, ընդհանրապես, բնությանն օգնելու համար է: Մենք չենք վախենում անել անդառնալի որևէ բան:

Գնահատում – X բուժումը կենտրոնացնում է Y ախտանիշների փաթեթի վրա և կգնահատվի Y-ի վրա X-ի ունեցած ազդեցության ստուգման միջոցով:

Այլընտրանքային բժշկություն.

Ամբողջությունը – Մարմինը, միտքը, ոգին և համատեքստը միասնություն են, նրանք սերտորեն կապված են: Ախտորոշումը, կանխատեսումը և բուժումը պետք է ընդգրկեն այդ բոլորը՝ հիվանդի հայտնած գանգատների համատեքստում: Ամբողջությունն ամենակարևորն է:

Դառնալիություն – Միջամտությունը պետք է լինի բազմաչափ, մեղմ և չենթարկի հիվանդին որևէ անդառնալի բանի: Երբեմն մենք կարող ենք սխալներ գործել:

Գնահատում – Բուժումը պետք է աշխատի ամբողջականորեն, այդ պատճառով գնահատումը պետք է շատ ոլորտներ ընդգրկի:

Գիտական բժշկություն – Որոշակին, կոնկրետն այն է, ինչը դարձնում է միտքը գիտական, իսկ դուք խոսում և գործում եք ընդհանուր առմամբ, առանց որևէ հստակության:

Այլընտրանքային բժշկություն – Բազմաչափ մոտեցումը խիստ անհրաժեշտ է կայուն առողջության համար, մինչդեռ դուք միայն շտկում եք մեկ կամ երկու փոքր կետ:

Այլ կերպ ասած, մենք գործ ունենք հիմնական տարբերությունների հետ, որոնք ոչ միայն վարքային են, այլև մտածողական: Գնահատումը պետք է հարմարեցվի այս տարբերություններին: Եզրակացությունները կարող են լինել տարբեր, որովհետև մեկնակետերն ինքնին տարբեր են:

Գիտական բժշկությունը դիտարկում է այլընտրանքային բժիշկներին որպես «խաբեբաներ»: Այլընտրանքայինն էլ իր հերթին դիտարկում է գիտական բժշկությունը՝ որպես իշխանությանը և շահույթով պայմանավորված մասնագիտություն: Գիտական բժշկությունը վաճառում է թանկարժեք ծառայություններ՝ աշխատելով բնության ինքնավերականգնման ուժերի դեմ: Այն ունի պետության և դեղագործական արդյունաբերության աջակցությունը եռակողմ համագործակցության մեջ, և հեշտությամբ մոռանում է, որ մի ժամանակ եղել է այլընտրանքային:

Հաղթանակը կարող է հանգեցնել մենաշնորհի: Գիտական բժշկությունը մոտ է այդ մենաշնորհին, բացառված չէ, որ դա են ցանկանում նաև շատ այլընտրանքային բժիշկներ: Սա պայքար է այնպիսի սուղ միջոցների շուրջ, ինչպիսիք են հիվանդներն ու հոմոարները, արտոնագրված լինելը, սոցիալական պաշտպանության ֆոնդերին հասանելիությունը: Փոխզիջումը կլինի գիտական բժշկության կողմից իր մենաշնորհի ինչ-որ մասի զիջումը այլընտրանքային բժիշկներին:

Բայց սա գերազանցում չէ: Նոր սոցիալական իրականություն չի ստեղծվել, պարզապես կան երկու զուգահեռ, գոյակցող իրականություններ: Գերազանցում կլինե՞ր հետևյալը: Ինչպես դպրոցների դեպքում, հիվանդներին ամբողջապես ազատ ընտրության հնարավորություն տալ, այնուհետև միևնույն հիվանդանոցում ու հոսպիտալում կառուցել երկու ձևերին ու մոտեցումներին համապատասխան ենթակառուցվածքներ՝ միշտ պահպանելով հիվանդի ազատ ընտրության հնարավորությունը: Ինչո՞ւ ոչ: Աշխարհը շարժվում է այդ ուղղությամբ, բայց կամ, կամ-ը դեռ ավելի ուժեղ է, քան և՛ մեկը, և՛ մյուսը:

ԿԱՆԱՅՔ, ՏՂԱՍԱՐԴԻԿ ԵՎ ԼԱՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այժմ անդրադառնանք գենդերային կոնֆլիկտին: Խնդիրն այն է, թե հնարավոր է արդյոք վերաձևակերպել կանանց և տղամարդկանց միջև հակասությունը, եթե այն արտահայտված է միկրո մակարդակի անթիվ կոնֆլիկտներում: Սերը և հակասությունը տղամարդու ու կնոջ միջև հավանաբար ամենահաճախ հանդիպող թեմաներն են համաշխարհային գրականության մեջ, իսկ կին-տղամարդ հակասությունն ընդհանրապես մի շարք երկրներում դարձել է ավելի լայն սոցիալական վերլուծության առանցք, քան նույնիսկ դասակարգային հակասությունը: Հայրիշխանությունն այժմ նկատելի է ամենուր, բայց դրանից չի հետևում, որ դյուրին է բառերով արտահայտել կնոջ և տղամարդու միջև հակասությունը:

Որպես մեկնակետ նշենք կոպիտ թվային հարաբերակցությունը՝ 50/50 և, միևնույն ժամանակ, սեռերի միջև ուժերի անհավասարակշռությունը: Գոյություն ունի հակասություն թվային հավասարակշռության և ուժային անհավասարակշռության միջև: Բայց ինչպիսի՞ ուժի մասին ենք մենք խոսում:

Ուժի վերաբերյալ առաջին մոտեցումը պարզ է, բայց և չափազանց կարևոր. սոցիալական իշխանության իրականացում, ղեկավար պաշտոններ, իշխանություն և ղեկավարում:

Երկրորդ մեկնաբանությունն ավելի խորն է, բայց ավելի խնդրահարույց: Եթե մենք վերագրում ենք «կամանց» «իգականություն», իսկ «տղամարդկանց»՝ «արականություն», հարց է առաջանում՝ կարո՞ղ է կոնֆլիկտը երկու սոցիալական մշակույթների միջև հակասության ձև ստանալ:

Առաջին մեկնաբանությունը թույլ է տալիս հեշտությամբ ներկայացնել կին-տղամարդ հակասությունը թվերով՝ տոկոսային հարաբերություններով: Երկրորդ մեկնաբանությունը հեշտությամբ չի ենթարկվում քանակական չափման: Շատերը նույնիսկ կարող են առարկել ու ասել, որ «արականի» և «իգականի» մասին խոսելը «էութենաբանություն» է՝ չի ենթարկվում քանակական չափման և, բացի այդ, քաղաքականորեն կասկածելի է, որովհետև այն ընդհանրացում է անում մարդկանց հսկայական կատեգորիաների մասին՝ վերագրելով նրանց մշտական հատկություններ՝ առանց ժամանակի և տարածության մեջ տարափոխման:

Այս պնդմանը կարելի է, իհարկե, մաս առարկել՝ ասելով, որ այստեղ խոսքը մաս հիմնարար պահանջմունքների մասին է, իսկ դրանք այս գրքում դիտարկվում են որպես մարդկանց հատուկ հատկանիշներ:

Իրականում, հետաքրքիր կլիներ իմանալ, թե ինչպես են մարդիկ ընդհանրապես դիտարկում կին-տղամարդ տարբերությունները և ինչ չափով են տեսնում հակասություններ:

Սկսենք առաջին մեկնաբանությունից՝ մակրո հասարակության համար: Երկու ծայրահեղ դիրքերը քաջ հայտնի են՝ հայրիշխանություն և մայրիշխանություն: Առաջինն այսօր շատ տարածված է, սակայն երկրորդը ևս հանդիպում է առավել փոքր հասարակություններում, օրինակ՝ Հիմալայների հարավային լանջերում:

Կոնֆլիկտաբան – Ինչպես միշտ, հիմնական աշխատանքը մյուս երեք դիրքերի պարզաբանման մեջ է: Դրանք ավելի հետաքրքիր են: Պետք է պատկերացնենք մյուս հնարավոր դիրքերը և վերլուծենք դրանք՝ ըստ գծապատկերի:

Հարցի առավել ընդունելի լուծումն այն է, ինչի մասին խոսում են բոլորը՝ հավասարություն՝ 50/50: Բայց բացասական գերազնացման տարբերակը՝ 0/0-ն, նույնպես կլինեք հավասարություն՝ պարզապես ավելի յուրօրինակ: Ո՛չ տղամարդկանց և ո՛չ էլ կանանց կողմից գերիշխումը կարող էր նշանակել երեխաների և/կամ տարեցների կողմից գերիշխում: Սոցիալական իշխանությունը կարող էր հանձնվել սեռական առումով ավելի քիչ ակտիվ մարդկանց, այնպես, որ ակտիվ մարդիկ կարողանային ամբողջովին կենտրոնանալ իրենց խաղերի վրա:

Բայց ի՞նչ կասեք դրական գերազանցման մասին: Տրամաբանորեն անհնարին է, մենք թերևս չենք կարող տալ 100% իշխանություն կանանց և, միևնույն ժամանակ, 100% իշխանություն՝ տղամարդկանց:

Պատասխանը կգտնվի «իշխանությունը» բաղադրիչների բաժանելու արդյունքում: Այսպես, կարելի է պնդել, որ ճապոնիայում և Հնդկաստանում տղամարդիկ տիրապետում են (գրեթե) ամբողջ իշխանությանը սոցիալական միջավայրում, իսկ կանայք՝ (գրեթե) ամբողջ իշխանությանը տանը՝ ընտանեկան բյուջեի, ընտանիքի պլանավորման, ընտանիքի արտաքին քաղաքականության ոլորտներում. մայրիշխան ընտանիքներ հայրիշխան հասարակության ներսում: Իսկ այդքան ակնհայտ է, թե որն է ավելի կարևոր՝ մակրո՞ հասարակությունը, թե՞ կենցաղային հասարակությունը՝ «*oikos*»-ը: Ակնհայտ է, որ իշխանությունը բազմաչափ է, որ շատ հասարակություններ հայրիշխանական են և՛ մեզո, և՛ միկրո մակարդակներում, ու շատ քիչ հասարակություններ են երկու մակարդակներում էլ մայրիշխանական:

Կարելի է պատկերացնել նաև մակրո հասարակության իշխանությունը՝ տարանջատված նախարարությունների: Սա հայ-

րիշխանության վերջի՞ն արգելքն է: Կանանց հնարավոր չէ կանգնեցնել, այդ պատճառով տվեք նրանց նվազագույն կարևորություն ունեցող նախարարությունները, անշուշտ ոչ արտաքին գործերը, ոչ էլ պաշտպանությունը: Ի վերջո, կա նաև գաղափար, որ հասարակության որոշակի հատվածներ կարող են ավելի լավ կառավարվել կանանց կողմից:

Այն, որ վերոնշյալի մեծ մասը ռազմավարություն է հայրիշխանությունը պահպանելու համար՝ «ստորակարգություն, որտեղ վերևում գտնվող տղամարդիկ կիրառում են կառուցվածքային և հաճախ նաև ուղղակի բռնություն ներքևում գտնվող կանանց նկատմամբ՝ օրինականացված «մշակութային բռնության կողմից», հազիվ թե կասկած առաջացնի: Բայց գուցե մենք կարող ենք խոսել նաև իգականի ու արականի տարբերությունների մասին:

	Իգական	Արական
Արժեքային մշակույթ	Հիմնարար պահանջ- մունքներ	Վերացական արժեք- ներ
Շարժառիթային մշա- կույթ	Ամբողջական, ապրու- մակցող	Առանձնահատուկ, դե- դուկտիվ
Վերահսկողության ձև	Մոտիկության միջոցով, հորիզոնական, ոչ բռնի	Հեռավորության միջո- ցով, ուղղահայաց, հա- ճախ բռնի
Հաստատման ձև	Սեր և դրա բացակա- յություն	Կարգապահություն և դրա բացակայություն

Ինչ-որ բան խանգարում է մեր մտածողությանը դերերի բա-
ժանման աշխատանքում և ուղղորդում է մեզ ավելի շատ սեռերի
միջև հարաբերություններին, քան «էութաբանական» տարբերու-
թյուններին: Մեզո մակարդակում աշխատանքի բաժանման մեջ
փոփոխությունները, որտեղ կա դերերի բաժանում, դանդաղըն-
թաց են: Միկրո մակարդակում տղամարդու և կնոջ համար ավելի
հեշտ է կիսել տնային գործերը՝ սննդի պատրաստումը, երեխա-
ների խնամքն ու ընտանեկան բյուջեն:

Բայց, այնուհետև, մեծ հարց է առաջ գալիս. ի՞նչ տեղի կունենա, եթե մենք հանգենք եզրակացության, որ «իզականը» օրինական է՝ այնքան հիմնավորված, որ մենք ուզում ենք պահպանել այն ճիշտ այնպես, ինչպես կա, ավելին՝ ցանկանում ենք փոխել «արականը» այդ ուղղությամբ: Ի՞նչ տեղի կունենա, եթե հանգենք եզրակացության, թե «իզականը» ավելի շատ, իսկ «արականը» ավելի քիչ օրինական է: Նայենք դրան այս գրքի՝ *«Կոնֆլիկտաբանական աշխատանքի մերածության»* տեսանկյունից: Մեծ շեշտ է դրվել *ապրումակցման*՝ ոչ թե որպես խորը ըմբռնման, այլ որպես խորը զգացումի վրա, որպես բոլոր կողմերի զգացմունքները զգալու ունակության վրա, որ թույլ է տալիս զգալ կողմերի ֆրոնտալ ցանցի անհասանելի նպատակների առնչությամբ, նրանց ագրեսիան այն մարդկանց նկատմամբ, ովքեր կանգնած են իրենց ճանապարհին, հուսահատության, անտարբերության, անգործության զգացումները, նրանց երջանկությունը, երբ կա լույսի շող: Ուշադրությունն այստեղ բռնությանը ոչ ասելու վրա է, որ կնշանակի ոչ միայն բռնության վերացական ժխտում, այլ նողկանքի զգացում բռնության նկատմամբ և համապատասխան ուրախության, երբ կա սեր: Եվ մեծ ուշադրություն է բեռնված սեփական մտածողության օգտագործման վրա և հնարավորինս ուրիշների՝ *ստեղծագործականությանը հասնելու գերազանցման*՝ դրական կամ բացասական:

Այս ամենը ո՛չ հատկապես իզական է և ո՛չ էլ արական, բայց պահանջում է հիմնարար պահանջմունքների ուժեղ զգացում և դրանով բռնության ժխտում, քանի որ բռնությունը վնասում է հիմնարար պահանջմունքներին. համերաշխություն բոլոր կողմերի հետ՝ ապրումակցում, մոտիկություն, սեր դեպի անհանդուրժելի: Թույլ տվեք հեղինակին ընդհանրացում անել միայն իր համար. իմ կոնկրետ փորձն այն է, որ կանայք ավելի քան ուժեղ են այս բոլոր ասպեկտներում (մարդկային լինելու մեջ) և այդ պատճառով ավելի լավ կոնֆլիկտաբաններ են:

Եզրակացություն. թող «իզականը» գերակշռի, թող «արականը» զիջի: Փոխզիջումը միայն կթուլացնի աղյուսակում իզական սյունյակի գերազանց հատկանիշները՝ ավելի շատ ուղեղի աջ կողմը, ավելի քիչ՝ ձախը: Իհարկե, երկու սեռերն էլ ունեն մերուժ այս ուղղություններում: Բայց գենդերային հակասության և՛ մեկը, և՛ մյուսը գերազանցումը չափազանց էգալիտար է, չափազանց համաչափ: Իսկ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը հավասարազոր է կոլեկտիվ ինքնասպանության: Մենք կվերադառնանք սրան Մարքսին ուսումնասիրելուց հետո: Նպատակները մույնպես կարող են լինել անօրինական: Այդ դեպքում թող դրանք պարտության մատնվեն:

ՇՎԵՅՑԱՐԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ

Այժմ կատարենք բոլորովին այլ բան. օգտագործենք կոնֆլիկտի մասին այս հեռանկարը կարդալու պատմությունը հակառակ կողմից, մայելու ներկային՝ որպես գերազանցում, իսկ պատմությանը՝ որպես պատմվածք այն մասին, թե որ կոնֆլիկտներն են եղել գերազանցման ընդունելի և կայուն տեսակների սկզբնաղբյուրներ: Որպես օրինակ կվերցնենք Շվեյցարիան: Մենք գիտենք արդյունքը: Բայց որո՞նք էին խնդիրները՝ կոնֆլիկտները, որոնք սկիզբ դրեցին Շվեյցարիային:

Բարձրադիր Ալպերում՝ Եվրոպայի ջրային աշտարակում, որտեղից ջուրը հոսում է Եվրոպայի չորս հիմնական գետեր (Յռենոս, Դանուբ, Պո, Ռոն), երեք մասի բաժանված գյուղացիական բնակչություն էր ապրում, որոնք չէին ցանկանում դառնալ, համապատասխանաբար, Զալցբուրգի և Բեռլինի, Միլանի և Փարիզի ծայրամասեր: Նրանք հիմնեցին *համատեղ անկախություն*: Քանի որ Ավստրիան և Գերմանիան, Իտալիան և Ֆրանսիան մշտապես պատերազմում էին միմյանց հետ, նրանք պետք է որոշ սահմանափակումներ դնեին իրենց մասնակցության վրա: Պա-

տերազմը դարձավ անհնարինություն, և *առաջացավ աշխարհում առաջին չեզոք պետությունը՝ Շվեյցարիան*։

Մի կողմից, նրանք ցանկանում էին պաշտպանել իրենց երկիրը, մյուս կողմից էլ նրանք չէին ցանկանում սադրել իրենց հարևաններին։ Այդ պատճառով նրանք ստեղծեցին ռազմական մեքենա՝ հիմնված երկրի ներսում պաշտպանության վրա, որն ավելին էր, քան պարզապես սահմանի պաշտպանությունը, իսկ կարճ հեռավորության վրա ավելին էր, քան սպառազինությունը երկար հեռավորության վրա։ Դրանով նրանք դարձան հստակորեն *պաշտպանական պաշտպանությամբ* առաջին երկիրը։

Տեղական մակարդակում աշխարհագրական տարածքի այս պաշտպանությունն արմատավորելու և ժողովրդի դեմ բանակի օգտագործման վտանգը նվազեցնելու համար զինվորական ծառայությունը դարձավ պարտադիր և տեղայնացված։ Չորս ամիս ուսուցումից հետո տասներկու տարի շարունակ տարեկան երկու շաբաթ զինվորական ծառայությունը դարձավ պարտադիր։ Ձինվորներն իրենց զենքերը պահում էին տանը, ինչի արդյունքում բանակը ինչ-որ առումով *դասակարգից ազատ ուսուկանություն էր*։

Նրանք ոչ էլ ցանկանում էին ենթարկվել Եվրոպական Միության մեջ միավորված երկրների իշխանությանը։ Այդ պատճառով անդամության վերաբերյալ բանակցությունների ժամանակ նրանք ոչ ասացին բոլորին, բայց՝ այո ԵԱՀԿ-ի, ՏՀԶԿ-ի, Եվրոպայի Խորհրդի և ՄԱԿ-ի շրջանակներում համագործակցությամբ, որոնք կամ չեն պահանջում նրանցից ռազմական պարտավորություններ, կամ էլ հիմնված են համաձայնության, այլ կերպ ասած, վետոյի հնարավորության վրա։

Նրանք ոչ էլ ցանկանում էին դառնալ միմյանց ծայրամասեր, մասնավորապես, գերմանախոս մեծամասնության։ Այդ պատճառով նրանք ստեղծեցին լեզվական խմբերի (70% գերմաներեն, 25% ֆրանսերեն, 4% իտալերեն և 1% չորրորդ խմբի՝ «բնիկների» համար ռետորոմաներեն) ներքին ինքնավարության և գոյակ-

ցության համակարգ: Շվեյցարիան դարձավ *առաջին բազմազգ երկիրը՝ ժողովուրդների միջև հավասարությամբ*:

Շվեյցարիան համադաշնություն էր մինչև 1848 թ.-ի, բայց, որպեսզի այս խմբերը մնային հավասար, այն դարձավ դաշնություն 1874 թ.-ին՝ համատեղ արտաքին, անվտանգության և ֆինանսական քաղաքականությամբ, իսկ մյուս ոլորտներում՝ տեղական մակարդակով որոշումների կայացմամբ:

Շվեյցարիայում գյուղացիական ապստամբությունները դարեր շարունակ հաղթել են և հանգեցրել *ուղղակի ժողովրդավարության* ավանդույթին՝ հիմնված *հանրաքվեների* վրա: Աշխարհի 1% բնակչությամբ Շվեյցարիան 20-րդ դարում անցկացրել է ազգային հանրաքվեների 60%-ը:

Ժողովրդի մեջ ժողովրդավարությունն արմատավորելու համար ժողովուրդը նույնպես կարող է հանդես գալ նախաձեռնությամբ, որպեսզի կառավարությունը հանրաքվե անցկացնի երկու տարվա ընթացքում՝ 100.000 ստորագրություն հավաքելու դեպքում:

Որպեսզի որոշումներն իսկապես լինեն տեղային, միավորները չպետք է լինեն չափազանց մեծ: Այդ պատճառով Շվեյցարիան բաժանված է ոչ թե չորս, այլ քսաներեք կանտոնների (դրանցից երեքը բաժանված են կիսականտոնների)՝ մեկ ռետորոմանական, մեկ իտալական, չորս՝ ամբողջությամբ և երկու՝ մասամբ ֆրանսիական: Մնացածը գերմանախոս են:

Կառավարությունում մի ժողովրդի գերիշխանությունից խուսափելու համար դրա յոթ անդամները ոչ միայն ներկայացնում են կուսակցությունները, այլ նաև չորս ժողովուրդները (*Zauberformel*¹): Սա իրականում մշտական կոալիցիոն կառավարություն է, որն ուղղակիորեն հաշվետու է ժողովրդին:

Անկախություն՝ չորս, այլ ոչ թե միայն մեկ ժողովրդի համար, չեզոքություն, պաշտպանական պաշտպանություն, ոստիկանություն, էգալիտար բազմազգություն, համադաշնություն, ուղղակի

¹ *Zauberformel* (գերմ.) - *Կախարդական բանաձև* (թարգ.)

ժողովրդավարություն, նախաձեռնություններ, կանտոններ... Ամբողջ այս կախարդական բանաձևը շվեյցարական գերագանցումների շարք է: Հսկայական ներդրում: Շնորհակալություն, Շվեյցարիա:

ՄԱՐՔՍԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ

Կարլ Մարքսն իր աշխատություններում հստակ մատնանշեց արտադրության միջոցների և արտադրության եղանակների միջև հակասությունը՝ որպես սոցիալական փոխակերպումների կենտրոնական շարժիչ ուժ: Արտադրության մոտ միջոցները կճեղքեն արտադրության հիմ սոցիալական եղանակով սահմանված զսպող շրջանակները: Նոր սոցիալական ֆորմացիա կառաջանա: Այսպես, Խորհրդային պլանային բռնապետությունը համատեղելի էր հազարավոր աշխատողներով ու գյուղացիներով մեզա գործարանների և մեզա համատեղ ընկերությունների հետ: Բայց միլիոնավոր փոքր *samizdat*-ներ¹ ի վիճակի էին փախչել պլանավորման բռնապետությունից:

Այնուհետև, զարգացան Տեղեկատվական տեխնոլոգիաները և հնարավոր դարձրեցին արդյունաբերական պլանավորումն ու արտադրությունը միկրո մակարդակում: Կուսակցության կողմից վերևից ներքև վերահսկվող հսկայական բուրգը վերածվեց կապիտալի կողմից վերահսկվող մի շարք ավելի մեծ և ավելի փոքր բուրգերի: Սա արդեն Խորհրդային Միությունում սոցիալիզմի անկման և կապիտալիզմի առաջացման մարքսիստական բացատրության միջուկն է:

Ցանկացած համակարգ սիրում է ցույց տալ, թե ինչքան խելացի է ինքը խնդիրների լուծման և մարտահրավերներին դիմակայելու առումով: Կապիտալիստական համակարգը, թերևս, կա-

¹ *Samizdat* (= самиздат, ռուս.) – ինքնուրույն հրատարակչություն (թարգ., նշումը թարգմանիչի)

րող է արտադրել ամեն ինչ, բացի բոլորի համար բարեկեցությունից: Բայց հակասությունները լուծելու համար անհրաժեշտ է գերազանցում և փոխակերպում: Մենք միկրո և մեզո մակարդակներից բազմաթիվ օրինակներ ենք բերել, հաջորդիվ կներկայացնենք նաև մակրո և մեզա մակարդակների օրինակներ: Մարքսն աշխատում էր մեծ մեզո փոխակերպումների վրա, և նրա հանճարը գտավ ընդհանուր բանաձև շարժիչ ուժերի համար՝ ընդգրկելով անցումը պրիմիտիվ կոմունիզմից դեպի ստրկատիրություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ. արտադրության նոր միջոցներ, որոնք հարկադրում են փոփոխություններ իրականացնել արտադրության եղանակում:

Որպես առաջընթացի արևմտյան տեսության կողմնակից՝ նա, հավանաբար, ժամանակավոր կհամարեր Ռուսաստանի նահանջը դեպի կապիտալիզմ: Մյուսները խաղի մեջ կտեսնեին ավելի շատ ազդող գործոններ, ինչպիսիք են քաղաքական կառուցվածքը, բռնապետության փոխարեն ժողովրդավարությունը՝ որպես շարժիչ ուժ ի լրումն տնտեսական խորը կառուցվածքների, որոնք հիմք են ծառայել այդ հանճարեղ տեսության, ինչպես նաև դրա միակողմանիության համար:

Սակայն մեր ուշադրության կենտրոնում Մարքսի և գծապատկերի փոխազդեցությունն է: Այդ պատճառով մենք տեղադրում ենք արտադրության միջոցները մի առանցքի վրա, իսկ արտադրության եղանակը՝ մյուսի: Բայց անհամատեղելի չէ արդյո՞ք սա այն սկզբունքի հետ, որ միայն այն, ինչ ապրում է, կարող է ունենալ նաև նպատակներ: Ոչ, մենք մտածում ենք նրանց մասին, ովքեր գտնվում են արտադրության հին եղանակի հետևում՝ ազնվականների և նրանց կոնֆլիկտային հարաբերությունների մասին արտադրության նոր միջոցները կրողների՝ կապիտալիստների հետ, ովքեր փնտրում են էժան աշխատուժ իրենց գործարանների համար: Սա չի խանգարում մեզ աշխատել արստրակտ հասկացությունների հետ այնքան ժամանակ, քանի դեռ մենք գիտենք՝ ինչի մասին ենք խոսում:

Հակասությունը հստակ էր, խորը և պայթյունավտանգ: Բայց ինչո՞ւ պետք է արտադրության միջոցների փոփոխությունը միշտ այդպիսի պայթյունավտանգ ազդեցություն թողնի արտադրության եղանակների վրա, և ոչ թե հակառակը: Ինչո՞ւ հնարավոր չէ նախ փոխել սոցիալական հարաբերությունները, հետո միայն՝ արտադրության միջոցները: Այսպես, հաջորդ տասնամյակի կամ երկու տասնամյակների ընթացքում մեկ միլիոն գերմանացիներ, ըստ տեղեկությունների, ցանկանում են ապրել Միջերկրական ծովի ափին: Միևնույն ժամանակ, նրանք չափազանց կապված են իրենց երկրի հետ: Գյոթեի հայրենակիցների մի կրծքում երկու հոգիներն ակնհայտորեն ունեն երկու հասցեներ. մեկը՝ Միջերկրական ծովի ափին, իսկ մյուսը՝ Գերմանիայում: Կլիման, դիետան, ֆիզիկական վարժությունները, կենսակերպը խթանող ազդեցություն ունեն, իսկ Եվրոպական Միությունը ստեղծում է ցանկալի պայմաններ:

Մենք ավելի ու ավելի քիչ ենք խոսում կենսաթոշակառուների մասին և ավելի շատ նրանց մասին, ովքեր ցանկանում են արտադրանք տալ՝ չկատարելով իրենց աշխատանքը Գերմանիայում ինչ-որ տեղ գտնվող շենքի ներսում: Ջբաղմունքների աճող թվի պատասխանը SS ոլորտն է՝ համակարգիչներ, բջջային հեռախոսներ: Հստակ է, որ միջոցները և եղանակներն աշխատում էին միմյանց վրա, ինչպես Խորհրդային Միությունում: Արտադրության նոր եղանակների և արտադրության հին միջոցների միջև հակասությունը գերազանցվել է տեխնոատիկայով և SS-ով՝ ի տարբերություն մարքսիստական տեխնոլոգիզմի:

Մարքսը դրականորեն չէր տրամադրված փոխզիջման և հեռացման նկատմամբ: Նոր սոցիալական ֆորմացիան արտահայտվելու է ոչ թե մասամբ կամ մասնակիորեն, այլ ամբողջովին և լիովին: Ո՛չ մեկը և՛ ոչ էլ մյուսը տարբերակը ետ կատարելու անհավանական անհամատեղելի է առաջընթացի նկատմամբ նրա հավատի հետ: Բայց նրա տեխնոլոգիզմը նաև մարգարեական էր: Նոր գենային տեխնոլոգիաների զարգացումը, օրի-

նակ, հմարավոր չէ հեշտությամբ կանգնեցնել, եթե, ասենք, չկազմակերպվեն զանգվածային ժողովրդական շարժումներ:

Մարքսը նաև քաջ հայտնի է արտադրության երկու գործոնների՝ կապիտալի և աշխատուժի միջև հակասության վերաբերյալ իր աշխատությամբ (բնությունը երրորդն է): Որպես ուժային հակասություն կապիտալիստի և բանվորների միջև՝ նրանց միջև, ովքեր գնում են և նրանց միջև, ովքեր վաճառում են աշխատուժ, այն հարաբերականորեն հեշտ է կառավարվում: Մենք արդեն դիտարկել ենք նման մի օրինակ «անդասակարգ ընկերությունում»: Սակայն ավելի հաճախակի է *պայքարը*:

Սուլիդար կապիտալիստական դասակարգը կարող է աշխատուժ վաճառողի առաջ բացարձակ ընտրության հարց դնել՝ իր աշխատանքի դիմաց առաջարկվող գնի ընդունման կամ սովի մատնվելու միջև: Արտագաղթը չի լուծի խնդիրը, քանի որ այդ պարագայում կապիտալիզմի ճնշումն աշխատուժի վրա նույնպես կարող է գլորալացվել:

Սուլիդար բանվորական դասակարգը կարող է նույնն անել կապիտալիստների հետ՝ դնելով նրանց աշխատուժի գինն ընդունելու կամ ընկերությունը փակելու ընտրության առջև: Ընկերությունը կարող է նաև տեղափոխվել, բայց այդ դեպքում սովի եզրին գտնվող բանվոր դասակարգն ավելի շատ դժվարություններ կունենա կապիտալի վրա արդյունավետ ճնշում գործադրելու համար:

Մենք դեռ այն պայքարի մեջ ենք, որը հաճախ վճռվում է պետական ուժի կիրառման՝ ոստիկանությունն ու բանակը բանվորների դեմ հանելու միջոցով: Երբեք հակառակը տեղի չի ունենում: Ժողովուրդը սկզբունքորեն կարող է օգտագործել ժողովրդավարական մեծամասնության ուժը կապիտալիզմի վրա որոշ արգելակներ դնելու համար: Այսպիսով՝ կարող է ձևավորվել սոցիալ-ժողովրդավարական բանակցային տնտեսության, որը վատ *փոխզիջում* չէ: Բայց հեշտ չէ գտնել կայուն հավասարակշռություն երկուսի միջև:

Բանվոր դասակարգը կարող է ավելի մեծ ուժ կիրառել կապիտալիստներին՝ որպես դասակարգ վերացնելու և նրանց բյուրոկրատներով փոխարինելու համար. այլ կերպ ասած, պետական կապիտալիզմ: Կապիտալիստները կարող են իրենց ուժն ուղղել արտադրությունն ավտոմատացնելուն և մեծ գումար հատկացնել արտադրական արդյունավետությունը մեծացնելու նպատակին՝ այդպիսով խրախուսելով բանվորներին՝ վերացնելու իրենց որպես դասակարգ: Սրանք երկու ծայրահեղ դիրքերն են՝ լի բռնապետությամբ և ամարդյունավետությամբ և գործազրկությամբ և սովով:

Ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը՝ ո՛չ կապիտալ, ո՛չ էլ աշխատանք տարբերակն է, որ մատնանշում է վերադարձ դեպի բնությունը՝ ավանդական գյուղատնտեսության վաղ ձևերով. որս, հավաքչություն: Այս տարբերակին կողմ են արտահայտվում բազմաթիվ «ծայրահեղական կանաչներ»: Բայց չէ՞ որ շատերը սպառում են ժամանակակից կապիտալիզմի կողմից արտադրված ապրանքները, և եթե որևէ մեկը ցանկանում է վերջ դնել դրան, ապա խնդիրներն անխուսափելի կլինեն:

Բայց ի՞նչ կասեք *դրական գերազանցման* մասին: Հնարավոր չէ՞ վերացնել բանվորների և կապիտալիստների միջև տարբերությունը, կամ գոնե բթացնել այն:

Առաջին փորձ. համատեղ ընկերություններ, որտեղ բանվորներն ու կապիտալիստները, ձեռք ձեռքի տված, երկուսն էլ կատարում են երկու գործը, ինչպես անդասակարգ ընկերությունում: Սա կոնֆլիկտի փոխակերպում է աշխատանքի փոխարկերպման միջոցով:

Երկրորդ փորձ. բազմաթիվ փոքր ընկերությունների, փոքր հողակտորների, փոքր գործարանների, փոխադրամիջոցների, խանութների խիտ, պարզ ցանց: Սա հակասությունների բթացում է՝ դրանք ավելի փոքր դարձնելու միջոցով:

Երրորդ փորձ. բանվորներին տրամադրվում են, կամ նրանք գնում են ընկերության բաժնետոմսերի մի մասն ու ավելի լավ են պատկերացնում կապիտալիստի շահագրգռվածությունը:

Այս երեք մոտեցումները չեն բացառում և չեն հակասում միմյանց: Սկզբունքորեն նրանք պետք է ունենան բաշխիչ ազդեցություն, ինչպես կարող ենք տեսնել բազմաթիվ տեղերում, որտեղ առաջին երկուսը գլխավոր դեր են խաղում: Կապիտալիստը կարող է ներդնել կապիտալ, իսկ այնուհետև նրա ցանցը բավականին ճկուն կլինի սեզոնային գործազրկությունը որսալու համար: Խնդիր կլինեն մեզա ընկերությունները, որոնք շուկայի այնքան մեծ մասնաբաժիններ ունեն, որ, խիստ վնաս կրելով, ստիպված կլինեն սահմանափակել արտադրությունը և հազարավոր բանվորների դարձնել գործազուրկ: Դա հեշտ չէ: Բայց ապագան, մասնավորապես զարգացող երկրների համար, կարող է այս երեք մոտեցումները համադրող դրական գերազանցման մեջ լինել:

Ավելացնենք կապիտալի և աշխատուժի միջև հակասության երրորդ տարբերակը՝ կապիտալ պահանջող և աշխատուժ պահանջող արտադրության միջև հակասությանը: Աշխատուժ պահանջող կոշիկների արտադրությունը կոշկակարային արհեստն է: Եթե շատ արհեստավորներ են հավաքված մի տանիքի տակ, ստացվում է արտադրություն: Երբ մեկ աշխատողի համար սարքավորումներ գնելու ներդրումն ավելանում է, ստանում ենք արդյունաբերություն, որն ի վերջո ավարտվում է մեքենայացմամբ:

Ո՛չ արհեստավորության, ո՛չ էլ մեքենայացման ծայրահեղ դիրքերն ընդունելի չեն: Բայց ի՞նչ կասեք գերազանցման մասին: Դա ճապոնական մոդելն էր (որն այսօր գիջել է Միացյալ Նահանգների «արդյունավետությանը»)։ Կապիտալ պահանջող արտադրություն՝ քանակի և աշխատուժ պահանջող արտադրություն՝ որակի համար: ճապոնիան միավորել էր դրանք և՛ մեկում, և՛ մյուսում: Աշխատուժի արդյունավետությունն ավելի ցածր էր, քան ԱՄՆ-ում, բայց ընդհանուր բարեկեցությունն ավելի բարձր էր: Ո՞րն է ավելի կարևոր:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. ՄԱԿՐՈ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԵՐԻ ՄԻՋԵՎ

Թույլ տվեք աշխարհաքաղաքական կոնֆլիկտներին մվիրված այս օրն սկսել՝ ներկայացնելով որոշ իրողություններ պետությունների և ազգերի մասին ընդհանրապես: Պետությունները աշխարհագրորեն սահմանված երկրներ են, իսկ ազգերը՝ մշակութային իրողություններով (պատմություն, լեզու, կրոն) սահմանված խմբեր՝ աշխարհագրական որևէ կտորի հետ կապվածությամբ: Եթե մեկից ավելի ազգեր կապված են աշխարհագրական նույն տարածքին՝ հողի միևնույն կտորին, ապա կարող ենք խոսել կոնֆլիկտի մասին այն հարցի շուրջ, թե ով է ղեկավարելու տվյալ տարածքում և կարող ենք ակնկալել գոնե վերբալ բռնություն: Օգտագործելով վերոգրյալ սահմանումները՝ կարող ենք ասել, որ աշխարհում կան մոտ 200 պետություններ և 2000 ազգեր, բայց միայն 20 «ազգային պետություններ» են բնակեցված միայն մեկ ազգով: Այլ կերպ ասած, մենք ունենք սկզբունքորեն կոնֆլիկտում գտնվող 1980 ազգեր, որոնք ապրում են 180 պետություններում:

Շվեյցարիան միակ երկիրն է, որին հաջողվել է լուծել այս խնդիրը: Կարող ենք ակնկալել, որ այս տեսակի կոնֆլիկտը վաղ թե ուշ բռնի դրսևորում կգտնի այն պարզ պատճառով, որ *մարդիկ, կարծես, նախընտրում են ղեկավարվել իրենց նմանների կողմից* (նույնիսկ, եթե իրենց նմանները չար են): Այսպես, նորվեգացիներին դուր չէր գալիս ղեկավարվել դանիերեն խոսող կամ շվեդական արտասանությամբ մարդկանց կողմից, բայց ինչ-որ պատճառով ակնկալում էին, որ հարավսլավացիները պետք է լինեին զգալիորեն ավելի հանդուրժող:

Այս միտքն ավելի զարգացնելուց առաջ խոսենք ևս մեկ թեմայի մասին, որի շուրջ քննարկումն անհրաժեշտ է նախքան 10 (մակրո) և 10 (մեզա) կոնկրետ ու քաջ հայտնի կոնֆլիկտներին անցնելը, որոնց վրա աշխատել է «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը և կարող է հայ-

տարարել իր փորձառության մասին: Պետությունը կազմակերպության առանձնահատուկ տեսակ է: Պետությունների մեծ մասը (200-ից 170-ը) ունեն զինված ուժեր և մենաշնորհ դրանց նկատմամբ: 1648 թ. հոկտեմբերի 24-ի Վեստֆալյան հաշտության կնքմամբ իրավունք տրվեց պետություններին պատերազմ սկսել միայն այն պայմանով, որ պատերազմ, նախևառաջ, հայտարարվի (ճապոնիան զրկվեց այդ իրավունքից 1945 թ. հետո: Դա ամրագրված է ճապոնիայի սահմանադրության 9-րդ հոդվածում): Պետությունները աշխարհ են եկել պատերազմ բերելու, այլ ոչ թե խաղաղություն:

Պետական գործիչները և դիվանագետները խաղաղության բանակցությունների վարման և իրենց ազգային շահերը (այդ թվում նաև՝ գաղտնի շահերը) պաշտպանելու մենաշնորհ ունեն, անգամ եթե այդ շահերը գտնվում են իրենց սահմաններից դուրս գտնվող «շահերի ոլորտում» կամ կոնֆլիկտի մեջ են մարդկային հիմնարար պահանջմունքների հետ:

Այս տեսակի անհեթեթությանը հակադրվելու փոխարեն՝ կան մարդիկ, ովքեր պնդում են, որ «շահերի ներդաշնակությունը» խաղաղության տանող միակ իրատեսական ճանապարհն է:

Սակայն իրականությունն այսպիսինը չէ: Պետությունների օրակարգերի առաջնահերթություններն են «ազգային շահերը»՝ որպես այդ երկրներում գերիշխող ազգերի վերնախավերի կողմից սահմանված շահեր, և եթե անհրաժեշտ է, դրանք պետք է բավարարվեն բռնության միջոցով: Խաղաղությունը ցուցակի ներքևում է և նախընտրելի տարբերակ է միայն, եթե այն համատեղելի է ազգային շահերի հետ: Երբեմն խաղաղությունը հայտնվում է ցուցակի սկզբում, օրինակ, որովհետև պետությունը կարող է ձեռք բերել խաղաղության արքայազնի միջազգային հեղինակություն, նույնիսկ եթե չունի լավ պատրաստված խաղաղության մեքենա, խաղաղության նախարարություն, համալսարանի ֆակուլտետ, որը հինգ տարի պատրաստում է խաղաղության մասնագետներ, ինչպես բժշկական ուսումնական հաստա-

տությունները պատրաստում են առողջապահության ոլորտի աշխատողներ: Այնուամենայնիվ, այն ինչ առաջնահերթությունների ցուցակի վերջում է և դժվար ըմբռնելի, նույնպես պետությունների մենաշնորհն է:

Այս գիրքն այդ մենաշնորհը վերացնելու փորձ է: «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը ներկայացնում է ախտորոշում, կանխատեսում և բուժման հեռանկարներ, առաջարկում է մեթոդներ, թե ինչպես մակրո և մեզա կոնֆլիկտները կարող են փոխակերպվել, ու թե ինչպես է հնարավոր կառուցել խաղաղություն: Ամեն ինչ հիմնված է ճիշտ նույն մեթոդի վրա, որին մենք հանդիպել ենք միկրո և մեզո մակարդակներում:

Համալսարանական ավանդույթը մեծ մասամբ սահմանափակվում է ախտորոշմամբ (սա նաև կոչվում է վերլուծություն): Հետազոտողը հիմնվում է իր տվյալների վրա և կարող է արդիականացնել պատմությունը, բայց ոչ ավելին: Կանխատեսումները ծանրաբեռնված են անորոշությամբ և բուժման առաջարկները մնում են պետական գործիչներին ու դիվանագետներին: Հանձնարարված հետազոտություններում, ով վճարում է, նա էլ պատվիրում է մեղեդին, իսկ եզրակացությունները հաճախ պահվում են գաղտնի՝ պնդմամբ, թե դրանք հրապարակման ենթակա չեն: Դրանով իսկ «հետազոտողի» հետազոտությունը մի այլ բան է դառնում, քանի որ իրական հետազոտության ասպարեզը հանրային տարածքն է, իսկ չափանիշը՝ հրապարակումը: Հակառակ դեպքում «հետազոտողն» իրականում պետության կամ կապիտալի ծառայողն է՝ «կանչով տղա», ուստի և պետք է հայտնի լինի որպես այդպիսին, քանի որ հետազոտող չէ:

Մեծ մասամբ տվյալների վրա հիմնված հետազոտություններում անցյալի ծայրն ամենաբարձրն է, որովհետև միայն անցյալը կարող է ներկայացնել տվյալներ: Բայց պետք չէ մոռանալ, որ այդ նույն անցյալն է առաջացրել է կոնֆլիկտը՝ արգանդում բռնություն կրելով: Այն սկզբունքը, եթե հակասության փոխակերպումը հնարավոր լիներ անցյալում, ապա հավանաբար արդեն

տեղի ունեցած կլիներ, այն է, ինչ տեղի է ունենում կոնֆլիկտների մեծ մասի հետ: Դրանք անհետանում են կամ լուծվում՝ հիմնվելով նրա վրա, թե ինչ է եղել և ինչ կա, ոչ թե հիմնվում նրա վրա, թե ինչ կարող էր լինել: Ծանր, խոր կոնֆլիկտների դեպքում, որոնք ձգձգված են երկարատև բռնությամբ, անցյալի իմացությունը բավարար չէ: Միջնորդության փորձառությունը ցույց է տալիս, որ մակրո և մեզա մակարդակի կոնֆլիկտներում կողմերը գտնվում են երկար, մութ թունելում, վախով են լցված, շփոթված են և ավելի հետաքրքրված են տեսնել ինչ-որ լույս թունելի վերջում՝ *ապագա-կառուցողականում*, քան վերլուծել անցյալ-ապականուցողականի լաբիրինթոսի դեգերումները: Բայց երկու մոտեցումներն էլ անհրաժեշտ են:

Բուժման առաջարկների վերաբերյալ երկխոսությունները գրեթե միշտ հարցական են, որոնողական՝ ստորադասական մախադասություններով. ի՞նչ կլիներ, եթե...: Նույնիսկ եթե հեռանկարները գրված են հրամայական եղանակով (արե՛ք սա, արե՛ք նա...), դրանք, միևնույնն է, ժամանակավոր են, քանի որ կփոխվեն մոր տվյալների, արժեքների և երկխոսությունների լույսի ներքո: Բայց դրանք բոլորը ներդրումներ են խաղաղության մշակույթում՝ լի ավելի լավ ապագայի կոնկրետ առաջարկներով:

Ընթերցողն այժմ հրավիրվում է կոնֆլիկտային շրջագայության աշխարհի շուրջ՝ Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով՝ փնտրելու խաղաղության տանող լուծումներ:

Մակրո և մեզա մակարդակների ներքոշարադրյալ կոնֆլիկտներն ընտրվել են մոտ 50 կոնֆլիկտներից, որոնց վրա աշխատել է «ԹՐԱՆՍԵՆԴ» (տե՛ս www.transcend.org): Կոնֆլիկտների նկատմամբ մեր հեռանկարները կողմնորոշված են լուծմանը, այդ պատճառով ընթերցողները, ովքեր ցանկանում են ավելի շատ բան իմանալ կոնֆլիկտների պատմության մասին, պետք է դիմեն քննարկման ենթակա երկրների մասին հանրագիտարանային հոդվածներին և գրքերին: Լրատվամիջոցների մշակույթում ընդունված է շատ երկար նկարագրել մեզա կոնֆլիկտները բացասական դիրքորոշման՝ ատելության, և բացասական վար-

քազծի՝ բռնության տեսանկյունից: Ուշադրությունից գրեթե վրիպում են հակասության արմատները: Լրատվամիջոցները հաճախ բռնության մասին զեկուցումներն անվանում են «օբյեկտիվություն»:

Մեր մշակույթում ընդունված են կոնֆլիկտների արմատների ախտորոշումը, կանխատեսումը և բուժման առաջարկները: ԱԿԲ-ն «ԹՐԱՆՍԵՆԴ»-ի փուլերն են:

Առաջին բանը, որ մենք անում ենք, կոնֆլիկտի շուրջ ծայրահեղ դիրքերը բացահայտելն է: Մեր մշակույթի նման մշակույթում «2» թիվը և երկու այլընտրանքների հետ աշխատելու միտումը ընդգրկված են «այլընտրանք» բառի մեջ: Այս դիրքերն այնուհետև օգտագործվում են հիմնական գծապատկերը կառուցելու համար այնպես, ինչպես այն պատկերացնում են կողմերը: Այնուհետև մենք սկսում ենք փնտրել հետաքրքիր մեկնաբանություններ մյուս՝ մասնավորապես «ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը» ու «և՛ մեկը, և՛ մյուսը» դիրքերի համար: Ընթերցողը կարող է չհավատալ, բայց բազմաթիվ կոնֆլիկտների կողմեր «ահա՛» են բացականչում, երբ հիմնական գծագիրը գծվում է 34 շարքային անդամների, պարտիզանների, նախազահների, երկու սեռերի հետ երկխոսության ընթացքում, և 2-ը հանկարծ դառնում է 5:

Քա՞նի սեռ կա, երկո՞ւ: Առնվազն հի՛նգ: Վերցրե՛ք մի թուղթ և ինքնուրույն կմշակե՛ք այս պատկերը:

Մեզ կոնֆլիկտի լուծման հնարավոր ելքեր գտնելու են հրավիրում սովորաբար կոնֆլիկտող կողմերից մեկը կամ այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն և այլն: Սովորաբար, քիչ բաներ կան, որոնք դուր են գալիս կոնֆլիկտի կողմերին ավելի շատ, քան իրենց դեպքը ներկայացնելու հնարավորությունը: Կողմերը, որպես կանոն, ավելի ազատ են խոսում երկխոսության արտաքին գործընկերոջ հետ, քան բանակցային սեղանի շուրջ: Հեռանկարներն սկսում են ի հայտ գալ հենց երկխոսությունների ընթացքում, եթե ոչ, ապա պետք է փորձել կազմակերպել ավելի շատ երկխոսություններ՝ ավելի շատ կոնֆլիկտաբանների ներգրավմամբ:

Լավ կոնֆլիկտաբանական աշխատանքի հիմնական բանաձևն է «2» թվի բռնապետությունից խուսափելը՝ պայմանով, որ երկու ծայրահեղ դիրքերում էլ կա խելամիտ, հիմնավորված *ինչ-որ բան*, որից կարող ենք կառչել երկխոսությունների ընթացքում: «Յուրաքանչյուր մարդու մեջ ինչ-որ լավ բան կա» արտահայտությունը կարելի է պրոյեկտել մաս երկխոսության ձևի վրա. «Յուրաքանչյուր դիրքում հիմնավորված ինչ-որ բան կա»: Այնպես որ, Հիտլերի դիրքում հիմնավորված կետը 1919 թ.-ի Վերսալի խաղաղության պայմանագրի քննադատությունն էր: Եթե Դաշնակիցներն ի վիճակի լինեին հիմնվելու դրա հիմնավորվածության վրա, մենք կարող էինք խուսափել Երկրորդ համաշխարհային պատերազմից:

Այսօր մենք որպես կողմնացույց ենք օգտագործում միջազգային իրավունքն ու մարդու իրավունքները՝ համոզվելու համար, որ շարժվում ենք ճիշտ ուղղությամբ: Եվ երբ այս կողմնացույցն ունի արևմտյան շեղում, մենք պետք է հիմնվենք հիմնարար պահանջմունքների վրա:

Այն, ինչ արվում է այնուհետև, ստեղծագործական է, նոր, անսովոր, մեղմ, իսկ երբեմն՝ խճճված, մասնավորապես, եթե մենք միավորում ենք տարրեր ողջ խաղաղության անկյունագծից: Իդեալական տարբերակում առաջարկը չպետք է սադրի կողմերից որևէ մեկին:

Կոնֆլիկտի կողմերի մեծ մասի ներսում կա հիմնավորված ինչ-որ բան: Խնդիրն է կառուցել ընդունելի և կայուն փոխակերպում ինչ-որ հիմնավոր բանի վրա, նույնիսկ եթե այդ «ինչ-որ բանը» շատ փոքր է:

Այս հեռանկարները սերմերի նման կցանվեն անմշակ, չհերկված դաշտերում: Որոշ սերմեր կբողբոջեն արագ, մյուսները՝ կարիք կունենան ջրվելու, իսկ որոշներն առհասարակ ապրելու ուժ չեն ունենա: Կլիմեն մաս հակազդող ուժեր՝ կարծրացած դիխտոմիայի (2 տարբերակի) ստրուկներ, ում պատկերացումն աշ-

խարհի մասին այն է, որ «այլընտրանք չկա» (ԱԶ¹՝ Մարգրետ Թեյչերի կարգախոսը):

Այս հեռանկարները նպաստում են խաղաղության մշակույթին: Ճշմարիտ խաղաղության մշակույթը կարտադրի խաղաղության հեռանկարների հարուստ ֆլորա: Իսկ ժողովրդավարության պայմաններում բոլորս այգեպաններ ենք՝ ոչ ոք չունի խաղաղության նկատմամբ մենաշնորհ:

Այս ներածությունը կարող էր ավարտվել դասական ձևով.

- Ես ունեմ երկու նորություն՝ վատ և լավ:
- Սկսենք վատ նորությունից:
- Գոյություն ունի ստեղծագործականության, նորարարական հմտությունների անհավատալի պակաս պետությունների և ազգերի քաղաքականություններում:
- Իսկ լավ նորությունը:
- Հավասարապես անհավատալի է, թե ինչքան հեշտ է ավելի ստեղծագործական դառնալուն վարժվելը:

Մեր կողմից ուսումնասիրվող տասը մակրո մակարդակի կոնֆլիկտներն ընտրվել են աշխարհի տարբեր մասերից: Դրանք տարբեր են, բայց ունեն ընդհանրություններ: Որպեսզի հասկանանք այն ամենի լրջությունը, ինչ պատրաստվում ենք ուսումնասիրել, նախ պետք է մի հիմնական հարց ուղղենք ինքներս մեզ՝ ի՞նչ է նշանակում ապրել խորը կոնֆլիկտով համակված տարածքում, օրինակ, Հավայան կղզիներում, Կոլումբիայում, Ռուանդայում, Օլսթերում, Բասկերի երկրում, Հարավսլավիայում, Իսրայելում, Պաղեստինում:

Նախևառաջ, բռնությունը ցանկացած դեպքում անհանգստություն է հարուցում: Ուսումնասիրենք բռնության հիմն առանձնահատուկ ասպեկտներ.

«Այն հարկադրում է հանցագործի կամքը»:

«Այն վնաս է հասցնում ամենել կողմին՝ խաղաղ բնակչությանը»:

¹ «There is no alternative», TINA (անգլ.) - «այլընտրանք չկա»՝ ԱԶ (թարգ.)

«Այն իր հետ բերում է խուճապ, ստորացում, ահաբեկում»:

«Այն անկանխատեսելի է ժամանակի, տարածության և/կամ զոհի ընտրության առումով»:

«Հանցագործը կփորձի պաշտպանել իրեն փոխվրեժից»:

Գոյություն ունի հանցագործների երկու տեսակ. նրանք, ովքեր պետության դեմ են և նրանք, ովքեր պետության կողմից են՝ ահաբեկիչներ ու պետական ահաբեկիչներ: Հինգ կետերը երկուսի համար էլ հավասարապես հիմնավորված են: Ջոհ դառնալու վախը ազդում է մարմնի, մտքի և ոգու վրա ու նսեմացնում է մարդկանց: Նույնը վերաբերում է այդ տառապանքը և կործանումը առաջացնող հանցագործին: Վերջինիս տրավման՝ տրավմայի ենթարկված «ուրիշներ» ունենալը, ևս պետք է հաշվի առնել:

Հանցագործի և զոհի միջև բռնությունն ընդհանուր բռնության միայն մի փոքր մասն է: Մենք կքննարկենք հանրաճանաչ զինվորական շտաբի պաշտոնական հաղորդագրությունը. սպանվածների, վիրավորների թիվը, նյութական ավերածությունն այնքան մոլորեցնող են և կեղծ, ինչքան այն կերպարը, որը լրատվամիջոցները շնորհում են տնտեսական (կարդացե՛ք՝ ֆոնդային բորսաները) իրականությանը: Զրկվածների մի ողջ խումբ դուրս է մնում ուշադրությունից՝ ընտանիքը, ընկերները, հարևանները, գործընկերները: Միջինում զրկվածների թիվը 10 է՝ յուրաքանչյուր մեկ զոհվածի դիմաց: Տասը մարդ կրում է իր տառապանքը և դա տանում ապագա, տասը մարդ լցվում է ատելությամբ, տասը մարդ պահանջում է վրիժառություն և/կամ տրվում հուսահատությանը, անտարբերությանը: Բռնության գործողությունը վերածնվում և վերամարմնավորվում է ամեն օր:

Ի վերջո, հաճախ շատ չի խոսվում նաև այն մարդկանց մասին, ովքեր ո՛չ սպանվել են և ո՛չ էլ ակնհայտորեն վիրավորվել. բռնաբարվածները, դրսից կամ ներսից տեղահանվածները՝ փախստականները:

Նրանք բոլորը կարող են կառուցել կյանքն իրենց ատելության շուրջ: Բայց սա երբեք չի լինի իսկապես հարուստ և ստեղ-

ծագործական կյանք: Ամեն օր կարող ենք լսել միկրո և մեզո մակարդակներում կոնֆլիկտի բռնությամբ ընդմիշտ խարանված մարդկանց պատմությունները բռնության մասին: Նրանք դարձել են *վիրավորված* և կառուցել են իրենց կյանքն անարդարության շուրջ, նրանք զգում են, որ տուժել են, դառնում են վհատ, մռայլ անծիմք, ովքեր սոցիալական տիեզերքում սև անցքերի են մման, այլ ոչ թե լույսի աղբյուրի, որը կարող է շողալ իրենց ներսում և մյուսների համար:

Բայց բռնության պատմությունը մաս բնության պատմություն է, որը ռմբակոծվել է, ականապատվել, բռնաբարվել, ստորացվել և դարձել վիթխարի աղբանոց ռազմական բեկորների համար, որոնց որոշ մասը թունավոր է:

Բռնության համար կառուցված հասարակությունը դառնում է իր իսկ ծաղրանկարը՝ անկախ նրանից բռնությունը գալիս է չափազանց բարձր իշխանական բուրգի գագաթից, թե փոքր պարտիզանական բջիջներից՝ որպես պետական ահաբեկչություն վերևից կամ ներքևից: Մշակույթը դառնում է խորը վերքերի շտեմարան՝ ճանապարհ դեպի մի այնպիսի ժողովրդի կոլեկտիվ հիշողություն, որն ի գորու չէ նոր մոտեցումներ փնտրելու:

Կարճ ասած, բռնությունն իր հետևից թողնում է հաշտությանը և վերամիավորվմանն անընդունակ մարդկանց, ովքեր ավելի շատ միտված են վրեժ լուծելու:

Հետևում ինքնին կոնֆլիկտն է՝ անհամատեղելիությունը՝ միմյանց արգելափակող նպատակները: Սա նշանակում է, նախևառաջ, որ քաղաքական կյանքը կաթվածահար է: Կոնֆլիկտը մման է ուռուցքի, որը կլանում է էներգիա սոցիալական օրգանիզմի ամեն տեղից՝ օրինակ, տնտեսական ռեսուրսների բաշխումից: Հասարակական կյանքում կոնֆլիկտը սեպ է խրում կողմերի միջև, իսկ անհատական մակարդակում՝ ստանում է ատելության ձև՝ կրծելով մարդկանց սրտերը: Մշակութային առումով զոհերը երազում են վրիժառության և փոխհատուցման մասին,

իսկ հանցագործները՝ ավելի շատ հաղթանակների մասին՝ միշտ իիշելով, որ արդեն մի անգամ հաղթել են:

Հասարակական և անձնական մեծահոգությունը նեղանում է ու վերածվում սեփական իրավացիության շատ նեղ սպեկտրի՝ առանց ապրումակցման և կարեկցանքի: Միևնույն ժամանակ, հասարակությունը հույսով և ակնածանքով սպասում է ազատության՝ նոր բռնության միջոցով:

Ժամանակը կանգնած է տեղում: Հասարակությունները չեն զարգանում, ոչ էլ մարդիկ, քանի դեռ մենք չենք հակադրում զարգացումը բռնությանը, ատելությանը, սպանության կամ սպանվելու վտանգին ու ոչնչացմանը: Մեր հասարակությունները դառնում են իրենց իսկ ծաղրանկարները: Մարդիկ նույնպես դառնում են ծաղրանկարներ՝ պատմության սպասասրահում սպասող սովերների նման: Կոնֆլիկտը փակում է ամբողջ հասարակության Կարճ հեռավորության երթուղու գնացքը սպասասրահում և թողնում այն սադո-մազոխիստներին: Երկար հեռավորության երթուղիներում շատ ավելի նրբագեղ, ճեպընթաց գնացքներն են արագ անցնում անցյալը: Դրանք չեն կանգնում, ուղևորները մատնացույց են անում սպասասրահը. այնտեղ նրանք են՝ այդ խեղճ մարդիկ, մենք իսկապես պետք է խղճանք նրանց: Իսկ սպասասրահում գտնվողները հուսահատ հույս ունեն, որ ինչ-որ մեկը կգա դրսից՝ սադո-մազոխիստներին անընդունակ դարձնելու, դռները բացելու, գնացքը նորից գործարկելու համար: Սեփական ստեղծագործականությունը նրանք վաղուց կորցրել են:

Ուստի կոնֆլիկտները պետք է փոխակերպվեն այնպես, որ կողմերը կարողանան ապրել ոչ թե բռնի, այլ ստեղծագործական կյանքով ու խուսափեն բռնություններից: Կողմերը պետք է կոտրեն իրենց ներսում և իրենց միջև բևեռացումը, որովհետև այն դարձնում է ապրումակցումը, երկխոսությունը և ստեղծագործականությունն այնքան անհնարին, ինչքան խորը ըմբռնումը և երկխոսությունը էբոլայի, ՄԻԱՎ-ի, խոլերայի կամ բուբոնային ժանտախտի հարուցիչների հետ: Խաղաղաշինությունը խիստ անհրաժեշտ է:

Եթե բռնություն է տեղի ունեցել, ապա անհրաժեշտ է հաշտություն՝ կրկին սկզբից սկսելու համար: Դժվար է, բայց դժվարությունն ինքնին չի կարող լինել արդարացում իսկական լուծում գտնելու համար բացակայող ունակության կամ կամքի բացակայության պատճառով տառապելու համար:

ԷԿՎԱԴՐՐ ԵՎ ՊԵՐՈՒ. ԵՐԿԱԶԳԱՅԻՆ ԳՈՏԻ, ԲՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ

- *«Շատ ստեղծագործական է»*, - ասաց Էկվադորի նախկին նախագահը, երբ լսեց 500 կմ² սահմանամերձ գոտում Էկվադորի և Պերուի միջև երեք պատերազմների պատճառ դարձած կոնֆլիկտը լուծելու առաջարկը՝ ոչ թե սահման գծելու միջոցով, այլ այն «բնական զբոսայգով երկազգային գոտու» վերածելու:

- *Չափազանց ստեղծագործական է:* Առնվազն 30 տարի կապահանջվի այդ գաղափարին ընտելանալու համար, իսկ այնուհետև առնվազն ևս 30 տարի՝ այն իրականացնելու: Սակայն թույլ տվեք մի հարց տալ. ինչպե՞ս հանգեցիք այդ գաղափարին:

Ես կարող էի, իհարկե, ասել, որ գաղափարը ծնվեց ոչ թե այն պատճառով, որ ես գիտեի պատմությունն ու Լատինական Ամերիկան, այլ, նախ և առաջ, այն պատճառով, որ ունեի իմ ուղեղում հաստատուն կերպով դրոշմված որոշակի գծապատկեր՝ ըստ որի իմ խորհուրդը միանգամայն կանխատեսելի էր: Կոնֆլիկտի կարգավորման համար նրանք արդեն կիրառել էին հետաձգումը՝ հեռացումը 54 տարով՝ համակցված անվերջ բանակցություններով: Նրանք նաև փորձել էին բացարձակ ռազմական հաղթանակը: Փորձարկվել էր փոխզիջումը՝ տարածքը բաժանող նոր սահման գծելու միջոցով: Միակ հնարավորությունը, որը մնացել էր, գերազանցումն էր, իսկ ամենապարզ և՛ մեկը, և՛ մյուսը ներառող տարբերակը՝ երկազգային գոտին: Բայց իմ պատասխանը փոքր-ինչ ավելի մանրամասն էր.

- Ես ունեմ մի մեթոդ, որ չասվածը է, անլսելին լսելու մեջ: Ո՛չ դուք և ո՛չ էլ ձեր գործընկերը չասացիք որևէ բան այն մասին, թե ինչու է պետք գծել սահման, հավանաբար այն պատճառով, որ դուք կարծում եք, որ դա չափազանց ակնհայտ է: Հավանաբար դուք երկուսով այն կարծիքին եք, որ յուրաքանչյուր քառակուսի մետրը երկրագնդի վրա պատկանում է մեկ ու միայն մեկ երկրի, և որ դա այդպես է գրեթե 100%-ով: Մեթոդը վստահության աքսիոմաները բացահայտելու մեջ է: Համարվում է, որ դրանք չպետք է քննարկվեն, նույնիսկ՝ ձևակերպվեն, բայց մեթոդն առաջարկում է շոշափել այդ թեմաները, թափահարել, ներդնել «ոչ» բառը՝ ժխտելով դրանք այնպես, որ ամեն ինչ դառնա ավելի ճկուն: Որպես կանոն, սա հանգեցնում է ուսումնասիրողին ինչ-որ հնարավոր փոփոխության և չափազանց ստեղծագործական է:

Մենք բաժանվեցինք՝ որպես ընկերներ համեղ ճաշից հետո, առանց հաջորդ հանդիպում նշանակելու:

Բայց երեք տարի հետո՝ 1998 թ.-ի աշնանը՝ այն բանից հետո, երբ Էկվադորն առաջարկեց «բնական զբոսայգով երկազգային գոտի» ստեղծել, այս առաջարկը Էկվադորի և Պերուի միջև խաղաղության պայմանագրի հիմք դարձավ: Նախկին նախագահի կանխագուշակումը սխալ դուրս եկավ: 60 տարի չպահանջվեց գործը գլուխ բերելու համար: Պարզվեց, որ առաջարկը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր ընդամենը 3 տարի: Նման պարզ բանին հասնելու համար, սակայն, 1941 թ.-ի առաջին պատերազմից, հետագա ևս երեք պատերազմներից ու ջրբաժանի միջոցով սահման գծելու փորձից հետո 57 տարի պահանջվեց:

«Ե՛վ մեկը, և՛ մյուսը» տարբերակը տվյալ կոնֆլիկտում, կարծես, պարզվեց: Այդ պարզությունը դարձրեց այն հեշտ նույնիսկ այն մարդկանց համար, ովքեր լավ պատրաստված են պատմության մեջ, միջազգային հարաբերություններում և հնարավոր նախադեպերում: Իհարկե, շատ օգտակար գործոն էր նաև այն, որ գոտին չբնակեցված էր և հարուստ չէր ռեսուրսներով:

Մյուս երկու գործոնները, անշուշտ, նույնպես դեր խաղացին:

Շատ երկար *ժամանակ* էր անցել 1941 թ.-ից, և կողմերը փորձել էին և՛ օրենքով սահմանված, և՛ ռազմական ճանապարհով հնարավոր բոլոր լուծումները: Նրանց ջանքերը հիմնված էին լուծումների շատ սահմանափակ ցանկի վրա. մեկը հաղթում է, գործը կարճվում է կամ զինադադար է կնքվում և այսպես շարունակ: Սահման գծելու սկզբունք գաղափարը արգելափակում էր գերազանցումը: Եվ բացի այդ, կողմերը նույնիսկ ի վիճակի չէին գծել սահման:

Այդ պատճառով կարող ենք արձանագրել, որ *ժամանակահատվածը* համապատասխան էր: Կողմերը հոգնել էին կոնֆլիկտից, որ վեր էր ածվել սկանդալի: Բանալին այլևս թաղված չէր անցյալի պատմական օրինականացման մեջ, այլ ապագայի նկատմամբ մի քիչ ստեղծագործականությամբ:

Նշենք, որ այս ստեղծագործական փոխակերպումը նաև շատ էժան փոխակերպման օրինակ էր: Էկվադորի նախագահի հետ երկխոսությունն արժեք 125 դոլար՝ Կիտոյում կանգ առնելու և հյուրանոցում գիշերելու համար՝ շատ ավելի քիչ, քան կառավարությունները սովորաբար ծախսում են դիվանագիտության վրա: Համեմատության համար ասենք, որ բռնությունից հետո ռազմական միջամտության սովորական մոտեցումը հասնում է միլիարդավոր դոլարների ծախսերի, մինչդեռ կոնֆլիկտի խաղաղ փոխակերպումը պատերազմից առաջ կարող է փրկել բազմաթիվ կյանքեր և թույլ տալ հասարակությանը զարգանալ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԵՆԼԱՆԴԻԱ. ՆՈՐՎԵԳԻԱՆ ԵՎ ՂԱՆԻԱՆ «ՄՈՌԱՅԵԼ» ԵՆ ԻՆՈՒԻՑՆԵՐԻՆ

Ահավասիկ մի գործ՝ Նորվեգիայի և Դանիայի միջև՝ իր ինուլիթ բնակչությանը արևելյան Գրենլանդիայի շուրջ: Գործը փոքր-ինչ պարզեցված է: Այն քննվել է 1933 թ.-ին Հաագայի միջազգային դատարանում:

Նորվեգիա – Հողը մերն է: Մենք ենք հայտնաբերել այն, մենք ենք առաջինն աչք դրել դրա վրա: Մենք եկանք, տեսանք, տիրեցինք (*veni, vidi, vici*¹): Հողը պատկանում է նրան, ով հայտնաբերել է այն:

Դանիա – Ճիշտ է, որ նորվեգացիները ժամանել են առաջինը, նրանք հոյակապ ճամփորդներ են: Մենք եկանք ավելի ուշ, բայց հենց մենք մկրտեցինք տեղացիներին, ամեն բան դասավորեցինք այբբենական կարգով, տվեցինք գրեր, Աստվածաշունչ, օրենք և արդարություն, դատարաններ և պատիժ, սովորեցրեցինք սնունդ և կացարան ձեռքբերելու նոր տեխնիկաներ: Կարճ ասած, մենք քաղաքակիրթ դարձրեցինք նրանց: Հողը պատկանում է նրան, ով զարգացնում է այնտեղ հաստատված բնակչությանը:

Այս պնդումներում տեսնում ենք ոչ միայն երկու կողմերի դիրքերը, այլ նաև հստակ արտահայտված հիմնավորումները՝ օրինականացումը: Դատարանի վճիռը միաձայն Դանիայի օգտին էր՝ ցույց տալու համար տիրակալի ոգի (*animus occupandi*-ի²) պատասխանատվությունը, հոգատարությունը, զարգացումը: Նորվեգացիները ժամանել էին առաջինը, բայց հեռացել էին «հայտնագործությունից» անմիջապես հետո:

Կոնֆլիկտաբան – Դե, ի՞նչ պետք է ասեն մասնակիցները:

Եռանդուն, բայց փոքր-ինչ միամիտ մասնակից – Ե՛վ մեկը, և՛ մյուսը լուծումն է պետք գտնել, ինչպես Էկվադորի և Պերուի միջև կոնֆլիկտի դեպքում: Նորվեգիան և Դանիան իշխում և զարգացնում են երկիրը միասին: Նրանք կարող են նաև ներգրավել այլ սկանդինավյան երկրներին, գուցե նաև Իս-

¹ *veni, vidi, vici* (լատ.) - եկավ, տեսավ, հաղթեց (թարգ., *մշումը թարգմանիչի*)

² *animus occupandi* (լատ.) – տիրակալի ոգի (թարգ.)

Կոնֆլիկտաբան –

լանդիային (քանի որ Իսլանդիան հյուսիսային, բայց ոչ սկանդինավյան երկիր է), որն իրականում կանաչապատ է և կարող է օգնել մեծ մասամբ սառցապատ Գրենլանդիային:

Ցավում եմ, բայց դուք ընկաք այն ծուղակը, որը պատրաստված էր ձեզ համար: Միշտ հիշեք՝ առաջին բանը, որը դուք պետք է անեք կոնֆլիկտի վերլուծության ժամանակ՝ կողմերը, նպատակները և հակասությունները քարտեզագրելուց հետո, նպատակները օրինականի և ոչ օրինականի բաժանելն է: Բայց դուք, հիարկե, կարող եք արդարացիորեն հարցնել՝ ինչպե՞ս տարբերակել՝ օրինակա՞ն է նպատակը, թե՞ ոչ:

Ահավասիկ էմպիրիկ կանոն. եթե նպատակի իրականացումը մարդկային հիմնարար պահանջմունքների կամ իրավունքների դեմ է, ապա այն անօրինական է: Հիմնարար պահանջմունքներն այն պահանջմունքներն են, որոնց բավարարման շնորհիվ են միայն հնարավոր դառնում ֆիզիկական բարեկեցությունը, ազատությունն ու իմաստալից կյանքը: Օգտագործեք հիմնարար պահանջմունքները որպես ուղեցույց:

Այստեղ խնդիրն ինուիթների պահանջմունքներն են և *ազատության* նրանց հիմնարար իրավունքը, որն օբյեկտիվ է՝ անկախ դրա մասին սուբյեկտիվ գիտակցումից: Այս իրավունքները գոյություն ունեն, նույնիսկ եթե ինուիթները չեն պահանջում դրանք:

Մենք դեռ կարող ենք օգտագործել գծապատկերը, բայց պետք է շրջենք առանցքները: Նպատակն է այժմ «Նորվեգիային

չպատկանելը» և «Դանիային չպատկանելը» և, անշուշտ, ոչ «և՛ Նորվեգիային, և՛ Դանիային պատկանելը», որը կարող էր հավասարազոր լինել կրկնակի գաղութատիրության:

Գոյություն ունեն «ո՛չ Նորվեգիայի, ո՛չ էլ Դանիայի» տարբերակի երկու ակնհայտ մեկնաբանություններ.

1. Արևելյան Գրենլանդիայում իշխում են ինուիթները (կամ օգտվում են շատ բարձր մակարդակի ինքնավարությունից),

2. Արևելյան Գրենլանդիան կառավարվում է Ազգերի լիգայի կողմից:

Երկուսն էլ սկզբնական կոնֆլիկտի պարզ բացասական գերազանցումներ են: Գործը սկսվել էր որպես Նորվեգիան՝ ընդդեմ Դանիայի գործ, ինուիթները և Ազգերի լիգան հաշվի չէին առնվել:

Այս օրինակով լուսաբանվում է պատշաճ իրավական գործընթացի բացակայությունը: Այն դատական գործընթացի հարց է երկու *կողմերի* միջև: Ո՛չ մի և ո՛չ էլ մյուսի կարծիքը՝ նկատի ունենալով ինքնորոշման իրավունքը, որը քաջ հայտնի էր 1933 թ. միայն սպիտակամորթ ազգերի համար, կարող էր լինել այն բանի հետևանք, որ դատավորը հայտարարված լինել հոգեկան հիվանդ: Փոխզիջումը և գերազանցումն այդ իրավական պարադիգմից դուրս են: Իսկ գործի կարճումը նշանակում է դատարանի՝ որպես կոնֆլիկտի լուծման մեխանիզմի անձնատվություն:

Հնարավոր փոխակերպումը կարող էր հիմնված լինել այն ամենի համակցության վրա, ինչ նշվել է, բացի ծայրահեղ դիրքերից: Նպատակն ինուիթների անկախությունն է: Բայց միջոցները կարող էին ներառել նորվեգական/դանիական համագործակցության տարր Ազգերի լիգայի շրջանակում՝ Նորվեգիան որպես փորձագետ ձկնաբուծության, իսկ Դանիան՝ գյուղատնտեսության մեջ: Այլ կերպ ասած կրկին պետք է կիրառել խաղաղության հիմնական անկյունագիծը:

ՀԱՎԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ. ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հավայան կղզիների հավայացի քաղաքացի – Հավայան կղզիները՝ ողջ կղզիախումբը՝ բոլոր ութ կղզիները, պատկանում են մեզ: Սպիտակամորթ նորաբնակները գաղութացրել են մեզ 1778 թ.-ին: 1893 թ.-ին Միացյալ Նահանգների նավատորմն իրականացրեց առաջին ռազմական հեղաշրջումը Խաղաղ օվկիանոսում՝ ընդդեմ Հավայան կղզիների միապետության: 1898 թ.-ին նրանք միացրեցին Հավայան կղզիները, իսկ 1959 թ.-ին՝ դարձրեցին այն Միացյալ Նահանգների 50-րդ նահանգը: Այս ամենն անօրինական էր: Եթե բնակչության կեսից ավելին լինեին հավայացիներ, Հավայան կղզիները կապագաղութացվեին 1945 թ.-ից հետո: Բայց ամերիկացիները սպանեցին այնքան շատ տեղաբնակների, այնքան շատ մարդկանց փոխարինեցին սպիտակամորթներով ու ասիացիներով, մինչև նրանք մեծամասնություն դարձան և հաղթեցին հանրաքվեում: Եվ սա կոչվում է ժողովրդավարություն: Նրանք գնեցին մեր հողը և զրկեցին մեզամից շատերին ապրուստից, փոխանցեցին մեզ հիվանդություններ, որոնց նկատմամբ մենք չունեինք իմունիտետ և անվանեցին դա Աստծո գործեր: Միսիոներները խլեցին երեխաներին իրենց ծնողներից և ուղարկեցին ԱՄՆ՝ սովորեցնելու նրանց անգլերեն, քրիստոնեություն և բեյսբոլ այնպես, որ նրանք կարողանային դառնալ լավ ամերիկացիներ: Նրանք խլեցին մեր մշակույթը, դարձրեցին մեզ անտուն: Մենք դարձանք ալկոհոլի, թմրանյութերի, գողության, բանտի, դժբախտ պատահարների հեշտ զոհը՝ ապրելով կարճ, դժբախտ կյանք: Նրանք անվանում են դա «Հետտրավմատիկ սթրեսային խանգարում»՝ ՀՏՍԽ:

Մենք 800.000 էինք, երբ մեզ «հայտնաբերեցին», ինչպես նրանք դա անվանում են: Վերջում մնացին միայն 8.000 զտարյուն հավայացիներ: Այսօր բնակչության մոտ 20%-ը կարող է անվանել իրեն հավայացի, սպիտակամորթները կազմում են մոտ

25%-ը: Մնացածը, գլխավորապես, ասիացիներ են, ովքեր բերվել էին որպես գյուղատնտեսության աշխատողներ, դաժանորեն շահագործվողներ: Ամերիկացիներն օգտագործեցին ասիացիներին՝ մշակելու մեր հողը՝ իրենց համար: Նորաբնակներն օգտագործեցին հողը՝ որպես պլանտացիաների, միայն Մեքսիկայի նկատմամբ մրցակցությունից դուրս լինելու համար: Մենք հարստացանք, բայց հողը մերն է: Մենք ցանկանում ենք այն ետ ստանալ և կվերաբերվենք այնտեղ ներկայումս ապրողներին ավելի լավ, քան ժամանակին իրենք են վերաբերվել մեզ:

Հավայան կղզիների սպիտակամորթ քաղաքացի – Դե, դե, դե: Եթե մենք չգայինք, դուք դեռ արմավենիների վրա մագլցելիս կլինեիք: Լավ, մեզանից ոմանք չափազանց խանդավառ էին, բայց մեր մտադրությունները բարի էին, և այս ամենը ձեր օգտին էր: Այժմ դուք կարող եք վայելել արդյունքն ամբողջությամբ, եթե ենթարկվեք օրենքներին և քրտնաջան աշխատեք, ինչպես մենք:

Կոնֆլիկտաբան – Դասական օրինակ է: Պատմականորեն Հավայան կղզիները պատկանում են հավայացիներին, ժողովրդավարական իմաստով այն պատկանում է մեծամասնությանը, ովքեր հավայացիներ չեն, բայց հաստատվել են այնտեղ: Բնիկներն ապրում են սեփական երկրում՝ որպես երկրորդ կարգի քաղաքացիներ:

Բայց այնուհետև եկավ 1993 թ.-ի նոյեմբեր ամիսը: ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը ԱՄՆ-ի անունից ներողություն խնդրեց «բնիկ հավայացիներից՝ Հավայան կղզիների թագավորության դեմ հեղաշրջում կատարելու համար» (Հանրային իրավունք, 103-150): Լավ է: Հավայացիները ուղղեցին իրենց իրանները: Բայց վտանգը այն է, որ սրան կհետևի ԱՄՆ-ի «ազգն ազգի մեջ» գաղափարը, որը քաջ հայտնի է ամերիկյան հնդկացիների դեպքից՝ հարավաֆրիկյան ապարտեիդ ու մղձավանջ: Ներողությունը, որոշ հավայացիներին վերադարձված հողը և փոխհատուցումը բավական չեն: Իսկ միգրանտները չեն կարող պարզապես դուրս մեծվել՝ նրանցից շատերն ապրել են այդ հողի վրա սերնդից սերունդ:

Բացասական գերազանցումը՝ կղզիախումբն ուրիշներին տալը, անիմաստ է: Մնում են փոխզիջումն ու դրական գերազանցումը:

Բաժանել կղզիախումբը երկու մասի՝: «Պետությունն պետության մեջ»: Դա անհնարին չէ, բայց կողմերն ապրում են միմյանց հետ, և յուրաքանչյուրը ցանկանում է մուտք դեպի ամբողջական դրախտը: Մի՞թե հավայացիները՝ «փոքրամասնությունը», համաձայն այդ ամոթալի ժողովրդավարական տեսության, պետք է ապրեն մեծամասնության ողորմածությամբ սեփական երկրի մի մասում: Նրանք բոլորը միասին պետք է տիրեն երկրին, բայց հավայացիներին պիտի ավելի շատ իշխանություն տրվի, քան կա ներկայումս:

Երկու խնդիրներ պետք է լուծվեն. հարաբերությունը ԱՄՆ-ի հետ, և հավայացիների ու Հավայան կղզիների ներսում ուրիշներին հետ հարաբերությունը:

Եթե 1893 թ.-ի պետական հեղաշրջումն ու 1898 թ.-ի միացումն անօրինական էին, ապա արտաքին անվտանգության, ֆինանսական քաղաքականություններում ինքնավարության ձեռքերումը վատ լուծում չէ: Հետաքրքիր մոդել է Հոնկոնգը Չինաստանի հետ հարաբերություններում. դա ո՛չ դասական անկախություն է, ո՛չ էլ դաշնություն, այլ ավելի շուտ համադաշնություն է ԱՄՆ-ի և Պոլինեզիայի մնացած մասի՝ Ռապա Նուիի (Ջատկի կղզի), Թաիթիի, Սամուայի, Աոթեառուայի (Նոր Ջեֆանդիա) հետ: Մասնակի լուծում, որ պարունակում է առավելություններ բոլորի համար: Կարելի է հրավիրել երկու պալատներով օրենսդիր ժողով. ժողովըրդավարական պալատը՝ բոլոր քաղաքացիների համար, իսկ պատմականը՝ հավայացիների: Միևնույն ժամանակ, տեղաբնակներին տալ ինքնորոշման հնարավորություն և վետոյի իրավունք այն ամենի շուրջ, ինչ վերաբերում է հավայան մշակույթին: Նրանք կարող են նաև ետ նվաճել Հավայան կղզիների մեծ մասը՝ որպես «սուրբ վայրեր»՝ ի հիշատակ անցյալի տրավմաների ու հաղթանակների: Հիմնական կանոնը կարող էր դառնալ խորին

հարգանքը հավայան մշակույթի նկատմամբ: Որպես պետական լեզու՝ հավասարապես կարող էին ճանաչվել անգլերենն ու հավայերենը:

Այն, որ ոչ հավայացիները պետք է ընդունեն Հավայան կղզիների մշակութային այնպիսի հիմնական ասպեկտներն, ինչպիսիք են բնության և այլ ազգերի նկատմամբ հարգանքը, ակնհայտ է: Շատերը հենց այդպես էլ վարվում են: Նման կերպ կառուցված երկիրը կարող է մարդկանց հիմնարար պահանջմունքներին կողմնորոշված ուժեղ ֆինանսական տնտեսություն ստեղծել, կարող է նաև կառուցել անվտանգություն՝ հիմնված բոլորի հետ լավ հարաբերություններ ունենալու վրա, լուծարել բանակն ու բազմաթիվ ռազմակայաններ տրամադրել ՄԱԿ-ի զորքերին:

ԿՈԼՈՒՄԲԻԱ. ԿԱՌՈՒՑԵՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոլումբիայի հասարակության ստորին 70%-ը սևամորթ են – Մեր աշխատանքը բավարար չէ ապահովելու մեր հիմնարար պահանջմունքները, որոնք ամեն օր աստիճանաբար քայքայվում են: Հողի վրա՝ հողամասով կամ առանց հողամասի, քաղաքներում՝ խղճուկ աշխատանքով կամ առանց դրա, կյանքը կարճ է՝ լի չքավորությամբ, հիվանդությամբ, բռնությամբ: Մենք միայն ցանկանում ենք արժանապատիվ ու անվտանգ կյանք: Եթե իմ ընտանիքը պաշտպանելու միակ ճանապարհն անցնում է թմրանյութերի մշակման և վաճառքի միջով՝ ԱՄՆ-ի *գրինգոներ*ի հսկայական պահանջարկը բավարարելու համար, կամ հարուստներից մի փոքր գողություն անելու միջով, կամ էլ բռնի հեղափոխության միջով, ապա ես երեքին էլ պատրաստ եմ:

Կոլումբացի հասարակության վերին 30%-ը սպիտակամորթ են – Մեր կյանքն անընդհատ բռնության վտանգի տակ է, և այդ սպառնալիքն ավելանում է ամեն օր: Մեր երկիրը դարձել է

թմրամյութերի արտադրման և բաշխման կենտրոն: Գողությունը կամ փրկագին ստանալու համար պատանդներ վերցնելը սովորական, օրակարգային երևույթներ են դարձել: Նույնիսկ սպանությունները 100%-ն անպատժելիությամբ են ի կատար ածվում: Ոստիկանությունը և դատարանները դադարել են գործառնել: Եթե դեպի անվտանգություն ճանապարհն անցնում է բռնության միջով՝ ռազմական կամ կիսառազմական, ԱՄՆ-ի օգնությամբ և վատագույն դեպքում՝ ԱՄՆ-ի և որոշ դաշնակիցների կողմից ուղղակի ռազմական ներխուժմամբ, ապա մենք պատրաստ ենք դրան:

Կոնֆլիկտաբան – Կոլումբիան հասարակություն է՝ դասակարգային և ռասայական սուր հակասություններով: Այստեղ փոխակերպում է անհրաժեշտ: Լսենք Կոլումբիայի վեց փորձագետների ձայները: Նրանցից յուրաքանչյուրն իր ախտորոշումն ունի:

Ա – Ծայրահեղ դեպքում *«poderes fácticos»-ի (latifundistas, militares cleros)*¹ ուժը խիստ հիերարխիկ է ու շահագործող: Եթե դուք պատկանում եք արհմիության, հողատերը դուրս կնետի ձեզ, զինվորականը կսպանի, իսկ հոգևորականը ձեր հոգին կուղարկի դժոխք: Արդյունքն ակնհայտ է՝ բռնություն ներքևից (պարտիզաններ, ԿՅՁՈՒ/ԱԱԲ) և պատասխան բռնություն վերևից (*կիսառազմականներ*). քաղաքացիական պատերազմ:

Բ – 19-րդ դարի օրակարգերն իրագործող երկկուսակցական համակարգ՝ անընդունակ կլանելու հանրային տարածության և քաղաքական բանավեճի մեջ սոցիալական ժողովրդավարությունը, գրինիզմը, կոմունիզմը (պարտիզաններ) և ֆաշիզմը (*կիսառազմականներ*):

Գ – 1948 թ.-ի ապրիլի 9-ին արհմիության առաջնորդ Գաիթանի

¹ *poderes fácticos (latifundistas, militares cleros)* (իսպ.) - փաստացի իշխանություն (խոշոր հողատերեր, զինվորական հոգևորականություն) (թարգ., *մշումը թարգմանչի*)

սպանությունից հետո քաղաքացիական պատերազմ (*la violencia*¹) մոլեգնեց: Սպանվեցին մի շարք ընդդիմադիր-ներին ընտրողներ: Հանցագործներն անպատիժ մնացին:

- Դ – Թմրանյութերի ապօրինի շրջանառության մեջ Կոլումբիան հանդես է գալիս որպես մատակարար, շահույթը բաշխը-վում է մի քանի առանցքային իշխանավորների մեջ:
- Ե – Հանրային տարածությունն այլասերվել ու վերաճել է ա-նարխիկ մարտադաշտի: Ա-Դ կետերում արդեն նկարագըր-վեցին կոռումպացված խմբերը: Անոմիայի ծայրահեղ դեպք՝ հանրային տարածությունում վարքագիծը կարգա-վորող սոցիալական նորմերի, արժեքների, մշակույթի քայ-քայում, անպատիժ իրականացվող սպանություններ: Եվ *ատոմիայի* ծայրահեղ դեպք՝ սոցիալական կարգի, կա-ռուցվածքի, հասարակական տարածության քայքայում՝ ֆրագմենտացիայով և ատոմիզացիայով: Այս պայմանները բավական հարմար են բռնության, կոռուպցիայի, աղանդ-ների ձևավորման, թմրանյութերի վաճառքի համար, որոն-ցում մենք հանդես ենք գալիս որպես արտադրողներ, բաշ-խողներ և սպառողներ ԱՄՆ-ում: Կարճ ասած, բացարձակ սոցիալական ճգնաժամ: Սա այլևս կենսունակ հասարա-կություն չէ:
- Զ – Այս ամենից զատ ԱՄՆ-ի ներխուժման վտանգն է աճում՝ օգտագործելով Դ-ն, որպես Ա-ն կասեցնելու պատրվակ, մինչև կոլումբիական կառավարությունը կարողանա կա-տարել աշխատանքն իրենց փոխարեն, և միայն եթե այլ լատինամերիկյան երկրներ ևս մասնակցեն: ԱՄՆ-ը չի ցան-կանում միակողմանիորեն գործել:

Կոնֆլիկտաբան – Փորձագետներ, սա ախտորոշումն էր: Կա-րո՞ղ եք բուժումներ առաջարկել:

¹ *la violencia* (իսպ.) - բռնություն (թարգ., *մշումը թարգմանիչի*)

- Ա – Կառավարությունների և պարտիզանների միջև պակտային պարադիգմը ենթադրում է, որ համախմբված մշակույթները կհարգեն խոստումը, իսկ համախմբված կառուցվածքները պարտադիր են մյուսների համար: Անոմիայի և ատոմիայի պայմաններում սա այդ դեպքը չէ: Բացի այդ գոյություն ունի մաս պակտը որպես նպատակ, ոչ թե որպես միջոց դիտարկելու գալթակողությունը: Գլխավոր կետ. եկեք ծեռք բերենք ավելի շատ փաստեր և ավելի քիչ պակտեր: Մեզ անհրաժեշտ է պակասացնել հավատը պակտերի նկատմամբ:
- Բ – Բազմակուսակցական քաղաքական պարադիգմին կարելի է հակազդել՝ դարձնելով ընտրություններն ավելի ծիսական, իսկ խորհրդարանը՝ պակաս ակտուալ:
- Գ – Իրավական պարադիգմը՝ օժտված ոստիկանական և պատժողական ֆունկցիաներով, ենթադրում է համախմբված մշակութային կառուցվածքներ հասարակական տարածությունում, սակայն դրանք պարզապես գոյություն չունեն:
- Դ – Թմրանյութերի դեմ պատերազմի պարադիգմն իմաստալից է միայն այն դեպքում, երբ ողջ տնտեսական ցիկլը՝ պահանջարկի խորքային պատճառներով, արդյունավետ դիմադրում է ԱՄՆ-ի նման սպառող երկրների անոմիային և ատոմիային, ինչպես մաս այնպիսի գործոններին, ինչպիսիք են քիմիական նյութերն ու օդային տրանսպորտը: Խնդիրներից մեկն այն է, թե ինչպես է հնարավոր գտնել ֆինանսական փոխարինող միջոցներ խաղաղությունը շահութաբեր դարձնելու համար: Արտադրող երկրների կողմից թմրանյութերի պահանջարկի նվազեցմանն ուղղված Միացյալ Նահանգների ջանքերի վավերացում:
- Ե – Հասարակական տարածությունն արդյունավետորեն և ազնվորեն գործող ինստիտուտներով ապահովելու համար նախատեսված ինստիտուցիոնալ պարադիգմը չեզոքաց-

վում է անոմիայի ու ատոմիայի և խիստ կասկածելի ոստիկանության ու զինվորականների կողմից:

- Զ – *Պլանային Կոլումբիա* պարադիգմը, խնդիրն ԱՄՆ-ին և ԱՊԿ-ին հանձնելով, կարող է հանգեցնել երկարաժամկետ կախվածության ու գաղութացման:

Կոնֆլիկտաբան – Երկու եզրակացություն այս կլոր սեղան քննարկումից. դուք ինքներդ չեք հավատում արված առաջարկներին: Հաճախակի նշում եք հիմքում ընկած երկու գործոնների՝ *ատոմիայի* և *անոմիայի* մասին: Հիմնական խնդիրն այն է, թե ինչպես կառուցել հասարակություն: Բայց դա անելու համար դուք պետք է քրտնաջան աշխատեք.

- *Անոմիայի դեմ* – ստեղծել կամ վերստեղծել նորմերի և արժեքների ազդեցիկության զգացում. սա շատ դժվար խնդիր է եկեղեցու, մասնավորապես, երիտասարդ քահանաների և դպրոցի ու ընտանիքի՝ որպես հասարակության մեջ սոցիալականացման հիմնական գործակալների համար: Սա հասարակական տարածության մեջ երթևեկության կանոնների ստեղծման կամ վերստեղծման հարց է: Ընդ որում՝ պետք է սկսել այնպիսի նորմերից, ինչպիսիք են «Մի՛ սպանիր» և «Մի՛ գողացիր», այնուհետև պետք է սերմանել աղքատների հետ համերաշխության արժեքներ, հաղթահարել եսասիրական, նյութապաշտական, անհատապաշտական արժեքները: Բարոյական, սոցիալական և համաշխարհային առաջնորդությունը խիստ անհրաժեշտ են:
- *Ատոմիայի դեմ* – հասարակական տարածության մեջ ստեղծել կամ վերստեղծել սոցիալական կարգը, հյուսել տարբեր տեսակի ՀԿ-ների խաչաձև, խիտ ցանց՝ բազմաթիվ անդամակցություններով՝ չմոռանալով ազգականներին, ընկերներին, աշխատանքային և պաշտամունքային խմբերը, որոնք կարող են խողովակներ լինել համերաշխության նորմերի տարածման համար:

Այնուհետև.

1. Բարձրացնել սոցիալական բոլոր մակարդակներում կոնֆլիկտների կառավարման ընդունակությունը: Տարիների մեջ ձևավորված կոնֆլիկտային անգրագիտության դեմ պայքարելու համար օգտագործել ամենշաբաթյա եկեղեցին, դպրոցը և հեռուստատեսային դասընթացները:

2. Լիազորել կանանց և երիտասարդներին հանդես գալու որպես կոնֆլիկտաբաններ ու խաղաղարարներ՝ վերապատրաստելով նրանց որպես միջնորդների:

3. Դպրոցների կրթական ծրագրերում ներմուծել խաղաղության ու կոնֆլիկտաբանության մասին առարկաներ, որոնցում ներառված կլինեն ոչ բռնի և ստեղծագործական ճանապարհով կոնֆլիկտների հաղթահարման 50-100 օրինակներ՝ որպես կողմնորոշիչներ ողջ կյանքի ընթացքում:

4. Ներմուծել խաղաղության լրագրություն հասկացությունը լրատվամիջոցներ՝ դրդելով լրագրողներին կենտրոնանալ ավելի շատ խորքային կոնֆլիկտների և հնարավոր ելքերի ու գործընթացների վրա, և ավելի քիչ՝ բռնի մետակոնֆլիկտի ու այն բանի վրա, թե ով է հաղթում:

5. Կառուցել զինաթափված խաղաղության գոտիներ՝ հիմնված տեղական ինքնակառավարման մարմինների համադաշնությունների և վերոնշյալ կետերի վրա:

6. Միջազգային խաղաղապահության համար հարևան երկրների օգնությամբ կիրառել Սուն Թզու ուսմունքը, ոչ թե Կլաուզերվիթցը: Կիրառել ոստիկանական մեթոդներ, խթանել միջնորդություններն ու բացառել բռնությունը: Հնարավորություն տալ կանանց ավելի շատ զբաղվելու խաղաղապահական գործունեությամբ: Մերժել ԱՄՆ-ի ցանկացած ներխուժում:

7. *Ճշմարտության և հաշտության* հանձնաժողովներ ստեղծել՝ կիրառելով դատարանները, եկեղեցին, հոգեբանությունը, հեռուստատեսությունը:

8. Վարել բիզնես ժամանակակից գծերով աշխատողների/արտադրողների համար շատ ավելի մեծ շահույթներով՝ խաղից դուրս հանելով առևտրական միջնորդներին:

9. Հիմնադրել սպառողական տնտեսություններ՝ միկրո վարկերով, համապատասխան տեխնոլոգիայով, համատեղ ընկերություններով:

10. Քայքայել կոլումբիական մշակույթում առկա պաթոլոգիաները, ինչպիսիք են առնականությունը և ճակատային բռնության պաշտամունքը:

11. Ստեղծել ներքին անվտանգության ավելի բարձր մակարդակ՝ վերոնշյալ բոլոր խնդիրների համար ոստիկանությանը և զինվորականներին վերապատրաստելու միջոցով:

12. Կիրառել մարդու իրավունքները, այդ թվում նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները՝ որպես բարոյական ուղեցույցներ դողդոջուն ժողովրդավարության համար:

Այս ամենը պետք է իրականացվի զուգահեռ, միաժամանակ, ոչ թե հաջորդաբար՝ ստեղծելու համար մի հասարակություն, որտեղ այս խորը դասակարգային կոնֆլիկտը կարող է գերազանցվել:

ՌՈՒԱՆԴԱՆ ԵՎ ՄԵԾ ԼՃԵՐԸ. ԵՐԿՕՎԿԻԱՆՈՍ ՀԱՄԱՂԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ գործոններ կան 1994 թ.-ի ցեղասպանության հետևում: Դրանց մեծ մասը Ռուանդայի սահմաններից դուրս է: «Թութսի» կամ «հուբու», ինչպես նաև «չափավոր հուբու» պիտակները մատնանշում են ռասան, դասակարգը և մարդկանց, ովքեր վախենում են կորցնել իշխանությունն ու շահույթը: Որոշ արմատներ գտնվում են գերմանական գաղութատիրության և

*Rassenkunde*¹-ի («ռասայագիտություն») սահմաններում՝ հոգուտ թութսիների՝ Յութութների նկատմամբ և երկուսի, որպես ավելի բարձրահասակների՝ «գաճաճների» նկատմամբ: Գերմանացի գաղութարարների բելգիական ժառանգորդներն Առաջին համաշխարհային պատերազմից հետո նախապատվություն տվեցին Յութութ մեծամասնությանը՝ «հաշվելով ավել սանտիմետրերը», որովհետև ժողովրդավարությունը «դրանում» էր: Գաղութատիրությունից հետո վրա հասավ տնտեսական նեոգաղութատիրությունը, և Արևմուտքը հույսը դրեց հութութների վրա՝ վախճնալով կորցնել Ջաիրը կամ Կոնգոն:

Կոնֆլիկտի մյուս կողմն անգլոֆրանսիական եվրոպական տոհմական թշնամության պրոեկցիան է Աֆրիկայում լեզվաբանական, մշակութային և տնտեսական ազդեցության վրա: Ուգանդայի/Թութսի/Քաբիլա անգլոֆիլները հակադրվում են Յութութ/Մութութ ֆրանկոֆիլներին՝ արևմտյան լրատվամիջոցների հետ, որոնք ավանդաբար վերահսկվում են ֆրանսիացիների կողմից որպես «ոլորտի մասնագետներ»: Բայց աղետները միտված են նպաստել անգլերենի տարածմանը, որովհետև աղետների մեծ մասը կառավարվում են ՄԱԿ-ի կողմից հենց անգլերենով: Ֆրանսիական և հռոմեական իրավունքը, կարծես թե, ազդեցությունը կորցնում է, իսկ անգլիական/ընդհանուր իրավունքը՝ մղվում դեպի արևմուտք:

Երրորդ ասպեկտը զարգացմանն ուղղված աջակցության և, մասնավորապես, շվեյցարական աջակցության խաղացած դերն է: Զարգացման գործակալությունները ցանկանում են հաջողություններ և հակված են խաղալ հասարակության գերիշխող խմբերի վրա՝ այդպիսով ամրապնդելով դասակարգային հարաբերությունները, որոնք կարող են լինել պայթյունավտանգ: Անապահով խավը չի տեսնում այլընտրանք միգրացիայի, իսկ այնուհետև ներխուժման նկատմամբ, արտոնյալ խավն էլ չի տեսնում այլընտրանք ավելի ցածր դիրքում գտնվողների դեմ նախազգուշա-

¹ *Rassenkunde* (գերմ.) - Ռասայական տեսություն (թարգ., մշումը թարգմանիչի)

կան բռնության նկատմամբ: Արդյունքը՝ միգրացիա, ցեղասպանություն և ներխուժում:

Եթե ցեղասպանություն առաջացնող պայմանները գտնվում են ռուսաճական հասարակության կառուցվածքում և բռնության մշակություն, ուրեմն դրանք պետք է փոխվեն: Բայց տրիբունալները տեղավորում են պայմանները չարական դերակատարների մեջ, և հեռացնում նրանց մահապատժի կամ բանտարկության միջոցով: Միևնույն պայմանները կառաջացնեն միևնույն արդյունքը՝ միայն տարբեր անձնակազմով:

Եթե մենք դիտարկենք սա որպես երկու խմբերի միջև կոնֆլիկտ, ապա հիմզ ելքերը պարզ են, բայց ոչ հուսադրող:

1. Ողջ իշխանությունը հուժկուններին՝ այն, ինչ նրանք ունենին,

2. Ողջ իշխանությունը թուփսիններին՝ այն, ինչ նրանք այժմ ունեն,

3. Թողնել ամեն ինչ միջազգային կամ աֆրիկյան կառավարմանը,

4. Փոխզիջում, ընտրություններ՝ տատանում (1)-ի և (2)-րդի միջև,

5. Խրախուսել ընդհանուր ռուսաճակի անձնավորության առաջացմանը:

Վերջին երկուսը լավ տեսք ունեն թղթի վրա: Բայց (5)-րդը ուտոպիա է, իսկ (4)-րդը նշանակում է կուսակցական համակարգի կառուցում ազգային ինքնության հիման վրա, որը կարող էր սառեցնել իրավիճակը: (1)-ինը և (2)-րդը արտոնություն են տալիս մի խմբին մյուսի նկատմամբ: Մեզ մնում է գտնել ինչ-որ բացասական գերազանցում:

Կոնֆլիկտաբան – Մեկնակետերից մեկը կարող էր լինել որևէ տևական ելքի հնարավորությունը կասկածի տակ դնելը Ռուսոդայի նեղ սահմաններում՝ պնդմամբ, թե չափազանց շատ է ատելությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա:

Այնպես որ, Ռուսոդայի համար լուծումը կարող էր լինել Ռուսոդայից դուրս:

Հնարավոր մոտեցումներից մեկը կարող էր լինել *երկօվկիանոս համադաշնությունը* Յնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս՝ ներառյալ Ուգանդան և Տանզանիան, Ռուանդան և Բուրունդին, երկու Կոնգոները, ու, գուցե, մաս ալ երկրներ: Այդ համադաշնությունը կարող էր առևտուր անել արևելքից արևմուտք ու հյուսիսից հարավ: Կլիմեին բաց սահմաններ մարդկանց և գաղափարների, ապրանքների և ծառայությունների համար՝ չսահմանափակելով մարդկանց շատ սահմանափակ տարածքում թշնամության ավանդույթով: Ճապոնիան, Աֆրիկայի համար խոշոր ծրագրերով, կարող է ներդրում անել Արևելք-Արևմուտք երկաթուղային/ճանապարհային ենթակառուցվածքում և ծառայություններում: Նոր ջանքեր կարող են գործադրվել՝ շահագործելով երկօվկիանոսային հնարավորությունները, ինչպես Հարավային Աֆրիկայի հանրապետությունն է հմտորեն անում:

Օգտակար կլինեն մաս, եթե ոչ միայն ՄԱԿ-ը, այլև Գերմանիան, Բելգիան, Ֆրանսիան, Շվեյցարիան և ԱՄՆ-ը կարողանային ընդունել իրենց պատասխանատվությունը ցեղասպանության համար՝ նպաստելով հաշտությանը՝ վերցնելով այդ հսկայական բեռի մի մասը տեղացիների ուսերից: Բեռը չափազանց մեծ է նման փոքր երկրի համար: Ավելի լավ է ներգրավել այլ երկրներ, բացահայտել պատճառները, իրականացնել խաղաղության մշակույթում խոշոր ծրագրեր, ստեղծել նոր աշխարհաքաղաքական իրականություն, հաշտեցնել՝ համախմբելով բոլոր ուժերին խաղաղության գաղափարի շուրջ: Նոր ապագան է կարևոր, բայց անցյալը նույնպես պետք է վերհանել: Տրիբունալն անընդունակ է միայնակ այդ ամենն անելու:

ՕԼՍԹԵՐ. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկսենք երեք պնդումներով և երեք հստակ նպատակներով, որոնք որոշակի ազատությամբ վերարտադրվել էին 1997 թ. օգոստոսին Դուբլինից դուրս կազմակերպված լսումների ժամանակ:

Բողոքական` Դյուսիսային Իռլանդիա – Ես սիրում եմ Անգլիան: Ես սիրում եմ ռացիոնալություն, հստակ վերլուծություն, չեմ սիրում կաշուն, լացակումած բառեր, երգեր, երաժշտություն: Ես սիրում եմ անգլիական բազմազանությունը, բանավեճը, լարվածությունը: Ատում եմ Զոռնեական եկեղեցու միապաղաղությունը, որտեղ հավատը, միտքը և խոսքը միանույնն են: Եթե նրանք ձեռք բերեին իշխանություն, արդյունքը կլիներ բռնապետությունը, ռացիոնալության, բազմազանության վերջը: Ես երբեք չէի տանի իմ երեխաներին նրանց դպրոցները: Եվ նրանք օգտագործում են բոլոր մեթոդներն իրենց նպատակներին հասնելու համար: Նրանք վտանգավոր են: Այդ պատճառով մեզ անհրաժեշտ է զենք` մեզ պաշտպանելու համար:

*Կաթոլիկ` Դյուսիսային Իռլանդիա* – Ես սիրում եմ Իռլանդիան: Ես սիրում եմ մարդկանց, ովքեր չեն վախենում արտահայտել իրենց զգացմունքները պոեզիայի, երաժշտության մեջ, երգերում, ովքեր սառնարյուն չեն կամ գոնե չեն ներկայացնում իրենց սառնությունը որպես «ռացիոնալություն», իսկ իրենց միջև եղած շատ փոքր տարբերությունները` որպես «բազմազանություն»: Ես չեմ ցանկանում, որ իմ երեխաները հաճախեն նրանց դպրոցները: Նրանք ունեն իշխանություն, կազմում են ոստիկանության 93%-ը, տեղակայել են բրիտանական բանակ մեր երկրում, ունեն իրենց կիսառազմական ուժերը, նրանց հետևում անգլիական գաղութատիրությունն է: Նրանք վտանգավոր են: Այդ պատճառով մեզ անհրաժեշտ է զենք` մեզ պաշտպանելու համար:

Ձուսպ «օլսթերցի» – Ես սիրում եմ Օլսթերը: Բողոքական, թե կաթոլիկ՝ սա մեր հողն է: Արմատականները սաղիստներ են, որ պատժում են նրանց, ովքեր այլևս չեն ցանկանում միանալ նրանց խելագարությանը՝ պատժելով ծնկներին կրակելու միջոցով: Ես նրանցից մեկն էի, կարևոր չէ, թե որ կողմում: Այժմ ես գիտեմ, որ այստեղ ծնված յուրաքանչյուր ոք ունի այստեղ ապրելու հավասար իրավունք: Եկեք համախմբվենք՝ կառուցելու նոր, նույնիսկ ավելի անկախ Օլսթեր՝ ուելսցիների և շոտլանդացիների հետ միասին:

Լրատվամիջոցների հիմնական սխալն այն է, որ կոնֆլիկտի ձևավորումը (կողմեր, նպատակներ, հակասություններ) հանգեցվում է կոնֆլիկտի աշխարհագրական տարածքին, որտեղ կա ատելություն և բռնություն՝ Բելֆասթի Շենքիլ Րոդի (բողոքական) և Ֆոլս Րոդի (կաթոլիկ) երկայնքով: Հակասությունները հանգեցվում են կրոնի, իսկ կողմերը՝ 2-ի, որը չափազանց պարզ թիվ է աշխատելու համար: Իհարկե, դասակարգն անհետանում է: Նրանք վախենում են կորցնել իրենց կրոնական ինքնությունը Օլսթերի, Միացյալ Թագավորության բողոքական մեծամասնության և Միացյալ Իռլանդիայի կաթոլիկ մեծամասնության օվկիանոսում: Լոնդոնի նպատակն ու դերն անտեսանելի են, բայց քաջ հայտնի են երկու խմբերի նպատակները. բողոքականների համար՝ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը և Հյուսիսային Իռլանդիան (*յունիոնիստներ*), կաթոլիկների (*հանրապետականներ*) համար՝ հարավում 26 և հյուսիսում 6 երկրամասերով Միացյալ Իռլանդական Հանրապետությունը՝ $26 + 6 = 1$: Այս ճանապարհով ավանդական լրատվամիջոցներին հաջողվում է քողարկել հնարավոր լուծումները:

Լոնդոնի համար Իռլանդիան առաջին գաղութն էր, իսկ Հյուսիսային Իռլանդիան, հավանաբար, կդառնա վերջինը: Կորուստը ոճանց համար տրավմատիկ կլինի: Այնուհետև հարկ է հիշել նաև *Դուբլինը*, որտեղ այժմ թաքնված է միացյալ Իռլանդիայի հին երազանքը: Գոյություն ունի նաև *իռլանդական սփյուռքը*

ԱՄՆ-ում, դա նույնպես կարևոր է, որովհետև կարևոր են ԱՄՆ-ը: Կոնֆլիկտի մի խոշոր կողմ անտեսամեղի է դառնում. խոսքը *չափավոր մեծամասնության մասին* է՝ հնարավոր է Օլսթերի 85%-ի մասին, որ կարող է երրորդ հնարավորությունը դառնալ գերազանցման համար, բայց անհրազեկ լրագրողները սրանով չեն հետաքրքրվում, նրանք ստանում են իրենց անհրաժեշտ ինֆորմացիան բռնարարքների մասին պատմություններից:

Երկու ծայրահեղ դավաճաբանական դիրքերն էլ անտեղի են: Մարդիկ հոգնել են բռնությունից: Նրանք փնտրում են համակցություններ խաղաղության անկյունագծի երկայնքով և ցանկանում են ոչ թե գաղտնի գործարքներ փակ դռների հետևում, այլ բռնության նվազեցում բաց, ազնիվ համաձայնությունների արդյունքում:

«ԹՐԱՆՍԵՆԴ»-ի կողմից մշակված ներքոգրյալ առաջարկը, որ միացնում է խաղաղության անկյունագծի կետերը, ներկայացվեց 1997 թ.-ի օգոստոսին Դուբլինի մոտակայքում գտնվող Գլենքրիի կենտրոնում և 1998 թ.-ի մարտին Համայքների պալատի համծնաժողովի սենյակում՝ որպես ուղղորդող սկզբունքներ խաղաղ ելքի համար.

1. Անցումային անգլոիռլանդական համատեղ կառավարումը փոխարինում է Հյուսիսային Իռլանդիայի ներկա կարգավիճակին՝ X տարիներ անց Օլսթերի շատ բարձր մակարդակի ինքնավարության կամ անկախության նպատակով: Ո՛չ «Միացյալ Թագավորություն», ո՛չ էլ «Հյուսիսային Իռլանդիա». ինքնավարության փոխանցում:

2. Վեց երկրամասերը կկազմեն Օլսթերը՝ որպես ինքնուրույն կազմավորում: Իրականում ինը երկրամասերից վեցը կլինեն Օլսթերում, իսկ երեքը՝ Իռլանդիայի Հանրապետության կազմում՝ առանց ներքին սահմանների: Այս երեքն անցումային ժամանակաշրջանում կարող էին դիտարկվել որպես թե՛ Անգլիայի, թե՛ Իռլանդիայի տարածք: Ցանկացած բնակիչ կարող էր ընտրել բրիտանական կամ իռլանդական անձնագիր: Քվեար-

կությունը և որոշ այլ իրավունքներ Բրիտանիայում կամ Իռլանդիայում կհամապատասխանեցվեն անձնագրերին՝ չբացառելով քվեարկությունը և մյուս իրավունքներն Օլսթերում:

3. Օլսթերցիների ինքնակառավարման իրավունքը պետք է ճանաչվի: «Օլսթերցի» կարող է լինել նա, ով իրեն օլսթերցի է համարում՝ անկախ գեներից, մշակութային ավանդույթներից կամ բնակության տեղությունից: Հիմնարար պետք է լինի հարգանքը Օլսթերի բնակիչների հայրենիքի զգացողության նկատմամբ:

4. Խորհրդարանը՝ Սթորմոնթը, արդեն գոյություն ունի Օլսթերի ինքնուրույն կազմավորման համար՝ խորհրդարանին հաշվետու կառավարությամբ. ոչ կրոնական կուսակցությունները պետք է աստիճանաբար իշխող դեր ստանան:

5. Բողոքական ու կաթոլիկ համայնքների կողմից կարող է ընտրվել երկու վեհաժողով՝ իրենց տոհմական կալվածքների ու տեղական ոստիկանության և դատարանների հետ կապված հարցերում վետոյի իրավունքով:

6. Կարող է ստեղծվել նաև հինգ անդամներից կազմված Կառավարող Խորհուրդ, որտեղ տեղի կունենան մեկական ներկայացուցիչներ Լոնդոնից, Դուբլինից, Բողոքական համայնքից և Օլսթերի խորհրդարանից, որպեսզի հնարավոր լինի ուղղորդելու անընդհատ աճող ինքնավարությունը:

7. Այնուհետև Օլսթերն աստիճանաբար ձեռք կբերի միջազգային ինքնություն:

Ա. Օլսթերական անձնագիրը կճանաչվի նախ Բրիտանական Կղզիներում և Եվրոպական միությունում, այնուհետև՝ ամբողջ աշխարհում՝ ի լրումն բրիտանական կամ Իռլանդական (ԵՄ) անձնագրերի: Այնպես որ, յուրաքանչյուր օլսթերցի երկու անձնագիր ունենալու իրավունք կունենա, բայց կկարողանա ընտրել միայն մեկը:

Բ. Բրիտանական ֆունտերն ու իռլանդական եվրոները ողջունելի կլինեն ամենուրեք:

Գ. Եվրոն կարող է ունենալ նույն արժեքով տեղական տարբերակ (օլսթերակա՞ն): Տեղական տնտեսությունը խթանելու համար օլսթերական արժույթով գործարքների համար զեղչեր կնախտեսվեն: Կխրախուսվեն ներդրումները բարձր տեխնոլոգիաների ոլորտներում և ծառայություններում:

Դ. Օլսթերի բյուջեն հիմնված կլինի եկամտի (հարկեր՝ ԱԱՀ) լրացուցիչ աղբյուրների վրա, ինչպես ԵՄ պետության համար՝ ԵՄ սուբսիդավորմամբ, համայնքների միջև բաշխման մոնիտորինգով:

Ե. Հատուկ պայմանագրերը կկարգավորեն Լոնդոնի և Դուբլինի միջև հարաբերությունները, որոնք կիրականացվեն Կառավարող խորհրդի կողմից՝ ստուգում երաշխավորող վերապահումներով ամեն Y տարին մեկ ($Y = X = 25^\circ$):

Զ. Ինքնուրույն կազմավորումը կապառազմականացվի և կիրառարվի առանձին բանակ ունենալու իրավունքից: Նրա անվտանգությունը համատեղ ջանքերով կերաշխավորեն Բրիտանիան և Իռլանդիան՝ ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ:

Է. Բրիտանական բանակը դուրս կբերվի, ոստիկանական ուժերը կապակրոնականացվեն, ԻՀԲ-ն կամ ՕՊՈՒ-ն կգինաթափվեն երկկողմանիորեն:

Ը. Ինքնուրույն կազմավորումը կստանա դիտորդի կարգավիճակ Եվրոպական Միությունում, այլ Եվրոպական Կազմակերպություններում և ՄԱԿ-ում:

Թ. Եվրոպական Միության, այլ Եվրոպական կազմակերպությունների և ՄԱԿ-ի աջակցությունը կարող է նպաստել խաղաղ առաջընթացին:

Ժ. Չպետք է բացառել անկախությունը, եթե երկու համայնքներում առկա է հստակ մեծամասնություն:

Ի. Չպետք է բացառել սահմանների որոշ վերագծում՝ օգտագործելով քվեարկության գործընթացը տեղական ինքնակառա-

վարման մակարդակում՝ 1920 թ. Շլեսվիգ-Հոլշթայնում դանիական-գերմանական մոդելի նման:

Այլ կերպ ասած, գերազանցումը բացասական է՝ ո՛չ Լոնդոն, ո՛չ էլ Դուբլին: Քրտնաջան աշխատանք է պահանջվում կատարել:

Ներկայացնենք մաև որոշ ուղղորդող սկզբունքներ խաղաղ գործընթացի համար.

1. Կոնֆլիկտի լուծմանն առաջնահերթություն տալը կարող է կրճատել բռնությունը, սպառազինության կամ բռնության վերահսկողությանն առաջնահերթություն տալը կարող է խրախուսել այն: Բացի այդ, չլուծված կոնֆլիկտը կարող է խրախուսել բռնություն: Կոնֆլիկտի տեսության մեջ և պրակտիկայում գոյություն չունեն բացարձակ ճշմարտություններ, բայց սա հավանաբար շատ լավ պրակտիկ կանոն է: Բռնության վերահսկողությանն առաջնահերթություն տալու արդյունքում կողմերը կարող են խախտել ցանկացած համաձայնություն մեկ ռումբով, իսկ կանոնների կատարման նկատմամբ հսկողությունը շատ թանկ է: Ավելին, ինչո՞ւ նրանք պետք է հրաժարվեն բռնության իրենց միջոցներից, երբ տեսադաշտում չկա կոնֆլիկտի լուծում: Կողմերն անհանգստանում են մաև իրենց սեփական անվտանգության համար: Բայց լավագույն մոտեցումը բոլոր կողմերի համար ընդունելի և խելամտորեն կայուն ելքեր գտնելն է անշարժ դարձած կոնֆլիկտից, ինչից հետո բռնության կողմնակիցների թիվը կտրուկ կկրճատվի, կդառնա այնքան քիչ, որ նրանց հնարավոր կլինի վերահսկել մեղմ մեթոդներով՝ պահելով միմյանցից հեռու: Տպավորություն ստեղծեք նրանց մոտ, որ բռնության նկատմամբ վերահսկողությունն առաջնահերթություն է:

2. Թող հազարավոր երկխոսություններ կազմակերպվեն: Այն, որ միլիոնավոր մարդկանց վրա ամենաափիմնարար կերպով ազդող կոնֆլիկտի լուծումը չափազանց կարևոր է մի քանի քաղաքական գործիչներին կամ դիվանագետներին կամ պետական գործիչներին դա թողնելու համար, ակնհայտ ճշմարտություն է ժողովրդավարության մեջ: Ի վերջո, մարդկանց՝ ժողովրդավա-

րության վերջին սուվերեններին, պետք է ընձեռվի հանրաքվեի հնարավորություն: Բայց քվեարկությունը չի բացահայտում մարդկանց ստեղծագործականությունը: Ամենուրեք փոքր խմբերով երկխոսություններ կազմակերպեք, նշումներ արեք, թույլ տվեք, որ գաղափարները հոսեն Համախառն ազգային գաղափարների ավազան (ՀԱԳԱ) և սնեն որոշումների կայացման գործընթացները հոգուտ բոլորի:

3. Գործընթացում ավելի շատ տեղ տվեք զուսպ մեծամասնությանը և ավելի քիչ՝ հայտարարված հանրապետականներին և յունիոնիստներին, քանի որ առաջինները համեմատաբար փոքր բացասական բեռ են տանում անցյալից դեպի ապագա:

4. Նարմջագույն միաբանության երթերը պետք է ավարտվեն կամ հավասարակշռվեն «Կանաչ միաբանության» երթերով: Կաթոլիկները պետք է սովորեն առանց բռնության արծազանքել և հեշտությամբ չենթարկվել սադրանքների:

5. Բուժման, հաշտության, վիճաբանությունների դադարեցման կարիք կա: Հետևյալ գործողությունները կարող են օգտակար հեռանկարներ բացել.

ա. Տարբեր խմբերում՝ հասարակության բարձր կամ ցածր մակարդակներում, հանրությանը տեսանելի կամ ոչ, կարող են հանդիպել միմյանց նկատմամբ բռնություն կիրառած կողմերը: Սա եղանակներից մեկն է: Նրանք կկիսվեն իրենց փորձով և հույզերով, անհանգստություններով և վախերով: Կարող են լինել վնասների հատուցման և ներողության կամ ներման տարրեր: Բայց, նախևառաջ, մման խմբերը շահավետ կարող են անել հետևյալը.

- Համատեղ վերակառուցում. կողմերը, որոնք միասին փոխհատուցում են ինչ-որ նյութական վնաս՝ այդ ամենը շինարարական ընկերությունների վրա թողնելու փոխարեն (նրանց կարիքը նույնպես կարող է լինել), օգնում են բուժել վերքերը, վերականգնել ֆիզիկապես և հոգեպես

վիրավորներին՝ այդ ամենը մասնագետների վրա թողնելու փոխարեն,

- Համատեղ լուծում. կողմերը միասին մշակում են իրենց տարածքում կոնֆլիկտի լուծման մանրամասները,
- Համատեղ վիշտ. կողմերը միասին՝ տեղական մակարդակում կամ ամենուրեք, ժամանակ են տրամադրում՝ նշելու տեղի ունեցած ողբերգությունը որպես մտորումների ժամ կամ օր, ինչպես նաև այն, թե ինչ կարելի էր անել և ինչ դեռ պետք է անել բռնության հնարավոր կրկնությունը կանխելու համար:

բ. Անձնական վկայություններ. զոհերը, այդ թվում նաև որբացած, բազմաթիվ են, նրանց պատմությունները չպետք է մոռացվեն: Նրանց վկայությունները պետք է հավաքվեն: Դրանք կարող են ապագա սերունդներին հետ պահել նմանատիպ սխալներից:

գ. Ծննդատվության և հաշտության հանձնաժողով՝ հարավաֆրիկյան մոդելին համապատասխան:

ԷՈՒՍԿԱԴԻ¹. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց, լրագրողները և քաղաքական գործիչները շատ հաճախ սխալ են թույլ տալիս՝ կոնֆլիկտի մեջ տեսնելով ընդամենը երկու կողմ, օրինակ, երկու կողմ են տեսնում այնտեղ, որտեղ ԲՀԱ-ի ռուսների թիրախներն են և Մադրիդի արձագանքը: ԲՀԱ-ի և Մադրիդի՝ *անկախության* և *País Vasco*²-ի՝ Բասկերի երկրի համար *չնչին փոփոխություններով ստատուս-քվոյի* նպատակների միջև հակասությունն իրական է: Բայց շատերն անտեսված են. ֆրանսիացի բասկերը՝ Փարիզում, իսպանացիները՝ իսպանական *País Vasco*-ում, ֆրանսիացիները՝ ֆրանսիական

¹ Euskadi (բասկ.) - Էուսկադի, Բասկերի երկիր (*նշումը թարգմանիչի*)

² País Vasco (իսպ.) - Բասկերի երկիր (*նշումը թարգմանիչի*)

«Pays Basque»¹-ում, իսկ շատերը՝ երկու տեղում էլ (Վերջինները նրանք են, ովքեր ասում են՝ «Soy Vasca y soy española»²): Այսպիսով, մենք ունենք ութ կողմ և իրավիճակի ավելի բարդ ու ավելի ամբողջական պատկեր:

Բասկերի վաղեմի նպատակն է Միացյալ Բասկերի երկիրը՝ *Էուսկադիին*, որ պետք է ձևավորվի չորս «provincias»³ (Իսպանիայում) գումարած երեք «provinces»⁴ (Ֆրանսիայում) սկզբունքով: Փարիզը որոշակի հաջողության հասավ Յակոբինի հետ՝ կենտրոնացված կերպով կառավարելով Ֆրանսիան, ենթադրաբար առանց ազգային բաժանարար գծերի՝ ֆրանսիական հեղափոխությունից ի վեր: Ֆրանկոն փորձեց նույնն անել 1936-1975-ական թթ., բայց ավելի փոքր հաջողության հասավ: Ծայրահեղ դիրքեր են գերիշխում կոնֆլիկտում. մի կողմից լրիվ անկախությունից դուրս, մյուս կողմից «País Vasco»-ն, որպես Իսպանիայի 17 ինքնավարություններից մեկը, դիրքերը բավական հազվադեպ են: Այսպիսով, բռնությունը շարունակվում է: ԲՅԱ-ն ռումբեր է նետում: Ֆելիպե Գոնսալեսի իշխանության ներքո գտնվող ժողովրդավարական Մադրիդը և սոցիալիստները՝ գաղտնի ԱՅԽ-ի հետ սպանեցին շատ ավելի մեծ թվով մարդկանց, քան Ֆրանկոն՝ նույնքան տարիների ընթացքում՝ բռնապետության վերջում: Զինադադարները պատկերի մի մասն են կազմում: Բայց առանց խաղաղության մշակույթի տեսլականի դրանք չեն լինի ավելին, քան դադարներ բռնության երկարատև ժամանակահատվածի ընթացքում կամ պատրվակներ՝ ավելի լավ մախապատրաստվելու հաջորդ բռնարարքին: Իսպանական խորը մշակույթը (ցլամարտը՝ որպես փոխաբերություն) նույնպես խոչընդոտող է: Բասկերն ինչ-որ առումով իսպանացիներից ամենախսպանացիներն են: Քիչ տարածություն կա հեռանալու, փոխզիջման կամ գերա-

¹ pays Basque (ֆրանս.) – Բասկերի երկիր (*մշումը թարգմանիչի*)

² «Soy Vasca y soy española» (իսպ.) – «Ես բասկ եմ և իսպանացի» (թարգ.)

³ provincias (իսպ.) –մարզեր (թարգ., *մշումը թարգմանիչի*)

⁴ provinces (ֆրանս.) – մարզեր (թարգ., *մշումը թարգմանիչի*)

զանցման համար: Առայժմ կողմերն զբաղված են ցլամարտով: Առանց ստեղծագործականության ներարկման սա կշարունակվի սերնդից սերունդ, նույնիսկ՝ դարեր:

Գերազանցման և դրա միջոցով կոնֆլիկտի փոխակերպման բանալին կլինեն բասկերին որպես բասկեր և որպես իսպանացիների կամ ֆրանսիացիներ դիտարկելը:

1. Բասկերի ինքնորոշման իրավունքը ճանաչված է: «Բասկ» սահմանումը կարող է լինել ինքնորոշման տարբերակ նույնականացման և հայրենիքի զգացումի համար:

2. Երեք+չորս մարզերը սահմանվում են որպես Բասկերի *ինքնուրույն կազմավորում՝ Էուսկադի*¹ առանց ներքին սահմանների՝ ԵՄ-ում՝ միաժամանակ մնալով Իսպանիայի և Ֆրանսիայի մասեր:

3. Էուսկադին կլինեն եռալեզու՝ էուսկարաերենը՝ որպես պաշտոնական լեզու, իսպաներենը և ֆրանսերենը՝ որպես վարչական լեզուներ:

4. Ներկայիս կառավարող մարմինները «*autonomia*»¹-ի և «*departement*»²-ի մակարդակում կշարունակեն գործառնել:

5. Խորհրդարան (*fors*) կընտրվեր Էուսկադիի ինքնուրույն կազմավորման համար՝ վեհաժողովին հաշվետու կառավարությամբ:

6. Պետք է լինեին վեհաժողովներ, տեղական դատարաններ և տեղական ոստիկանություն Էուսկադիում ապրող իսպանացիների և ֆրանսիացիների համար՝ իրենց ժառանգության հետ կապված հարցերում վետոյի իրավունքով:

7. Էուսկադիի ինքնուրույն կազմավորումն աստիճանաբար կարող էր հասնել ավելի լայն միջազգային իրավասությունների մակարդակի հետևյալ միջոցներով:

ա. անձնագիր, որը կարող էր ճանաչվել Ֆրանսիայում և Իսպանիայում, Եվրոպական Միությունում և աշխարհում: Յուրա-

¹ *autonomía* (բասկ.) – ինքնավարություն (թարգ.)

² *département* (բասկ.) – դեպարտամենտ (թարգ.)

քանչյուր քաղաքացի, ինչպես նախկինում, ֆրանսիական կամ իսպանական (ԵՄ) անձնագիր ունենալու իրավունք կունենար: Հնարավորություններից մեկը կլիներ Իսպանիայի *կամ* Ֆրանսիայի անձնագիրը, որի վրա գրված կլիներ Էուսկադի:

բ. Ինչպես անձնագրերն, այնպես էլ քվեարկությունը. յուրաքանչյուր քաղաքացի կարող էր ունենալ մեկ ծայն Էուսկադիում և մեկ ծայն Իսպանիայում կամ Ֆրանսիայում:

գ. Եվրոն կարող էր ունենալ Էուսկադական տարբերակ՝ նույն արժեքով: Տեղական տնտեսության զարգացումը խթանելու համար կարող էր քննարկվել այդ փոխարժեքով իրականացվող գործարքների համար զեղչերի սահմանումը:

դ. Էուսկադիի բյուջեն հիմնված կլիներ «*autonomía*»-ի և «*département*»-ի համատեղ բյուջեի վրա՝ եկամուտների լրացուցիչ աղբյուրներով (հարկեր, ԱԱՀ):

ե. Հատուկ պայմանագրերը կկարգավորեն Փարիզի և Մադրիդի հետ հարաբերությունները:

զ. Էուսկադին կապառազմականացվե՝ հրաժարվելով առանձին բանակ ունենալու իրավունքից: Արտաքին անվտանգությունը կերաշխավորեին Իսպանիան և Ֆրանսիան՝ ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ:

է. Էուսկադին կունենար դիտորդի կարգավիճակ ԵՄ-ում, այլ եվրոպական կազմակերպություններում և ՄԱԿ-ում:

ը. Էուսկադին ժամանակի ընթացքում կզարգացներ սեփական արտաքին քաղաքականությունը:

թ. Երկքաղաքացիության տարբերակը ևս կարող է քննարկվել:

ժ. Անկախությունը, դաշնությունը, համադաշնությունը, ասոցիացիան և այլն, բոլորը տարբերակներ են, որոնք ենթադրվում են ինքնորոշման իրավունքում:

ի. Կարող է քննարկվել նաև սահմանների որոշ վերագծման տարբերակը՝ տեղական մակարդակում քվեարկության կիրառման միջոցով, ինչպես 1920 թ.-ի դանիագերմանական մոդելում է:

8. Գործընթացը ցանկացած ժամանակ արդիական կպահի արդյունքը:

9. Պետք է նախաձեռնել հաշտության գործընթաց:

10. Գործընթացը պահանջում է և՛ վերնախավի, և՛ ժողովրդի մասնակցությունը:

Մադրիդը և Փարիզը պետք է իմանան, որ աշխարհը չի կործանվի, եթե ֆրանսիսպանական համատեղ կառավարումը հանգեցնի անկախության: Իսկ ԲՅԱ-ն պետք է իմանա, որ առանց բռնության գործընթացը կարող է ավելի բեղմնավոր լինել:

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ

Կոնֆլիկտաբան – Ի՞նչ եք դուք իրականում ցանկանում: Որո՞նք են ձեր նպատակները:

Սկովենացի – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք: Մենք ցանկանում ենք ղեկավարվել ոչ թե Վիեննայից կամ Բելգրադից, այլ Լյուբլյանայից, իսկ ավելի լայն եվրոպական համատեքստում՝ Բրյուսելից: Մեր փոքրամասնությունների համար նախընտրելի է մարդու իրավունքներին մեծ տեղ հատկացնող ժողովրդավարական միջավայրը:

Խորվաթ – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք: Մենք ցանկանում ենք ղեկավարվել ոչ թե Վիեննայից կամ Բելգրադից, այլ Զագրեբից, իսկ ավելի լայն եվրոպական համատեքստում՝ Բրյուսելից: Մեր փոքրամասնությունների համար նախընտրելի է մարդու իրավունքներին մեծ տեղ հատկացնող ժողովրդավարական միջավայրը:

Խորվաթիայի սերբ – Խորվաթները կարող են ունենալ իրենց սեփական պետությունը, բայց նրանք իրավունք չունեն իրենց հետ տանելու Խորվաթիայի սերբերին: Մենք չենք ցանկանում ղեկավարվել Զագրեբից, որ, լինելով նացիստական Գերմանիայի դաշնակից, պատերազմի տարիներին մեր հայրենակիցներին է ոչնչացրել:

Բոսնիացի – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք: Մենք չենք ցանկանում կառավարվել ո՛չ Ստամբուլից, ո՛չ Վիեննայից և ո՛չ էլ Բելգրադից, այլ Սարայևոյից, իսկ ավելի լայն եվրոպական համատեքստում՝ Բրյուսելից: Մեր փոքրամասնությունների համար նախընտրելի է մարդու իրավունքներին մեծ տեղ հատկացնող ժողովրդավարական միջավայրը:

Բոսնիայի (ԲՀ) սերբ – Բոսնիացիները կարող են ունենալ իրենց սեփական պետությունը, բայց նրանք իրավունք չունեն իրենց հետ տանելու սերբերին: Մենք չենք ցանկանում կառավարվել Սարայևոյից, որ, լինելով նացիստական Գերմանիայի դաշնակից, պատերազմի տարիներին մեր հայրենակիցներին է ոչնչացրել:

Բոսնիայի (ԲՀ) խորվաթ – Բոսնիացիները կարող են ունենալ իրենց սեփական պետությունը, բայց նրանք չեն կարող իրենց հետ տանել Բոսնիայի խորվաթներին: Մենք Խորվաթիայի մասն ենք:

Սերբիայի սերբ – Թող եսասերները գնան այնտեղ, ուր ցանկանում են գնալ: Բայց ոչ մի սերբ չի կառավարվելու Զագրեբից, Սարաևոյից կամ Փրիշտինայից, որոնք, լինելով նացիստական Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի դաշնակիցները, պատերազմի տարիներին մեր հայրենակիցներին են ոչնչացրել:

Կոսովոյի ալբանացի – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք: Մենք չենք ցանկանում ղեկավարվել ո՛չ Ստամբուլից, ո՛չ էլ Բելգրադից, այլ Փրիշ-

տինայից, իսկ ավելի լայն եվրոպական համատեքստում՝ Բրյուսելից: Մեր փոքրամասնությունների համար նախընտրելի է մարդու իրավունքներին մեծ տեղ հատկացնող ժողովրդավարական միջավայրը:

Կոստվոյի սերբ – Ալբանացիները կարող են ունենալ իրենց սեփական պետությունը, բայց նրանք չեն կարող իրենց հետ տանել սերբերին: Մենք պահանջում ենք անկախություն կամ բարձր մակարդակի ինքնավարություն:

Մակեդոնացի – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք:

Մակեդոնիայի ալբանացի – Մակեդոնացիները կարող են ունենալ իրենց սեփական պետությունը, բայց նրանք չեն կարող իրենց հետ տանել ալբանացիներին: Մենք պահանջում ենք անկախություն կամ բարձր մակարդակի ինքնավարություն:

Մոնտենեգրացի – Մենք ազգ ենք, և, ինչպես ցանկացած այլ ազգ, ունենք ինքնորոշման միջոցով առաջին անգամ սեփական պետությունն ունենալու իրավունք: Մենք չենք ցանկանում կառավարվել ո՛չ Ստամբուլից, ո՛չ էլ Բելգրադից, այլ Պոդգորիցայից, իսկ ավելի լայն եվրոպական համատեքստում՝ Բրյուսելից: Մեր փոքրամասնությունների համար նախընտրելի է մարդու իրավունքներին մեծ տեղ հատկացնող ժողովրդավարական միջավայրը:

Մոնտենեգրոյի ալբանացի – Մենք պահանջում ենք անկախություն կամ բարձր մակարդակի ինքնավարություն:

13 կողմերով ներկայացված այս կոնֆլիկտը, իհարկե, հնարավոր է պարզեցնել, բայց քաղաքական մակարդակում և լրատվամիջոցներում «սերբերն՝ ընդդեմ մնացածների» արևմտյան պարզեցումը զավեշտալի է: 1054 թ.-ին և 1095 թ.-ին դրված բաժանարար գծերը կաթոլիկների, ուղղափառների և մուսուլմանների (սլավոնական կամ ալբանական) միջև պատմական իրողություններ են, որոնց մեծ մասը վերհանված չէ: Ցինիկ դեկավարմե-

րը շահագործեցին այս փաստը, իսկ արտաքին ցինիկ կողմերը (Վատիկանը, Ավստրիան, Գերմանիան, ԵՄ-ը, Ռուսաստանը, Թուրքիան, Սաուդյան Արաբիան) շահագործեցին սարսափելի պատմության ցինիկ առաջնորդների ցինիկ շահագործումը: Այդ ամենին գումարվեց ԱՄՆ-ը, որոնք ցանկացան և ստացան ռազմակայան ու նավթամուղ:

Կոնֆլիկտաբան – Ինչպես միշտ կոնֆլիկտաբանական աշխատանքը բաղկացած է երեք փուլից.

- Ստանալ ներքին և արտաքին կողմերի նպատակների մասին ընդհանուր պատկերացում:
- Բաժանել նպատակները հիմնավորված/օրինական և չհիմնավորված/անօրինական նպատակների:
- Օրինական նպատակների միջև կառուցել կամուրջ՝ գերազանցում:

Այստեղ մենք գործ ունենք հիմնարար պահանջմունքի՝ ինքնության հետ: Մարդու ինքնության կողմերից մեկը նույնականացումն է ղեկավարների հետ: Այլ կերպ ասած, իրավունքի հարց է իր նմանի, ոչ թե ուրիշների կողմից ղեկավարվելը՝ նույնիսկ եթե այդ ուրիշները բարյացակամ, ժողովրդավարական մեծամասնության ներկայացուցիչներն են: Սակայն հարցը միայն մարդու անհատական իրավունքների մակարդակում դիտարկելը բավարար չէ:

Այն, ինչ տեղի ունեցավ Հարավսլավիայում 1990-ականներին, նոր գլուխ էր դրսից բռնի միջամտության երկար պատմության մեջ: Այս պահին կան բազմաթիվ նպատակներ, ինչպիսիք են Կաթոլիկ Եկեղեցու վերականգնումը, Առաջին համաշխարհային պատերազմում, և Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտության համար վրիժառությունը, Տիտոյի ղեկավարման ընթացքում Հարավսլավիայի կողմից նվաճված անկախությունից հետո ազդեցության ոլորտները վերակառուցելու ջանքերը: Առկա են նաև ԱՄՆ ռազմակայանային և նավթային բազմամյա շահերը, որոնք հետապնդում էին Եվրասիայի (և մնացած աշխարհի)

նկատմամբ վերահսկողության նպատակ: Գերազանցման բանալին պոտոր ջրում ձուկ որսալու, արտաքին կողմերի բոլոր ջանքերն անօրինական դիտարկելու և ուշադրությունը 13 ներքին նպատակների վրա բևեռելու մեջ է:

Բայց այս 13 նպատակները համատեղելի¹ են: Այո, երեք բաների սահմաններում գտնվող բանաձևի շրջանակներում՝ *ինքնորոշման հավասար իրավունք* բոլոր 13 կողմերի համար: Արդյունքը կլիներ անկախ Սլովենիան՝ այն, ինչ մենք ունենք, անկախ խորվաթիան, առանց սերբական տարածքների, հնարավոր է՝ որպես դաշնություն, անկախ Բոսնիական երկիրը՝ մայրաքաղաք Սարայևոյով, Ռեպուբլիկա Սրպսկան, որն ինքնուրույն է որոշում իր հարաբերությունները Սերբիայի հետ, խորվաթիային ինտեգրված Բոսնիա և Հերցեգովինայի խորվաթական մասը, Սերբիան, որը շարունակում է գոյություն ունենալ որպես անկախ երկիր, անկախ Կոսովոն՝ որպես դաշնություն երկու սերբական կանտոններով, անկախ Մակեդոնիան, որը մենք արդեն ունենք, բայց հնարավոր է՝ որպես դաշնություն, և անկախ Մոնթենեգրոն՝ նույնպես որպես դաշնություն:

«Ինքնորոշման հավասար իրավունքը» պատկերում է երկիրը որպես չինական արկղերի հավաքածու: Երկիրն ունի ինքնորոշման իրավունք, բայց դա վերաբերում է նաև երկրի ներսում փոքրամասնություններին: Եվ այստեղ մենք բախվում ենք արտաքին ուժերի միջև մեծ շահերին: Վերցնենք Ֆրանսիան՝ որպես օրինակ. երկիրը չէր տա ինքնորոշման իրավունք իր վեց փոքրամասնություններին, մինչդեռ Հարավսլավիայի կոնֆլիկտի կարգավորման մեջ առանցքային «փորձագետը» Ֆրանսիան էր: Միջազգային իրավունքում սա կոչվում է *«uti possidetis»*¹՝ «սահմանները մնում են նույնը»: Դա նշանակում է աղետալի հետևանքներով նվազագույն փոփոխություններ:

¹ *Uti possidetis* (լատ.) - գործերի գոյություն ունեցող վիճակի պահպանման սկզբունք (թարգ., մշումը թարգմանիչի)

Այս ամենի արդյունքը կլիներ նախկին Հարավսլավիան՝ Սլովենիայով, ինչպես այսօր է, Խորվաթիան, այդ թվում նաև Բոսնիա և Հերցեգովինայի խորվաթական մասը, Կոսովոն, Մակեդոնիան և Մոնթենեգրոն՝ որպես դաշնություններ, երկու մոր երկրներ (Ռեպուբլիկա Սերպսկա և Կոսովո) ու Բոսնիան և Հերցեգովինան՝ բոսնիական քաղաք-պետությանը գումարած դրա արվարձանները: Անհրաժեշտ է նաև գիտափորձ կատարել՝ հիմնված այս ազգերի եղբայրության («*bratstvo*») և քույրության, բայց ոչ միասնության («*jedinstvo*») վրա:

Այսօր խնդիրը միայն Սլովենիայում է լուծվել: Մնացած հատվածներում ամեն բան ավելի վատ է, քան նախկինում: Կան բռնության, տրավմայի և ատելության մոր շերտեր՝ կուտակված հների վրա, և ավելի շատ կառավարում արտաքին կողմերի կողմից, քան Վիեննայի և Ստամբուլի տիրապետության ժամանակ: Այնտեղ, որտեղ ոչինչ չի լուծվել, որոշ ժամանակ անց բռնությունը կկրկնվի:

Եզրակացություն. վատ կոնֆլիկտաբանական աշխատանք:

1992 թ.-ին «ԹՐԱՆՍԵՆԴ»-ն առաջ քաշեց հետևյալ առաջարկը, որը տպագրվեց մի շարք վայրերում՝ որպես բաց թողնված հնարավորությունների օրինակ.

1. ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի հովանավորությամբ Հարավարևելյան Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողով (ՀԵԱՀՀ) կազմակերպել՝ ի լրումն Լոնդոն/Ժնև համաժողովի գործընթացին (որովհետև ՄԱԿ-ի ԱԽ-ը չափազանց հեռու է, ԵՄ-ը՝ չափազանց կողմնակալ)՝ նկատի ունենալով, որ այն կարող է տևել երեքից հինգ տարի: Բոլոր շահագրգիռ կողմերը (այդ թվում նաև՝ ենթապետական, գերպետական և ոչ պետական) պետք է հրավիրվեն՝ ունենալով բոլոր համապատասխան թեմաներն օրակարգում: Տարածաշրջանից դուրս գտնվող պետությունները պետք է մասնակցեն համաժողովին՝ որպես ձայնի իրավունք ունեցող անկողմնակալ դիտորդներ: Հնարավոր երկարաժամկետ

նպատակներից մեկը պետք է լինի Հարավարևելյան եվրոպական համադաշնության ստեղծումը:

2. ՀԵԱՀՀ-ի աշխատանքային խմբերը՝ որպես առաջնահերթ ոլորտներ պետք է քննարկեն.

- Բոսնիան և Հերցոգովինան՝ որպես եռակողմ համադաշնություն,
- Կոսովոն՝ որպես հանրապետություն՝ նույն կարգավիճակով, ինչ Կրայինան սերբերի համար:
- Մակեդոնիան՝ որպես մակեդոնական համադաշնություն, տարբերակը չպետք է բացառվի, բայց կարող է առաջանալ միայն ավելի լայն համատեքստում:
- Նախկին Հարավսլավիան՝ որպես համադաշնություն:

3. Ավելացնել ՄԱԿ-ի Պաշտպանական ուժերը՝ ստեղծելով բոլոր հիմքերը զինադադարը վերահսկելու և իրավիճակը կայունացնելու համար: Ձիմվորներին պատշաճ հրահանգել՝ չիրականացնել բռնարարքներ ու համատեղ աշխատել քաղաքացիական խաղաղապահ բաղադրիչների հետ: Խուսափել մեծ տերությունների մասնակցությունից:

4. Տեղական ինքնակառավարման համերաշխության խիտ ցանց ստեղծել նախկին Հարավսլավիայի բոլոր կողմերի հետ՝ օգնության ցուցաբերման աշխատանքների, վերականգնման համար. «*Gemeinde Gemeinsam*»¹, «*Cause commune*»², Եվրոպայի խորհուրդ:

5. Ձարկ տալ տեղական խաղաղության համաժողովների ծաղկմանը, օժանդակել նրանց հաղորդակցության սարքավորումներով:

6. Ներգրավել միջազգային խաղաղության ջոկատներին, օտարերկրացիներին, մասնագետներին, բժիշկներին (ԱՀԿ/ԱԲՄՊԿՀ/ՄՄՖ), ովքեր կարող են աշխատել վտանգավոր վայրերում ու կանխարգելել բռնությունը:

¹ *Gemeinde Gemeinsam* (գերմ.) - *Համատեղ համայնք* (թարգ., *Նշումը թարգմանիչի*)

² *Cause commune* (ֆրանս.) - *Ընդհանուր գործ* (թարգ., *Նշումը թարգմանիչի*)

7. Մարտահրավեր նետել տարածաշրջանում անգիջում քաղաքականություն վարող կրոնական ինստիտուտներին՝ հիմնվելով քրիստոնեության ու իսլամի խաղաղասեր ավանդույթների վրա:

8. Լոնդոնի/ժնկի ռազմական հրամանատարների համաժողովներին զուգահեռ՝ «Palais des Nations»¹-ում, ստեղծել «Խաղաղության կանանց համաժողով»: Մշտական կապ ապահովել պետության (1-3), տեղական ինքնակառավարման (4) և քաղաքացիական հասարակության (5-7), հանուն խաղաղության աշխատող անհատների և խմբերի միջև: Խրախուսել գաղափարների հոսքը:

9. Լրատվամիջոցներից պահանջել արհեստավարժություն՝ քարոզելու ավելի քիչ բռնություն և կանխակալություն, ավելի շատ կենտրոնանալու հասարակ մարդկանց և խաղաղության ջանքերին:

10. Ապագա հաշտության ոգով.

- Վերացնել պատժամիջոցները՝ դրանք հարվածում են անմեղներին և կարծրացնում կոնֆլիկտները,
- Դադարեցնել Պատերազմի հանցագործությունների տրիբունալի աշխատանքները՝ գոյություն չունի դեպի ապագա տանող ճանապարհ, որ կանցնի վրիժառության և պատժի միջոցով, քանի որ դրանք թողնում են միայն մորմահատակներ ու տրավմաներ,
- Մասնագիտական խումբ հավաքել ու պարզել անցյալի սխալների պատճառները ներկա փորձառությունների համար:
- Հիմնվել հարավսլավացի ժողովուրդների մերձեցման ձգտմանը՝ *եղբայրության («bratstvo»)* վրա, նույնիսկ եթե դրան հնարավոր է հասնել միայն մասնակի *միասնությանը («jedinstvo»)*:

¹ Palais des Nations (Ֆրանս.) - Ազգերի պալատ (թարգ., *նշումը թարգմանիչի*)

ԻՍՐԱՅԵԼ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՄԱՅՆՔ

Կոնֆլիկտաբան – Ի՞նչ եք դուք իրականում ցանկանում: Ուրո՞նք են ձեր նպատակները:

Իսրայելցի – Մենք ազգ ենք և ունենք նույն իրավունքներն, ինչ մյուս ազգերը՝ մեր պատմական հողում ունենալու սեփական պետությունը՝ Իսրայելը՝ Երուսաղեմ մայրաքաղաքով, որտեղ ապահովված կլինի հրեաների անվտանգությունը, որտեղ հաստատված կլինեն ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների հանդեպ հարգանքը:

Պաղեստինցի – Մենք ազգ ենք և ունենք նույն իրավունքներն, ինչ մյուս ազգերը՝ մեր պատմական հողում ունենալու սեփական պետությունը՝ Պաղեստինը՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով, որտեղ ապահովված կլինի պաղեստինցիների անվտանգությունը, որտեղ հաստատված կլինեն ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների հանդեպ հարգանքը:

Այն, որ վերոնշյալը նպատակների պարզեցված տարբերակն է, այն, որ մի քանի անգամ ավելի շատ բան է ասվել, և որ ավելին կարող է ասվել, մենք գիտենք, բայց պետք է փորձենք այս կոնֆլիկտին նայել վերևից՝ հիմնական գծերը տեսնելու համար:

«Երկու ազգ, մեկ տարածք»: Այս կոնֆլիկտն ունի հինգ՝ քաջ հայտնի ելքեր.

1. Միակողմ. մեկ պետություն՝ միայն Իսրայել, պաղեստինցիները հայտնվում են դրսում:

2. Միակողմ. մեկ պետություն՝ միայն Պաղեստին, իսրայելցիները հայտնվում են դրսում:

3. Բացասական գերազանցում. գերիշխում է երրորդ կողմը (Օսմանյան, ՄԲ, ՄԱԿ):

4. Փոխգիշում. երկու պետությունների լուծում՝ Իսրայել և Պաղեստին:

5. Դրական գերազանցում. երկու ազգերը համաչափորեն մուտք են գործում մեկ պետության տարածք՝ ստեղծելով դաշնություն (շվեյցարական մոդել) կամ ունիտար պետություն:

Ինչպես նախորդ նմանատիպ դեպքերում, այնպես էլ այստեղ 1. և 2. տարբերակներն անհույս են: Ի՞նչ կասեք խաղաղության անկյունագծի մասին՝ 3. + 4. + 5.:

Երրորդ կողմը խաղաղապահի դեր կարող է խաղալ կարճ ժամանակով: Մնում են 4.-ը և 5.-ը: Բայց 5.-ի հնարավոր իրականացման ժամկետը հեռավոր ապագայում է, օրինակ, այն օրը, երբ բոսնիացիները, սերբերը և խորվաթները բարգավաճեն նույն երկրում՝ ապրելով իրար հետ, կամ այն օրը, երբ իռլանդացիները, ուելսցիները, շոտլանդացիները և անգլիացիները նույն ունիտար պետությունում զգան իրենց, ինչպես տանը:

Մնում է 4.-ը, որը ստացավ մեծ աջակցություն 1988 թ.-ի նոյեմբերի 15-ին, երբ Պաղեստինի ազգային խորհուրդը կողմ քվեարկեց երկու պետությունների օգտին լուծմանը՝ որպես հնարավորություն՝ հիմնված Հորդանան գետի Արևմտյան ափի, Գազայի և Արևելյան Երուսաղեմի վրա: Փոխգիշման գրեթե անզուգական պատրաստակամություն: Բայց Իսրայելը շարունակեց իր՝ բոլոր հրեաների համար պետության ծրագիրը, իսկ Պաղեստինը ցանկանում էր ինչ-որ չափով վերադարձ Իսրայելի սահմանների շրջանակում: Երկուսի նպատակներն էլ ունեին որոշակի օրինականություն: Բայց ամեն օրինական բան էլ, որ խաղաղություն է կրում իր մեջ:

Այժմ պատկերացրեք, որ կողմերը փոքր-ինչ զիջել են այս կետերի շուրջ: Այստեղ առաջանում է մեկ այլ պատճառ, թե ինչու Իսրայելի և Պաղեստինի համար երկու պետությունների օգտին լուծումը, հավանաբար, չի գործի: Այս գիրքը կոնֆլիկտաբանական աշխատանքի ներածություն է: Եկեք հայացք գցենք սերտորեն կապված թեմայի՝ խաղաղության տեսության և խաղաղությանն ուղղված աշխատանքի վրա:

Եթե կոնֆլիկտի լուծման գլխավոր բանալին ստեղծագործականությունն է, ապա դեպի խաղաղություն տանող գլխավոր բանալին *հավասարությունն է*: Հավասարությունն այն է, ինչ տղամարդիկ և կանայք տալիս են միմյանց լավ ամուսնության մեջ, ծնողները և երեխաները՝ լավ ընտանիքի: «Խաղաղության անկյունագծին» ներկառուցված է հավասարությունը, որը չի կարելի գտնել մյուս երկու ելքերում, այստեղից էլ բխում է անվանումը: Բայց դա չի նշանակում, որ այդ անկյունագծի երկայնքով բոլոր ելքերն անպայմանորեն կհանգեցնեն խաղաղության: Կարող են լինել այլ գործոններ ևս:

Կողմերը կարող են պարզապես չափազանց անհավասար լինել: Որպես օրինակ կարող ենք դիտարկել Արևմտյան Եվրոպան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նացիստական Գերմանիան պարտվել էր, թնդանոթները՝ լռել: Խաղաղություն: Դեռ ոչ: Գերմանիային ճնշելու և նվաստացնելու փոխարեն ֆրանսիացի պետական գործիչներ Ժան Մոնեի և Ռոբեր Շումանի մոտ առաջացավ գաղափար՝ հիմնելու խաղաղություն անաչառ համագործակցության վրա: Բայց Գերմանիայի և Լյուքսեմբուրգի միջև, կամ Լիխտենշտայնի նախկին գերմանական իշխանապետության հետ համագործակցությունը չէր ստեղծի խաղաղություն: «Ինքնիշխան պետությունների» միջև ձևական հավասարությունը բավականաչափ հիմնավոր չէ: Գերմանիան ամենամեծ երկիրն էր Եվրոպայում: Խաղաղությունը հիմնված է փոխադարձության վրա, որն իր հերթին հիմնված է հավասարության, հավասար իրավունքների և հավասար արժանապատվության վրա: Երկարաժամկետ հեռանկարում մեծությունը նշանակություն կարող էր ունենալ:

Գերմանիային հակակշռելու համար հիմնվեց Բենիլյուքսը, իսկ 1958 թ. հունվարի 1-ին կնքվեց Հռոմի պայմանագիրը: Եղան խնդիրներ, բայց համադաշնության յուրօրինակ ձևաչափն աշխատեց:

Գերմանիան փորձեց միակողմանի լուծում՝ «*Neuordnung*»¹, որի կենտրոնում ինքն էր: Կար երկկողմանի առանցքի տարր՝ Գերմանիա-Ֆրանսիա, որն, ի վերջո, դարձավ Եվրոպական համայնքի (ԵՀ) և ԵՄ հենարանը: Բայց լուծումը բազմակողմանի էր, ոչ թե երկկողմանի:

Կոնֆլիկտաբան – Արևմտյան Եվրոպայի օրինակով կարող ենք խոսել նմանատիպ երևույթի մասին Մերձավոր Արևելքում: Նրան, ով հետևել է այս կոնֆլիկտին գրեթե 40 տարի, այլևս ապացույց պետք չէ, որ միակողմանի և երկկողմանի ելքերը չեն աշխատի: Գերազանցումը միակողմանիի և երկկողմանիի փոխարեն վեցկողմանի դարձնելը, այն է՝ *Մերձավոր Արևելքի համայնքը*² հիմնված Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի (Սիլիպա), Իսրայելի, Հորդանանի և Եգիպտոսի վրա, կարող էր աշխատել:

Բերենք փոխադարձության ավելի ճշգրիտ տարբերակ խաղաղության տարրական տեսությունից. *այն ամենն, ինչ դուք ցանկանում եք ձեզ համար, դուք պետք է նաև ցանկանաք տալ մյուս կողմին, եթե նա ցանկանում է դա*: Իսրայելակա՞ն պետություն: Ուրեմն նաև պաղեստինյան պետություն: Մայրաքաղաք Յերուսաղեմ: Ուրեմն նաև մայրաքաղաք Պաղեստինին. արևմուտքում մեկի համար, արևելքում՝ մյուսի: Օսլոյի գործընթացը չճանաչեց նման փոխադարձություն: Այլ կերպ ասած, այն խաղաղությանն ուղղված գործընթաց չէր, այլ, լավագույն դեպքում, զինադադարի գործընթաց: Եվ նույնիսկ այդ դեպքում այն ձախողում էր:

Իսրայելցի – Ավելի վատ համեմատություն, քան մացիստական Գերմանիայի հետ, դժվար է պատկերացնել: Բացի այդ, այդ երկիրը ռազմական պարտություն էր կրել:

Կոնֆլիկտաբան – Արմատական, սիոնիստական Իսրայելը այժմ շարժվում է նույն ուղղությամբ: Իսրայելը չի կրել ռազմական պարտություն, բայց Գերմանիայի նման կրել է բարոյական պարտություն՝ սպառնելով իր բարոյական կապիտալը: Անվտան-

¹ *Neuordnung* (գերմ.) – *Նոր կարգ* (թարգ., *նշումը թարգմանիչի*)

գությունը չի կարող հիմնվել արտաքսման և հալածանքների վրա, միայն համագործակցության՝ առաջնորդվելով հավասարությանը:

Պաղեստինցի – Մեր անկախությունը կթուլանա՞ ինչ-որ համայնքում:

Կոնֆլիկտաբան – Այն կարող է նաև ամրապնդվել լավ ճանապարհների կառուցելու միջոցով, տրանսպորտի, առևտրի, սահմանների միջով ազատ հոսքի, Մերձավոր Արևելքում երբեմնի գոյություն ունեցող մշակութային համայնքի վերածննդի միջոցով:

Բռնության ներկայիս ճանապարհի վերջում Իսրայելի և Պաղեստինի համար չկա անվտանգություն, կա միայն բռնություն և անապահովություն: Ներկայումս Իսրայելն իր պատմության ամենավտանգավոր ժամանակաշրջանն է ապրում. այն ավելի ռազմատենչ է, պայքարում է պատերազմներում, որոնցում չի կարող հաղթել, ավելի մեկուսացած է և ամեն օր ավելացնում է իր թշնամիների թիվը՝ ենթարկվելով բռնության և բոյկոտի ներսից ու դրսից:

- Իսրայելի բարոյական կապիտալն արագընթաց տեմպով արժեզրկվում է:

- Իսրայելը տառապում է *դեֆակտո* ռազմական հեղաշրջումից՝ առաջարկելով ընտրազանգվածին ընտրելու գեներալների՝ սահմանափակ օրակարգով:

- Իսրայելական անգիջողականությունը համախմբում է դիմադրությունը և պայքարն արաբական ու մուսուլմանական աշխարհում, եթե ոչ միջպետական պատերազմների, ապա իսրայելական պետական ահաբեկչությանը ահաբեկչությամբ պատասխանելու առումով: Անսահմանափակ թվով կամավորներ պատրաստ են մտնել այս պայքարի մեջ:

- Վաղ թե ուշ սա կներառի իսրայելական արաբների 18%-ը:

- Վաղ թե ուշ սա կարող է հանգեցնել զանգվածային ոչ բռնի պայքարի, ինչպիսին է Իսրայելի վրա սև զգեստներով 100.000 արաբ կանանց երթը:

- Կարող է առաջ գալ Իսրայելի տնտեսական բոյկոտ, որին ենթարկվեց Հարավային Աֆրիկան ՀԿ-ների կողմից:

- Կրկին, ինչպես Հարավային Աֆրիկայում, Միացյալ Նահանգների քաղաքականությունը կարող է փոխվել: Փոփոխություն կարող է լինել նախ տնտեսապես, որովհետև Իսրայելը դառնում է խոչընդոտ՝ առաջացնելով առևտրային կամ նավթային խնդիրներ արաբական երկրների հետ, որոնք այլևս ԱՄՆ-ին, որպես երրորդ կողմ չեն ընկալում չեզոք: Փոփոխություն կարող է լինել նաև ռազմականորեն, որովհետև Իսրայելը կարող է պարտադրել ԱՄՆ-ին խիստ կասկածելի պատերազմներ, ռազմականներ (Թուրքիա, Կոսովո, Մակեդոնիա): Ի վերջո՝ քաղաքականորեն, որովհետև ՄԱԿ-ում, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի դաշնակիցները կարող են չօրինականացնել բռնի միջամտությունը: ԱՄՆ-ը կարող է նախընտրել խելամիտ համաձայնություն՝ աջակցելու պարտվողին, ինչպես մի անգամ արեց Իրանում շահի հետ, իսկ Ֆիլիպիններում՝ Ֆերդինանդ Մարկոսի:

Կարող է խաղաղության հետևյալ փաթեթը լինել ավելի գրավիչ խելամիտ մարդկանց համար, եթե համատեքստը փոխվի այնպես, ինչպես շարադրված է վերևում:

1. Պաղեստինը ճանաչվում է որպես պետություն 1967 թ.-ի հունիսի 4-ի սահմաններով՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242 և 338 բանաձևերի:

2. Պաղեստինի մայրաքաղաքը Արևելյան Երուսաղեմում է:

3. Ստեղծվում է Մերձավոր Արևելքի համայնք, որի լիիրավ անդամներ են Իսրայելը, Պաղեստինը, Եգիպտոսը, Հորդանանը, Լիբանանը, Սիրիան՝ բազմակողմանի համաձայնությամբ՝ հիմնված ջրի, զենքի, առևտրի ռեժիմներով:

4. Համայնքին ֆինանսապես և ինստիտուտների կայացման փորձառությամբ աջակցում է ԵՄ-ն, Հյուսիսային Խորհուրդը և ՀԱԱԱ-ն:

5. Եգիպտոսը և Հորդանանը լրացուցիչ հող են վարձակալության տալիս Պաղեստինին:

6. Իսրայելը և Պաղեստինը դառնում են դաշնություններ՝ երկու իսրայելական կանտոններով Պաղեստինում և երկու պաղեստինյան կանտոններով՝ Իսրայելում:

7. Երկու հարևան մայրաքաղաքները դառնում են քաղաք-համադաշնություն և հյուրընկալում խոշոր տարածաշրջանային ու համաշխարհային կազմակերպություններին:

8. Իսրայելը և Պաղեստինն ունեն համատեղ և անաչառ տնտեսական ձեռնարկություններ, համատեղ խաղաղության ուսուցում և համատեղ սահմանային պարեկություն:

9. Տեղակայվում են ՄԱԿ-ի մոնիտորինգային ուժերը:

10. Վաղ թե ուշ իրականացվում է ճշմարտության և հաշտության գործընթացը:

Խաղաղության փաթեթը պետք է միջնորդի ոչ թե մի երկիր կամ երկրների խումբ, այլ հարգանք վայելող մարդ կամ մեծ մարդկանց խումբ՝ ԵՄ-ի, Դյուսիսային Խորհուրդի և ՀԱՄԱ-ի մոդելներով:

Եզրափակելով՝ մի քանի խոսք 1993 թ.-ին կոնֆլիկտի և խաղաղության տեսության լույսի ներքո գրված Օսլոյի պայմանավորվածությունների մասին:

ՕՍԼՈՅԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԹԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ ԴԵՊԻ ԹԵՐԻ ԵԼՔ

I. Գործընթաց

1. Ծայրահեղականները, այսինքն՝ Համասը և Լիքուդը կամ ուղղափառները, բացառված էին: Համաձայնագիրը կնքվել էր ՊԱԿ-ի և Աշխատավորների կամ Աշխարհիկ-Ժամանակակիցների միջև՝ հավանաբար կապված Նորվեգական սոցիալ-դեմոկրատական այն գաղափարի հետ, որոնք «պատճառը մեջտեղում է»: Սա աշխատում է զուսպ Նորվեգիայում, բայց ոչ այն ժամանակ, երբ ավելի քան 50%-ն իրեն լու-

սանցքից դուրս է զգում, որովհետև նրանք ունեն մեծ խաղաղության հայեցակարգեր. մեծ թանձրացումներ իրավիճակում նրանք ահաբեկիչ-մահապարտների միջոցով կհիշեցնեն իրենց մասին:

2. Երկու կողմերում խաղաղության դերակատարները կամ շարժումները նույնպես բացառված էին: Ինթիֆադան և խաղաղություն հիմա-ն նույնիսկ չէին ընդունվել, սակայն նրանց գործողությունը խիստ անհրաժեշտ էր:
3. ԱՄՆ-ը՝ գլխավոր դերակատարն իսրայելական կողմից որպես «երրորդ կողմ» համաձայնագիր ստորագրող կողմ չէ: Օսլոյ գործընթացում էր ԱՄՆ-ի օգտին:
4. Պաղեստինի և Իսրայելի ներսում բևեռացման ընդհանուր թերազնաբանում, համաձայնագրերի պարտադիր լինելու չափի գերազնաբանում:
5. Գաղտնիության ավելորդ կարևորում, հանրության հետ երկխոսության բացակայություն:

II. Ելք, Կառուցվածք

6. Համաչափության բացակայություն. համաձայնագիրը չի սահմանում երկու պետություններ, այլ պետություն և «ինքնավարություն», որն, ըստ էության, գոյություն ունի ավելի ցածր մակարդակի վրա, քան Բանթուստանն ապարտեիդ Հարավային Աֆրիկայում:
7. Հարաբերությունների բացակայություն. երկու կողմերի միջև հարաբերություններն ամրագրված չեն ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային տեսանկյուններից:
8. Պաղեստինյան պետությունը սահմանված չէ. կան մշույլներ, բայց ոչ այն բանի վերաբերյալ, թե ինչպիսի կապ կունենա այդ պետությունն Իսրայելի հետ՝ ռազմականորեն, քաղաքականապես, տնտեսապես, մշակութային, օրինակ, որպես համադաշնություն (Հորդանանի՞ հետ):

9. Ավելորդ գավերմենտալիզմ և ինստիտուցիոնալիզմ, ոչ մի ջանք՝ համախմբելու երկու քաղաքացիական հասարակությունները:

III. Ելք, Մշակույթ

10. Կրոնի ուժի թերագնահատում, հավանաբար, կապված նոր-վեզական աշխարհիկության հետ որպես մարդկանց վարքագծի վերաբերյալ տեղեկացնող կոդեքս, ինչպիսին է վարչապետի սպանությունը ու Հեբրոնի կոտորածը Պուրիմում և ջիհադի չորրորդ փուլը՝ Սրբազան պատերազմը:
11. Հրեաների տարածքում շատ վայրերի սրբազան լինելու թերագնահատում (Վ. Ժաբոտինսկի), միայն քաղաքական կամ տնտեսական կենտրոնացում:
12. Համաաշխարհային աշխատանքի հնարավորության թերագնահատում հրեաների, մուսուլմանների և քրիստոնյաների միջև՝ շեշտելու հավատքների դրական, մեղմ ասպեկտները և դեմ դուրս գալու կոշտ ասպեկտներին:

Այս թերություններն ակնհայտ էին 1993 թ. օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, և հետևանքները հեշտությամբ են նկատվում Սպիտակ Տանը կայացած հանդիպումից հետո: Հակընդդեմ փաստարկն այն է, որ այլընտրանքը համաձայնագրի բացակայությունն էր: Բայց արդյո՞ք լուրջ թերություններով համաձայնագիրն ավելի նախընտրելի է:

Եզրակացություն. վատ կոնֆլիկտաբանական աշխատանք:

ՄԱՆԴԵԼԱ, ԴԵ ԿԼԵՐԿ ԵՎ ՏՈՒՏՈՒ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

1652 թվականին Նիդերլանդներից քրիստոնյա արմատականների (ահաբեկիչների, ինչպես մենք կանվանեինք նրանց այսօր) ճակատագրական ժամանումից գրեթե երեք ու կես դար հե-

տո՝ 1994 թվականին, Հարավային Աֆրիկայում սևամորթները հաղթեցին: Սպիտակամորթներն անձնատուր եղան դաժան ու անհավասար պատերազմից հետո՝ պետական ահաբեկչությամբ ու խոշտանգմամբ, որոնց աջակցում էին արևմուտքի հզոր երկրները: Սևամորթների բռնությունը մեծ մասամբ ուղղված էր այնպիսի ենթակառուցվածքների դեմ, ինչպիսիք են էլեկտրակայանները, իսկ սպիտակամորթների բռնությունն այլ մարդկանց դեմ էր ուղղված: Անհնարին էր կառուցել ապագա, առանց այդ դաժան անցյալի վերհանման և մաքրման: Ե՛վ գործող նախագահը՝ Նելսոն Մանդելան, և՛ պաշտոնաթող նախագահը՝ Ֆ. Վ. դե Կլերկը, իրավաբաններ էին ու եկան համաձայնության՝ ըստ որի ցանակացած գործընթաց պետք է զերծ լիներ ռասայական նախապաշարմունքներից:

Փորձենք վերականգնել նրանց դիրքերը՝ հիմնվելով գրույցների վրա.

Մանդելա – Այժմ մենք ժողովրդավարություն ենք կառուցում Հարավային Աֆրիկայում: Գերական այսուհետ օրենքն է լինելու: Բռնություն իրականացրած հանցագործներին պետք է մեղադրանք ներկայացնել և, մեղքն ապացուցելու դեպքում, պատժել:

դե Կլերկ – Եթե դա տեղի ունենա, և մեղադրյալների մեծ մասը լինեն սպիտակամորթներ, ապա մենք կարող ենք հրաժեշտ տալ մեր խաղաղության համաձայնագրին: Սպիտակամորթները երբեք դա չեն ընդունի: Շատ ավելի լավ լուծում կլիներ բոլորի համամերումը:

Մանդելա – Եթե դա տեղի ունենա, ապա մենք կարող ենք հրաժեշտ տալ մեր խաղաղության համաձայնագրին: Սևամորթները երբեք դա չեն ընդունի: Չափազանց շատ են սարսափելի դեպքեր տեղի ունեցել, որպեսզի հնարավոր լինի ճշմարտութ-

յան ոչնչացումը: Ձոռների և որբացածների ծայ-
ները պետք է լսելի լինեն:

դե Կլերկ –

Սպիտակամորթները նույնպես կարծում են, որ
պայքարում են ճշմարիտ գործի համար: Նրանք
նույնպես պահանջում են իրավունք, որ թույլ
կտա առանց պատժից վախենալու արտահայ-
տել իրենց տեսակետը:

Մանդելան ցանկանում էր «կոշտ խաղաղություն»՝ պատշաճ
իրավական գործընթացով և քաղաքական հանցագործություննե-
րի մեղավորների պատժով, իսկ դա, նախևառաջ, թիրախ կդարձ-
ներ սպիտակամորթներին: Դե Կլերկը ցանկանում էր «մեղմ խա-
ղաղություն»՝ բոլորի համամերմամբ: Երկուսն էլ դիտարկում էին
իրենց տեսակետը՝ որպես պայման ամուր և կայուն խաղաղու-
թյան համար: Մանդելան զգում էր, որ դե Կլերկի գիծը վատ սկիզբ
էր Հարավային Աֆրիկայի՝ որպես կարգ ու կանոնի և ժողովր-
դավարության պետության համար, և որ զոհերն իրավունք ու-
նեին իրենց տառապանքները հայտնի դարձնելու և պահանջելու,
որ դրանք պահպանվեն հասարակության կոլեկտիվ հիշողության
մեջ: Դե Կլերկն այն կարծիքին էր, որ Մանդելայի գիծը չափա-
զանց լուրջ մարտահրավեր կնետեր սպիտակամորթներին, և
նրանք կդառնային անհուսալի գործընկերներ նոր սոցիալական
համակարգում:

Կարգ ու կանոնը՝ մի կողմից, բոլորի համամերմունք՝ մյուս
կողմից, անհամատեղելի տեսակետներ էին: Հիմնախնդրից հե-
ռացումը՝ ո՛չ կոշտ և ո՛չ էլ մեղմ խաղաղության ձեռքբերումը,
նույնպես բացառված էր: Ապագան չէր կարող կառուցվել բարո-
յալքված, չվերհանված անցյալի վրա: Եթե կողմերը գնային փոխ-
զիջման ճանապարհով՝ Մանդելան պատժեր վատագույն հան-
ցագործներին, իսկ դե Կլերկը մնացածների իրավունքներով
կբացվեր, ապա աշխարհը չէր կատարի քայլ դեպի առաջ: Բարե-
բախտաբար, նրանք չընտրեցին այդ ուղին: Երկխոսության միջո-

ցով նրանք ի վիճակի եղան գտնելու դրական գերազանցումը, որը կստեղծեր իրավական պատմություն. համաներում ամբողջական, հասարակական ճշմարտության և իսկական հաշտությանն ուղղված ջանքերի դիմաց:

Գործընթացը կառավարում էր *ճշմարտության և հաշտության հանձնաժողովը*, որը վարում էր խաղաղության երրորդ հանճարը՝ արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտուն: Նա զոհերին կոչ արեց ներել հանցագործներին, եթե վերջիններս պատմեն ողջ ճշմարտությունն իրենց հանցագործությունների մասին, ներողություն խնդրեն և, ի լրումն, առաջարկեն ինչ-որ փոխհատուցում: Իսկ պետությունը հրաժարվեց պատժելու իր իրավունքից, այլ կերպ ասած, համաձայնեց համաներում շնորհել, եթե պայմանները բավարարվեն: Խոստովանությունը և ներողությունը կարող են փոքր պատիժ թվել հանցագործությունների համար, բայց հենց այն պատճառով, որ հանցագործները փրկվեցին ծուղակից առանց ազատագրվման, մեղքի և սոցիալական ամոթի զգացումը պատժի բավական արդյունավետ ձևեր դարձան:

Միավորելով ճշմարտությունը հաշտության հետ՝ կողմերը հույս ունեին *բուժել* մտքի և ոգու վերքերը՝ այն հույսով, որ դա կհանգեցնեք կոնֆլիկտի *փակմանը*, ինչպես փակված գրքին, որը կբացվի միայն այն դեպքում, եթե հանցագործությունները կրկնվեն: Եթե դուք խոստովանեք, ձեզ կներեն, բայց ձեր արածները չեն մոռացվի: Փոխհատուցում տվեք, և չեք լինի վրիժառության զոհ:

Ջոհերն այլևս մոռացված կողմ չեն պետության և հանցագործի միջև հարաբերություններում, քանի որ կարող են սփոփվել այն մտքով, որ հանցագործն այժմ տառապում է: Բռնության պարույրը խախտված է, որովհետև կողմերը կարգավորում են հիմնախնդիրն ուղղակիորեն՝ դեմ առ դեմ հանդիպումներում: Կասկած չկա, որ սա փոխակերպում է նրանց հարաբերություններն այնպես, ինչպես չի կարող փոխակերպել պետության բանտի պատերի շուրջ կառուցված վերացական հարաբերությունը: Բայց կայո՞ւն է արդյոք նման փոխակերպումը:

Իսկ ի՞նչ պատահեց արդարության հետ: Իսկապե՞ս հանցագործներին թույլ տվեցին այդքան հեշտությամբ փրկվել ծուղակից: Խաղաղաշինությունը գնվե՞ց հաշտության միջոցով: Ձոհաբերվե՞ց դրանցից մեկը մյուսի համար:

Կոշտ և մեղմ խաղաղությունների միջև կոնֆլիկտը փոխակերպվեց: Բայց կարո՞ղ է պատահել այնպես, որ դրա փոխարեն ապագայի և անցյալի միջև մեկ այլ կոնֆլիկտ առաջանա: Որպես փաստարկ ընդունենք այն, որ պատիժը, ընդհանուր առմամբ, չի կասեցնում հանցագործությունը: Բայց, երբ արդարությունը նվաճված չէ, ինչ-որ բան ուշադրությունից դուրս է մնում:

Այն որ արդարադատության ավանդական իրավական մեքենան, որը խորապես արմատավորված է մեր հասարակությունների մեջ, կօգտագործի նման փաստարկները, երբ զգա վտանգ, թե իր սոցիալական խնդրի մասին ուրիշները կարող են ավելի լավ հոգ տանել, քան ինքը, ակնհայտ է: Բայց այդ փաստարկը մաս ունի խորը մշակութային արմատներ: «*Quid pro quo*»,¹ ատամն ընդ ատաման. սրանք արտահայտություններ են, որ առկա են գրեթե բոլոր լեզուներում: Այս արտահայտությունների անհրաժեշտությունը, հավանաբար, ծագել է հավասարակշռության հասնելու ցանկությունից: Ինչպես դրական արժեքների դեմքում ենք մենք կարիքն ունենում հավասարակշռության, օրինակ, վաճառում ենք ինչ-որ բան, բայց մաս գնում ենք, այնպես էլ բացասական արժեքների՝ տրավմայի և պատժի միջև ենք մենք հաճախ հավասարակշռության կարիք զգում: Խնդիրն այն է, որ ամոթը և մեղքը չեն կարող չափվել ազատագրկման ժամկետի կամ տուգանքի հետ: Ինչպե՞ս կարող ենք իմանալ կամ վստահ լինել, որ *փոխհատուցումը* կառավարելի է: Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ հանցագործի ամոթի զգացումն իսկապես համապատասխանում է զոհի տառապանքներին:

Այս կոնֆլիկտի հնարավոր գերազանցումներից մեկը կարող էր լինել այն, որ Հանձնաժողովը կամ ցանկացած դատական

¹ *quid pro quo* (լատ.) – *փոխհատուցում* (թարգ., *մշումը թարգմանիչի*)

տրիբունալ որոշ հանցագործների դատապարտեր ազատազրկման այն պայմանով, որ նրանք բանտում ժամանակը ծախսեն՝ խորհելով փոխհատուցման մասին:

Հարավային Աֆրիկայում գերազանցումը կիրառվեց ոչ միայն երկու խոշոր քաղաքական գործիչների միջև կոնֆլիկտին վերջ տալու, այլ նաև լուծում գտնելու համար:

* * *

Ուշադրություն դարձրեք մեր կողմից քննարկված միկրո, մեզո և մակրո կոնֆլիկտների վրա: Մենք գործ ենք ունեցել անվերապահորեն ուժեղ անձնավորությունների հետ, ովքեր աջակցություն են ստացել սեռի, դասակարգի և ռասայի կողմից, կապիտալի և պետության ուժեղ դերակատարների և պետությունների ու ազգերի հետ, որոնց մեծապես աջակցել են տարածաշրջանները և քաղաքակրթությունները: Շատ հաճախ ստատուս-քվոն վիճարկվել է: Պատմությունը վկայում է, որ հավակնորդներին հաճախ հետագա մարտահրավեր է նետում պայքարը և, ի վերջո, նրանք հաղթում են: Սակայն երբ նրանք դառնում են ստատուս-քվոյի մաս, կարող են պարտվել՝ դառնալով սեփական հաղթանակի և հաջողության զոհը:

«Հաղթանակ» և «պարտություն» բառերը խորապես արմատավորված են մեր մշակույթներում՝ խաղերում, սպորտում, շուկաներում, դատական գործերում, պատերազմներում: Մի անգամ Միացյալ Նահանգների սենատորի ընդունարանում ես տեսա նրա իրավաբանի դիպլոմը, Միացյալ Նահանգների ֆուտբոլային թիմի անդամի հանդերձանքով նրա լուսանկարը և ապա զինվորական հանդերձանքով նրա լուսանկարը, որ արվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Կոնֆլիկտների կարգավորման տվյալ մարդու մոդելը պարզ է. շարունակել պայքարը մինչև վերջնական հաղթանակ՝ չնայած սա կոնֆլիկտային որո-

շումների կայացման փոքր-ինչ պարզունակ եղանակ է, որ իր հետևից նաև շատ պարտվողներ է թողնում: Անձնական նպատակները ճնշվում են, մարդիկ պարտվում են, իսկ որոշները պարտվում են այնքան հաճախ, որ սկսում են ընկալել իրենց՝ որպես մշտապես պարտվողներ: Լավ գաղափարները կորչում են, որովհետև դրանց կրողները պարտվում են պայքարում: Սեռերը, սերունդները, ռասաները, դասակարգերը, ազգերը, պետությունները, տարածաշրջաններն ու քաղաքակրթությունները մշտապես ենթարկվում են ճնշման, իսկ երբեմն ոչնչացվում են կամ կտորկտոր լինում:

Որպես օրինակ դիտարկենք պատերազմները՝ որպես կոնֆլիկտներում որոշումների կայացման մեխանիզմներ, և դիտարկենք դրանք ավելի մանրամասն Նյուրեմբերգի և Տոկիոյի տրիբունալների ֆոնի վրա: Պատերազմների հետևանքներն են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են զավթված հողը, անասունները, ստրուկները, ավարը, մարդիկ, որոնք զոհաբերվում են, դառնում ոչ գործառնական: Պատերազմը հաղթանակն ավելի քաղաքական է դարձնում: Հաղթողը դառանում է դատավոր ու պատժում է պարտվողին, դատապարտում նրան փոխհատուցման. այս ամենն արվում է համաձայն պայմանագրի, որ հաճախ «խաղաղության պայմանագիր» անվանումն է ստանում: Եվ այդ ամենը գլխավորում է պարտված կողմին հաղթողի քաղաքական դավանանքին և համակարգին փոխարկելուն ուղղված ջանքը: Հաղթանակը, ենթադրաբար, տոնվում է ոչ միայն մարմնի և գույքի նկատմամբ, այլ նաև մտքի և ոգու:

Ասենք թե, հաղթողի նպատակը *կոշտ խաղաղությունն էր*՝ պատժով, փոխհատուցմամբ և փոխարկմամբ: Ասենք թե, նա հույս ուներ անմահացնել հաղթանակը՝ պատժելով բնակչությանը փոխհատուցման միջոցով, առաջնորդներին՝ պատժի և ապագան՝ փոխակերպման միջոցով, և որ պարտվողի նպատակն էր *մեղմ խաղաղությունը*՝ սեփական պարտության ընդունմամբ: Բայց եթե անձնատուր լինելն անվերապահ է, ինչպես միշտ պա-

հանջում է ԱՄՆ-ը, պարտվողը հազիվ թե կարող է մեղմ խաղաղության հույս ունենալ, անկախ նրանից մտածում է վրիժառության և փոխհատուցման մասին, թե՛ ոչ: Կարո՞ղ է կոշտ և մեղմ պայմանագրերի միջև այս հակասությունը գերազանցվել:

1919 թ.-ին Վերսալի երկրորդ պայմանագիրը վերադարձրեց «Alsace»-ը¹ հաղթողին՝ Ֆրանսիային, բայց մինչ այդ՝ 1871 թ.-ին, Վերսալի առաջին պայմանագրով այն փոխանցվել էր Գերմանիային: Այնուհետև՝ 1940 թ.-ին, Գերմանիան կրկին հաղթեց, և «Alsace»-ը դարձավ «Elsass»², որից հետո էլ՝ 1945 թ.-ին, երբ հաղթեց Ֆրանսիան, այն կրկին դարձավ «Alsace»: Ներկայումս այն ֆրանսիական մարզ է՝ Եվրոպական միության շրջանակներում: Սպասենք և տեսնենք, թե հետագայում ինչ տեղի կունենա. չէ՞ որ բոլոր նախորդ համաձայնություններն էլ «հավերժ ուժի մեջ լինելու մնալու» էին կնքվել: Վերսալի II պայմանագիրը նույնպես դրեց ռազմական սահմանափակումներ և բարձր դրամական փոխհատուցումներ Գերմանիայի վրա, բայց ոչ մի լրացուցիչ պատիժ՝ գերմանացի պարտվողների առաջնորդների համար: Գերմանական կայսրը գահից հրաժարվեց, բայց, ընդհանուր առմամբ, պատժվեցին մարդիկ, իսկ առաջնորդներն ազատ արձակվեցին:

Մենք սովորաբար կապում ենք այս կոշտ վերսալյան խաղաղությունը (և, հավանաբար, իրավացիորեն) 1933 թ.-ի ընտություններում Դիտլերի հաղթանակի հետ: Կրկնությունից խուսափելու համար 1945 թ.-ի պայմանագրի ռազմավարությամբ պատժվեցին առաջնորդները՝ որպես մարդկության դեմ հանցանք գործածներ, իսկ մարդիկ, եթե նրանք անձամբ չէին կատարել հանցագործություններ, չենթարկվեցին պատժի: «Պատժեք առաջնորդներին, արդարացրեք մարդկանց» արտահայտությունը կոշտ և մեղմ խաղաղությունների միջև փոխզիջումն էր պատերազմից հետո:

¹ Alsace (ֆրանս.) - Էլզաս (*մշումը թարգմանիչի*)

² Elsass (գերմ.) - Էլզաս (*մշումը թարգմանիչի*)

Երկար ճանապարհ է ընկած «կողոպուտից, ավարից», «փոխհատուցում և պատժից» մինչև «առաջնորդներին իրենց գործած չարիքի համար պատժելը»: Իհարկե, բոլոր հին առաջնորդները պատկանել են նույն ազնվականությանը, մինչդեռ նոր առաջնորդները սերել են «վտանգավոր դասակարգերից» կամ ներկայացրել են դրանք: Բայց կոշտ կամ մեղմ կոնֆլիկտի *գերազանցումը* պետք է սպասեր Հարավային Աֆրիկայում ճշմարտության և հաշտության հանձնաժողովին, և մինչ այժմ փորձարկվել է միայն մեկ երկրում: Լատինական Ամերիկայում փորձ արվեց ստեղծել առանց հաշտության ճշմարտություն, բայց արդյունքը համոզիչ չէր: Նվեր մարդկությանը Հարավային Աֆրիկայից:

Վերոնշյալը կրկին մեր հայացքն ուղղում է դեպի գերազանցման հիմնական գաղափարը՝ կոնֆլիկտի նկատմամբ կառուցողական ապագային, ոչ թե ապակառուցողական անցյալին կողմնորոշված լինելը: Պատիժն ապակառուցողական է, կենտրոնացած անցյալի վրա: Վրիժառության և փոխհատուցման ձգտումը չի մարում պատժի միջոցով, այլ լցնում է ևս մի քանի հատիկ աղպարտության բաց վերքերի վրա:

Ինչպես ասում է դանիացի խաղաղության հիմնահարցերի հետազոտող Յան Օբերգը, հաշտությունը *վրիժառությանը ցուեսություն ասելն է*:

Ամփոփելով.

Կոնֆլիկտի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս մեզ դիմակայել կամ մոտենալ կոնֆլիկտներին ապրումակցմամբ և ստեղծագործականությամբ, ոչ թե բռնությամբ: *Խաղաղության ուսումնասիրությունները* հնարավորություն են տալիս մեզ կանխելու բռնությունը հավասարության և արդարության միջոցով:

Հաշտության ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս մեզ կամխելու հետագա բռնությունը՝ անցյալում տեղի ունեցած բռնության վերքերի բուժման և փակման միջոցով:

Բուժումն ու փակումը վերաբերում են բռնությանն այնպես, ինչպես գերազանցումը և փոխակերպումը՝ կոնֆլիկտին. խնդիրներն անհետանում են: Իսկ ինչքան քիչ է բռնությունը հասարակության ներսում, այնքան ավելի քիչ է մշակութային բռնությունը և ավելի շատ՝ խաղաղությունը: Խաղաղությունը մաև դարձնում է մարդկանց ավելի կատարյալ, որովհետև նրանք ավելի քիչ են դառնում սեռերի, սերունդների ու ռասաների, դասակարգերի, պետությունների ու ազգերի, տարածաշրջանների ու քաղաքակրթությունների միջև կառուցվածքային և մշակութային բռնության զոհեր:

ՀԻՆԳՇԱԲԹԻ. ՄԵԳԱ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ինչպես միշտ, մախ մի քանի խոսք «մեզա կոնֆլիկտների» սահմանման մասին:

Մենք սկսեցինք մեր դիսկուրսը անձերից, որոնք հաճախ ընկալվում են որպես խմբերի անդամներ կամ որպես միևնույն մշակույթն ունեցող կատեգորիաների ներկայացուցիչներ: Նրանք կազմում են ազգեր, եթե, ի լրումն, ունեն ընդհանուր տարածքային կցորդ: Եթե միավորում ենք խմբերի և կատեգորիաների հարմար համակցություն, ստանում ենք հասարակություն: Եթե այդ հասարակությունն ունի հողակտոր, մենք անվանում ենք այն պետություն, որը կարող է, օրինակ, դառնալ Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ: Պետության ներսում սովորաբար լինում է մի ազգ, որը գերիշխում է մյուս ազգերին:

Կոնֆլիկտների երրորդ մակարդակում, ինչպես հիշում եք, պետությունների ու ազգերի միջև հարաբերություններն էին, երկրորդ մակարդակում՝ հարաբերությունները պետությունների ներսում, իսկ առաջին մակարդակում՝ հարաբերություններն իրենց ներքին կյանքն ու միմյանց հետ ներքին հարաբերություններն ունեցող անձանցից բաղկացած կատեգորիաների և խմբերի ներսում: Այժմ հասնում ենք մեզա՝ չորրորդ մակարդակին, որ ենթադրում է հարաբերություններ տարածաշրջանների ու քաղաքակրթությունների միջև:

Տարածաշրջանները, որպես կանոն, բաղկացած են աշխարհագրորեն ընդհանուր սահմաններ ունեցող երկրներից. Արևելք-Արևմուտք՝ I Սառը պատերազմի (1949-1989) և II Սառը պատերազմի (ԱՄՆ/ՆԱՏՕ/ԱՄՆԾԱԿ ընդդեմ Եվրասիայի) ընթացքում: Տարածաշրջանները կարող են սահմանվել նաև՝ ըստ պետությունների իշխանության, ուժի՝ Դյուսիս-Չարավ:

Քաղաքակրթությունները՝ որպես կանոն, բաղկացած են ազգերից, որոնք նման են մշակութային իրողություններով. տարբեր քրիստոնեություններ, տարբեր իսլամներ: Ինչպես մենք կտեսնենք, քրիստոնեությունը դիտարկում է իրեն որպես այլընտրանք ամբողջ աշխարհի «անհավատների», «հեթանոսների» համար: Դա հին սովորություն է, որ կա մաև չինացիների մոտ, ովքեր տարբերակում են չորս տեսակի բարբարոսներ՝ հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան:

Պետք չէ, իհարկե, մոռանալ, որ պետություններն ու ազգերը կարող են լինել տարածաշրջանների և քաղաքակրթությունների անդամներ, որոնք այսօր կառուցում են դաշինքներ գլոբալացվող աշխարհում: Բաժանարար գծերը միշտ չէ, որ հստակ են:

Ուսումնասիրության համար ընտրված տասը մեզա կոնֆլիկտների մասին կարող ենք ասել գրեթե մույն, ինչ ասացինք մակրո կոնֆլիկտների մասին: Զլուծված կոնֆլիկտներն արգելակ են դառնում ողջ աշխարհի համար: Դիմամիկ աշխարհի փոխարեն, որտեղ մարդիկ, անկախ սեռից, տարիքից, ռասայից, դասակարգից, ազգությունից, քաղաքացիությունից, քաղաքակրթությունից, տարածաշրջանից, աշխատում են միասին ստեղծել բոլորի համար արժանապատիվ կյանք, աշխարհը չլուծված կոնֆլիկտի պարագայում «կանգ է առնում», դառնում պայթյունավտանգ, ինչպես գերտաքացած շարժիչն առանց յուղի՝ պայթեցնելով, այլ ոչ թե առաջ շարժելով մարդկությանը: Կոնֆլիկտների գերազանցումն ու փոխակերպումը օգնում են յուղել համաշխարհային մեքենան:

Որպես օրինակ կարող ենք դիտարկել I Սառը պատերազմը: Այն ավարտվեց առանց մեծ պայթյունի՝ Արևելքում այլախոհ շարժումների և Արևմուտքում խաղաղության շարժումների շնորհիվ: Միջուկային Դամոկլյան սրի ներքո կյանքը մորմալ լինել չէր կարող: Մարդիկ, ովքեր ապրում են ապագայի նկատմամբ վախով, մտածելով, թե երկիրը մի օր կարող է դառնալ ռադիոակտիվ անապատ, չեն կարող ազատ լինել. նրանք կորցնում են իրենց

ստեղծագործականությունը: Խորհրդային կոմունիզմն ուներ իր առավելություններն այն առումով, որ հիմնարար նյութական պահանջմունքների հիմքի վրա էր կառուցված հասարակությունը: Արևմտյան կապիտալիզմն էլ իր առավելություններն ուներ այն առումով, որ շուկան օգտագործում էր բոլորի ստեղծագործականությունը: Երկու մոդելները միասին կարող էին միավորվել բարձրագույն սինթեզում, բայց դա տեղի չունեցավ: Փոխարենն ունեցանք անկարգ շուկա և հուսահատ, անհեռանկար մարդկանց՝ միլիոնների, միլիարդների հասնող գործազրկություն:

Որպես օրինակ կարող ենք դիտարկել մահ II Սառը պատերազմը: ԱՄՆ-ի աքցանի շարժման մեջ էին հայտնվել մեծ եռյակի երկրները՝ Ռուսաստանը, Չեխոսլովակիան ու Զինաստանը: Ոչ մի լավ բան դրանից դուրս չէր գա՝ միայն մեկ այլ միջուկային սպառնալիք և ռեսուրսների անիմաստ վատնում, ռեսուրսներ, որ անհրաժեշտ են մարդկությանն ավելի լավ նպատակների համար: Նույնը վերաբերում է հյուսիս-հարավ կոնֆլիկտին, որին մենք քաջատեղյակ ենք, և որը սերտորեն կապված է կայուն զարգացման և գլոբալիզացիայի խնդիրների հետ: Շուկայական տնտեսության պայմաններում օրական մեկ դոլարից պակաս եկամուտն արժանապատիվ կյանք ապահովել չի կարող, ուստի անհրաժեշտ է փոխել կա՛մ վարձատրությունը, կա՛մ համակարգը, կա՛մ էլ երկուսը միասին:

Չինգ հարյուր տարի առաջ (մեզա կոնֆլիկտների հետևում մենք հաճախ գտնում ենք մեզա ժամանակ) Իսպանիայի պապը սկսեց մի գործընթաց, որն ավելի ուշ հայտնի դարձավ գաղութատիրություն և իմպերիալիզմ անուններով ու բերեց անասելի տառապանք՝ ցեղասպանություն: Անընդունելի է, որ որևէ անձ գողանա ուրիշի գույքը, առավել ևս՝ ստրկացնի այլ անձանց: Սակայն դարեր շարունակ մարդկության համար միանգամայն ընդունելի է եղել մի երկրի կողմից մյուս երկրի ողջ ունեցվածքը, այդ թվում՝ մարդկային ռեսուրսները յուրացնելը: Նույնիսկ գաղութներ չունեցող Նորվեգիան երկար տարիներ հարստություն է դիզել՝ դառ-

նալով տրանսպորտային գործակալ համակարգում: Սա կարևոր է, որովհետև միշտ կգտնվի ինչ-որ մեկը, ով շահույթ կունենա կոնֆլիկտից, նույնիսկ բռնությունից՝ այդ կերպ կանգնելով գերազանցման և փոխակերպման ճանապարհին:

Այս միջազգային դասակարգային կոնֆլիկտների հետևում թաքնված է քրիստոնեության և իսլամի միջև քաղաքակրթական կոնֆլիկտը: Ժամանակին իսլամը հարծակվեց և զավթեց քրիստոնեական Իսպանիան: Քրիստոնյաները մի քայլ առաջ գնացին և դաժան պատերազմ հայտարարեցին իսլամին՝ կազմակերպելով երկու դար տևած Խաչակրաց արշավանքները: Այս կոնֆլիկտում չկա խաղաղության պայմանագիր, կան միայն միլիոնավոր մարդիկ, ովքեր սպասում են կամ աղոտ հույս ունեն, թե շուտով ինչ-որ բան տեղի կունենա՝ Մեծ սրբազան պատերազմ կամ Մեծ սրբազան խաղաղություն:

Այնուհետև տեղի ունեցավ ինչ-որ Մեծ բան՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ը: Մեծ, որովհետև այն տեղի ունեցավ մեծ ԱՄՆ-ում՝ Վաշինգտոնում և Նյու Յորքում: Առնվազն մարդկության կեսի վրա այն անդրադարձավ, որովհետև մենք սպասում ենք ահաբեկչության և պետական ահաբեկչության հետագա զարգացումներին՝ դասակարգային ու քաղաքակրթական կոնֆլիկտի այս համակցության մեջ, որը սնուցվում է բռնի փոխվրեժի արատավոր շրջանից:

Բայց կան նաև գազաթնակետեր՝ Մանդելա կամ Դե Կլերկ և Գանդի: Նրանց համար չլուծված կոնֆլիկտը և բռնությունը երևույթներ են, որ վատնում են մարդկային ռեսուրսները: Նրանք ցանկացան դուրս բերել տարածաշրջանները, ռասաները, երկրները լճացումից:

Շատ մոր կոնֆլիկտներ են սպասում մեզ ապագայում, ու ցանկալի է լինել լավ մախապատրաստված՝ դրանց դիմագրավելու համար:

I ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ. ԲԵՎԵՈՒՑՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԲԵՎԵՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մենք վերադառնում ենք Սառը պատերազմին՝ իր հսկայական խնդիրներով և հակասություններով: Կողմերին տրվել էին ազդեցիկ թռչունների անուններ՝ բազեներ, բուեր, աղավնիներ: Այստեղ կոնֆլիկտում մեզ հետաքրքրում են բևեռացումն ու ապաբևեռացումը՝ իրենց հստակ դիրքերով:

Բևեռացում – «Ժողովրդավարությունն ընդդեմ բռնապետության» և «հակաֆաշիզմն ընդդեմ իմպերիալիզմի» պայքարում չի կարող լինել փոխզիջում: Մենք բռնեցքներ պետք է ցույց տանք և սպառնազինվենք այնքան, մինչև հակառակ կողմը չզիջի:

Ապաբևեռացում – Սառը պատերազմը = բևեռացում + սպառնազինությունների մրցավազք: Այս ամենը կարող է հանգեցնել մի պատերազմի, որը վերջ կդնի մարդկությանը: Մենք պետք է ապաբևեռանանք և զինաթափվենք:

Այս տրամագծորեն հակադիր դիրքերը հայտնաբերվեցին ոչ միայն յուրաքանչյուր դաշինքի և երկրի ներսում, այլև, և նույնիսկ ավելի շատ, եկեղեցիներում, համալսարաններում և այլն: Բևեռացումը հայտնաբերվեց նաև առանձին անհատների շրջանում՝ վերնախավում: ԱՄՆ-ն ավելի շատ էր խոսում պատերազմի և բևեռացման մասին, իսկ Խորհրդային Միությունը՝ ավելի ու ավելի խաղաղության և ապաբևեռացման մասին:

Փոխզիջման հնարավոր տարբերակներից մեկը, որին բավական հաճախ էին դիմում կողմերը, գազաթնաժողովներն էին: Դրանք դրամատիկ էին, որովհետև բևեռացման տրամաբանությունը ամբողջովին հակադրվում էր ցանկացած նման հանդիպման: Թշնամին մտքում ունի միայն մեկ գաղափար՝ հաղթել մեզ: Այդ պատճառով մենք պետք է կանխենք նրա կողմից մեր նկատ-

մամբ ցանկացած ներգործություն (բևեռացում) և լինենք բավականաչափ ուժեղ՝ վախեցնելու նրան և հաղթելու ցանկացած պատերազմ, եթե գործը հասնի դրան (սպառնալիքում, արդիականացում): Մենք կարող ենք վստահել միայն մեր առաջնորդներին: Այստեղից էլ առաջ են գալիս գազաթնաժողովները: Ակնկալիքներն այս հանդիպումների արդյունքներից անհամեմատ ավելի շատ էին, քան ելքերը:

1967 թ.-ին Եվրոպայի Խորհրդի համար իրականացված հետազոտական ծրագրում՝ Վաշինգտոնից մինչև Մոսկվա և Օսլոյից մինչև Աթենք 19 արտասահմանյան գրասենյակներում հեղինակը գործում էր փոքր-ինչ տարբեր կերպ: Երկխոսությունները կազմակերպվում էին միաժամանակ միայն մեկ կողմի հետ հետևյալ թեմայով՝ ինչպե՞ս Եվրոպան կարող էր ավելի լավ կազմակերպվել համագործակցության համար: Մի շարք համագործակցական հարցեր ու կազմակերպման մոդելներ քննարկվեցին: Մասնակիցները հիմնականում արտգործնախարարությունների քաղաքական բաժինների ղեկավարներն էին:

Համագործակցության մոդելը, որ արժանացավ գրեթե բոլորի համաձայնությանը, ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովն էր Եվրոպայի համար: Սակայն խնդիրն այն էր, որ երկխոսությունների մասնակից բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի շատ մտահոգված էին անվտանգությամբ: Ումանք առաջարկեցին մաքուր բևեռացում՝ մինչև հակառակ կողմը կհանձնվի: Մյուսները կողմ արտահայտվեցին բևեռացմանը՝ համակցված փոխադարձ և հավասարակշռված զինաթափմամբ: Երրորդները քվեարկեցին հոգուտ միակողմանի զինաթափմանը: Շատ քչերը ցուցաբերեցին որևէ հետաքրքրություն կապիտալիզմի և սոցիալիզմի միջև կոնֆլիկտի լուծման համար: Լավագույն դեպքում կողմերը մեջտեղում գտնվող կետում մերձեցման հույս ունեին՝ որպես փոխզիջումային գործընթաց:

1967 թ.-ին այնքան էլ շատ բան անհրաժեշտ չէր այս երկուսը կոնկրետ առաջարկության մեջ միավորելու համար. մշտական

ՄԱԿ-ի անվտանգության հանձնաժողով Եվրոպայի համար, մինչև Հելսինկիի համաժողովը կշարժվեր ճիշտ այդ ուղղությամբ (սակայն առանց ՄԱԿ-ի), բաց լինել համակարգում բոլոր անվտանգության խնդիրների նկատմամբ և բոլոր երկրների համար: Բայց բեռնացման շրջանակներում հանձնաժողովի կառուցումը պաշարվեց:

Եվրոպայի խորհուրդը թշնամաբար էր տրամադրված նույնիսկ այս համեստ գաղափարի նկատմամբ.

«Պարոն Գալթունգն առաջարկել է, որ մենք նստենք և քննարկենք Եվրոպայի խնդիրները կոմունիստների հետ: Ես կցանկանայի մի բան ասել. նա, ով նման բան է ասում, ի՞նքն է կոմունիստ», - այսպես ասաց ֆրանսիական հանձնաժողովի նախագահը: Պատմությունը, թե ինչպես այս գաղափարը որոշակի դեր խաղաց Սառը պատերազմի ավարտի վրա, ներկայացվել է *«խաղաղության որոնումներ»* աշխատության մեջ:

Գերազանցումը ապաբեռնացումը խթանելու համար բեռնացված երկխոսության կիրառման մեջ էր գտնելով ինչ-որ բան երկու կողմերի շահերում: Հանձնաժողովը կտարբերվեր գազաթնաժողովից, որովհետև բոլոր երկրները կմասնակցեին աշխատանքներին, ընդ որում՝ այդ մասնակցությունն ավելի ցածր մակարդակով կապահովվեր: Եվ այն կտարբերվեր զինաթափման վերաբերյալ համաժողովներից՝ լինելով ավելի շատ կոնֆլիկտին և ավելի քիչ՝ սպառազինություններին կողմնորոշված:

Ինչպես Էկվադորի և Պերուի միջև կոնֆլիկտում, գերազանցումը հեշտությամբ ըմբռնվեց: Կրկին կար որոշակի հոգնածություն և ամոթի որոշակի զգացում: Առաջարկության հիմքը բոլոր կողմերի ներգրավմամբ երկխոսությունների լայն շարքն էր: Սա այն ծրագիրն էր, որում ծնվեց «ԹՐԱՆՍԵՆՌ» մեթոդը: Ցանված սերմը պտուղներ տվեց երկու տասնամյակ անց:

II ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԱԿ-Ը՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ

«Միացյալ Նահանգների բանակի իրական խնդիրն է մեր տնտեսական և մշակութային հարձակման համար աշխարհին ավելի անվտանգ դարձնելը: Այս նպատակների նվաճման համար կլինեն զգալի քանակով սպանություններ», - գրում է պլանավորման ղեկավարը Պենտագոնում:

(Սյուզան Ջորջ, «Կորպորատիվ ուտոպիստական երազանք»,

ԱՅԿ-ն և Գլոբալ պատերազմական համակարգը, Սիեթլ, 1999 թ.-ի նոյեմբեր)

Հեղինակ – Համաշխարհային գերիշխանություն + պետական բռնություն = գեոֆաշիզմ:

ԱՄՆ-ն ունի աշխարհաքաղաքական օրակարգ, որի արմատները գտնվում են 19-րդ դարում: Այդ օրակարգն այժմ տեղափոխվել է 21-րդ դար դեպի արևելք՝ ՆԱՏՕ-ի ընդլայնման (մինչ այժմ լեհական, չեխական և հունգարական անդամությամբ) և դեպի արևմուտք ԱՄՆԾԱԿ՝ ԱՄՆ-ճապոնիա անվտանգության կազմակերպության միջոցով: Ինչպես երևում է համաշխարհային տերության կենտրոնի հյուսիս-արևմտյան անկյունից՝ ԱՄՆ-ից, Եվրասիական մայրցամաքն իսկապես աշխարհաքաղաքական չարիքի աղբյուր է: Լատինական Ամերիկան ետևի բակն է և հեշտությամբ է վերահսկվում: Աֆրիկան կարևոր չէ: ԱՄՆ-ի համար Եվրասիան կաթսա է, որից դուրս է գալիս պոպուլիզմ, պատերազմ և ահաբեկչություն, միլիարդավոր բազմերանգ մարդիկ, ովքեր ունեն կյանքի մասին տարբեր հայացքներ և արմատականություն: Բացի այդ, Հարավային Ասիան ունի երկու նոր միջուկային տերություններ՝ Հնդկաստանը և Պակիստանը: Կենտրոնական Ասիան ունի նավթ և մարտական հենակետեր ԱՄՆ-ի համար: Վեր-

ջապես, կա Հարավարևելյան Ասիան, որը մինչև վերջերս ուներ շատ ուժեղ տնտեսական աճ: Այս ամենը Եվրասիայում է:

Նույնը, անշուշտ, վերաբերում է Ռուսաստանին, Բելառուսին, Ուկրաինային և Չինաստանին՝ չհաշված խնդրահարույց Եվրասիական ծայրամասերը՝ Կորեական թերակղզին և Հարավարևելյան Եվրոպան: «Գլոբալ շահերով գլոբալ ազգը» (ԱՄՆ) ունի իր պատճառները՝ բերելու դաշինքներին արմատական, պայթյունավտանգ բաժանարար գծերի. կաթոլիկների-բողոքականների և սլավոնականների-ուղղափառների բաժանում Եվրոպայում ու բաժանում սինտոյական ճապոնիայի և մնացած Ասիայի միջև: Ամբողջովին պաշտպանողական ճապոնիան ոչ ոքի համար սպառնալիք չէ: Բայց խորը համագործակցությունն աշխարհի ամենաշարժուն ռազմական տերության հետ այլ ազդանշան է ուղարկում նրա հարևաններին: Կրկնակի ընդլայնումը՝ Եվրասիայի երկու կողմերում «խարիսխներով» (ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել դաշինքը և ԱՄՆ-ճապոնիա-Հարավային Կորեա միությունը) տրամաբանորեն հետևում են Ռուզվելտի «JCS570/2» հրահանգից՝ «Աստվածաշնչի հիմքից»: Քարտեզը ցույց է տալիս մեզ, թե ինչպես կրկնակի ընդլայնումը կարող է ընկալվել որպես աշխարհի բնակչության 40 %-ը կազմող մեծ եռյակի՝ Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի դեմ երկակի աքցանի շարժում:

I. *Սառը պատերազմը* ԱՄՆ/ՆԱՏՕ/ԱՄՆԾԱԿ և Խորհրդային Միություն/ՎԴԿ (Վարշավյան պակտ) միջև էր: Խորհրդային Միությունը և ՎԴԿ-ը կազմալուծվեցին, ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն և ԱՄՆԾԱԿ-ն ամրապնդվեցին: Սա կարող էր լինել բացասական գերազանցման ներածություն՝ ո՛չ ՎԴԿ, ո՛չ էլ ՆԱՏՕ/ԱՄՆԾԱԿ, այլ ընդհանուր զինաթափում: Բայց ԱՄՆ-ի մեկնաբանությունը հաղթանակն էր, և այն պատրաստվում էր քաղել հաղթական պտուղները:

II. *Սառը պատերազմը* ԱՄՆ-ի/ՆԱՏՕ-ի/ԱՄՆԾԱԿ-ի և Ռուսաստանի/Հնդկաստանի/Չինաստանի միջև է: Գիրքը գրելու պահին (2003 թ.) ԱՄՆ-ը հմտորեն մանևրեց մյուս երեքին՝ առաջնահերթությունը տալով մահմեդական ինքնավարության դեմ պայքարին (Չեչնիա, Քաշմիր, Սինցզյան):

Սա երկար չի տևի: II Սառը պատերազմն ուժեղ կոնֆլիկտի ֆորմացիա է:

Եթե Ռուսաստանը և Չինաստանը լուծեն իրենց կոնֆլիկտները, եթե Ռուսաստանը հասնի նոր համաձայնությունների Յնդկաստանի, Չինաստանի, Պակիստանի հետ և միանա ԱՄՆ-ի կողմից վտարյալ անվանվող պետությունների (Սերբիա, Լիբիա, Իրաք, Իրան, Չյուսիսային Կորեա) հետ, ապա մայրցամաքը կմիավորվի ընդդեմ ԱՄՆ-ի/ՆԱՏՕ-ի/ԱՄՆԾԱԿ-ի: Աննշան միջադեպ խնդրահարույց սահմանի երկայնքով Լեհաստանի և Ուկրաինայի միջև կամ Կորեական թերակղզում՝ Չյուսիսային Կորեա/Չարավային Կորեա/Ճապոնիա եռանկյունու մեջ, և բոլոր կողմերում միջուկային տերություններով այս բաժանարար գծերը կժայթքեն հրաբխի նման: Ըստ էության, դրանց մեջտեղում չեն լինի չեզոք երկրներ, քանի որ բոլորն էլ կծառայեն որպես բուֆերներ, ինչպես Ֆինլանդիան, Շվեդիան, Ավստրիան, Չարավսլավիան I Սառը պատերազմում:

Եվրասիան ԱՄՆ-ի տիրապետության տակ՝ Բժեզինսկու «մեծ շախմատային խաղը», նույնքան անհեթեթ է, ինչքան Եվրասիայի կողմից գերիշխվող ԱՄՆ-ը: Հին փոխգիջումը՝ «շահերի ոլորտները», ավելի լավ է միայն այն պայմանով, որ ԱՄՆ-ը հեռանա այն ամենից, ինչ բժախնդրորեն կառուցել է Արևելյան Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Արևելյան Ասիայում: Ամբողջ աշխարհը՝ որպես շահերի ոլորտ հայտնի է նաև որպես վեհության մոլուցք: Դրական գերազանցումը հինգ գերտերությունների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի, Յնդկաստանի, Չինաստանի համաշխարհային բռնապետության իմաստով, չափազանց հիշեցնում է Անվտանգության խորհուրդը չորս քրիստոնյա և մեկ կոնֆուցիական երկրով և չներկայացված ՄԱԿ-ի անդամ 56 մուսուլմանական երկրներով: Շատ ավելի լավ փոխակերպում կստացվեր բացասական գերազանցման միջոցով՝ առանց գերտերությունների:

1. Վերացնել վետոյի իրավունքը, ընդլայնել Անվտանգության խորհուրդը՝ դարձնելով այն ներկայացուցչական խորհուրդ, որի

անդամները կլինեն եվրոպական միությունն ու Իսլամական համաժողովի կազմակերպությունը (ԻՀԿ):

2. Կազմել Միացյալ ազգերի կազմակերպության ժողովուրդների վեհաժողով (ՄԱԿԺՎ), որի անդամ երկրներից յուրաքանչյուրում ազատ և գաղտնի քվեարկությամբ կընտրվեն ներկայացուցիչներ: Ինչպես Արևելյան Գրենլանդիայի դեպքում, «բացասական գերազանցումը» հաճախ կարող է աշխատել դրականորեն, իսկ «դրական գերազանցումը»՝ բացասականորեն:

3. Իսկ այնուհետև՝ որպես հնարավոր առաջին քայլ. ՄԱԿ-ը ԱՄՆ-ից դուրս և ԱՄՆ-ը ՄԱԿ-ից դուրս, եթե նրանք չեն կարող ընդունել համաշխարհային ժողովրդավարությունը պետության և ժողովուրդների մակարդակում:

ՀՅՈՒՄԻՍ ԵՎ ՀԱՐԱՎ. ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՅԱՆՋՄՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՈՑՆԵՐ

Կոնֆլիկտաբան –

Ժամանակակից հասարակությունը հիմնվում է երեք հենասյուների վրա՝ պետություն, կապիտալ և քաղաքացիական հասարակություն (տեղական իշխանություններ և հասարակական կազմակերպություններ), որոնց նպատակը «զարգացումն» է: Ի՞նչ է նշանակում այդ նպատակը ձեզանից յուրաքանչյուրի համար: Քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային աճ:

Պետություն –

Կապիտալ.

Քաղաքացիական

հասարակություն –

Հարստություն, շրջանառություն և աճ:
Բոլորի հիմնարար պահանջմունքների բավարարում, արժանապատվություն և աճ:

Կոնֆլիկտաբան –

Ինչ էլ որ այն նշանակի, դուք բոլորդ, կարծես թե, ավելի շատ խոսում եք աճի մասին: Բայց եթե նույնիսկ հասնենք այդ աճին պետության ներսում, այս նյութապես սահմանափակ աշխարհում վաղ թե ուշ կհանդիպենք արտաքին սահմանափակմանը: Կա՞ արդյոք նաև նվազագույն, հստակ ներքին սահմանափակում:

Պետություն/Կապիտալ –

Ոչ, մենք ցանկանում ենք ավելին:

*Քաղաքացիական
հասարակություն –
Կոնֆլիկտաբան –*

Այո՛, կա՝ հիմնարար պահանջումները:

Այլ կերպ ասած, գոյատևում՝ բարեկեցությամբ, ազատությամբ և ինքնությամբ: Մենք՝ մարդիկ, կառավարվել ենք բավականին երկար ժամանակ առանց պետության և կապիտալի, բայց երբեք՝ առանց բնության: Բնությունը կարողացել է բավականին լավ կառավարվել թե՛ առանց մարդկանց, թե՛ առանց պետության, թե՛ առանց կապիտալի: Այլ կերպ ասած, սկզբում բնության պահանջումներն են, այնուհետև՝ մարդկանց և, վերջապես, պետության և կապիտալի: Մենք կարող ենք առաջ քաշել բնության և մարդկանց զարգացման հայեցակարգն այնպես, որ երկուսն էլ բացվեն ծաղիկների նման: Մարդկանց անհրաժեշտ է սնունդ, ջուր, օդ, հագուստ, կացարան, քուն, առողջություն, սեքս, երեխաներ և կրթություն: Ազատությունը և

ինքնությունն առկա են կառուցվածքում
ու մշակություն: Գոյատևման բանալին
գտնվում է կոնֆլիկտի փոխակերպման
մեջ այնպես, որ կոնֆլիկտները չհամ-
գեցնեն մահացու բնություն:

Բայց պետությունը միտում ունի փնտրելու ուժի դրսևորում-
ներ թանկարժեք պալատներում, հուշարձաններում, բանակնե-
րում: Իսկ կապիտալը պետք է վաճառի և գնի իրեր, հասնի շրջա-
նառության՝ հարուստ դառնալու համար: Երկուսն էլ ուժեղ են և
կարող են բնությունից ու մարդկանցից վերցնել այն, ինչ իրենց
անհրաժեշտ է: Սակայն արդյունքը թշվառությունն է ու մահը:

Խնդիրը ոչ թե հյուսիսի և հարավի միջև հարաբերություննե-
րում է, այլ պետության ու կապիտալի և բնության ու մարդկանց
միջև հարաբերություններում: Պետությունն ու կապիտալն այն-
քան ուժեղ են հյուսիսում, որ կարող են նույնիսկ վերցնել հարա-
վի բնության ու մարդկանց ռեսուրսները: Բացի այդ, պետությունն
ու կապիտալը բավական կայուն համակեցություն են կազմում, ո-
րում կապիտալը վճարում է հարկեր պետությանը՝ զինված ուժե-
րի և ոստիկանության կողմից պաշտպանված լինելու դիմաց: Իսկ
մարդիկ և բնությունն արդի հասարակությունում այնքան էլ հակ-
ված չեն համակեցության:

Մենք ունենք հասարակություն, որտեղ պետությունն ու կա-
պիտալը գերիշխում են, մինչ դեռ բնությունը սպառված ու աղ-
տոտված է, իսկ մարդիկ տառապում են: Հակառակ միտումը
գտնելու համար մենք պետք է վերադառնանք պետության և կա-
պիտալի ծագման վաղ ժամանակաշրջան: Ոչ ոք չի ժխտի, որ պե-
տությունը և կապիտալը ժամանակին շատ օգտակար են եղել
ընդհանուր աճի խթանման գործում: Տնտեսագետների կողմից
փայփայված զարգացման հայեցակարգը՝ համախառն ազգային
արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով, բիզնեսից փոխառված
հաշվապահական հաշվառման հասկացություն է: Իսկ հիմնարար

պահանջնունքները հայտնվեցին միայն մեկ տասնամյակ առաջ ՄԱԿ-ի մարդկային զարգացման ինդեքսի և *Մարդկային զարգացման զեկուլոյցի* միջոցով:

Կոմֆլիկտի դրական գերազանցումը կլիներ պետության և կապիտալի հետ սոցիալական պայմանագիրը, որը կենտրոնում կդներ քաղաքացիների և սպառողների հիմնարար պահանջնունքների բավարարումը: Մարդիկ և նրանց պահանջնունքներն ամեն ինչի չափումը կլինեին: Բայց որպեսզի սա տեղի ունենա, մարդիկ պետք է վերահսկեն պետությունն ու կապիտալը: Փոխզիջումը կլիներ պետությունը ներկայացնող նախարարների, կապիտալը ներկայացնող տնօրենների և աշխատողների աշխատավարձերի միջև խելամիտ հարաբերակցությունը: Իսկ բացասական գերազանցումը, այն է՝ ո՛չ պետություն-կապիտալ, ո՛չ բնություն-մարդիկ, պատմության ավարտը կդներ:

Ի՞նչ տեղի ունեցավ «հյուսիսի և հարավի» հետ: Աշխարհագրական կողմնորոշումը ստիպել է մեզ հավատալ, որ աղքատների և հարուստների միջև տարբերությունը կարող է նվազեցվել «աղքատության դեմ պատերազմում», եթե հյուսիսի «պետությունն ու կապիտալը» համագործակցեն հարավի «պետության և կապիտալի» հետ: Բայց այդ «պատերազմը» սովորաբար հանգեցնում է նրան, որ հարուստները պետությունում ու կապիտալում դառնում են էլ ավելի հարուստ: Իրականում «աղքատության դեմ պատերազմը» վերածվում է աղքատների և բնության դեմ պատերազմի:

Դրական գերազանցումը, այն է՝ հյուսիսի պետության ու կապիտալի և հարավի պետության ու կապիտալի միջև համագործակցությունն ավելի բազմակողմանի կազմակերպությունների ստեղծման միջոցով, նույնպես լուծում չէ: Չի օգնի նաև, եթե մեկը գերիշխի մյուսին: Խոշոր փոխանցումների ձևով հյուսիսի պետության կողմից փոխզիջումը հարավի պետությանը (աջակցություն զարգացման նպատակով) կհարստացնի հարավի պետությանը և միայն երբեմն կօգնի մարդկանց ու բնությանը:

Այս կոնֆլիկտի լուծումը բացասական գերազանցումն է՝ հյուսիսի քաղաքացիական հասարակության և հարավի քաղաքացիական հասարակության միջև ուղղակի համագործակցության միջոցով: Տեղական համայնքները և նրանց արտադրանքը մարդկանց հիմնարար պահանջումներին բավարարման համար պետք է ուժեղացվեն, իսկ սա լավագույնս կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության միջոցով, որոնց աջակցում, բայց կոոպտացիայի չեն ենթարկում պետությունը և կապիտալը: Պորտո Ալեգրիի գործընթացը մատնանշում է այս ուղղությունը:

ԳԼՈՒԲԱԼՑՈՒՄ. ԱՅՈՒՆԵՐՔԵՎԻՑ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՐԵՆ

Գլոբալացման գործընթացում հստակորեն կարելի է տեսնել, թե ինչ է տեղի ունենում, երբ կապիտալը վերահսկում է պետությանը, և երկուսը միասին վերահսկում են մարդկանց՝ փակ դռների հետևում հանդիպումներում: Կապիտալը, *սեփականաշնորհման* միջոցով ստանձնելով պետության տնտեսական գործունեությունը, աշխարհը վերածում է *անծայրածիր շուկայի* և վերացնում է տեղական շուկաները: Թշվառությունն ավելանում է, որովհետև մարդիկ այլևս չեն կարողանում ձեռք բերել այն, ինչի կարիքն ունեն հիմնարար պահանջումներին բավարարման համար, օրինակ՝ չեն կարողանում հայթայթել սնունդ. ստիպված են ձեռք բերել այն փողով՝ *դրամայնացման* միջոցով, բայց կարող են վաստակել փող միայն աշխատանքների միջոցով, որոնք գոյություն չունեն՝ *բարձր աշխատանքային արտադրողականության* պատճառով: Կապիտալի և կապիտալի միջև մրցակցությունը հանգեցնում է գնանկման, բայց ման՝ ավելի բարձր գործազրկության: Այս չորս գործոնները միասին հանգեցնում են մարդկանց շրջանում գնողունակության նվազման, սնանկացումների:

Սա գործում է և՛ հյուսիսում, և՛ հարավում, բայց հարավն ավելի խոցելի է: Այսպիսով՝ մենք ստանում ենք հսկայական բողոքներ վերնախավի՝ փակ դռների հետևում անցկացվող հանդիպումների դեմ, օրինակ՝ Համաշխարհային սոցիալական ֆորումը Պորտո Ալեգրիում 2003 թ.-ի հունվար ամսին՝ 100.000 մասնակիցներով ու 1.700 սեմինարներով:

Աղքատների և հարուստների միջև ջրբաժանն ավելի ընդգծված է դառնում: Էկոլոգիական, տնտեսական, քաղաքական, ռազմական և մշակութային փախստականների թիվը նույնպես ավելանում է: Ցածր և բացասական հարկերը՝ «խթանները», նվազեցնում են պետությունների և տեղական համայնքների եկամուտը, մինչդեռ կապիտալը ներկայացնող որոշ մարդիկ դառնում են սարսափելի հարուստ:

Մշտապես աճող գնողունակության տարբերությունը կհանգեցնի շահարկման, որն իր հերթին կհանգեցնի ֆոնդային բորսաների աշխատանքի խախտմանը, երբ բորսային գները իրականության հետ կապ չունեն: Արժույթի միջազգային հիմնադրամը նման է միայն մեկ դեղամիջոցով բժիշկի. պետության, ընկերությունների անկախություն (սեփականաշնորհում, ավելի ցածր հարկեր, արժեզրկում) աշխատողներից (ճկունություն, պայմանագրային աշխատանք), երկրից (շահույթի հայրենադարձություն), մարդկանցից (ոչ մի սուբսիդիա հիմնարար պահանջումների համար, չքեղ ապրանքների չհարկում): Մարդկանց ամբողջովին օրինական հիմնարար պահանջումների դեմ դուրս եկած ամբողջովին անօրինական համակարգ:

Օրինական գլոբալիզացիան կհամախմբեր երկու սեռերին, բոլոր սերունդներին, ռասաներին, դասակարգերին, ազգերին և պետություններին՝ համատեղ աշխատելու բոլորի արժանապատիվ կյանքի համար: Միայն կատարելագործված ՄԱԿ-ը կարող է անել նման բան և արդեն շատ բան արել է: Փոխարենը մենք ունենք մի ծաղրանկար, որը գլխավորապես կառավարվում է միջին տարիքի տղամարդկանց, սպիտակամորթների, տնտեսական վե-

րին դասի և անգլոսաքսերի կողմից մի քանի այլ ազգերի մասնակցությամբ: Գերիշխողն է ԱՄՆ-ը՝ ոչ առանց Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և Առևտրի համաշխարհային կազմակերպության ջանքերի:

Անօրինականի և օրինականի միջև նման կոնֆլիկտում գերազանցում փնտրել չէ, անհրաժեշտ են այլընտրանքներ.

- *տեղական համայնքի թարմացում* – տեղական մակարդակում կամ տեղական համայնքների համադաշնության մակարդակում արտադրություն հիմնարար պահանջմունքների բավարարման համար՝ դրանց բավարարումը երաշխավորելու, և այնպիսի դրական կողմնակի հետևանքներ ստանալու համար, ինչպիսիք են տեղական ստեղծագործականությունը, ցանցերը:

- *պետության թարմացում* – տիպական ապրանքների արտադրություն պետության կամ պետությունների համադաշնության ներսում՝ դրական երկրորդական արդյունքներ ստանալու, աղտոտումը նվազեցնելու, ավելի լավ բաշխում ապահովելու, հանրային տարածությունն անվտանգ, բոլորի համար մատչելի, գեղագիտական և ընդհանուր օգտագործմանն ուղղված դարձնելու համար,

- *ընկերության թարմացում* – ընկերությունները պետք է առաջնահերթություն տան մատչելի գներով հիմնարար պահանջմունքների բավարարմանն ուղղված արտադրանքին, ստանձնեն ավելի շատ սոցիալական պատասխանատվություն, իսկ այնուհետև համապատասխանաբար պարգևատրվեն («girlcott») կամ պատժվեն («boycott») սպառողների կողմից,

- *տնտեսական տեսության թարմացում* – տեսության հիմքում պետք է լինեն ոչ թե պահանջարկն ու շահույթը, այլ հիմնարար պահանջմունքներն ու դրանց բավարարումը:

- *քաղաքացիական հասարակության թարմացում* – գլխավոր խնդիրը կլինի տեղական իշխանությունների, պետության և ընկերությունների հետ երկխոսությունն այնպես, որ ընկերությունների պարգևատրումը և բոյկոտը հնարավոր լինի կազմակեր-

պել ազատ շուկայում աճող սպառողական գիտակցության միջոցով,

- *լրատվամիջոցների թարմացում* – լրատվամիջոցներն ազատելով կապիտալի և պետության շահերով պայմանավորված գրաքննության բոլոր տեսակներից՝ ուղղել դրանց տնտեսական հարցերի վերաբերյալ հաշվետվությունն ավելի շատ դեպի հիմնարար պահանջմունքներ և բաշխում, քան դեպի ֆոնդային բորսաներ, շահույթ և աճ:

- *գլոբալ կառավարման թարմացում* – նման թարմացման հնարավոր է հասնել սպեկուլյատիվ երևույթների խոշոր հարկման, մարդկային հիմնարար պահանջմունքների բավարարումը որպես հիմնարար իրավունք սահմանելու և ՄԱԿ-ի Ժողովուրդների Վեհաժողով ստեղծելու միջոցով, որն ուղղակիորեն կդառնա ժողովրդավարական աշխարհի խորհրդարան:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԵՐԱՋԱՆՑՈՒՄ

Ծաղիկը չի «զարգանում»՝ միտք ունենալով դառնալ ամենամեծ ծաղիկը, այն զարգանում է իր ներուժի բացահայտման միջոցով: Մարդը ճիշտ նույն կերպ է զարգանում: Նա չի ավելացնում իր քաշը՝ միտք ունենալով ամենածանր մարդը դառնալ: Ո՛չ ծաղիկները, ո՛չ էլ մարդիկ հավերժ չեն «աճում»: Զարգացումն իր սահմաններն ունի:

Իսկ ի՞նչ կասեք մարդկության մասին. այն նույնպես զարգանում է՝ բացահայտելով բարու և չարի իր ներուժը: Մենք չգիտենք, թե դա ուր կտանի մեզ, բայց արդյո՞ք պարտավոր չենք թույլ տալ, որ այդ գործընթացը շարունակվի՝ նույնիսկ եթե մարդկության նպատակը չի կարող լինել հավերժ կյանքն այս երկրագնդի վրա, այլ միայն կյանքը՝ որոշակի ժամանակային սահմանափակմամբ: Այլ կերպ ասած, նպատակը կարող է լինել կա-

յուն զարգացումն, ապագա սերունդների համար երկրագնդի վրա կյանքի նոր հնարավորություններ ստեղծելը: Մենք այն կարծիքին ենք, որ մարդիկ ունեն ավելի լավ բաների համար վերածրագրավորվելու ընդունակություն, ուստի և՛ ինքնապահպանման պարտականություն: Եթե լինեինք այն կարծիքին, թե մարդկությունն անդամալիորեն շարժվում է դեպի զառիվայր և, որ բարին սպանվել է չարի կողմից (ինչպես սկանդինավյան դիցաբանությունում Բալդուրն էր սպանվել Լոքիի կողմից), ապա էվթանազիան կլիներ ավելի լավ լուծում, քան կայունության ձգտումը:

Ձայն ներկայից – Բայց ապագան երբեք որևէ բան չի արել ինձ համար:

Ձայն անցյալից – Եթե մենք ձեզ նման մտածեինք, ապա դուք նույնիսկ գոյություն չէիք ունենա:

Ձայն ապագայից – Մենք այն ճանապարհն ենք, որով դուք պետք է անցնեք հետագա զարգացման համար:

Սերունդների միջև կոնֆլիկտները զարգանում են պատմական ժամանակի մեջ: Կոնֆլիկտի տեսությունը և պրակտիկան մեծ մասամբ կողմերի միջև այնպիսի կոնֆլիկտների մասին են, որոնք ընթանում են միաժամանակ: Յուրաքանչյուր սերնդի հիմնական նպատակը սեփական բարեկեցությունն է: Յուրաքանչյուր սերունդ ձգտում է բավարարել իր հիմնարար պահանջմունքները: Մենք տառապում ենք ներկայով:

Կոնֆլիկտն առաջանում է այն ժամանակ, երբ մի սերունդը անշրջահայացությամբ կանգնում է ապագա սերունդների ճանապարհին:

- *տնտեսապես*՝ շրջակա միջավայրի աղտոտմամբ և սպառմամբ,
- *ռազմականորեն*՝ բռնության շղթաները վրիժառության և փառքի որոնումներում խթանելով,
- *քաղաքականորեն*՝ չփոխակերպված կոնֆլիկտներով ու անդառնալի գործողություններով,

- *մշակութորեն*՝ նմանատիպ հետևանքներով մշակույթներն ընդունելով:

Կայունության հայեցակարգը գերազանցում է տնտեսությունն ու էկոլոգիան ու մատնանշում այն, ինչ գտնվում է դրանց սահմաններից դուրս: Մենք խոսում ենք ապագա սերունդներին աշխարհն ավելի լավ վիճակում հանձնելու մասին: Աշխարհ, որտեղ շրջակա միջավայրի բազմազանության մեջ գերիշխում է խաղաղ համակեցությունը, որտեղ ապրում են բնությունից հնարավորինս քիչ տուժած և բնության միջոցով իշխելու ցանկությանը չխեղաթյուրված մարդիկ, ովքեր կարող են այնպես փոխակերպել կոնֆլիկտները, որ դրանք կարգավորվեն ստեղծագործականորեն, ոչ թե բռնի կերպով:

Բայց իրականում պատկերն այլ է. տեղի է ունենում շրջակա միջավայրի աղտոտում և ռեսուրսների սպառում, աճող բնություն, այնպես որ կոնֆլիկտների կարգավորմանն ուղղված իմաստությունը նվազում է, և մշակույթները, որոնք հակազդում են այս ամենին, մղվում են հետին պլան: Ապագայում գալիք սերունդների վրա դրված չլուծված խնդիրների բեռը կավելանա այն բացառությամբ, որ աշխարհի տնտեսապես բարձր դասերը կունենան ավելի բարձր կենսամակարդակ: Իբրև կանխատեսում՝ կավելանա բնությունների քանակը, մեծ թափ կստանա զանգվածային միգրացիան դեպի ոչ խիտ բնակեցված տարածքներ և մարդկությունը գործ կունենա չորս հիմնական չարիքների հետ Հայտնությունից 6: 1-7՝ նվաճում, պատերազմ, սով և ժանտախտ: Ի՞նչ կարող ենք առաջարկել՝ ընդդեմ այս եսասիրության, ապագա սերունդների հետ համերաշխության բացակայության և կարճաժամկետ հեռանկարների, որոնք արգելափակում են ապագա սերունդների բարեկեցությունը:

Ամերիկյան հնդկացիների խորհուրդը հետևյալն է,- «Մտածեք ձեր գործողությունների հետևանքների մասին հաջորդ յոթ սերունդների համար», - գերազանց է և մատնացույց է անում այն, ինչն այսօր անվանում են ապագայի ուսումնասիրություններ:

Բայց մենք խոսում ենք շատ ավելի լայն ժամանակային հորիզոնների մասին, քան կարող են ներառել նման ուսումնասիրությունները:

Ուսուցման եղանակներից մեկը կարող էր իրականացվել ընտանեկան, կենցաղային իրավիճակում (*«oikos»*), որտեղ երեք կամ չորս սերունդներ ապրում են սերտ համագործակցության պայմաններում՝ այնքան սերտ, որ համերաշխությունը դառնում է ամենօրյա անհրաժեշտություն: Համերաշխությունը նաև հետա-հայաց է՝ ծնողների և տատիկների ու պապիկների նկատմամբ՝ մի բան, որը հեշտությամբ է մոռացվում, երբ շեշտն այդքան նպատակասլաց կերպով դրվում է ապագային կողմնորոշված համերաշխության վրա այնպես, որ տարեցները նետվում են ծերանոցներ՝ նույնիսկ իրենց կամքին հակառակ:

Մյուս մոտեցումը կարող էր լինել հասարակության և միջազգային հանրության մեջ ուժերի հավասարակշռության փոփոխությունն այն խմբերի ուղղությամբ, որոնք իրենց իմաստությամբ առավել հայտնի են՝ երկարաժամկետ հեռանկարներում ավելի ամբողջական տեսակետ, ավելի գլոբալ կողմնորոշում և մարդկային հիմնարար պահանջմունքների նկատմամբ ավելի շատ հարգանք ստանալու համար: Այս ամենը պետք է հատկապես ուղղված լինի տարեցներին և կանանց: Այսօր կանայք շարժվում են դեպի իշխանության դիրքեր, իսկ ավագ սերունդն՝ այլ ուղղությամբ: Առաջին միտումը պետք է խրախուսվի, իսկ երկրորդը՝ վերացվի:

Դիտարկման դաշտում պետք է լինի նաև զանգվածային կրթության և կրոնական, հավիտենականությանը կողմնորոշված կազմակերպությունների՝ որպես սերնդային տարբերությունների միջև համերաշխության կրողների, մոբիլիզացումը: Կայունությունը մետաֆիզիկական օրինականացման կարիք ունի: Ծախսերի և շահույթների եսասիրական, կարծաժամկետ վերլուծությունը հանգեցնում է անշրջահայացության, որովհետև սերունդների միջև առևտրային պայմաններն անհամաչափ են: Ապագա սե-

րունդները ոչինչ չեն կարող անել մեզ համար, մինչդեռ մենք կարող ենք որոշել նրանց լինելը, չլինելը կամ բարեկեցությունը: Ամեն դեպքում, մենք այդպես ենք կարծում: Բայց արդեն նշել ենք մետաֆիզիկայի անհրաժեշտությունը: Դրական գերազանցումը մեր սերնդի և ապագա սերունդների միջև գտնվում է գերազանցող հասկացության մեջ՝ *մարդկություն*: Ճշմարիտ չէ, որ ապագա սերունդը ոչինչ չի արել մեզ համար: Մենք տալիս ենք նրանց մեր փորձը: Ստանալով այդ նվերը՝ նրանք ընդունում են մեզ, և ինչքան շատ են նրանք ընդունում մեզ, այնքան ավելի շատ բան մենք պետք է առաջարկենք: Փորձեք Ծննդյան տոնի նվերներ տալ այն դեպքում, երբ չկա որևէ մեկն, ով կստանա դրանք, և դուք ավելի լավ կհասկանաք, թե ինչպես է փոխադարձության սկզբունքով մարդկությունը տեղաշարժվել ժամանակի մեջ: Անցյալը, ներկան և ապագան միմյանց կարիքն ունեն: Մենք կարիքն ունենք հավատի մարդկության նկատմամբ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾ ԷՐ

Մեջբերում են արևմտյան քաղաքակրթության ամենակարևոր և, այդ իսկ պատճառով, քիչ հայտնի փաստաթղթերից մեկից՝ 1493 թ. մայիսի 4-ի *«Inter Caetera»*¹ պապական բուլլայից: Պապը՝ Ալեքսանդր VI-ը, իսպանացի էր և փառաբանում էր մեր «շատ սիրելի Քրիստոսի որդուն կամ դստերը»՝ *«los reyes catolicos»*² Ֆերդինանդին և Իզաբելլային.

• Տարածել քրիստոնեությունն այնպես, որ «այդ բարբարոս ազգերը» տապալվեն և բերվեն հավատքի,

¹ *Inter Caetera* (լատ.) - *Այլոց շրջապատում* (թարգ., *նշումը թարգմանիչի*)

² *los reyes catolicos* (լատ.) – *կաթոլիկ թագավորներ* (թարգ., *նշումը թարգմանիչի*)

- ինչի մասին է վկայում սարացիմների լծից Գրանադայի թագավորության ազատագրումը՝ աստվածային անվան նկատմամբ մեծ փառքով,

- Դուք ընտրեցիք մեր սիրելի որդուն՝ Քրիստափոր Կոլումբոսին՝ իրականացնելու ջանասեր որոնումներ դեպի այն հեռավոր և անհայտ մայրցամաքներն ու կղզիները, որտեղ մինչ այժմ ոչ ոք չէր նավարկել և

- հայտնաբերեցիք շատ հեռավոր կղզիներ և նույնիսկ մայցամաքներ, որոնք մինչ այժմ չէին հայտնաբերվել, որտեղ խաղաղ ապրում են շատ ժողովուրդներ, որոնք շրջում են մերկ ու չեն ուտում միս, որոնք տրամադրված են ընդունելու կաթոլիկ հավատքն ու ընտելանալու լավ բարքերին,

- կառուցեցիք բավականաչափ համալրված բերդ, որտեղ նա տեղավորեց կայազորի որոշ քրիստոնյաների՝ իր ուղեկիցներին, ովքեր պետք է որոնեն այլ հեռավոր ու անհայտ կղզիներ և մայրցամաքներ: Արդեն հայտնաբերված կղզիներում և երկրներում գտնվել են ոսկի, համեմունքներ և շատ այլ թանկարժեք իրեր,

- ձեր տիրապետությանը ենթարկեք հիշյալ մայրցամաքները և կղզիներն իրենց ռեզիդենտներով ու բնակիչներով և բերեք նրանց կաթոլիկ հավատքի:

Որից հետո Նա՝ Ալեքսանդր VI-ը, փոխանցում է *կաթոլիկ թագավորներին* հետևյալը.

- Ե՛վ ձեր ժառանգներին, և՛ ժառանգորդներին՝ Կաստիլիայի և Լեոնի թագավորներին, ընդմիշտ տալիս ենք բոլոր իրավունքները, իրավասությունները և պատկանելիքները, նշանակում ենք տերեր՝ լիակատար և ազատ իշխանությամբ ու *ամեն տեսակի իրավասություններով* (շեղատառերը մերն են¹),

- բոլոր կղզիներին ու մայրցամաքներին՝ գտնված ու գտնվելիք, հայտնաբերված ու հայտնաբերվելիք,

¹ *նշումը հեղինակի*

- ուստի ոչ ոք թող չխախտի կամ չմտածված համարձակությամբ չառարկի մեր այս երաշխավորագրին, կոչին, պահանջին, նվերին, դրամաշնորհին, հանձնարարությանը, սահմանադրությանը, պատգամավորությանը, հրամանագրին, մանդատին, արգելքին և կամքին: Եթե որևէ մեկը համարձակվի առարկել, ապա թող իմանա, որ ինքն առաջացրել է Ամենակարող Աստծո օրհնյալ առաքյալներ Պետրոսի և Պողոսի խիստ վրդովմունքը:

Կարճ ասած, Երկիրը պատկանում է Աստծուն, Հռոմի պապը Աստծո կամքի կառավարիչն է և ունի մանդատ՝ շնորհելու բոլոր իրավասությունները Իսպանիայի թագավորներին: Սրանով Ալեքսանդր VI-ն օրինականացրեց սերունդների հարատև գաղութատիրությունն ու իմպերիալիզմի հրեշավոր հանցագործությունները և ստեղծեց ձգձգված կոնֆլիկտ այս անօրինական պապական բուլլայից տառապողների և նրանց միջև, ովքեր այդպես էլ չեղյալ չհայտարարեցին այն:

Հեղինակ – Այն, ինչ կներկայացնենք ստորև, գերազանցման կոչ չէ, այլ այլընտրանքային, մեղմ քրիստոնեական պապական բուլլայի օրինակ.

Ալեքսանդր VI-ը՝ Աստծո ծառաների ծառան՝ Կաստիլիայի, Լեոնի, Արագոնի և Գրանադայի կաթոլիկ թագավորներին.

Մեզ տրվել է ուշագրավ նվեր՝ Ամենակարող Աստծո աստղերի ուղեկցությամբ ճամփորդել անծայրածիր օվկիանոսների միջով դեպի հեռավոր կղզիներ ու մայրցամաքներ, որոնք տարբերվում են Եվրոպայում գտնվող կղզիներից ու, նախևառաջ, բնակեցված են մարդկանցով ու ժողովուրդներով, որոնք տարբերվում են մեզանից՝ եվրոպացիներից:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր մայր և հայր Աստծուն, որդուն և սուրբ հոգուն ուրիշների հետ հանդիպումների հնարավորություն ընձեռելու, նրանց ներգրավումից հարստանալու, մեր՝ մարդկության, սիրելի կենդանիների ու բույսերի, հիա-

նալի երկնքի տակ Արեգակով լուսավորված ծովերի, փերի ու լեռների բազմազանությունը տոնելու այս հրաշալի հնարավորության համար:

Մենք պետք է շատ բան սովորենք նրանց ճշմարտություններից, նրանից, թե ինչպես են այդ մարդիկ տեսնում աշխարհը: Մենք պետք է առաջարկենք նրանց մեր ճշմարտությունները և խնդրենք դատել՝ ըստ դրանց պտուղների: Եվ միասին մենք կշարժվենք առաջ՝ հոգևոր կերպով, նյութապես, բառերի միջոցով սովորելով միմյանցից (*«dia logos»*¹), մեր ապրանքների փոխանակման միջոցով: Ի՞նչ հրաշալի, հավակնոտ հնարավորություն բոլորիս համար՝ ուսումնասիրելու ավելի խորը ճշմարտություններ, քան կարող է երբևէ զարգացնել մարդկության որևէ առանձին հատված միայնակ:

Ես՝ Ալեքսանդր VI-ս, Աստծո ծառաների ծառան, կարգադրում եմ Ձեզ՝ Կաստիլիայի, Լեոնի, Արագոնի և Գրանադայի թագավորներին.

- վերաբերվել մեր կողմից հայտնաբերված և հայտնաբերվելիք այս ժողովուրդներին խորը հնազանդությամբ ու հարգանքով՝ երբեք չգործադրելով հարկադրանք նրանց նկատմամբ՝ իշխանության կամ ուժի կիրառման սպառնալիքով, նվերներով կամ նվերների խոստումով, այլ նեգրավել ընկերական փոխանակումներում՝ առաջնորդվելով փոխադարձությամբ, եթե նրանք դա ցանկանան: Եթե չցանկանան, թողնել նրանց խաղաղությամբ, ասել նրանց, թե որտեղ կարող են գտնել ձեզ՝ իրենց միտքը փոխելու դեպքում: Իսկ դուք կարող եք նրանց ճանաչելու ցանկության բացակայության պատճառները հասկանալու նպատակով հարցնել նրանց, թե ինչը կարող էր փոխել իրենց միտքը:

- Սովորել այս ժողովուրդներից: Մենք հասկացել ենք, որ նրանք ապրում են խաղաղության մեջ, քայլում են մերկ և չեն ուտում միս: Փորձեք ստանալ նրանցից գիտելիքներ և իմաստութ-

¹ *dia logos* (լատ.) – երկխոսություն (թարգ., *նշումը թարգմանիչի*)

յուն, քանի որ դրանք առաջնորդել են նրանց դեպի խաղաղ կյանք, որը բացակայում է մեր աշխարհամասում: Խոնարհաբար խնդրեք նրանց՝ լինելու ձեր ուսուցիչները ներդաշնակության բարդ արվեստում:

- Երբեք մի կառուցեք որևէ աշտարակ և մի տեղակայեք այնտեղ կայազոր, բայց խնդրեք նրանցից՝ իրենց հետ ապրելու թույլտվություն՝ ձեր պատասխանատվությամբ, ոչ թե իրենց:

Դուք վտարեցիք մուսուլման սարացիներին հրեա մորիսկերին, որովհետև նրանք ապօրինաբար զավթել էին ձեր հողը: Ես հրամայում եմ ձեզ ետ հրավիրել այնքան մուսուլմանների և հրեաների, ինչքանը կցանկանան վերադառնալ՝ ձեր հողերում բնակություն հաստատելու, Սուրբ գրքի ուղերձի մասին տարբեր գաղափարներ ունենալու միջոցով ձեզ հարստացնելու, Ալամբրայում, Գրանադայում աբրահամական կրոնների միջև հրաշալի երկխոսությունները շարունակելու համար՝ հուսալով հասնել մեզ բոլորիս միավորող Ծննդոցի ավելի խորը և բարձր ըմբռնմանը:

Խոչընդոտ – 1493 թ.-ին պապական քրիստոնեությունը չէր կարող առաջարկել վերոգրյալի նման որևէ բան: Բայց Յովհաննես Պողոս II Պապն իր դեմ կատարված մահափորձից հետո (որը նրան հոգևորության նոր աստիճանի վրա բարձրացրեց), թերևս - կարող էր ամել դա: Իսկ ի՞նչ կասեք հաջորդ Պապի մասին, իսկ նրան հաջորդող Պապի:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՍԼԱՄԸ. ՇՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՌՈՒՄ ՄԻՍՅԱՆՑ

Կոնֆլիկտաբան –

Ինչպե՞ս է ստացվել, որ երկու կողմն էլ կարծում է, թե իրենն է միակ ճշմարիտ ուսմունքը:

Կոչտ քրիստոնյա –

Որովհետև Հայր Աստվածը հայտնվեց

Մովսեսին և տվեց նրան Օրենքները՝ Տասը պատվիրանները, և ուղարկեց իր որդուն երկիր որպեսզի մենք կարողանանք հասնել հավերժական կյանքի՝ նրա նկատմամբ հավատքի միջոցով մաքրագործվելով: Իսլամը մերժում է Քրիստոսի գոյությունը:

Կոշտ մուսուլման–

Որովհետև Ալլահը հայտնվեց Մուհամմեդին՝ Մարգարեին, և նրան հանձնեց Ղուրանը: *Մուսան* («*Musa/Moses*») և *Իսան* («*Isa/Jesus*») Պատգամաբերներն են՝ *Նաբիները* («*Nabi*»), բայց ոչ Միակ ճշմարիտ մարգարեն՝ *Ռասուլը* («*Rasu*»): Միակ ճշմարիտ Աստվածն Ալլահն է, իսկ Մուհամեդը՝ նրա մարգարեն:

Կոնֆլիկտաբան –

Ձերն է կրոնների հայտնությունը: Հուդայականությունը քրիստոնեության հիմքն էր, իսկ իսլամի մեջ ներառված էր երկուսից որևէ մեկը:

Միաժամանակ –

Ո՛չ: Մեր հայտնությունը միակ ճշմարիտն է:

Կոնֆլիկտաբան –

Կարո՞ղ եմ լսել նաև ավելի մեղմ կարծիքներ, խնդրում եմ:

Մեղմ քրիստոնյա –

Եթե մի կողմ թողնենք Քրոստոսի մասին ուսմունքը, մյուս տեսանկյուններից մենք բավականին նման ենք:

Մեղմ մուսուլման –

Եթե մի կողմ թողնենք Քրոստոսի մասին ուսմունքը, մյուս տեսանկյուններից մենք բավականին նման ենք:

1095 թ.-ի նոյեմբերի 27-ին ֆրանսիական Քլերմոն քաղաքում Յոզմի Պապ Ուրբան II-ը կոչ արեց քրիստոնյաներին խաչակրաց արշավանք սկսել՝ ազատագրելու համար «Սուրբ Յողը»: 1291 թ.-ին խաչակրաց արշավանքներն ավարտվեցին, և քրիստոնյաները հեռացան: Բայց պատմության մեջ երբեք չի կնքվել որևէ իրական խաղաղության պայմանագիր: Խաչակրաց արշավանքը դարձավ քաղաքական ու տնտեսական ասպեկտներ ունեցող պատերազմն արդարացնելու նպատակով կրոնի օգտագործման օրինակ: Սա նստվածք թողեց քրիստոնյաների կոլեկտիվ հիշողության մեջ: «Պարսից Ծոցի համախտամիշն» Իրաքում խաչակրաց արշավանքների ամենադաժան փորձն էր. 1258 թ.-ին Բաղդադում Պապի օրհնությամբ Յուլակուի՝ Չինգիզ խանի թռան կողմից մուսուլմանների կոտորած կազմակերպվեց, որը կրկնվեց 1991 թ.-ին, իսկ այնուհետև՝ նաև 2003 թ.-ին, բայց այս անգամ՝ առանց Պապի օրհնության:

Կոնֆլիկտաբան – Մենք գործ ունենք երկու բավական նման կրոնների հետ: Կոշտ հայացքներ ունեցողները՝ ծայրահեղականները, ցանկանում են գերիշխանության հասնել: Մեղմ հայացքներ ունեցողները մշտն են, որ իրենք կարող են հանդուրժել մյուս կողմի ուսմունքը՝ կողք-կողքի ունենալով եկեղեցի և մզկիթ, հնարավոր է նաև՝ երկխոսությամբ: Այս տարբերակից հետո կարող ենք դիտարկել կոնֆլիկտի՝ մակերեսին գտնվող բացասական գերազանցումը՝ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը. աշխարհիկություն կամ փոխարկում այլ կրոնների, որն անկասկած հղի է նաև կրոնական դաժան պատերազմների վտանգով, ինչպիսին է 1618-1648 թթ. Երեսուներեքյա պատերազմը: Բայց որտե՞ղ է դրական գերազանցումը:

Իմը դար անց՝ 1995 թ.-ի նոյեմբերի 26-ին և 27-ին, քրիստոնեական և իսլամական հավատքների առաջատար ներկայացուցիչների մասնակցությամբ երկխոսություն հրավիրվեց Բիելի/Բիենի անվան զարգացման շվեյցարական ինստիտուտում: Ներկա էին այաթոլլա պրոֆ. Մուհամմեդ Թաջի Ջաֆարին Թեհրանից, շեյխ Ահմեդ Քյուֆթարուն՝ Սիրիայի Մեծ Մուֆտին, Դա-

մասկոսից, մունցիյ Արքեպիսկոպոս Բ. Ջ. Ռաուբերը Բեռնից, Դամասկոսի մետրոպոլիտ, ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսը Ժնևից, ինչպես նաև գիտնականներ ու հոգևորականներ: Հեղինակը՝ խաղաղության հիմնահարցերի հետազոտող և «ԹՐԱՆՍԵՆԴ»-ի տնօրենը, հրավերի պատասխանատուն էր:

Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ն ուղարկեց իր օրհնությունները և ուղերձը սիմպոզիումին կարդինալ Անժելո Սոդանոյի՝ Սուրբ Աթոռի պետքարտուղարի միջոցով. «Պատե՛հ է անդրադառնալ այս իրադարձություններին այսօրվա համար կենսական դասեր քաղելու համար: Նորին Սրբությունը թարմացնում է Վատիկանի երկրորդ խորհրդի կոչը, որում ասված էր, որ պետք է անկեղծ ջանքեր գործադրվեն փոխըմբռնման հասնելու համար, որպեսզի քրիստոնյաները և մուսուլմանները միասին պահպանեն ու նպաստեն խաղաղությանը, ազատությանը, սոցիալական արդարությանը և բարոյական արժեքներին՝ հօգուտ բոլորի»:

Պաշտոնական հաղորդագրություն.

«Խսլամի և քրիստոնեության կողմնակիցներն առաջարկում են իրենց համապատասխան հավատքների անդամներին և մյուս բոլորին հետևյալը.

- փորձել հասկանալ մյուս կրոններն այնպես, ինչպես դրանց հետևորդներն են հասկանում՝ որպես ճշմարիտ երկխոսության պայման,

- ստեղծել դպրոցական ուսուցման նյութեր պատմության, քաղաքացիական կրթության և կրոնական կրթության վերաբերյալ՝ շեշտադրում կատարելով երկու կրոնների մասին՝ բոլոր կողմերի համար ընդունելի նյութերի վրա,

- չչարաշահել խոսքի ազատությունը այլ կրոնների մասին խոսելիս և գրելիս,

- աշխատել միասին՝ բացահայտելու, ավելի զարգացնելու և գործնականում իրականացնելու խաղաղության, ազատության, սոցիալական արդարության, ընտանեկան արժեքների, մարդու

իրավունքների ու արժանապատվության ոգեշնչող էթիկան և կոնֆլիկտների լուծման ոչ բռնի ձևերը,

- հիմնել մշտական միջկրոնական խորհուրդներ փոխադարձ հարգանքի ու ըմբռնման հետագա զարգացման համար,

- համագործակցել Բոսնիայի կրոնական սահմանների լայնությամբ՝ երկիրը վերակառուցելու համար,

- լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ քննարկել լրագրության ավելի պատասխանատու, խաղաղությանը նպաստող ձևեր:

Խաչակրաց արշավանքներից ինը դար անց մենք կոչ ենք անում քրիստոնյաներին, մուսուլմաններին և մյուս բոլորին դուրս գալ սոսկ հանդուրժողականության սահմաններից: Մենք պետք է բացենք մեր սրտերն ու մտքերը միմյանց առաջ: Տարբերության պատճառով վտանգ զգալու փոխարեն եկեք ուրախությամբ լցվենք սովորելու, հարստացնելու և հարստանալու, խաղաղության մեջ ապրելու և խաղաղություն ստեղծելու հնարավորության համար: Ինչպես մնացած ամեն ինչն, աշխարհի երկու խոշորագույն կրոնները մույնպես ենթակա են զարգացման: Նվիրվածության հիմնական ուղերձը պահպանելու ընթացքում եկեք գտնենք նոր ուղիներ, գործողություններ և բառեր: Սեփական կրոնի մեկնաբանության ազատության ոգու մեջ կարող է զարգանալ մյուս կրոնների նկատմամբ անկեղծ հարգանքը: Թող հաջորդ 900 տարիները և դրան հետևող ժամանակը դառնան մեր սրտերում ու մեր մտքերում կառուցված և մեր արարքներով հաստատված ակտիվ խաղաղության դարաշրջան:

Աչքի է ընկնում այն փաստը, որ, բացի Քլերմոնում պատմաբանների հանդիպումից, Բիելի այս երկխոսությունը Եվրոպայում կայացած միակ համաժողովն էր քննարկվող թեմայով, մինչդեռ մուսուլմանական երկրներում անցկացվեցին ևս մի քանիսը: Հիշարժան է նաև այն, որ լրատվամիջոցները ամբողջովին անտարբեր էին համաժողովի նկատմամբ: Մինչդեռ վերոնշյալ յոթ կոնկրետ կետերն իրագործելու պարագայում թերևս հնարավոր կլի-

ներ խուսափել մասնավորապես 2001 թ.-ի սեպտեմբերի 5-ի և 11-ի դեպքերից:

Կոնֆլիկտաբան – Կոնֆլիկտի տեսության տեսանկյունից սա փոխզիջում է, հանդուրժողականություն՝ կողք-կողքի մեղմի և ոչ այնքան կոշտի հանդիպում: Ձևակերպումները մատնացույց են անում դրական գերազանցման ուղղությամբ («Մենք պետք է բացենք մեր սրտերը և մեր հոգիները», «Եկեք լցվենք ուրախությամբ սովորելու, հարստացնելու և հարստանալու հնարավորություն ունենալու համար»), բայց չկա հստակ, կայուն և՛ մեկը, և՛ մյուսն ընդգրկող տարբերակը: Փոխարենն ասելու այնպես, ինչպես ֆրանսիացիներն են ասում. «*Je prends mon bien où je le trouve*»¹, ես կվերցնեի երեք գերազանց գաղափար քրիստոնեությունից.

- «*Peccato*»-ի² և «*Peccatore*»-ի³ մեղքի և մեղսագործի միջև տարբերակումը,
- ներում և սեր, այլ ոչ թե մերժում և ատելություն,
- յուրաքանչյուր անհատի անձնական պատասխանատվություն՝ առանց ուրիշների հետևում թաքնվելու հնարավորության:

Կվերցնեի նաև երեք գերազանց գաղափար իսլամից.

- զակատ՝ օգնել անմիջականորեն թշվառության մեջ գտնվողներին,
- Ղուրան 8:61. Եթե դիմացի կողմը հակված է խաղաղության, վարվեք նրա հետ նմանապես,
- Սալամ-Իսլամ-Մուսուլման. ներկայացրեք ձեզ խաղաղության ուղերձում:

¹ «*Je prends mon bien où je le trouve*» (ֆրանս.) - «Ես վերցնում եմ այն, ինչ ինձ ամիրաժեշտ է, որտեղ գտնում եմ» (թարգ.)

² *Peccato* (իտալ.) – մեղք (թարգ.)

³ *Peccatore* (իտալ.) – մեղսագործ (թարգ.)

Այս վեց կետերով ես սահմանել եմ իմ կյանքի սկզբունքները: Մյուս ասպեկտների համար կարելի է օգտագործել իմաստության այլ աղբյուրներ՝ ավելի ամուր հիմք ստանալու նպատակով: Այստեղ կարևորն այն գաղափարի մերժումն է, թե խառնումը, էկլեկտիկան, համակցությունները մեղք են: Կարևոր է նաև այն գաղափարի մերժումն՝ ըստ որի պետք է նայել երկու կրոնական ուսմունքներին արմատական կերպով, դիտարկել դրանք որպես միմյանց հակադրություններ, այնպես որ երկուսից միաժամանակ դասեր քաղելն ու սովորելը հոգեկան խանգարման ախտանշան համարվի: Անհեթեթություն: Հենց միավորման՝ ողջ աշխարհի իմաստությունն օգտագործելու ընդունակության մեջ է ճշմարիտ գերազանցումը:

ԱՄՆ-Ը, ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ԵՎ ՄԱՅԱՉԾ ԲՈԼՈՐԸ. ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՀԱՆՋՍՈՒՆՔՆԵՐ, ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ, ԿՐՈՆ

ԱՄՆ-ի և արևմուտքի համար «2001 թ.-ի սեպտեմբերի 11-ը» *իրադարձություն* էր, որն ազդարարեց նոր դարաշրջան: 1914 թ.-ի հունիսի 28-ի «Սարաևոյի կրակոցի» նման սեպտեմբերի 11-ը խթան հանդիսացավ «ահաբեկչության դեմ մեծ պատերազմ» սկսելու համար: 1914 թ.-ի հունիսի 28-ը նույն նշանակությունն ունեցավ՝ սկսելու համար Առաջին համաշխարհային պատերազմը: Այս երկու իրադարձությունները դիտարկվեցին իբրև պատերազմ սկսելու միակ պատճառներ: Դրանց հետևում արևմուտքը տեսավ Չարիքը՝ Ուսամա բեն Լադենին և Գալիլիո Պրինցիպին: Չարիքը դիտարկվեց որպես ինքն իր բացատրություն՝ պատճառ և հետևանք, ուստի կարելի էր պնդել, թե որևէ լրացուցիչ բացատրության կարիք չկա: Բուժումն ակնհայտ էր՝ բացահայտել, հայտնաբերել և ոչնչացնել չարիքը ամերիկյան հակաահաբեկչության և ավստրիական հակասերբիականության միջոցով: Արևմուտքը դրա հետ կապ չունի. միայն Ուրիշը՝ Չարիքը: Արևմուտքն անմեղ է:

Մի փոքր երեխա, ում համար մեջբերեցին Միացյալ Նահանգների հեռուստատեսությամբ սեպտեմբերի 11-ից անմիջապես հետո պատրաստված նյութերից մի հատված, ասաց այն, ինչ և հարկ է ասել նման անհեթեթության մասին. «Ի՞նչ ենք մենք արել, որ նրանք այդքան ատում են մեզ ու այսպիսի բաներ անում»: Իրականությունն ավելի լավ է ըմբռնվում որպես պատճառահետևանքային շղթայի մաս. երկար շղթաներ, որոնցից շատերը խաչաձևելով խայթում են իրենց սեփական պոչերը, շղթաներ, որտեղ բոլոր պատճառներն ունեն պատճառներ, և բոլոր հետևանքներն ունեն հետևանքներ: Փոխվրեժի շղթայում բռնությունը ծնում է բռնություն, ոչինչ չի հանդիսանում իր սեփական պատճառը: Բայց սա չափազանց ընդհանրական պնդում է:

Հանցագործներն արաբներ էին, նրանց մեծ մասը Սաուդիան Արաբիայից էր, իսկ թիրախը շենքեր էին.

*Սաուդիան Արաբիայի
ներկայացուցիչ,
վահաբիք –*

Նրանք վիրավորել են մեր սուրբ հողը տնտեսապես և ռազմականորեն՝ ներմուծելով այլ կրոններ, գերսպառում և կոռումպացված արքայական ընտանիք:

Ամերիկացի –

1945 թ.-ին Ռուզվելտի և Իբն Սադի միջև կնքված համաձայնագրով՝ արքայական ընտանիքը պաշտպանելու դիմաց մենք նավթային տարածքներ մուտքի իրավունք ստացանք: Ինչ վերաբերում է կոռուպցիային, ապա դրա համար առնվազն երկու կողմեր են անհրաժեշտ: (Սեպտեմբերի 11-ի վերաբերյալ հեղինակի մեկնաբանությունն այն է, որ Միացյալ Նահանգների տնտեսական և ռազմական ուժի երկու կենտրոնները հրապարակայնորեն վերացվեցին Սաուդյան Արաբիայի երիտասարդ վահաբիքների կողմից):

Կոնֆլիկտաբան –

Սեպտեմբերի 11-ից հետո կոնֆլիկտը տարածվեց: Ո՞րն էր նպատակը:

Ամերիկացի –

Նպատակն *ազատ առևտուրն է առանց սահմանների*, որ հնարավոր է դարձնում ցանկացած պահանջարկի բավարարումը: Սա նշանակում է ի վիճակի լինել գնել և վաճառել ցանկացած բան, ցանկացած տեղում, ցանկացած ժամանակ:

Մուսուլման –

Նպատակը *հարգանքն է մեր կրոնի նկատմամբ*: Մենք դիտարկում ենք առևտուրը՝ որպես խորապես մարդկային հարաբերություն՝ շատ հեռու պահանջարկը բավարարող առաջարկից և ապրանքներից, որոնք արևմուտքում փոխանակվում են փողով՝ նույնիսկ առանց տեսողական շփման:


Սեպտեմբերի 11-ի կոնֆլիկտի լուծումը կարող էր լինել այն, որ համաշխարհային հասարակությունը պատժեր հանցագործներին նրանց հանցագործ արարքի համար, իսկ ԱՄՆ-ը ներողություն խնդրեր և իր տնտեսական ու ռազմական ուժերը հեռացներ Սաուդյան Արաբիայից: Անցանկալի թափանցումն օտար երկիր անօրինական է:

Բայց ազատ առևտրի և հարգանքի միջև ընդարձակ կոնֆլիկտն ավելի խնդրահարույց է: Իսկ կոնֆլիկտն, անշուշտ, այնպիսի կառուցողական նպատակների միջև չէ, ինչպիսիք են ազատ առևտուրն ու հարգանքը.

- Ի՞նչ են ցանկանում կողմերը. ազատ առևտուր, հարգանք:
- Ի՞նչն է օրինական, իսկ ի՞նչն՝ անօրինական այս երկու նպատակներում:
- Հնարավո՞ր է կառուցել կամուրջ նպատակների օրինական մասերի միջև:

Բայց մման վարժության փոխարեն կողմերը փորձում են ապակառուցողական նպատակներ առաջ քաշել՝ ավերածություններ ու սպանություններ կազմակերպելով սեպտեմբերի 11-ին Մանհեթենում և Վաշինգտոնում, իսկ հոկտեմբերի 7-ից՝ Աֆղանստանում: Լրատվամիջոցներն էլ հետևում են այս ամենին:

Հիմնական գծապատկերը պետք է ընդարձակվի այնպես, որ ներառի մաև բացասական նպատակները:



Կոնֆլիկտի գծապատկեր 2001 թ. սեպտեմբերի 11-ի և հոկտեմբերի 7-ի համար

Այս կոնֆլիկտը կարող է 500 տարի տևել, և ոչ ոք չգիտի, թե ինչպես կավարտվի այն: Ակնհայտ է, որ լրագրողներն ու քաղաքական գործիչները հակված են ներքևի ծախ քառակուսուն՝ առաջնորդվելով դասական *պատերազմի լրագրության* երկու հարցերով. որտե՞ղ է բռնությունը, ո՞վ է հաղթում: Բուշը շարունակում է խոսել չարիքի ոչնչացման, իսկ Բեն Լադենը՝ արդարության և փոխվրեժի մասին:

Այժմ դիտարկենք վերևի աջ քառակուսին՝ *խաղաղության լրագրության* երկու հարցերով. ինչի՞ շուրջ է կոնֆլիկտը, կա՞ն ընդունելի, կայուն ելքերով լուծումներ:

Եթե Մյուսն իրականացնի իր նպատակը, կունենանք Սաուդիան Արաբիայի անապատում մեկուսացած խմբեր, որոնք ապրում են այն կյանքով, որով ապրել են դարեր շարունակ՝ շեշտը դնելով հոգևոր արժեքների և կրոնական ավանդույթների վրա (ինչպես ամիշները Փենսիլվանիայում): Սա կարող է լինել լուծում այդ խմբերի համար, բայց աշխարհի համար, որպես ամբողջություն, այն բացարձակապես անընդունելի է: Օրինակ, որոշ կրոնական համայնքներում կանայք ճնշված են, բայց ցանկանում են բարձրաձայնել ու հարգանք են պահանջել:

Եթե ԱՄՆ-ը հասնի իր նպատակներին, աշխարհը կդառնա ԱՄՆ-ի կողմից կառավարվող, ռազմականորեն պաշտպանված (և ռմբակոծված) առևտրի կենտրոն՝ նյութական արժեքների, իրերի, գույքի, սպառման վրա նպատակասլաց շեշտադրությամբ, ինչի հետևանքով որոշ մշակույթներ ուղղակի կանհետանան: Սա ևս - լուծում է ոմանց համար, բայց աշխարհի համար, որպես ամբողջություն, կրկին բացարձակապես անընդունելի է: Ազատ առևտուրը *սպանում է*՝ անընդունակ լինելով բավարարել համաշխարհային հասարակության հիմքում ընկած սննդի և առողջության հիմնարար պահանջումները: Իսկ նրանք, ովքեր պայքարում են սրա դեմ, *սպանվում են* «ռազմական պաշտպանության»

կողմից. որպես օրինակ կարող ենք դիտարկել Չիլիում 1973թ.-ի սեպտեմբերի 11-ին ժողովրդավարականորեն ընտրված կառավարության դեմ կիրառված միջամտությունն ու պետական հեղաշրջումը:

Փոխգլխումային տարբերակ կարող էր դառնալ *գլոբալիզացիա-ազատ գոտիներ* համամասնությունը: Այս դեպքում այն գոտիների բնակչությունը, որ պատրաստ չէ կամ չի ցանկանում ներկայացնել իրեն գլոբալ շուկայական ուժերին, ստիպված չէր լինի անել դա, որովհետև դրամայնացումն ու սեփականաշնորհմամբ առանց սահմանների առևտուրը սպանում են ռեսուրսներ չունեցողներին:

Դրական գերազանցումը կրոնի ու առևտրի դրական կողմերի փառաբանման և բացասական կողմերի ոչնչացման մեջ է: Ըստ կրոնի իմաստավորելով կյանքն ու ըստ առևտրի ավելացնելով ապրանքների մեջ մեր ընտրությունը՝ կապել աշխարհագրորեն բաժանված մարդկանց: Կրոնի և առևտրի բերած չարիքները պետք է ոչնչացվեն, և դա լավագույնս հնարավոր է իրականացնել գոյատևման, բարեկեցության, ազատության և ինքնության մարդկային հիմնարար պահանջմունքների ու բոլորի համար մարդկային հիմնարար իրավունքների բավարարումը որպես ամեն ինչի չափում և որպես առաջին առաջնահերթություն սահմանելու միջոցով:

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԳՈՂԵՐԸ. ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Կոնֆլիկտի տեսությունը լի է կոնֆլիկտներով այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է կոնֆլիկտները կարգավորվեն՝ հիմք ընդունելով կարգավորման լավագույն, ամենաճիշտ տեսությունը: Իսկ առանցքային կոնֆլիկտը ներքին կողմերի և արտաքին՝ միջնորդող կողմերի միջև է:

Ներքին կողմեր –

Կոնֆլիկտները պետք է կարգավորվեն մեր կողմից՝ ներսից: Միայն մեզ է հստակ հայտնի հիմնախնդիրը, ուստի, միասին աշխատելով, մենք կհասնենք լուծմանը: Միասին մենք կզարգացնենք մեզ և ձեռք կբերենք համատեղ պատասխանատվության զգացում: Ցանկացած ոք, ով կառավարում է այս կոնֆլիկտը դրսից, տանում է կոնֆլիկտն իր օրինական տերերից և դառնում *կոնֆլիկտի գող* (Նիլս Քրիսթիի փայլուն ձևակերպմամբ):

Արտաքին կողմեր –

Կոնֆլիկտները պետք է կառավարվեն դրսից, որովհետև ներքին կողմերի «տեսադաշտը» չափազանց սահմանափակ է: Նրանք չեն գիտակցում, որ մշտապես փոքրացող մեր աշխարհում կոնֆլիկտներն արդիական են բոլորի համար, ավելին՝ առնչվում են բոլորին: Բացի այդ, ներքին կողմերը կուրացած են իրենց հույզերից և խնդիրն իրենց *կոնֆլիկտային եսասիրության շրջանակներում* հաղթահարելու իրավասության պակասից:

Երկուսն էլ ուժեղ և, ինչ-որ առումով, հիմնավորված փաստարկներ են: Այս հարցում կանոնակարգում գտնելու համար հաճախ հղում է կատարվում հոգեթերապիայի երկու հակադիր մոտեցումների՝ Կարլ Ռոջերսի «Զուղղորդող խորհրդատվությանը», որն օգնում էր հաճախորդին ինքնուրույն համզելու ախտորոշման, կանխատեսման և բուժման ու Ձիգմունդ Ֆրոյդի մեթոդին, ով ախտորոշում էր իր հիվանդներին, կանխատեսում և բուժում նշանակում: Երկու մեթոդներին տրվող կողմ և դեմ փաստարկները համարյա հավասար են:

Ինչքան մենք շարժվում ենք մարդկանց ներսում և նրանց միջև կոնֆլիկտներից դեպի տարածաշրջանների և քաղաքակարթությունների միջև կոնֆլիկտներ, այնքան նկատելի է, որ վերջին մակարդակներում ավելի շատ կոնֆլիկտային ուժ է տրվում արտաքին կողմերին, օրինակ, Հարավսլավիայում: Մասնավորապես, մեծ տերությունները հաճախ համոզված են, որ իրենք պետք է կարգավորեն մակրո և մեզա կոնֆլիկտները, քանի որ միայն իրենք ունեն բավականաչափ պատկերացում կողմերի շահերի մասին: Գաղտնի «ծառայությունների» սաբոտաժի, սահրանքների, միջամտությունների միջոցով նրանք փորձում են ինքնահրականացնել իրենց ենթադրությունները: Մեծ երկրները վախենում են ինքնորոշման շուրջ պետական-ազգային կոնֆլիկտներից, որովհետև ցանկացած լուծում կարող է խրախուսել իրենց փոքրամասնություններին: Մակրո կոնֆլիկտները միշտ փոքր-ինչ կթուլացնեն պետական համակարգը, իսկ մեծ երկրները փորձում են գերիշխել բանակցություններում՝ ռազմակայաններ, ռեսուրսներ, շուկաներ, հաճախորդներ ձեռք բերելու համար: Սեղանի գլխավերևում տեղ զբաղեցնելու համար նրանք ցանկանում են, որ բռնությունը շարունակվի այնքան, մինչև ներքին կողմերը «հասունանան» (սպառվեն) և ծնկաչոք աջակցություն աղաչեն արտաքին կողմերից:

Սրանք ուժեղ փաստարկներ են մակրո մակարդակում ներքին կողմերի վերահսկողության օգտին: Իսկ պատասխանը դրսից կանխատեսելի է. լավ, առաջ շարժվեք, ցանկացած դեպքում դուք չեք պատրաստվում պայքարել:

Հեղինակ – Ահա մենք հասանք «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդի առանցքային կետին: Ներքին և արտաքին կողմերի միջև այս կոնֆլիկտը հենց այն է, ինչ մենք փորձում ենք գերազանցել: Երկու կողմերն էլ ունեն լավ փաստարկներ, այնպես որ պետք է լինի հիմք գերազանցման համար: Հեշտ է համակրել ներքին կողմերին՝ հետևելով, թե ինչպես են արտաքին կողմերը փոխակերպման փոխարեն «սխալ կերպով ձևավորում» ողջ կոնֆլիկտն ի-

րենց օգտին: Բայց ի վիճակի՞ են արդյոք ներքին կողմերն ինքնուրույն գերազանցել և փոխակերպել կոնֆլիկտը:

Գերազանցման համար անհրաժեշտ է ստեղծագործականություն ներքին կողմերի ներսում: Եթե բանակցային սեղանի շուրջ պայմանները ճիշտ են ձևակերպված, և եթե կողմերը փորձում են միմյանց նկատմամբ հնարավորինս չտրամադրվել թշնամաբար, ապա մեղմ, ուղղակի բանակցությունները արդյունավետ կլինեն: Խնդիրն այն է, որ ուժեղ հույզերն ամեն դեպքում կթեքեն նրանց հայացքը դեպի անցյալ, այլ ոչ թե դեպի ապագա, ուստի մոտեցումները կլինեն ոչ թե կառուցողական, այլ ապակառուցողական: Այս ամենը կարող է կաթվածահար անել ամբողջ ստեղծագործականությունը:

Այդ պատճառով անհրաժեշտ են արտաքին կողմեր, որոնք ո՛չ փորձում են «սխալ կերպով ձևավորել» կոնֆլիկտն իրենց օգտին, ո՛չ էլ գողանում են: «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդը ձգտում է խթանել կողմերի ստեղծագործականությունը բոլորի հետ երկխոսության միջոցով՝ սկսելով կողմերից մեկի հետ: Արդյունքն այնուհետև կարող է օգտագործվել որպես նյութ երկխոսությունների հաջորդ շրջանի համար: Կոնֆլիկտաբանը կատարում է մի քանի դեր: Նա օժանդակում է, փորձում է ստիպել, որ կողմերը տեսնեն միմյանց ավելի դրական լույսի ներքո: Բայց նա չի անում այնպիսի առաջարկներ, որոնց կողմերն ինքնուրույն չեն համզել: Նա կարող է խթանել և առաջարկել, բայց միշտ հարցական նշանով՝ երբեք չպարտադրելով սեփական տեսակետը: Կիրառվող մեթոդը հարցադրումներ անելուն ուղղված երկխոսություն է, ոչ թե բանավեճի հայտարարում: Արվեստը կայանում է խթանման մեջ՝ առանց գործընթացի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և, ի վերջո, հրավիրելու մամուլի ասուլիս՝ հաղորդելու աշխարհին առաջարկը, որը կլուծեր խնդիրների ողջ համալիրը: Նախաառաջ, կողմերը պետք է հանդիպեն միջնորդի հետ «փոքր սեղանի» շուրջ երկխոսության համար, որպեսզի պատրաստվեն «մեծ սեղանի» շուրջ բանակցություններին:

Կողմերն ունեն միմյանց հակասող դիրքեր: Անվանենք այս դիրքերը Չինաստանի հին, դասական/դիալեկտիկական ավանդույթով՝ *թեզիս* և *հակաթեզիս*: Նման դիրքերի շատ ենք հանդիպել այս գրքում, երբեմն դրանք բավական կտրուկ են հակադրված միմյանց, ինչպես վերոգրյալ երկու բառերն են ցույց տալիս: Բայց *սինթեզ*ն այս դեպքում այն չէ, ինչին պետք է ձգտել, որովհետև սինթեզը տարբերակում չի դնում փոխգիշման, դրական և բացասական գերազանցումների միջև:

Կոնֆլիկտաբանի խնդիրն է չդադարեցնել դիալեկտիկական երկխոսությունը, չպահանջել, որ կողմերը հրաժարվեն իրենց դիրքերից, եթե, իհարկե, դրանք ակնհայտորեն անօրինական չեն: Խնդիրն ավելի շուտ խուսափելն է հարթ փոխգիշումից, որում չկա ստեղծագործական, իրականությունը նորացնող որևէ բան: Կոնֆլիկտաբանը հետևում է դիալեկտիկական երկխոսությանը, այնուհետև փորձում է կողմերի հետ միասին գտնել կամ դրական գերազանցում, որը կամուրջ է կառուցում նպատակների միջև, կամ բացասական գերազանցում, որ հրաժարումն է երկու նպատակներից էլ:

Կոնֆլիկտաբանի խնդիրն է խրախուսել կողմերին՝ հանգելու մոր գաղափարների և մտքերի, որոնք հնարավորություն կտան նրանց ցատկ կատարել դեպի իրականության նորացում, որտեղ կարող են գտնել իրենց տեղը՝ հպարտանալով այն փաստով, որ ստեղծել են այդ իրականությունն ինքնուրույն՝ միայն որոշ աջակցությամբ և խրախուսմամբ:

Այս գործընթացում կոնֆլիկտաբանը բացահայտորեն սեղանի վրա է դնում իր նպատակները: Դրանք են *ապրումակցումը*՝ բոլոր կողմերի, նրանց նպատակների և նպատակների ետևում գտնվող այլ նպատակների խորը ըմբռնումը, *ստեղծագործականությունը*, բայց ոչ *բռնությունը*: Այս նպատակների իրագործումը հնարավորություն կտա հանգելու ինչ-որ մոր բանի, որն ընդունելի և կայուն կլինի բոլոր կողմերի համար: Սրան հասնելու համար երբեմն պետք է հրաժարվել ինչ-որ հին բանից, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ քանդել, քանի որ անցյալում կարող են

բռնության սերմեր լինել: Միևնույն ժամանակ՝ նորը չպետք է լինի այնքան նոր, որ անհասկանալի կամ սպառնացող թվա:

Նոր իրականության լույս աշխարհի գալու այս գործընթացին պետք է աջակցել: Ցանկացած կոնֆլիկտում կա էներգիայի հսկայական շտեմարան, որը կարող է օգտագործվել կոնֆլիկտը դեպի վեր՝ դեպի ստեղծագործականություն փոխակերպելու նպատակով: Պետք է խուսափել դեպի ներքև՝ դեպի ագրեսիա և բռնություն փոխակերպումից: Ինչպես նկատում էր Սիցիլիայի Գանդին՝ Դանիլո Դոլչին, կոնֆլիկտաբանն այս գործընթացի մանկաբարձն է:

ԳԱՆԴԻԻ «ՈՉ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ». ԴԻՄԱԴՐԵՔ ԶԱՐԻՆ, ՊԱՇՏՊԱՆԵՔ ՄԱՐԴԱԿԱՆՑ

Ֆրոյդը անհատականացրեց կոնֆլիկտներն ու դրեց դրանք մեր ներսում՝ ոչ թե որպես պայքար Աստծո և սատանայի միջև, այլ որպես պայքար դրսի՝ ծնողների և ուրիշների, նորմերի ու արժեքների և մեր ներսում առկա բնազդների միջև: Միայն մեր սեփական անգիտակցականում նստվածք տված այս պայքարի պատմության բեռի լիովին մաքրման միջոցով մենք երբևէ կարող ենք հույս ունենալ հաղթահարել մեր անձնական կոնֆլիկտները:

Մարքսը սոցիալականացրեց կոնֆլիկտները և դրեց դրանք դասակարգերի միջև հարաբերություններում: Սա ճորտի և կալվածատիրոջ մասին հարց չէր, որոնք սովորում են ճիշտ վերաբերվել միմյանց, ինչպես առաջարկել էր Յեզեկը, այլ հարց՝ նրանց միջև հարաբերությունների փոփոխման մասին: Միայն մեր սոցիալական խորը կառուցվածքի լիովին մաքրման միջոցով մենք երբևէ կարող ենք հույս ունենալ հաղթահարել մեր սոցիալական կոնֆլիկտները:

Սանդեռան և դե Կլերկը կենտրոնացել էին բռնության հետևանքով առաջացած խնդիրների վրա: Միայն ճշմարտության և

հաշտության միջոցով՝ հանցագործի ու զոհի միջև հարաբերությունների լիովին մաքրմամբ մենք երբևէ կարող ենք հույս ունենալ հաղթահարել մի հարաբերություն, որը երկար ստվեր է նետում ապագայի վրա: Նրանք ներկայացրեցին այլընտրանք արևմտյան դատական ավանդույթի մեջ՝ թե՛ տեսության, թե՛ պրակտիկայի:

Ամբողջ կյանքի ընթացքում Գանդիի պայքարն ինքն իր հետ տեղավորում է նրան այս գրքի առաջին՝ միկրո կոնֆլիկտների գլխում: Նրա պայքարը գենդերային ճնշումների, ռասիզմի, կաստաների, բանվորների, գյուղացիների, ավանաբնակների շահագործման դեմ, հանուն «*sarvodaya*»-ի («վերելք»)՝ զարգացման, տեղավորում է նրան մեզո մակարդակում: Նրա՝ խաղաղության և հաշտության համար պայքարը հնդիկների ու մուսուլմանների միջև կոնֆլիկտում տեղավորում է նրան մակրո մակարդակում: Եվ նրա պայքարը անգլիական՝ արևմտյան իմպերիալիզմի դեմ, ինքնակառավարման՝ «*swaraj*»-ի համար, տեղավորում է նրան մեզա մակարդակում: Նա գերազանցեց անգլիական գաղութատիրության և «*swaraj*»-ի միջև հակասությունը: Ներքին «ինքնակառավարումը»՝ որպես փոխզիջում, մերժվեց երկու ձևով: Մեկը բացասական էր՝ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը՝ որպես գյուղական ինքնավարություն՝ «*panchayat raj*»: Մյուսը դրական էր՝ և՛ մեկը, և՛ մյուսը՝ որպես «*rama raj*», նրա խոսքերով, «Աստծո թագավորությունը երկրի վրա» բոլորի, այդ թվում նաև անգլիացիների համար, բայց որպես ընկերներ, ոչ թե գաղութարարներ:

Այժմ Գանդիին ենք նվիրում այս գրքի վերջին կոնֆլիկտը, քանի որ նրա «ոչ բռնությանը» տեսլականն ընդունելի է միկրո, մեզո, մակրո, մեզա ամբողջ սպեկտրի երկայնքով՝ ընդհուպ մինչև քաղաքակրթությունների միջև պայքարը:

Ո՞րն էր նրա խնդիրը, նրա «կոնֆլիկտը», երկընտրանքը:

Թեզիս. *Գանդիի խնդիրն էր պաշտպանել մարդկանց և, միևնույն ժամանակ, պայքարել իր, այլ մարդկանց, խմբերի, պետությունների, ազգերի և քաղաքակրթությունների ներսում առկա չարի դեմ: Ցանկացած մարդկային բան իր մեջ կրում է և՛*

ինչ-որ բարիք, և՛ ինչ-որ չարիք: Ամենապարզ լուծումը կլիներ մարդուն որպես լիովին բարի կամ լիովին չար դիտարկելու դուալիստական տեսակետը, կամ ինչ-որ սառը, միջանկյալ դիրք գտնելը:

Գանդիի դրական գերազանցումը՝ նրա «ոչ բռնությունը», միավորում է քաղաքացիական անհնազանդությունն ու անօրինականի հետ համագործակցելու ցանկության բացակայությունը և, միևնույն ժամանակ, մարդկանց՝ այդ թվում նաև հակառակորդների պաշտպանությունը, օրինականը: Օրինակ, նա հրաժարվեց համագործակցել անգլիացիների հետ՝ որպես գաղութարարների, բայց, միևնույն ժամանակ, հանդիպեց նրանց հետ՝ որպես մարդկանց, քաղաքացիների, երրորդ կողմի: Նա բոյկոտեց անգլիական կտորեղենը և, միևնույն ժամանակ, հավաքեց գումար, որպեսզի առևտրականների ընտանիքները չտուժեին: Այլ կերպ ասած, նա ցույց տվեց բացահայտ դիմադրություն ճնշող և շահագործող կառուցվածքներին, առանց որևէ բռնության, որը կարող էր անարգել մարդկային հիմնարար պահանջմունքները և, միևնույն ժամանակ, դրական աջակցություն ցույց տվեց մյուս կողմին՝ որպես մարդկանց, ովքեր ևս ունեն օրինական պահանջմունքներ: Մյուս կողմում գտնվող մարդը միշտ պետք է անվտանգ զգա իրեն: Ցանկացած մարդկային բան, որ օրինական է, պաշտպանվում էր Գանդիի կողմից:

Օգտագործելով «չարիք» բառը՝ մենք ներկայացնում ենք Մյուսին սև գույներով՝ նրա մտքերը, խոսքերը և արարքները: Մենք ոչնչացման՝ գուլագի, Օսլենցիմի, Չիրոսիմայի արտոնագիր ենք տալիս ահաբեկիչների և պետական ահաբեկիչների ռումբերին: Օգտագործելով «բարիք» բառը՝ մենք ինքներս մեզ սպիտակ լույսի ներքո ենք ներկայացնում՝ նույնիսկ բարձրացնելով մեզ աստվածների մակարդակին: Այս մոտեցումը դուալիստական է. այն ճանաչում է միայն երկու գույներ: Արևմուտքում դուալիզմը հաճախ ստանում է «ռեալիզմ» բնորոշումն այն դեպքում, երբ Գանդիի տեսլականը պիտակավորվում է՝ որպես իրա-

կանությունից կտրված, «իդեալիստական» գաղափար: Այնուամենայնիվ, անգլոսաքսոնական ռեալիզմի միջուկը հավելեց Գանդիի պայքարի ու կարեկցության ջերմության մեջ: Ո՞վ էր իդեալիստ, ո՞վ էր կտրված մարդկային իրականությունից. մի՞թե նա, ով ոչ միայն պայքարեց գաղութարարների դեմ, այլև պաշտպանեց նույն գաղութարարներին, նա, ով տեսավ իր սեփական թերություններն ու երբեք չդադարեց ինքնակատարելագործվել, իսկ գուցե իրականությունից ավելի շատ կտրված էին գաղութարարները՝ իրենց պատժիչ արշավներով և «ամբարտավանների» համար նախատեսված բանտով:

Գանդին օգտագործում էր «*satyagraha*»-ն՝ ճշմարտությունից կառչելը: Նրա համար ճշմարտությունը, Սերը և Աստված փոխկապակցված էին: Գշմարտությունն այն է, ինչ մենք պաշտպանում ենք, Սերը բնորոշում է, թե ինչպես ենք դիմավորում հակառակորդ կողմին, իսկ Աստված այն է, ինչ միացնում է մեզ մեկ ընդհանուր մարդկության մեջ:

Անկախ նրանից, թե ում մինչև է կոնֆլիկտ ծնվել՝ ամուսինների, դասակարգերի, երկրների, թե տարածաշրջանների, բռնությունից պետք է հրաժարվել: Վնասելով հակառակ կողմին՝ ինքներդ ձեզ եք վնասում: Մենք բոլորս մարդկության մասերն ենք: Ձեզ հետ կոնֆլիկտողի դեմ բռնություն կիրառելով՝ խնդիրը չեք լուծի: Դուք կարող եք ֆիզիկապես անընդունակ դարձնել նրան իր չար նպատակներին հասնելու, բայց սա չի լուծի ավելի խորը մակարդակում գտնվող հակասությունը, որի լուծումը կփրկեր և՛ նրան, և՛ ձեզ: Միակ բանը, որին կարող եք հասնել բռնությամբ, մարդկային կյանք խլելն է:

Քրիստոնեությունը, մասնավորապես՝ կաթոլիկությունը, հստակ տարբերակում է դնում մեղքի և մեղսագործի միջև: Մտքում, խոսքում և գործողության մեջ կատարված մեղքը մերժելի է, բայց մեղսագործը կարող է ներման արժանանալ և հարություն առնել, եթե մերժի իր իսկ մեղքը և ինքնամաքրվի ապաշխարանքի միջոցով: «Գթասրտությամբ նայեք ինձ՝ խեղճ մեղսա-

գործիս»։ գեղեցիկ է ասված։ Ներումը կարող է փոխարինել մահապատժի, սպանության, պատերազմի, ահաբեկչության և պետական ահաբեկչության միջոցով ամեն ինչը մերժելու, սպանելու, ոչնչացնելու միտումը։ Եկեղեցին *մերման* միջոցով ավելի լավ է իրականացնում այս գործառույթը, քան դատարանները, որոնք ցմահ ազատազրկմամբ կամ մահապատժի դատավճռով ժխտում են այս տարբերակումը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետության ղեկավարն ինքն է ներում շնորհում՝ բարձրացնելով իրեն Աստծո կարգավիճակին։

Պայքարել պետք է, բայց ոչ թե անծի դեմ, այլ գործողության, խոսքի, հնարավոր է նաև՝ մտքի։ Վերցրեք գնդակը, ոչ թե խաղացողին։ Պայքարը հակասության դեմ է, ոչ թե հակառակորդի, բռնապետության դեմ՝ ոչ թե բռնապետի (ինչպես անում են գռեհիկ դեմոկրատները), կապիտալիզմի դեմ՝ ոչ թե կապիտալիստի (ինչպես անում են գռեհիկ մարքսիստները), սխալ գաղափարի դեմ, ոչ թե այդ գաղափարը կրողի (ինչպես անում են գռեհիկ ահաբեկիչները)։

Բայց կարո՞ղ է այս ամենը վերաբերել նաև Հիտլերին։ Ընդունված է համարել, որ նա մինչև ուղն ու ծուծը չարիք էր, *հրեշ*, որին միանշանակ պետք էր ոչնչացնել, մահապատժի ենթարկել։ Հիտլերն ինքնասպանություն գործեց, բայց հազիվ թե այն պատճառով, որ ինքն իրեն չարիք էր համարում, այլ ավելի շուտ սպանեց ինքն իրեն՝ այդ հնարավորությունից ուրիշներին զրկելու համար։

Հիտլերին դիտարկելու փոխարեն, փորձենք դիտարկել այն վեց ծայրահեղ վատ գաղափարները, որոնց կրողն էր նա, քանի որ դրանք հաստատվել էին Հիտլերի մեջ այնպես, ինչպես մանրէներն ու մակաբույծները՝ իրենց զոհերի։

Ֆրանսիային պետք է դաս տալ – սա պատժի մանկավարժությունն է, որը շատ տարածված էր դպրոցներում այն ժամանակ, երբ Հիտլերը դեռ երեխա էր։

Բոլոր գերմանացիները պետք է համախմբվեն մեկ երկրում – սա ազգային պետության փիլիսոփայությունն է՝ մշակված գերմանացի այնպիսի փիլիսոփաների կողմից, ինչպիսիք են Յերդերը և Ֆիխտեն:

Գերմանիան ունի գաղութներ ունենալու նույն իրավունքն, ինչ Իսպանիան ու Պորտուգալիան, Անգլիան ու Ֆրանսիան, Նիդերլանդներն ու Բելգիան և այլն:

Սլավոնական ժողովուրդները, մասնավորապես՝ ռուսները, բնածին ստորադաս են և ենթակա են գաղութացման՝ որպես ստրուկներ – սա նույն արհամարհանքն է սլավոնական ժողովուրդների նկատմամբ, որին կարելի է հանդիպել Մարքսի աշխատանքներում, երբ նա խոսում է «հակապատմական ժողովուրդների» մասին:

Յրեաները տականքներ են – սա նույն անսահման ատելությունն է հրեաների նկատմամբ, որ կարող ենք գտնել, օրինակ, Մարտին Լյութերի մոտ, ով գերմանական բողոքականության հայրն է:

Տականքները պետք է ոչնչացվեն – սա էլ կյանքի նկատմամբ նույն քիմիական դիրքորոշումն է, որ հանդիպում է Բայեր ԱԳ-ի մոտ մանրէների (ծծմբային դեղագործական ապրանքներ, ինչպիսիք են հակաբիոտիկները) նկատմամբ:

Այս վեց գաղափարներից չորսը գերմանական են: Հիտլերի մեջ գերմանացիները հենց իրենց պատկերը տեսան:

Ոչնչացրեք Հիտլերին, և գաղափարները մանրէների նման կսկսեն նոր տներ փնտրել: Բայց Հիտլերին շրջապատող գերմանա-ավստրիական կոլեկտիվ խորը մշակույթը գերազանց պարարտ հող էր: Ինչպե՞ս ուժեղացնենք մարդկանց իմունային համակարգը նման գաղափարների դեմ. ուժեղացնելով խորը մշակութային խաղաղությունը: 1930-ական թթ. սկզբին նման առաջարկը կդիտարկվեր որպես դիմադրություն՝ ուղղված նացիստական գաղափարներին: Ջանգվածային տնտեսական բոյկոտ և, միևնույն ժամանակ, օգնությունն ու աջակցությունը նրանց, ով-

քեր տառապում են: Բայց սա խաղաղության տեսության մասն է: Շարունակենք ուսումնասիրել Գանդիի կոնֆլիկտի տեսությունը:

Գանդին գերազանցեց ազատական հայացքներ ունեցողներին, ովքեր դեմ են ուղղակի բռնությանը, բայց ոչ կառուցվածքային շահագործմանը, գերազանցեց նաև մարքսիստներին, ովքեր դեմ են կառուցվածքային շահագործմանը, բայց ոչ հեղափոխական բռնությանը: Գանդին պայքարում էր բռնության և շահագործման դեմ՝ որպես չար գործերի, կառուցվածքների ու մշակույթների, և պաշտպանում էր մարդկանց երկուսից էլ՝ իր «*sarvodaya*»-ի միջոցով:

Եթե այն, ինչ կապում է մեզ միասին մեկ մարդկության մեջ, Աստված է, ապա Աստծո ուղերձը նույնպես պետք է ունենա որոշակի միասնություն: Ճշմարիտ միջուկն այն է, որ Աստված նույնն է, ինչ Սերը: Սա անհամատեղելի է այն իդեայի հետ, թե Աստված կարող է պատժել միայն այն բանի համար, որ ինքը շփվում է իր կողմից ընտրված ժողովրդի հետ և բացառում մյուս ժողովուրդներին, ովքեր չեն փնտրում իրեն այդ միակ ուսմունքի մեջ: Գանդիի համար նման Աստվածը կեղծ է: Նա փառաբանում է Աստծոն՝ կարդալով թե՛ Աստվածաշունչ, թե՛ Ղուրան, թե՛ Բիազավաթ Գիթա՝ փնտրելով մեղմ տեքստեր: Հենց այն, որ Գանդին համարում է, թե Աստված նույնն է, ինչ ճշմարտությունն ու Սերը, հասկանալի է դարձնում նրա տեսությունը բոլոր մարդկանց, բոլոր մշակույթների համար: Իր հարուստ, գեղեցիկ անգլերենով և կատարյալ սանսկրիտերենով, հինդիով/ուրդուով և գուջարատերենով, նա շատ լավ համապատասխանում էր այստեղ փառաբանվող Գանդիի *էկումենիզմին*: Կյանքի, մարդկության միասնությունը, պետք է գտնի իր նմանօրինակին ուղերձի միասնության մեջ այնպես, որ մարդիկ բոլոր կոնֆլիկտներից հետո էլ կարողանան տեսնել միմյանց արժանապատվությունն ու ուղղել իրենց պայքարն այնտեղ, որտեղ այն պետք է ուղղվի:

Գանդիի՝ իրար բացառող կրոնների գերազանցումը դուրս եկավ բողոքականության, քրիստոնեության կամ աբրահամական կրոնների սովորական միավորումից, որն արևմուտքում առավել

հայտնի է որպես էկոմենիկական շարժում: «Աստված մեր ներսում է» և «Մենք բոլորս Աստծո մեջ ենք» անդումները առանցքային են Գանդիի տեսության համար: Գանդին ոչ միայն *բազմալեզու էր, այլև բազմակրոն*: հնարավոր չէ պատկերացնել ավելի ներդաշնակ դրական գերազանցում, քան բոլոր կրոնների միջև էսպերանտոյի՝ ընդհանուր հայտարարի հասնելը: Գանդին բաժանարար գիծ էր դնում ոչ թե կրոնների միջև, այլ դրանց բոլորի կոշտ և մեղմ ասպեկտների: *Շնորհակալություն*, Գանդի:

ՈՒՐԲԱԹ. ԽՈՐԸ ՄՇԱԿՈՒՅԹ, ԽՈՐԸ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԽՈՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Մենք հաճախ զգացողություն ենք ունենում, թե ասվածի տակ ինչ-որ անհասկանալի բան է մնացել:

Երբ կոնֆլիկտի կողմերն իրենց տեսակետն են ներկայացնում կոնֆլիկտի մասին, ցանկացած դեպքում ներկայացվածը «տեքստ» է: Սոցիալական գիտություններն ու պատմությունը բավական շահել են տեքստային վերլուծություն կատարելու գրականագիտական մեխանիզմները յուրացնելով: Այդ գործիքները կիրառելով՝ հնարավոր է վերհանել չբարձրաձայնվող *ենթատեքստեր, վերտեքստեր* և *համատեքստեր*՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչ է ասվել բնագիր տեքստում: Օրինակ՝ Կոսովոյի ալբանացիներին օգնություն ցուցաբերելու կարևորության մասին մարդասիրական նկատառումներով տեքստերում առկա է մահ քողարկված ենթատեքստ այդ տարածքում ռազմականներն ունենալու և Կասպյան տարածաշրջանից դեպի Ադրիատիկ նավթամուղների անվտանգությունն ապահովելու կարևորության մասին: Կա մահ չհիշատակված վերտեքստ ՆԱՏՕ-ին նոր դեր տալու և ՆԱՏՕ-ի ու ԱՄՆ-ի նկատմամբ հավատարիմ լինելու կարևորության մասին: Եվ կա ավելի լայն աշխարհաքաղաքական համատեքստ՝ ըստ որի Եվրասիայի նկատմամբ հսկողությունը ֆունդամենտալ է:

Ենթատեքստերը, վերտեքստերն ու համատեքստերը բուն ասելիքի հետ միասին բառերով արտահայտելն ազնվություն է պահանջում: Երկարաժամկետ հեռանկարում ազնվությունն ավելի կայուն կարող է լինել: Պետական համակարգը կարող է բարձրացնել «պետության կառավարման արվեստի» անազնվությունը, եթե արտգործնախարարի կողմից ներկայացվող տեքստերը համընկնեն իրականության հետ: Բայց մման բան մեր օրերում կարող է լինել բացառապես պատահականության սկզբունքով, քանի որ ներկայումս տեքստերը գրվում են «քաղտեխնոլոգեն-

րի» կողմից, ովքեր ոչ թե փորձում են արտացոլել իրականությունը, այլ պարզապես ստեղծում են իրականության ընդունելի ձև:

Վերոնշյալը գիտակցաբար առաջացող կասկածի («Կարծես ինչ-որ բան կա սրա տակ») արտահայտման աննշան ասպեկտն է միայն: Մեզ ավելի շատ հետաքրքրում է անգիտակցական մակարդակը՝ *խորը տեքստերը*, որոնք կողմերին մղում են հստակ քայլերի, մինչդեռ վերջիններն ամբողջովին չեն գիտակցում, թե ինչ է տեղի ունենում: Սրա պատճառը մի կողմից այն է, որ կողմերի համար տեքստերի խորությունը չգիտակցելը սովորություն է դարձել, մյուս կողմից՝ պարզապես այն, որ այդ տեքստերը կազմվում են բնական կաղապարի շղարշի տակ:

Այս գրքում արդեն ուսումնասիրել ենք կոնֆլիկտի երեք բաղադրիչները՝ *դիրքորոշումը, վարքագիծը և հակասությունը*՝ ԴՎՅ-ն: Այժմ հարկ է նշել, որ ի լրումն կան նաև խորը դիրքորոշումներ, խորը վարքագիծ և խորը հակասություններ: Որպես կանոն, սրանք արտահայտվում են ոչ թե բառերով, այլ «կարծես ինչ-որ բան կա սրա տակ» կասկածի առաջացմամբ: Բայց սրանք վճռական նշանակություն ունեն, եթե մենք ուզում ենք հասկանալ կոնֆլիկտը և կատարել գերազանցմանն ու փոխակերպմանն ուղղված լավ աշխատանք: Այդ պատճառով մենք պետք է սերտ կապ ստեղծենք դրանց միջև՝ հարկ եղած դեպքում՝ անվանափոխման միջոցով:

Դիրքորոշումը սովորաբար ներկայացվում է որպես հրահանգ, կարգադրություն այն մասին, թե ինչպես պետք է գործել ներքոգրյալ իրավիճակներում: Կանտոն այն կարծիքին էր, որ նման կանոնները պետք է «հնարավորություն ունենան հանդուհանուր դառնալու», այլ կերպ ասած, դրանք պետք է գործեն ոչ միայն ձեզ համար՝ այստեղ և հիմա, այլ նույն իրավիճակում գտնվող բոլոր մարդկանց համար: Այժմ կարող եք հետևել Կանտին՝ գրի առնելով այն կանոնը, որ վերաբերում է ձեր գործողություններին, այնուհետև կարող եք մայելով դրան որոշել՝ արդյոք դուք կարո՞ղ եք ընդունել այն որպես ընդհանուր կանոն՝ «վարքականոն»: Վատ միտք է:

Ի՞նչն է, ըստ Կանտի, ամեն դեպքում հարուցում «կարծես ինչ-որ բան կա սրա տակ» կասկածը: Ի՞նչու կամոնները պետք է «հնարավորություն ունենան համընդհանուր դառնալու»: Պատկերացրեք, որ մարդկությունը բաժանված է քաղաքակրթությունների, որոնք իրենց հերթին բաժանված են մշակույթների, և որ շատ հարցերի շուրջ դրանք բոլորն ունեն ինդիվիդուալ պատկերացումներ: Որոշ մշակույթներում, օրինակ, կյանքն ամենասուրբ բանն է: Պատկերացրեք, որ Կանտն այն կարծիքին է, թե նա, ով խլում է ուրիշի կյանքը, զրկվում է սեփական կյանքի իրավունքից, ուստի դատապարտվում է մահապատժի, և այս կանոնը պետք է համընդհանուր դառնա: Այսպես է Կանտի՝ գերմանական, քրիստոնեական, արևմտյան քաղաքակրթության տեսանկյունից: Բայց արևելյան քաղաքակրթությունում, օրինակ՝ բուդդայական մշակույթի համար, այս սկզբունքն աշխատել չի կարող: Գուցե Կանտը նույնպե՞ս արևմտյան խորը մշակույթի ներկայացուցիչն էր ու դիտարկում էր ցանկացած արևմտյան երևույթ որպես համընդհանուր, դիտարկում էր Արևմուտքը՝ որպես մարդկության շարժիչ ուժ և այդ պատճառով կարծում էր, թե անհրաժեշտ է համընդհանուր դարձնել արևմտյան արժեքները: Մի խոսքով՝ մի փոքր կասկածամտությունը չէր խանգարի:

ԽՈՐԸ ՄՇԱԿՈՒՅՑ

Զիգմունդ Ֆրոյդն ու Կարլ Յունգը ճանաչեցին աշխատանքի բաժանումը: Ֆրոյդն անհատի դիրքորոշումների հետևում տեսավ խորը դիրքորոշումներ, իսկ Յունգը նույնը տեսավ կոլեկտիվների դիրքորոշումների հետևում: Յունգի աշխատանքը դիրքորոշումների մասին, որոնք մենք չենք գիտակցում, բայց ունենք, և Ֆրոյդի աշխատությունը մոնոթեիզմի մասին լավ օրինակներ են: Անվանենք այս խորը դիրքորոշումները *անհատական անգիտակցական* և *կոլեկտիվ անգիտակցական*: «Կոլեկտիվ» բառի հետ կապ-

ված որևէ խորհրդավոր բան չկա, այն վերաբերում է խորը դիրքորոշումներին, որոնք կիսում են որոշակի խմբի անդամներ: Ենթադրվում է, որ նույն խմբի անդամները հիմնականում նույն կերպ են ենթարկվում նույնատիպ տպավորությունների: Այստեղ չի ենթադրվում «կոլեկտիվ հոգի» կամ դրա մեծ ինչ-որ բան: Կոլեկտիվ անգիտակցականի բնորոշման համար կարող ենք օգտագործել *խորը մշակույթ* արտահայտությունը:

Սակայն ասվածը չափազանց վերացական է: Մեր խնդիրն է ցույց տալ, որ խորը մշակույթը կարևոր դերակատարություն ունի կոնֆլիկտում դիրքորոշումների ու վարքագծի ձևավորման մեջ: Այլ կերպ ասած, *կոնֆլիկտային մշակույթը* պետք է ներառվի կոնֆլիկտաբանական աշխատանքում: Օրինակ, համեմատենք ինքնավարության կոնֆլիկտներ, որոնք ներառում են տարբեր կոնֆլիկտային մշակույթներով երեք ազգեր Պիրինեյան թերակղզում՝ Մադրիդում կենտրոնացած Կաստիլիա, Բարսելոնայում կենտրոնացած Կատալոնիա և բասկերի երկիր Էուսկադի: Ինքնավարության կամ անկախության կոնֆլիկտներ կան Կատալոնիայի ու Կաստիլիայի, Էուսկադիի ու Կաստիլիայի միջև:

Մեզ հետաքրքրում է խորը մշակույթի ազդեցությունը կոնֆլիկտային մշակույթի վրա: Օրինակ, եթե խորը մշակույթն արդեն պաշտպանել է իր տեսակետը, նույնիսկ խիստ տեսակետն այն մասին, թե երկու անհամատեղելի մպատակների շուրջ կոնֆլիկտում հինգ ելքերից որն է կամ որոնք են մախընտրելի, ապա կողմերը կշարժվեն դեպի այդ ելքը կամ ելքերը՝ նույնիսկ չգիտակցելով, թե ինչ է տեղի ունենում, որովհետև դա արդեն տեղավորված է անգիտակցականում: Նրանք կշարժվեն դեպի այդ ելքն առանց որևէ առարկության, որովհետև անգիտակցականն ընդհանուր է բոլորի կամ, գոնե, մեծամասնության համար:

Քանի որ երկու կոնֆլիկտների դեպքում էլ որպես կողմ ներգրավված է Կաստիլիան, ուսումնասիրենք մախ կաստիլիական խորը մշակույթը:

Վարկածն այն է, որ Կաստիլիայի խորը մշակույթը նախապատվությունը կտա երկու ծայրահեղ՝ հաղթող ու պարտվող դիրքերին և հակառակը՝ հեռու կմնա հեռացման, փոխզիջման ու գերազանցման տարբերակներից՝ խաղաղության անկյունագծից:

Սա անպայմանորեն չի ենթադրում բռնություն, նույնիսկ եթե տվյալ կոնֆլիկտային մշակույթը հակված է բռնության: Մենք գործ ունենք տիպիկ, ազնվական խորը մշակույթի հետ, որի արմատները գտնվում են ֆեոդալական միջնադարում՝ մենամարտերի, մրցաշարերի և մարտերի կազմակերպման մեջ: Վերագրյալը միայն կաստիլիական Իսպանիային չէ, որ բնորոշ է. հաճախ նման բնորոշում կարելի է տալ նաև Եվրոպայի տարբեր մասերին:

Բացի *սրից* գոյություն ունեն գերիշխման այլ ձևեր ևս («*dominus*»՝ տեր): Մեթոդներից մեկը կոնֆլիկտի վերբալ արտահայտումն է *դատարանում*, քանի որ իրավական խորը մշակույթը նույնպես նախապատվությունը տալիս է ծայրահեղ դիրքերին («Ա-ն մեղավոր է, Բ-ն՝ անմեղ»): Իհարկե, դատարանում կա նաև հեռացման չնչին հնարավորություն, եթե «գործը կարճվի»:

Երրորդ հնարավոր տարբերակը փողով հաղթանակը գնելն է. սա հայտնի է նաև *կոռուպցիա* անվանմամբ: Հաղթողին որոշելու ևս մեկ եղանակ է *քվեարկությունը*, որտեղ պարզ թվաբանությունն ազատում է կողմերին փոխզիջում կամ գերազանցում գտնելու աշխատատար խնդրից:

Կաստիլիայում կա ևս մեկ գործոն, որ պակաս կարևոր չէ՝ *խարիզման* ուժը, որն արտահայտվում է անձի ճառագման մեջ՝ բարձրացնելով տվյալ անձին *Դոնի* կարգավիճակի (Դոն Ժուանը վկայում է ճառագման առանձնահատուկ տեսակի մասին): Դոնը մտնում է սենյակ: Նրան դիմավորում են հարգալից լռությամբ: Սեղանի շուրջ նստած մարդիկ ներկայացնում են իրենց տեսակետները: Աստիճանաբար ողջ ուշադրությունը կենտրոնանում է նրա վրա: Վերջին խոսքը, ամփոփումը, եզրակացությունը պատկանում է նրան: Շատ Դոներ են ապրում Մադրիդում:

Անկախ կիրառվող մեթոդից կամ մեխանիզմից, կոնֆլիկտը վճռվում է հաղթողին որոշելու միջոցով:

Որտե՞ղ են այս ամենի արմատները: Թերևս մենք կարող ենք խոսել խորը մշակույթի՝ նկուղի տակ գտնվող նկուղի մասին՝ թիվ «2»-ի հետ ուժեղ կապով և ուժեղ հավատով, որ Աստված կամ արդարությունը հստակ ձայնով ելքը ցույց կտա: Աստվածային հստակությունը կանհետանա փոխզիջման դժգունության, հեռանալու վախկոտության և ցանկացած գերազանցման մարդկային ստեղծագործականության մեջ:

Եթե Աստված ցանկանար գերազանցում, Նա չէր նվիրի իր իսպանացի հպատակներին առճակատման այդքան շատ ձևեր: Նա ցույց կտար այդ գերազանցումն Արարման իր գործում: Փոխարենը նա հնարավորություն տվեց իսպանացիներին արտահայտելու իր կամքը հաղթելու միջոցով:

Բայց իսպանացիները հավատո՞ւմ են սրան այսօր: Նրանք գուցե վարվում են այդպես անգիտակցաբար, որովհետև նկուղի տակ գտնվող նկուղն էլ ավելի քիչ հասանելի է: «2»-ի (ելքեր) նկատմամբ հավատը կարող է Աստծո նկատմամբ հավատից ավելի երկար գոյությունը պահպանել և իրականացվել Արդարության նկատմամբ հավատի միջոցով: *«Plus ça change, plus c'est la même chose»*¹, - ասում են ֆրանսիացիները: Վաղուց ի վեր ազնվական մենամարտերի խորտակվող նավը լքող առնետ «2»-ը ցատկել էր ջուրը ոչ թե խեղդվելու, այլ մեկ ուրիշ նավ գտնելու համար: Այդ նույն առնետն այժմ ապրում է դատական միստերի դահլիճներում: Ուստի շատ տեղին է «դատական մենամարտ» արտահայտությունը:

Բայց Իսպանիայում գոյություն ունի այս խորը մշակույթի մեկ այլ հզոր կրող՝ *կորիդան* ցլամարտը, որ ունի երկու դերակատարներ՝ *Տորո* (ցուլը) ու *Մատադոր* (սպանողը), և երկու ելքեր: Մատադորը գրեթե միշտ սպանում է, իսկ Տորոն՝ ուղարկ-

¹ *«Plus ça change, plus c'est la même chose»* (ֆրանս.) - *«Ինչքան շատ են քանները փոխվում, այնքան շատ են դրանք մնում նույնը»* (թարգ.)

վում մսագործին: Շատ հազվադեպ լինում է մահ այնպես, որ Մատադորը հայտնվում է Տորոյի պողրի վրա, ու նրան տեղափոխում են հիվանդանոց:

Այս կոնֆլիկտի ելքերից մեկը հեռացումն է, սակայն արածող Տորոն և հանգիստ մստած, ծխող Մատադորը վախկոտության հետ կարող են ասոցացվել: Փոխզիջումը՝ պայքարելը մինչև Տորոն վիրավորվի, կարող է բավականին լավ լուծում թվալ փափկասուն, կամազուրկ տղամարդկանց, ինչպիսիք են ֆրանսիացիները և պորտուգալացիները: Գերազանցումը՝ միաժամանակ միմյանց ընդառաջ վազող Տորոն և Մատադորը, ինքնասպանության պաթոլոգիական պակտ է: Բացասական գերազանցում կարող է ստացվել, եթե Տորոն և Մատադորը միասին վազեն ու հարձակվեն դատավորի կամ հանրության վրա: Սա հետաքրքիր տարբերակ է, բայց հազիվ թե այն կարելի է իրատեսական անվանել:

Տլամարտը մման է տեքստի, մի խորը տեքստի մասին արդեն մշել ենք. կոնֆլիկտն ունի երկու և միայն երկու ելքեր: Սա նորմալ է, բնական: Կյանքն այսպիսինն է և չի փոխվի:

Բայց կա մեկ այլ՝ բավական համատեղելի խորը տեքստ:

Տորոն *ամործիներ*, ձվարաններ ունի: Մատադորն էլ իր հերթին կիպ մետաքսյա տաբատ է կրում, որը կասկած չի թողնում՝ մա նույնպես ինչ-որ բան ունի ոտքերի արանքում: Մեկնաբանություն. այս «կա՛մ դու, կա՛մ ես» պայքարը տղամարդկանց միջև է՝ իսկական տղամարդկանց:

Մի քանի տարի առաջ մի շատ հմուտ կին ցլամարտիկ հայտնվեց ցլամարտի հրապարակում: Դա խորը մշակույթի հստակ խախտում էր: Նրան անմիջապես սկսեցին հետապնդումների ենթարկել: Եթե այդ կինը կենտրոնամար, օրինակ, կովերի մարտերի վրա, տղամարդիկ, հնարավոր է, համաձայնեին՝ նույնիսկ հաճույքով:

Կա մահ երրորդ խորը տեքստը. Տորոն իր բնույթով դաժան է, չվարժեցրած: Նա խավարի, սատանայի գույմն ունի՝ սև է: Իսկ

Մատադորը պարզապես տղամարդ չէ, նա գեղեցիկ է, գրավիչ, ուժեղ, տիրապետում է գեղեցիկ տեխնիկայի, նա մահվան գեղագիտական բալետ է պարում Տորոյի շուրջը: Սա ոչ թե պարզապես մարդ է, ով կռվում է գազանի դեմ, այլ կոնֆլիկտային մշակույթ, որ փառաբանում է մշակույթն ընդդեմ բնության կոնֆլիկտը:

Ինչ վերաբերում է Կատալոնացիներին, ապա նրանք նույն իսպանական պետության քաղաքացիներ են, բայց խորը մշակույթում կոնֆլիկտի մասին նրանց ունեցած պատկերացումները բոլորովին այլ են: Նրանց մոտ նախապատվությունը տրվում է փոխզիջմանը, խելամիտ ելքին: Այս խորը մշակույթի կրողները նույնիսկ ավելի կարևոր են, քան ցլամարտերը. շուկայում առք ու վաճառքով զբաղվող, սակարկող, բանակցող առևտրականների նպատակն է գտնել լավագույն լուծումը, որը կհանգեցնի ընդունելի և կայուն գործարքի: Իդեալական տարբերակում սա տեղի է ունենում առանց հարկադրանքի կամ սպառնալիքների: Արդյունքում երկու կողմերն էլ զգում են իրենց հաղթողի դերում՝ խուսափելով փառքի և տրավմայի ծայրահեղություններից: Գործընթացից ժամանակավոր հեռանալը հնարավոր է: Ինչպիսին էլ լինի ելքը, գերակշիռ տեղ ունի առողջ դատողությունը (կատալ.՝ *seny*):

Բայց գերազանցում չկա: Փոխզիջում գտնելու համար բանակցությունների առարկան սահմանում են կողմերն ու նրանց դիրքերը: Եվ այդ չափումը պետք է լինի բաժանելի այնպես, որ հնարավոր դառնա ցատկը վերև ու ներքև: Հենց նոր հատված մետաղադրամներով գին սահմանելն իդեալական տարբերակ է այդ նպատակի համար:

Այլընտրանքը երկու նպատակների միջև կոշտ սակարկությունն է, երբ փորձ է արվում փոխանակել ինչ-որ անբաժանելի բան մեկ այլ բանով, որը նույնպես անբաժանելի է:

Սա բնութագրում է ամբողջ ազգը: Առևտրականների փոխզիջումը նույնքան նորմալ և բնական է, ինչքան ազնվականների պատերազմը: Ցանկացած դեպքում էլ գիտակցությունը ցածր է,

բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք բախվում են մյուս կողմի կոնֆլիկտային ոճի հետ: Նույնիսկ Մադրիդը պետք է բանակցի: Գուցե Մադրիդն իրեն ավելի անկաշկա՞նդ է զգում ավելի ռազմատենչ բասկերի հետ:

Սրանք կարծրատիպե՞ր են. ինչ-որ չափով՝ այո: Բայց սրանք չեն կարող հերքվել հասարակական կարծիքի հարցումներով՝ գիտակցականի ճնշմամբ: Մենք գտնվում ենք մշակութային մարդաբանության՝ միջառարկայական կոնֆլիկտի ուսումնասիրությունների բաղադրիչի դաշտում: Մեթոդը դիտարկումն է, մասնակցությունը, ապրումակցումը: Նախ և առաջ, պետք է կազմակերպել զգույշ, հետաքննական երկխոսություններ՝ հասկանալու համար, թե ինչպես են կոնֆլիկտի կողմերն ապրում կոնֆլիկտները հոգու խորքում:

Այնուհետև, կան նաև բասկերը: Մի պարզ ձևակերպում. *ժայռահեղական* Կաստիլիան ավելի իսպանական է, քան իրենք՝ իսպանացիները: Իզմատիուս Լոյոլան և նրա «*Compañía de Jesús*»¹ (ճիզվիտները) ավելի կաթոլիկ էին, քան Յոզմի պապը: Յրեք նրանց Կաստիլիայի դեմ, և արդյունքն ի սկզբանե պարզ է՝ երկու զուգահեռ ցլամարտ: Նրանց ընդհանուր, ծանր պատմությունը հաղթանակի համար մղվող պայքարի պատմություն է: Ֆրանկոյի «*España, una, grande, libre*»² ենթադրում էր դաժան ճնշում բասկերի նկատմամբ: Վերջիններիս պատասխանը ականապատված ավտոմեքենաներով Ֆրանկոյի վարչակարգին հակազդելն էր, որի արդյունքում հնարավոր եղավ ձեռք բերել որոշ ինքնավարություն, բայց ոչ անկախություն, որը ցանկանում էր ԲՅԱ-ն: Ականապատված ավտոմեքենաները շարունակեցին գործի դրվել: Սոցիալիստական կառավարությունը պատասխանեց սպանություններով՝ օգտագործելով գաղտնի ոստիկանությունը: Պահպանո-

¹ «Compañía de Jesús» (իսպ.) - *Յիսուսի հասարակություն* (թարգ., *մշունդ թարգմանիչի*)

² «España, una, grande, libre» (իսպ.) - *միասնական, մեծ, ազատ Իսպանիա* (թարգ., *մշունդ թարգմանիչի*)

դականները պատասխանեցին բեռնացմամբ, մեկուսացմամբ: ԲՀԱ-ի երկու առաջնորդներ դատապարտվեցին ավելի քան 1000 տարվա ազատազրկման: Իսկ քաղաքական կուսակցությունն արգելվեց:

Սա պայքարի մշակույթ է՝ բռնությամբ, բեռնացմամբ, դիտոմիայով և այնպիսի նպատակներով, ինչպիսիք են «անկախությունն» ու «ստատուս-քվոն» : Այլընտրանքներ չկան: Կողմերը կապված են երկու ծայրահեղ ելքերին: Հեռանալը վախկոտություն է, փոխզիջումը՝ դավաճանություն: Իսկ գերազանցումը պահանջում է ոչ միայն ստեղծագործականություն, այլ նաև մյուսի մեջ ինչ-որ ընդունելի բան տեսնելու պատրաստականություն, ինչն արգելափակված է կոնֆլիկտի մշակույթի վրա խորը մշակույթի ունեցած ուժեղ ճնշման միջոցով: Կոնֆլիկտի մասին քիչ բան իմացող մարդիկ հաճախ կարծում են, որ ընդհանուր մշակույթը կկապի նրանց, բայց դա կախված է մշակույթից: Եթե բռնությունը թաքնված է մակերևույթի տակ, ապա մեկի կողմից իրականացված բռնությունը մյուսի նկատմամբ դուալիզմի հաստատում է, և նրանք կապրեն միասին շատ դժբախտ: Ընդմիջո՞ւտ:

Հուսանք՝ ոչ: Բայց կոնֆլիկտի ավելի դրական կառավարման ճանապարհն անցնում է խորը մշակույթի գիտակցման ցավոտ գործընթացի միջով: Պետք է լինի կոլեկտիվներին ուղղություն տալու ավելի խորը դիմամիկայի որոշ գիտակցում՝ կոլեկտիվ անգիտակցականի բացասական ասպեկտները, այսպես ասած, կոկորդից բռնելու, դուրս նետելու համար:

Կարիք չկա ասելու, որ դա վերաբերում է երկու կողմերին էլ և, հավանաբար, ավելի շատ տղամարդկանց, քան կանանց, ավելի շատ կենտրոնի մարդկանց, քան ծայրամասերում բնակվողներին:

Միևնույն ժամանակ, Կատալոնիան սահում է դեպի ինքնավարության ավելի բարձր մակարդակ՝ կատարելով երկու քայլ առաջ և մեկ քայլ ետ: Այս գործընթացը նախագահող քաղաքական գործիչը՝ Պույոլը, խույս է տալիս լրագրողների կողմից տրվող մշտական հարցից՝ «Նպատակն անկախությունն է»: Նա չի կա-

րող ասել «Այո»՝ չմտնելով դուալիստական կոնֆլիկտի մշակույթի մեջ, և չի կարող ասել «Ոչ»՝ չիրաժարվելով կարևոր հաղթաթղթից: Այդ կոնֆլիկտից հեռացումը խելացի քայլ է:

Բասկերի երկրի և Կատալոնիայի միջև՝ բարձրադիր Պիրենեյներում, կա մի շատ փոքր երկիր՝ Անդորրան, որը դարեր շարունակ ղեկավարվել է անհավանական դուետի՝ Ֆրանսիայի թագավորի կամ Նախագահի և իսպանական մի փոքր քաղաքի՝ Սեո դե Ուրխելի եպիսկոպոսի կողմից: Այսօր երկիրը ՄԱԿ-ի անկախ անդամ է: Մշակոյթը: Կատալոնական, իհարկե: Փոքր քայլեր: Ոչ մի ռումբ: Մի քանի մոդելների միջից մեկը՝ Բասկերի համար: Դատելով ելքից՝ պատասխանն անվերապահ այո է, բայց որպես մեթոդ՝ ավելի խնդրահարույց: Խաղաղ բանակցությունները, հստակ հաղթանակից հրաժարվելը, հաղթական երթը դեպի Սան Սեբաստիան (Donostia) շատ են հակասում իր ռումբերին ապավինող խորը մշակույթին:

Մեկ երկիր, առնվազն երեք ազգ: Կրիա Կատալոնիան կհասնի բարձր ինքնավարության մշակութային թակարդում հայտնված Աքիլես Բասկերի երկրից առաջ: Դժվար է ենթադրություններ անել հեռավոր ապագայի մասին, բայց դա կարող է պաշտպանել Մադրիդին, որը դեմ առ դեմ է կանգնում Բարսելոնային՝ ոչ թե որպես հավասարի, այլ վերադասի, որովհետև Մադրիդը մնում է Բասկերի երկրի հետ կրկնակի ցլամարտի թակարդում: Ազգային ինքնավարության գաղափարները, կարծես, երբեք չեն մեռնում: Առաջնորդները կարող են սպանվել, շարժումները կարող են ճնշվել, բայց իր նմանի կողմից ղեկավարվելու մասին միտքն ամուր կերպով կխարսխվի ցանկացած ազգի խորը մշակույթում:

Դիտարկենք մեկ այլ օրինակ՝ այս անգամ ավելի աշխարհաքաղաքական: Կոնֆլիկտի մշակույթն, անշուշտ, կարևոր է, նույնիսկ՝ ավելին, քան պարզապես կարևոր: Խորը մշակույթում կամ կոլեկտիվ անգիտակցականում Յունգի արքետիպերը նման են անգիտակցական նշանակության ատոմների, որի օրինակ է

վերևում հաճախ հիշատակված «երկակիությունը»: Արքետիպերը կարող են միավորվել ավելի բարձր բարդության մոլեկուլների՝ «համախտանիշների» և «գերհամախտանիշների» մեջ, որոնք ավելի մեծ են սպիտակուցային մոլեկուլների:

Նման համախտանիշներից մեկը հավատն է Ընտրյալ Ժողովուրդ (Ը) լինելու նկատմամբ: Ժողովուրդ, որ օժտված է Փառավոր անցյալով և/կամ ապագայով (Փ) ու, միևնույն ժամանակ, տառապում է անթիվ Տրավմաներից (Տ): ԸՓՏ համախտանիշն ամենախնդրահարույցն է մակրո և մեզա կոնֆլիկտների շրջանում: Անհատական մակարդակում մեծ համախտանիշով տառապող անձը կլինե՞ր մեկը, ով օժտված է Աստծո կողմից տրված մանդատով, ում ապագայում փառք է սպասվում և ով ներկայումս խորապես խարամված ու վնասված է ուրիշների կողմից պատճառված իրական կամ երևակայական տրավմաներից: Գոյություն ունի որոշակի ներքին տրամաբանություն: Նրան, ով Աստծո դրոշմն ունի իր ճակատին, նախասահմանված է վեհություն, բայց դա մեծ սարսափելի նախանձի առարկա կդառնա, քանի որ ուրիշները կցանկանան զբաղեցնել այդ տեղը:

Անհատական՝ միկրո մակարդակում, անձը, ով տառապում է վեհության մոլուցքով, խելացնորության ախտորոշմամբ կհոսպիտալացվի: Բայց պետական՝ մակրո մակարդակում, այս ազգային պաթոլոգիան դեռ երբեմն դասակարգվում է որպես հայրենասիրություն, հայրենիքի նկատմամբ սեր, հաճախ նույնիսկ փառաբանվում է:

Որպես խորը մշակույթ՝ սա առճակատում է մեզ վիթխարի խնդիրների հետ: Նման խորը մշակույթ ունեցող ազգի կողմից կառավարվող պետությունը ուրիշներին հպատակեցնելու վիթխարի մղում ունի, ինչն էլ Արևմտյան գաղութատիրության բաժանման հիմնական գործոնն է: Բայց ինչպե՞ս կվերաբերվեն միմյանց մեծ ընտրյալ ազգերը:

Դիտարկենք չորս դեպքեր (տե՛ս աղյուսակը):

	ԱՄՆ	Իսրայել	Իրաք	Սերբիա
Ընտրյալ	Աստծո կողմից	Եհովայի կողմից	Ալլահի կողմից	Բոգի = Աստծո կողմից
Փառք	Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո	Իսրայել I Դավիթ Իսրայել II 1947 – ?	Շումեր, Բաբելոն Աբասիդներ	28.06.1914թ. Հարավսլավիա
Տրավմա	Վիետնամ 11.09.2001թ.	Հոլոքոստ	Բաղդադ 1258թ. Գաղութատիրություն	28.06.1389թ. 28.06.2001թ.

Արևմտյան և արևելյան եկեղեցիների Աստվածը՝ հուդայականության Եհովան, իսլամի Ալլահը, աբրահամական երրորդությունն ունեն իրենց Ընտրյալ ժողովուրդները: Այդ ժողովուրդներն օժտված են անցյալի փառքով և ուսերին կրում են իրենց խոր տրավման: Աղյուսակը կարող է վիճարկվել, բայց համախտանիշները հստակորեն ունեն որոշ նմանություններ: Բոլոր չորս պետությունները կամ ազգերն իրենց օրինականացնում են՝ Աստծո նկատմամբ համընդհանուր հավակնություններով: Բայց գոյություն ունի մի կարևոր տարբերություն. ԱՄՆ-ը դիտարկում է իրեն որպես համակողմանիորեն արդար, ինչը չի կարելի ասել Իսրայելի, Իրաքի և Սերբիայի մասին: Վերջինները կարող են լինել տարածաշրջանային տերություններ, բայց ԱՄՆ-ը համաշխարհային տերություն է, նույնիսկ համաշխարհային մոդել՝ իր և շատ ուրիշների աչքերում:

Այսպիսով, նրանք բախման ընթացքի մեջ են: Հիտլերը համարում էր, որ իր ժողովուրդն ընտրված է «Նախախնամությամբ»՝ ունի թե՛ փառք, թե՛ տրավմա: Հրեաների հետ բախումը վաղուց ի վեր հավանական էր, բայց հատկապես իրական դար-

ծավ այն բանից հետո, երբ հրեատյաց Մարտին Լյութերը քրիստոնեական Աստծուն գերմանական ուրվապատկեր տվեց: Այն, որ ԱՄՆ-ը բախման մեջ չէ Իսրայելի հետ, կապված է ԱՄՆ-ում 1950-ական թթ. սկսած հրեաների ձեռք բերած կայուն դիրքի հետ: Եթե իրաքցիները և սերբերն ի վիճակի լինեին ապահովել նման դիրք ԱՄՆ-ում, կկանխվեին թե՛ Պարսից ծոցի, թե՛ հարավսլավական պատերազմները: Երկու ազգերն էլ կունենային ծանրակշիռ ներկայացուցիչներ պետդեպարտամենտում: Մենք գիտենք, թե ինչպես դա եղավ, և ինչ տեղի ունեցավ: Մենք նաև զգում ենք Իսրայելի և Իրաքի միջև գերլարվածության սկզբնաղբյուրներից մեկը: Նրանք ունեն նույն խնդիրը, ինչ Սերբիան: Խնդիրը Արիել Շարոնը, Սադամ Հուսեյնը կամ Սլոբոդան Միլոշևիչը չեն, այլ պաթոլոգիական խորը մշակույթը, որը կարող է բավական երկար պահպանել իր գոյությունը:

Իհարկե, այս ամենի մասին ընթերցողն ավելի շատ բան կգտնի *«Խաղաղություն Խաղաղ Միջոցներով»* գրքի Մաս IV-ում՝ Քաղաքակրթության տեսությունում: Այսպիսով, ինչ-որ բան կա քաղաքակրթությունների միջև տարածության և ժամանակի հեռանկարների տարբերություններում: ԱՄՆ-ը՝ *ժայռահեղ* Արևմուտքն, ունի անսահմանափակ տարածության հեռանկար, որ ներառում է ոչ միայն Երկիր մոլորակը, այլ ողջ տիեզերքը: Բայց ժամանակային հեռանկարը սահմանափակ է, ինչպես «Գոհատոնից/Սուրբ ծննդից առաջ» կամ «այս վարչակազմի սահմաններում»: Սերբիայում ճիշտ հակառակն է: Բոզը՝ ուղղափառ Աստվածը, տվեց նրանց առաքելություն՝ որպես մոսուլմանական/օսմանյան առաջխաղացմանը դիմագրավելու միջոց: Սակայն քրիստոնեությունը, որին նրանք ընտրված էին պաշտպանել, ըմբոստացավ իրենց դեմ՝ ատելով և ոչնչացնելով նրանց՝ «նախանձից դրդված»: Բայց Աստծո աջակցությամբ Սերբիան կվերածնվի մոխրից կրկին ու կրկին՝ պարտությունից և նահանջից հետո. սրանք հավիտենական թեմաներ են սերբական պատմության մեջ՝ *պարտություն, նահանջ, վերադարձ*:

Իրաքն ունի նման ընդլայնված ժամանակային հեռանկար՝ ներառյալ Բաբելոնի և արասիդների պարտությունը, 1258 թ.-ին Յուզոնի պապի աջակցությամբ մոնղոլների կողմից Բաղդադի կոտորածը, Օսմանյան Կայսրությունը, 1916 թ.-ին Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարներ Սայքսի և Պիկոյի կողմից արաբներին՝ թուրքերի դեմ կռվելու դիմաց խոստացած ազատությունը, իսկ այնուհետև նրանց գաղութացումը, Քուվեյթի նահանգը, որը նրանցից վերցրել էին 1898թ.-ին և Պարսից ծոցի պատերազմները: Այնուամենայնիվ, Իրաքը համառոտեմ շարունակում է և կշարունակի գործել նույն ոգով: Վաշինգտոնը շատ անհանդուրժող է երկուսի նկատմամբ էլ: Բայց նա, ով ունի ավելի երկար ժամանակային հեռանկար, կհաղթի՝ ավելի երկարաժամկետ հեռանկարում:

Բացի այդ, գոյություն ունի ևս մի գործոն Իրաքի բեղուխնական մշակույթում: Պատերազմը ոչ միայն հաղթելու, «բոլոր հնարավոր միջոցներով» նպատակներին հասնելու, թշնամու առաջխաղացումը խոչընդոտելու հարց է, այլ ժամանակակից պատերազմ է՝ կլաուզերվիցյան պատերազմ, այսպես կոչված, դիվանագիտության շարունակությունն՝ այլ միջոցներով: Իրաքի նկատմամբ հաղթանակը 1991 թ.-ին նշել էին ԱՄՆ-ում, որովհետև համարվում էր, որ Քուվեյթը ոչ թե զավթված էր, այլ Իրաքից ազատագրված: Հետաքրքիրն այն է, որ 1991 թ. փետրվար ամսին պատերազմի արդյունքը նշել էին նաև Իրաքում: Բայց կարո՞ղ են երկու կողմերն էլ հաղթող լինել: Իհարկե, կարող են, եթե նրանք վարում են երկու տարբեր պատերազմներ՝ սահմանված երկու տարբեր մշակույթների շրջանակներում: ԱՄՆ-ի և Միացյալ Նահանգների գլխավորած կոալիցիան վարեց ժամանակակից պատերազմ և հաղթեց: Իրաքը ավանդական պատերազմ վարեց, որ արմատացած է բեղուխնական և, մասնավորապես, իրաքյան խորը մշակույթում: Նրանք նույնպես հաղթեցին, որովհետև բացի ռազմական հաղթանակից, նրանք ունեին երեք այլ հեռանկարներ. պատերազմը որպես *քաջության* դրսևորման, *պատիվ* և *ար-*

Ժամապատվություն ձեռքբերելու եղանակ: Ըստ այդմ՝ ռազմական հաղթանակը հիմնալի լուծում է, բայց, եթե այն ձեռք չի բերվում, ապա դեռ հնարավոր է տոնել մյուս երեք տեսակի հաղթանակները:

Ինչքան ավելի շատ դաշնակիցներ, զինվորներ և հզոր զենքեր ունի հակառակորդը, այնքան ավելի լավ: Ինչքան ավելի զենքազանցող է թշնամին, այնքան ավելի շատ քաջություն կարող է դրսևորվել մարտի դաշտում, այնքան ավելի շատ պատիվ ու արժանապատվություն հնարավոր կլինի ձեռքբերել: Վաղ թե ուշ անհրաժեշտ է անձնատուր լինել՝ չոչնչանալու համար: Բայց միաժամանակ բարոյական հաղթանակ է նվաճվել ուժերի հավասարակշռության միամիտ «իրատեսական» տեսությունների նկատմամբ: Սա օրինակ է այն բանի, թե ուր կարող է մեզ բերել խորը մշակութային տարբերակների զգացողության բացակայությունը:

Եթե իրաքցիներն ընտրյալ ժողովուրդ են, ունեն շատ երկար ժամանակային հեռանկար և կարող են ձեռքբերել ավանդական հաղթանակ, չնայած ռազմական պարտությանը, ապա այդ ժողովուրդը հեշտությամբ չի կառավարվի հակառակ ուրվապատկեր ունեցողների կողմից: (Պոստ) մոդեռնպատերազմի զինվորները վախկոտ են. 14.000 ոտնաչափ բարձրությունից նրանք սպանում են անպաշտպան քաղաքացիներին Իրաքում, Սերբիայում և Աֆղանստանում: Նրանք հաղթում են, բայց քիչ պատիվ և էլ ավելի քիչ արժանապատվություն են ձեռքբերում: Ո՞վ կհաղթի ավելի երկարաժամկետ հեռանկարում:

Ավելին կարելի է ասել: Որպես կոնֆլիկտային վարքագծի բացատրություն՝ խորը մշակույթի ուսումնասիրությունն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար, քանի որ դա միայն մեկն է բազմաթիվ այլ գործոններից:

Կա ևս մեկ համախտանիշ. ԴՄԱ՝ դուալիզմ, մանիհեիզմ, արմազեդոն:

Եթե հակիրճ նկարագրենք Աստվածաշնչի և աբրահամական կրոնների ասելիքը, հետևյալը կստացվի. աշխարհում գոյություն

ունեն երկու ուժեր՝ բարի և չար՝ ի դեմս Աստծո ու սատանայի, և անհաշտելի հակասությունները պետք է ավարտվեն վերջնական ճակատամարտում՝ Արմագեդոնում: Կոնֆլիկտային մշակույթի եզրակացությունն այս ամենից միակն է. հեռանալը, փոխզիջումը և խաղաղ գերազանցումն անիմաստ են, պետք է դրսևորել «անհաշտելիություն»՝ «դուք կամ ես»: Որոշումը բռնության մեջ է, ոչ թե դատական գործի, կոռուպցիայի, քվերակության կամ խարիզմայի: Բոլոր երեք կրոնների արմատականները և նրանց աշխարհիկ ժառանգորդները կարգելափակեն խաղաղության անկյունագծին մոտենալու բոլոր ջանքերը: Նրանք բռնություն են փնտրում:

ԴՄԱ համախտանիշն ունի նաև այլ ապակառուցողական հետևանքներ:

Երկու թշնամի կողմերի բևեռացումը, երբ նրանք միայն լավ բաներ են վերագրում իրենց և միայն վատ բաներ՝ հակառակորդին, բնականոն է, երբ կոնֆլիկտն առնչվում է հիմնարար պահանջումներին և ձգձգված է ժամանակի մեջ: Բայց նկատի առնենք, որ նա, ով տառապում է ԴՄԱ համախտանիշով, ի սկզբանե բևեռացված է: Նա պարզապես լավ թշնամի է փնտրում՝ փոխընդունելով համար: Նման կողմերը հասկանում են միմյանց՝ ինքնաընթերցման միջոցով:

Բևեռացումն օժանդակում է բռնության իրականացմանը, որովհետև ԴՄԱ-ն արդեն ապահովումնախնայել է Մյուսին: Բևեռացումը նաև ավելի դյուրին է դարձնում բռնության հանդուրժումը: Չարի կողմից կատարված բռնությունը սեփական բարության հաստատումն է, նույնիսկ եթե բռնությունը նվաստացուցիչ է և քամահրելի: ԴՄԱ-ն նաև արգելափակում է Մյուսի որևէ իրական ընթերցում: Եթե Մյուսը Չարիք է, ապա ի՞նչ իմաստ ունի նրա նպատակները հասկանալ փորձելը: Ավելի լավ է բացահայտել նրա չար էությունը, ծայն չտալ նրան, զրկել արժանապատվությունից: Եթե այդ ամենից Մյուսը հուսահատ և բռի է դառնում, ապա դա միայն ապացուցում է այն, ինչ մենք արդեն գիտենք. նա չարիք է: Ու՞մ են հետաքրքրում Սերբիայի նպատակները Չարավսլավիայի

կոնֆլիկտում, երբ Սերբիան պարզապես չարիք է: Իսկ ու՞մ են մտահոգում Արևելյան Թիմորի առնչությամբ Զակարտայի մտահոգությունները: Սա մի արատավոր և խնդրահարույց շրջան է:

ԽՈՐԸ ՎԱՐՔԱԳԻԾ

Այս վերնագրի ներքո նկատի ունենք մի վարքագիծ, որը, հոգու խորքում թաքնված լինելով, ճանապարհ է հարթում դեպի մակերևույթ: Կարելի է համեմատականներ անցկացնել նման վարքագծի և հիմնարար պահանջմունքներից բխող գործողությունների միջև: Օրինակ, Խորհրդային միության առաջատար պետական պաշտոնյաներից մեկի հետ 1970-ական թթ. ռազմական ուսմունքների մասին երկխոսության ժամանակ՝ արդյունավետ զրույցից հետո, ես նկատեցի, որ նա նայում էր ժամացույցին՝ ոչ թե իր, որպեսզի ստուգեր ժամը, այլ՝ իմ: Որոշ ժամանակ անց նա չկարողացավ զսպել իրեն հուզող հարցը. որտեղի՞ց էի ես գնել ժամացույցը, և որքա՞ն այն արժեր: Ժամացույցը թվային էր, իսկ դա նորույթ էր այն ժամանակ: Պահանջմունքը, որ երևան եկավ վերբալ գործողության ձևով, կապված էր ինքնության հետ՝ այն բանի հետ, ինչը նորածն էր այն ժամանակ Արևմուտքում: Այն, ինչ գրավել է սիրտը, վաղ թե ուշ կարտաբերվի բերանով:

Բանն այն է, որ խորը վարքագիծն ազդում է մակերևութային գործողությունների վրա, երբեմն, նույնիսկ, աղավաղում է դրանք: Այսպիսով, դիվանագետներին կարող են առաջարկել նվերներ՝ սնունդ, մարմնավաճառներ՝ այն հույսով, որ դա բանակցային սեղանի շուրջ երկխոսության ժամանակ կազդի այն բանի վրա, որ տվյալ դիվանագետն ավելի հակված լինի դրական վարքագիծ ցուցաբերելու: Եթե տվյալ դիվանագետն, օրինակ՝ սեքսի պահանջմունք ունի, նրա վերբալ վարքագիծը հեշտությամբ կարող է դառնալ «Այո»:

«Խաղաղության պայմանագիրը», որը ճնշում է այնպիսի հիմնարար պահանջմունքներ, ինչպիսիք են ինքնությունը, ազա-

տությունը և բարեկեցությունը, հակախաղաղության պայմանագիր է: Խորը վարքագիծը կպարտադրի իր ուղին դեպի հրապարակայնություն, ինչպես սերմերն ասֆալտի տակ, և կայաթեցնի լեռներն, ինչպես սառչող ջուրը՝ ճեղքվածքներում: Նման ձևակերպման տակ նկատի չունենք, թե բռնությունն ինքնին հիմնարար պահանջունք է: Եթե դա այդպես լիներ, բռնությունը երկրագնդի վրա այնքան կշատանար, որ անհնար կդառնար այն բացատրելը արգելափակված հիմնարար պահանջունքների, խորը մշակույթի և խորը կառուցվածքի տեսանկյունից:

Բռնությունն ուղղվում է այն ամենի դեմ, ինչն արգելափակում է հիմնարար պահանջունքները, բայց կարող է նաև տեղափոխվել ցանկացած այլ ուղղությամբ: Եթե բռնությունը ծուխն է, ապա կրակն արգելափակված հիմնարար պահանջունքներն են: Դրանցից մեկն ինքնությունն է, իսկ ինքնության մասը սեփական իրավիճակը վերահսկելն է: Բայց եթե կոնֆլիկտը մեծ տերության կամ ԴՄԱ-ով տառապող մեծամասնության հետ է, ապա պետք է պատրաստ լինել, որ ձեզ չեն հասկանա, քանի որ նման կողմը պարզապես չի պատրաստվում լսել: ԴՄԱ-ն առաջ է բերում բռնություն, որովհետև բևեռացումն անձին խուլ է դարձնում: Երկխոսությունը ծայրահեղ անհրաժեշտ է, եթե կողմերը ցանկանում են խաղաղ լուծում գտնել:

Հիմնական կանոն. «*Audiatur et altera pars*»¹: Հարգեք նրանց: Տվեք նրանց ձայնի իրավունք: Գերազանցումը կարող է շատ մոտ լինել (տե՛ս ինդոնեզիացի գեներալի հետ երկխոսությունը՝ Շաբաթ):

¹ *Audiatur et altera pars* (լատ.) - լսեք բոլոր կողմերին (թարգ.)

ԽՈՐԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Խորը հակասությունները գտնվում են խորը կառուցվածքներում: Սա ավելի լավ հասկանալու համար կարող ենք դիմել 19-րդ դարում ապրած և ստեղծագործած Կարլ Մարքսին: Նա օգտագործեց կառուցվածքը՝ հասկանալու համար դասակարգային կոնֆլիկտը, նկատի ունենք, մասնավորապես՝ տնտեսական դասակարգային կոնֆլիկտը, իսկ ավելի կոնկրետ ասած՝ արտադրության միջոցներին տիրապետողների և դրանց չտիրապետողների միջև հակասությունը:

Ընդլայնենք այս հեռանկարը և դիտարկենք այլ խորը հակասություններ այնպես, որ կարողանանք խոսել «ճարտարապետական» այն սալաքարերի մասին, որոնք առաջացնում են սոցիալական երկրաշարժեր՝ ոչ միայն առանձին հասարակության, այլ նաև պետությունների՝ համաշխարհային հասարակության (տե՛ս աղյուսակը) ներսում:

Բոլոր խորը հակասություններն ուղղահայաց են, տեղի են ունենում բարձր մակարդակի և ցածր մակարդակի միջև ու համարվում են կառուցվածքային բռնության պոտենցիալ կրողներ: Կարո՞ղ ենք ասել, որ պետությունները բաժանվում են սեռերի: Եթե օգտագործենք կոպիտ ձևակերպում, ինչպիսին է «տիրանալու» կամ «տրվելու» միջև հակասությունն, ապա՝ այո: Իսկ ԱՄՆ-ը փորձում է պիտակավորել շեղվող պետություններին՝ կիրառելով «վտարյալ պետություններ» հասկացությունը՝ մի արտահայտություն, որը ներկայումս կիրառվում է իր իսկ նկատմամբ:

	<i>Անձերի մակարդակում</i>	<i>Պետությունների մակարդակում</i>
Բնության նկատմամբ	Վատնել, դեն նետել, սպանել	Վատնել, դեն նետել, սպանել
Սեռերի միջև	Տիրանալ և տրվել	Տիրանալ և տրվել
Սերունդների միջև	Տարեց, միջին տարիքի, երիտասարդ	Տարեց, միջին տարիքի, երիտասարդ

Ռասամերի միջև	Սպիտակամորթ, սևամորթ	Սպիտակամորթ, սևամորթ
Դասակարգերի միջև	Հզոր-անզոր	Հզոր-անզոր
• քաղաքական • ռազմական • տնտեսական • մշակութային	Որոշումներ կայացնելու ուժ Հարկադրանքի ուժ Պարզևատրման ուժ Համոզման ուժ	Որոշումներ կայացնելու ուժ Հարկադրանքի ուժ Պարզևատրման ուժ Համոզման ուժ
Շեղվող վարքի նկատմամբ	Նորմալ-շեղվող Սոմատիկորեն հիվանդ Հոգեկան հիվանդ Հանցագործ	Նորմալ-շեղվող Սոմատիկորեն հիվանդ Հոգեկան հիվանդ Հանցագործ
Ազգերի և քաղաքակրթությունների միջև	Արևմուտք-մնացած բուրլորը	Արևմուտք-մնացած բուրլորը
Երկրների նկատմամբ՝ տարածքային առումով	Կենտրոն-ծայրամաս՝ պետությունների ներսում և միջև	Կենտրոն-ծայրամաս՝ տարածաշրջանների ներսում և միջև

Կոնֆլիկտները կարող են և պետք է ըմբռնվեն խորը կառուցվածքի հակասությունների ֆոնի վրա: Ֆրոյդն, օրինակ, ուսումնասիրում էր հիստերիկ կանանց, ովքեր ունեին հսկայական խնդիրներ իրենց ու շրջապատի հետ, և հոգեբանական վերլուծության էր ենթարկում նրանց՝ իր քաջ հայտնի եղանակով՝ որսալով հոգու խորը կառուցվածքը: Նա չէր ուսումնասիրում խորը սոցիալական կառուցվածքը: Աղջիկները կարող էին ուսում ստանալ մինչև վաղ դեռահասության տարիքը, դրանից հետո նրանք պետք է նստեին տանն ու ասեղնագործությամբ զբաղվեին, քանի դեռ նրանց սրտերը լի էին փեսացու գտնելու հույսով: Բայց նրանց եղբայրները, որոնք միշտ չէ, որ տաղանդավոր էին, ունեին ուսումը շարունակելու իրավունք: Երբեմն, երբ ծնողները քնած էին, քույրերը գաղտագողի մտնում էին իրենց եղբայրների սենյակը՝ ընթերցանությամբ թաքուն զբաղվելու համար: Գիտելիքի միջոցով ինքնության այս պահանջմունքի արգելափակումը

հաճախ հանգեցնում էր բռնության տղամարդկանց շրջանում, իսկ կանանց դեպքում բռնությունը, որպես կանոն, ուղղված էր լինում իրենց իսկ դեմ: Ֆրոյդն անվանում էր դա «հիստերիա»:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սերբիայի մասին խորը գիտելիքներ և նրա հետ բարեկամական հարաբերություններ ունեցող Նորվեգիան և ո՛չ գիտելիքներ ու ո՛չ էլ բարեկամական հարաբերություններ ունեցող Իսպանիան հանկարծակի հայտնվեցին Սերբիայի հետ բախման մեջ: Իսպանիան ռմբակոծում էր երկիրը, Նորվեգիան՝ երկչուտաբար աջակցում: Փաստարկները համոզիչ չէին: Անգամ խաղի մեջ գտնվող կառավարությունների համար դրանք հազիվ թե համոզիչ լինեին: Բայց փաստերը ճնշվեցին, ԴՄԱ-ն և ԸՓՏ-ն մորբիլիզացվեցին՝ սերբերի սպանություններն օրինականացնելու համար: Խորը համաշխարհային կառուցվածքը և խորը համաշխարհային մշակույթն աշխատում էին գործողության աղավաղման վրա. և՛ Նորվեգիան, և՛ Իսպանիան ՆԱՏՕ-ի ծայրամասային հնազանդ երկրներ էին, Իսպանիան ԵՄ անդամ էր, իսկ Նորվեգիան՝ ցանկանում էր դառնալ: Գիտակցությունը պայմանավորված էր այս կառուցվածքային պատկանելությամբ: Երկու երկրների կառավարություններն էլ գիտեին, որ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի արժանի անդամ լինելու համար պետք էր սերբերին սպանելու պատրաստակամություն ունենալ: Որպեսզի որոշեն՝ ինչ անել, նրանք նայեցին ոչ թե Սերբիային, այլ Վաշինգտոնին և Բրյուսելին:

Ոմանք կարող են համարել, թե վերոգրյալն այնքան էլ համոզիչ չէ: Բոլորովին ոչ, ասվածը պարզապես իրատեսական վերլուծությունն է այն ամենի, ինչ իրականում տեղի ունեցել և դեռևս - շարունակվում է: Ասվածից չի բխում, թե երկրների արտաքին քաղաքականության առաջնորդները պետք է չեղյալ հայտարարեն իրենց անդամությունն ու ձգտումները, որպեսզի փոխեն ընդհանուր քաղաքականությունը: Պարզապես նրանց անհրաժեշտ է հավաքել շատ ուժեղ փաստարկներ և տվյալ կառույցի մյուս անդամների աջակցությունը՝ քաղաքականությունը փոխել կարողա-

նալու համար: Այս ամենի համար քաղաքական քաջություն է պետք, իսկ դա հազվադեպ հանդիպող որակ է:

Եվ, վերջապես, անդրադառնանք գեներալային խորը կառուցվածքին: 1994 թ.-ին Ռամբույեում ես համոզեա էի գալիս որպես միջնորդ քրդական խմբավորումների միջև մի կոնֆլիկտում: Նրանց խնդիրն այն չէր, որ սևազգեստ քուրդ կանայք, ովքեր երթով շարժվում էին դեպի Անկարա, չէին հասնի ուժեղ ազդեցության: Նրանց խնդիրն այն էր, թե «ի՞նչ տեղի կունենա տղամարդկանց հետ, եթե հանկարծ կանայք գրավեն իշխանությունը»: Նրանք գտնում էին, որ ավելի լավ է կյանքը շարունակել հին սկզբունքներով: Բայց մի՞թե հայրիշխանությունն առանց ազատության ավելի լավ է, քան ազատությունն ու գեներալային հավասարությունը:

Խորը մշակույթը և խորը կառուցվածքը կարող են փոխվել երկարաժամկետ գործընթացների միջոցով: Նույնը չի վերաբերում խորը վարքագծին, որովհետև այն բխում է հիմնարար պահանջմունքներից, իսկ դրանք չեն կարող փոխվել, մինչև մարդիկ չենթարկվեն գենետիկական փոփոխության: Ուրեմն ի՞նչ իմաստ ունի այդ ուղղությամբ աշխատելը:

Այս հարցը թյուրըմբռնման արդյունք է: Պարտադիր չէ փոխել գրավիտացիայի ուժը, որպեսզի կարողանանք այն մեր շահերին ծառայեցնել, օրինակ, երեխա լույս աշխարհի բերել կամ լեռնադահուկային սպորտով զբաղվել: Կարևորը ուժը հասկանալն է, ոչ թե այն ոչնչացնելը: Լավ կլինի իմանալ, թե որտեղ են ստորջրյա ժայռերը՝ ծանծաղուտի մեջ հայտնվելուց խուսափելու համար: Ազատությունն անհրաժեշտության ներըմբռնման մեջ է, ինչպես նշել են շատ փիլիսոփաներ: Բայց իսկական ազատությունը բավարար լինելու ներըմբռնման մեջ է՝ նրանում, թե ինչն է բավարար այդ ուժերը փոխելու համար:

Քանի որ կոնֆլիկտի կողմերը, ընդհանուր առմամբ, չեն գիտակցում սեփական իրավիճակի ավելի խորն ասպեկտները՝ մասնավորապես, սեփական մշակույթը, նրանց խիստ անհրա-

Ժեշտ են կոնֆլիկտաբանի կազմած գծապատկերները, որոնցում պետք է նշված լինեն ստորջրյա ժայռերը: Կոնֆլիկտաբանի խնդիրն է, հիմնվելով կողմերի բացատրությունների վրա և միանգամայն լուրջ վերաբերելով դրանց, հարգալից կերպով տեղեկացնել կողմերին, թե ինչ կա կոնֆլիկտի մակերևույթի տակ: «Եթե մենք չհասնենք փոխզիջման, պատերազմ կլինի», - այլ կերպ ասած, կոնֆլիկտաբանը վկայակոչում է պատերազմի անկյունագծի միայն երեք կետերի իրականացումը: Ոչ մի դասախոսություն ավելի մեծ տպավորություն չի գործի: Բացի այդ, կոնֆլիկտաբանին կարող են օգնել գիտելիքները կողմերի մշակութային պատկերացումների մասին՝ հասկանալու համար, թե ինչը կարող է ազդեցություն թողնել կոնֆլիկտի մասնակիցների վրա:

Լավ գաղափար է նաև ավելացնել սեփական պահանջմունքների մասին հիշեցումը՝ մյուս կողմի պահանջմունքների նկատմամբ հարգանքը ավելացնելու նպատակով: «Չե՞ք կարծում, որ այս երևույթը նույնքան կարևոր է մյուս կողմի համար, որքան մյուս երևույթը՝ ձեզ»։ Ունենալ հարցադրումը կօգնի երկխոսությանը, երբեմն ի պատասխան կստանաք միայն համաձայնություն արտահայտող, բազմանշանակ լռություն:

ՇԱԲԱԹ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործականությունը գտնվում է ինչ-որ տեղ ինտելեկտի և հուզական աշխարհի սահմանում: Գիտելիքն ու հույզերը, միմյանց առաջ մղելով, հանկարծ հանգեցնում են գերազանցման, ճիշտ այնպես, ինչպես դա տեղի է ունենում ստեղծագործական մարդկանց հետ արվեստում: Դա նման է իսկական սիրո՝ շատ հաճախ չի լինում, բայց տպավորությունը միշտ ցնցող է:

Հույզերը շարժիչ ուժն են, ինտելեկտը՝ գործիքը: Այս ակնհայտ հակասությունը գերազանցվում է կոնֆլիկտաբանական աշխատանքի ընթացքում՝ այնպիսի արժեքների կրթոտ արմատավորման միջոցով, ինչպիսիք են *ապրումակցումը*, *ստեղծագործականությունը* և *ոչ բռնությանը* սկզբունքը: Անկիրք կոնֆլիկտաբանը չի կատարի լավ աշխատանք. մոտիվացիան չափազանց թույլ հիմնավորում է: Անտարբեր մարդկանց ավելի լավ է այլ աշխատանք գտնեն, քան միջնորդությունը:

Եկեք ևս մի հայացք գցենք գերազանցման և փոխակերպման այս գրքի 40 օրինակներին: Դրանք այստեղ են՝ ձեր աչքի առաջ: Երբեմն դրանք կարող են տափակ թվալ: «Ու՞ր է այստեղ ստեղծագործականություն», - կարող եք հարցնել դուք: Ստեղծագործականության տարրը բացակայում էր աշխատանքի սկզբում, բայց ինչ-որ պահի տեղի ունեցավ այդ հայտնի ցատկը դեպի անհայտն ու անսովորը:

Ոչ մի դեպքում չի կարելի բավարարվել՝ ասելով շատերի սիրելի խոսքը, թե «կողմերը պետք է համախմբվեն»: Նման բան ասելը նույնքան հեշտ է ու անիմաստ, որքան սթրեսի մեջ գտնվող անձին «հավաքիր քեզ» ասելը: Այդ խոսքը հարց կառաջացնի՝ «Ինչո՞ւ», «Ի՞նչ իմաստ կա դրա մեջ»: Մենք արդեն փորձել ենք համախմբվել, բայց դա չի օգնել: Ահա այստեղ է անհրաժեշտ

կոնֆլիկտաբանական աշխատանքը՝ ցույց տալու համար լույսի փոքր նշույլը թունելի վերջում, որից կարող է հույսը բոցավառվել:

Խնդիրն այն է, թե ինչպեսը, որտեղը, երբը, ում հետը, ում դեմը, և ինչը կստիպեն մարդուն հավատալու, որ առաջարկվող տարբերակն այս անգամ կաշխատի: Եթե ինչ-որ մեկն ընկել է գետը և լողալ չգիտի, կարիք չկա նրան ասել, թե պետք է սովորել լողալ: Օգնելու համար դուք պետք է իմանաք, թե ինչ է անհրաժեշտ և ներդնեք ինչ-որ բան, որը հույսի հիմք կտա նման հանգամանքներում:

Կա ևս մի անիմաստ բան, որ հաճախ են ասում կոնֆլիկտող կողմերին. «բացակայում է քաղաքական կամքը» կամ «բացակայում է փոխադարձ վստահությունը»: Իհարկե, նրանց մոտ բացակայում է այս ամենը: Դրա պատճառն այն չէ, որ կողմերը գեներտիկորեն անընդունակ են բարի կամք և վստահություն դրսևորելու, այլ այն, որ կոնֆլիկտի գոյությունը նսեմացնում է այս գերազանց որակները: Գրեթե միշտ բացակայում են «լավ գաղափարները»: Դա է փակուղու պատճառը:

Բայց լինում են նաև իրավիճակներ, երբ նույնիսկ լավագույն գաղափարներն անօգուտ են: Կողմերից մեկը պարզապես չի ցանկանում ընդունել այդ գաղափարները, չունի կամք, որովհետև նա դեռ կարծում է, թե կարող է հաղթել: Խնդիրն է համոզել նրան այն բանում, որ հաղթանակը կարող է շատ թանկ մատել իր վրա և հանգեցնել մի իրավիճակի, երբ վաղ թե ուշ ինքը կմախընտրի գերազանցումը, որը նաև մյուս կողմին է տալիս շատ առավելություններ: Ամերիկյան հայտնի բնորոշումը՝ «հաղթանակ-հաղթանակը», այնքան էլ լավ չի արտահայտում վերոգրյալ բովանդակությունը, որովհետև այն չի մատնանշում ցատկը դեպի գերազանցում ու որակապես մոր իրականություն, ուստի այն լուրջ եզրույթ չէ:

Այս գրքում արված առաջարկները ստեղծագործական լինելու փորձեր են: Առաջարկները պետք է առնչվեն կոնֆլիկտին այն-

պես, ինչպես կողմերն են այն պատկերացնում: Կողմերը պետք է ճանաչեն իրենց իրականությունը: Այն, ինչ նոր է, պետք է տարրեր ունենա հնի մեջ, իսկ այն, ինչ հին է՝ նորի: Երբեմն առաջարկները պարզապես այն ամենի ցանկն են, ինչ մենք առանց նկատելի դժվարության կարող ենք կարդալ խաղաղության անկյունագծում: Բայց շատ հաճախ անակնկալ տարր է առկա լինում փաթեթավորման տակ, որն ավելին է, քան երեք կետերի գումարը:

Հնարավոր է սովորել լինել ստեղծագործական: Մինչև որոշակի պահը՝ այո: Այն, ինչ կարելի է սովորել, ինչ-որ բան է, որը կարող է անել ամեն ոք, իսկ այն, ինչ կարող է անել ամեն ոք, համատեղ սեփականություն է և հազիվ թե արժանի է «ստեղծագործական» անվանը: Դրան արժանանալու համար պետք է հասնել գազաթում գտնվող մի լրացուցիչ բանի, որ ապագան է նախանշում: Այդ ընդունակությունը գալիս է փորձի հետ, ամենադժվարն առաջին հարյուր կոնֆլիկտները հաղթահարելն է:

Ստեղծագործականությունը խորհրդավոր մի բան է: Ստեղծագործականությունը ցատկ է, բայց կան նաև ցատկահարթակներ.

1. *«Սա հիշեցնում է ինձ...»*: Հիշողությունը հիմնված է սեփական և ուրիշների փորձի վրա: Այն արտահայտվում է երկու հիմնական եղանակներով. *ինքնություն և իզոնորֆիզմ*՝ կառուցվածքային ինքնություն:

Ատաղծագործը, ով պետք է տեղ գտնի զգեստապահարանը տեղադրելու համար, պրոյեկտում է իր փորձը կոնֆլիկտի վրա և գտնում է պատասխան՝ հիշելով որևէ նույնական դեպք իր պրակտիկայից: Ազգը ցանկանում է ինքնավարության բարձր մակարդակ կամ ավելին՝ անկախություն պետությունից, որն իր համար բանտ է դարձել: Այս նպատակով հետազոտում է պատմությունն ու աշխարհագրությունը ինչ-որ նման կոնֆլիկտ գտնելու համար: Այս դեպքում կա մեծ հավանականություն, որ նա, ով փնտրում է, նաև կգտնի: Բայց միշտ կլինեն նաև առարկություններ, կլինեն մարդիկ, ովքեր կասեն, թե գտնված օրինակն ամենևին նույնա-

կան չէ կոնկրետ դեպքին, ինչ-որ այլ բան է: Շատերի կողմից հաճախ կիրառվող «դեպքերն անհամեմատելի են, չկա համեմատություն» արտահայտություններն իրապես տարօրինակ են. չէ՞ որ ասվածն ինքնին նշանակում է, որ հենց մոր արվել է համեմատություն՝ պարզապես այն եզրակացությամբ, որ դեպքերը մույնական չեն: Այնուամենայնիվ, առարկությունը պետք է լուրջ ընդունել: Պետք է սահմանվի՝ ինչն է տարբեր, իսկ ինչը՝ մնան. սա նշանակում է, որ երբ օրինակը առաջարկվում է որպես մոդել օգտագործելու համար, այն պետք է քննադատաբար ուսումնասիրվի:

Այսպես, սկանդինավյան մոդելի վերաբերյալ աշխարհի մյուս մասերում սովորաբար կիրառվում է հետևյալ առարկությունը. «Անկասկած սա լավ է աշխատում ծեզ մոտ՝ հյուսիսում, դուք այնքան հանգիստ եք»: Սկանդինավյան ռազմական պատմության կարճ դասընթացը կկարգավորի այդ առարկությունը: Բայց մնում են երկու կետեր. ա. այս մոդելին հասնելու համար քրտնաջան աշխատանք պետք է կատարել, և բ. ունենալ ամուր սկանդինավյան քաղաքացիական հասարակություն: Եթե ինչ-որ բան պետք է օգտագործվի որպես մոդել, ապա բոլոր համապատասխան առանձնահատկությունները պետք է ներառվեն: «Դուք ունեք մնան լեզուներ»: Լավ, փորձեք մույն կամ մնան լեզուների խաղաղաստեղծ ներուժը նրանց շրջանում, ովքեր շատ քիչ բան գիտեն Ամերիկյան քաղաքացիական պատերազմի կամ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների մասին:

Նույնականությունը կարող է լավ գործառնել չորս մակարդակներից միայն մեկում, մինչդեռ իզոմորֆիզմը՝ կառուցվածքային նույնականությունը, կարող է կիրառվել մակարդակների միջև: Նույնականությունը կողմերի ներսում չէ, այլ միմյանց նկատմամբ նրանց հարաբերություններում: Ոչ թե $U = X$ և $F = Y$, այլ $U : F = X : Y$ ՝ Ա-ն Բ-ի նկատմամբ, ինչպես X-ը Y-ի նկատմամբ:

Երկու երկրներ լուծում են իրենց սահմանային կոնֆլիկտը՝ հաստատելով համատեղ, երկազգային գոտի: Սկզբունքորեն եր-

կու հարևաններ կարող են անել նույն իրենց այգիների հետ: Ի-գոմորֆիզմը՝ կառուցվածքային նույնականությունը, գործում է տարածության մեջ, իսկ ժամանակի մեջ նրա գործառնումը դեռևս հարցեր է պարունակում: Հարևանները հավերժ չեն ապրում, նրանք կունենան ժառանգորդներ, ովքեր, ձեռք բերելով համատեղ սեփականություն, հնարավոր է՝ չեն զգա կոնֆլիկտի փոխակերպման ուրախությունը: Կամ կարող են լինել վաճառողներ և գնորդներ, որոնք կցանկանան «հստակ սահմաններ»՝ առանց հողամասի վաճառքի վերաբերյալ ճնշումների:

Նման իրավիճակում, հնարավոր է, երկու երկրները բավականաչափ խորամանկ գտնվեն այնուամենայնիվ սահման գծելու համար. «Մենք գտել ենք համատեղ լուծում, բայց գուցե պետք է ունենանք մեկ այլ լուծում ևս՝ որպես պահեստային տարբերակ»: Միջազգային իրավունքում կա մի կարևոր խնդիր՝ պետությունները նույնպես ունեն ժառանգորդներ: Բայց նույնիսկ եթե պետությունները քիչ թե շատ կայուն են, նույնը չենք կարող ասել դրանց կառավարությունների մասին, որոնք ավելի կարճ կյանք են ունենում, քան միջին հողատերը, և կարող են նաև գտնել համաձայնագրով պարտավորված չլինելու պատճառներ: Հետևաբար, անհրաժեշտ է խորհել նաև դրա մասին:

Այս մեթոդում մեծ ուժ կա. Ա-ի ու Բ-ի, X-ի ու Y-ի միջև հետ ու առաջ անցումը հանգեցնում է շատ գաղափարների ոչ միայն այն մասին, թե ինչ կարելի է անել, այլ նաև այն խնդիրների մասին, որոնք կարող են առաջանալ: Այդ պատճառով երբեք էլ գործին չի վնասի, եթե փորձեք ստուգել լուծման լավ գաղափարը կոնֆլիկտի մի այլ մակարդակում՝ առաջադրելով նմանօրինակ հարցեր՝ ի՞նչ կնշանակեր սա, եթե խնդիրը չլիներ հասարակության դասակարգերի միջև, այլ համաշխարհային հասարակության տարածաշրջանների, կամ ամուսնու և կնոջ միջև, գուցե կա՞ ինչ-որ նրբություն, որի մասին չէինք մտածել, բայց որին պետք է ուշադրություն դարձնենք:

Եվրիստիկան նոր գաղափարների ծնունդ տվող մեթոդ է: Իզոմորֆիզմն այդ տեսանկյունից ավելի մեծ հնարավորություններ է բացում, քան նույնականությունը, քանի որ այն թույլ է տալիս բուն կոնֆլիկտից մի քանի մակարդակ հեռվում մեկնակետ գտնել և փնտրել ավելի շատ տարբերություններ խորհելու համար: Հարկ է մեկ անգամ ևս հստակեցնել՝ սա մի բան է, որ իզոմորու է անել ճարպկություն ունեցող ցանկացած մեկը:

«Սովորական» մարդիկ մեծան բաներ միշտ էլ անում են, երբ, օրինակ, ձևակերպում են ճիշտ այնպիսի հարց, ինչպիսին կտար կոնֆլիկտաբանը. «Կարո՞ղ եմք մենք փորձել այն, ինչ նրանք էին արել...»: Ի պատասխան նրանք, գուցե, ստանում են հետևյալը. «Բայց դա բոլորովին այլ բան է, որովհետև...»: Այս պատասխանը բոլորովին էլ խոչընդոտ չէ, քանի որ այժմ ընթացքի մեջ է երկխոսությունը: Ի՞նչը կարող է ավելի լավ լինել: Կողմերը կքննարկեն կոնֆլիկտն, ինչպես չինական թատրոնում՝ քննարկելով այլ կոնֆլիկտների լուծումները:

2. *Նորովի համակցեք հայտնի տարրերը:* Ոչ մի վատ բան չկա այն պնդման մեջ, թե զինված կոնֆլիկտում գտնվող կողմերից պետք է պահանջել զինադադար, դրդել գալ բանակցությունների և փնտրել կոնֆլիկտի կառավարման վերաբերյալ տեսլական: Սակայն վատն այս երեք տարրերի իրականացումն է հիշյալ հերթականությամբ: Կարելի է բազմաթիվ փաստարկներ բերել հոգուտ մեկ այլ հաջորդականության՝ ըստ որի կողմերը նախ պետք է կոնֆլիկտի կառավարման տեսլական գտնեն, այնուհետև սկսեն բանակցային գործընթացը և միայն այն բանից հետո, երբ «շոշափել են միմյանց ատամները», զինադադար կնքեն՝ համաձայնելով որոշ ատամներ հեռացնել, ասել է թե՛ ոչնչացնել կամ հանձնել զենքն ու զինամթերքը: Կարելի է նաև այս երեք գործընթացներն իրականացնել զուգահեռ՝ միաժամանակ:

Կարող է հարց առաջանալ՝ ենթադրվու՞մ է, որ մասնակիցները կարող են զինված նստել բանակցային սեղանի շուրջ: Այո, նրանք կարող են և զենք բերել իրենց հետ: Ժամանակին հեղինա-

կը դասավանդում էր մեթոդաբանություն Հավանայի համալսարանում և զարմացավ, երբ ուսանողները ժամանեցին զենքերով, որոնք նրանք չդրեցին սեղանին, այլ նետեցին: Նրանք եկել էին ուղիղ զինավարժություններից: Ջարմանալի է, թե ինչքան արագ է մարդը վարժվում նման բաներին: Սա նորմալ է, զգալիորեն ավելի վատ իրավիճակ կստեղծվեր, եթե նրանք գային բանակցությունների սեղանի մոտ առանց գաղափարների: Ավելի լավ է բերել և՛ զենք, և՛ գաղափարներ, քան ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը:

Որոշ պետությունների պատմական ավանդույթներում ամրագրված է վերոնշյալ կարգի ընտրությունն անպայմանորեն զինադադարի մասին բանակցություններից սկսելը, ինչպես սովորաբար անում են գերտերությունները և ՄԱԿ-ը: Խնդիրն այն է, որ կողմերից երբևէ մեկը պարտավոր չէ հանձնել զենքերը, քանի դեռ կարծում է, որ դրանք կարող են իրեն ռազմական հաղթանակ բերել: Անհրաժեշտ է հակառակն ապացուցել, ցույց տալ լույսը թունելի վերջում, այլապես կոնֆլիկտի փոխակերպում չի լինի:

Ստեղծագործականությունը երբեմն ենթադրում է ժամանակային կարգի փոփոխություն: Բնական է, որ այս գործընթացը չափազանց ստեղծագործական չէ, որովհետև տարրերն արդեն հայտնի են, մնում է որոշել հերթականությունը: Իսկ այն ինչ կարող է արվել ժամանակի մեջ, կարող է արվել նաև տարածության մեջ: Նայեք, թե որտեղ է գտնվում խոհանոցը մեր օրերում և համեմատեք մեկ դար առաջ դրա զբաղեցրած տեղի հետ: Նախկինում խոհանոցը գտնվում էր բնակարանի կամ տան ծայրամասում՝ ետևի բակում: Այժմ շատ հաճախ այն նախագծվում է հենց տան կենտրոնում, երբեմն՝ որոշ պատեր ուղղակի հանված են, և նա, ով սնունդ է պատրաստում, կարող է տեսնել տան մյուս սենյակներում կատարվող իրադարձություններն ու միանալ պրոցեսին: Սա շատ ստեղծագործական լուծում է:

3. *Բացահայտեք հավատի ընդհանուր աքսիոմները*: Սա շատ արդյունավետ մեթոդ է, բայց ոչ միշտ է հեշտությամբ կիրառվում: Պատկերացրեք, որ կոնֆլիկտի բոլոր կողմերը տառա-

պում են ԸՓՏ համախտանիշով, և մեկի Աստվածը սատանա է մյուսի համար այնպես, որ մրանք, ովքեր համարում են իրենց Աստծո ընտրյալներ, մյուսների կողմից դիտարկվում են որպես սատանայի գործիքներ: Կանխատեսումը բացասական է: Բայց գոյություն ունի ցլին եղջյուրներից բռնելու հնարավորություն՝ պարզապես կողմերի ուշադրությունը հրավիրելով իրենց իսկ սնահավատության՝ իրենց ընդհանուր անհեթեթության վրա:

ԴՄԱ համախտանիշը երբեմն կարելի է կառավարել՝ մատնանշելով, որ.

- Այս կոնֆլիկտում մենք գործ ունենք (շատ) ավելի, քան երկու կողմերի հետ:
- Հակառակ կողմը կարծում է, որ դուք չար եք և ձեր խնդիրն է համոզել մրանց, որ դա այդպես չէ այն բանից հետո, երբ դուք հարցրել եք ինքներդ ձեզ, թե ինչ պետք է անի մյուսը ձեզ համոզելու համար, որ իրենք մշտապես չար չեն ծնվում:
- Կան նմանատիպ իրավիճակներ, որոնք պարտադիր չէ, որ ավարտվեն Արմազեդոնով:

ԴՄԱ-ն, որպես հիմնաքարային հավատք, պետք է թուլացնել: Դա հեշտ չէ, երբ դրան հավատում են նույնքան նպատակասլաց կերպով, ինչքան ժամանակին անզիջողական մարքսիստները:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բավական շատ բան է ասվել այս գրքում կոնֆլիկտների մասին, ուստի այստեղ մախ ցույց կտանք երկխոսության կազմակերպման եղանակը:

Արդեն խոսել ենք ախտորոշման, կանխատեսման և բուժման մասին՝ որպես կոնֆլիկտին վերաբերելու եղանակների: Ախտորոշումը նկարագրական է, հիմնված է արդեն տեղի ունեցած, այլ կերպ ասած՝ անցյալի տվյալների վրա: Կանխատեսումը նույն-

պես նկարագրական է, բայց իր մեջ կրում է ցատկ դեպի ապագա: Ցատկելու համար և՛ ախտորոշումը, և՛ կանխատեսումը տեսութ-
յան կարիք ունեն, բայց դրանք հաճախ հակասական են:

Բուժումը տարբերվում է: Այն նույնպես ապագային է կողմնո-
րոշված, ինչպես կանխատեսումը, բայց նորմատիվ է և կարգադ-
րողական: Այն կանգ չի առնում հացի վրա, թե ինչ է տեղի ունե-
նալու, այլ կենտրոնացնում է անելիքների վրա: Բուժումը կարելի է
թողնել անձի հայեցողությանը: Հիվանդը պետք է համբերատար
լինի: Ինչո՞ւ. անկախ նրանից՝ գործ ունենք խաղաղության թե ա-
ռողջության հասնելու ջանքերի հետ, մենք միայն կարող ենք հու-
սալ, որ խաղաղության և առողջապահության բնագավառի աշ-
խատողներն ունեն հուսալի տեսություն, որով առաջնորդվում են
և, որ ոչ միայն վերացնում են այնպիսի ախտանիշներն, ինչպի-
սիք են մակերեսային բռնությունը կամ ջերմությունը, այլ համա-
ռորեն հետամուտ են լինում խաղաղությանն ու առողջությանը:

Վերլուծական պատրաստվածություն ունեցող անձն անմի-
ջապես կտեսնի, իսկ նախքան դա՝ կզգա, որ ինչ-որ բան պակա-
սում է. անցյալի վերաբերյալ նորմատիվը: Անցյալի սխալներն
ուղղել, իհարկե, չափազանց ուշ է, բայց երբեք ուշ չէ հարցնել, թե
ինչ կարելի էր անել կանխելու համար տեղի ունեցածը: Խոսքն,
այլ կերպ ասած, մտածողական գիտափորձի՝ անցյալի բուժման
մասին է:

Երկխոսությունը հիմնված է հարցման վրա: Բայց կարող է
պահանջվել որոշ ժամանակ, մինչև մյուս կողմը կհամաձայնվի
պատասխանել հարցերին: Նրա ներքին տրամադրվածությունը
կարող է նրան դրդել կազմելու հաստատական, հերքողական
նախադասություններ. «Դա ամենահիմա՛ր բանն է, որ ես երբևե
լսել եմ», «Միայն նման իրավիճակում երբևե չհայտնված մարդու
մտքով կանցներ այսպիսի հարց տալ»:

Սա «տաք շիլայից» խուսափելու միտում է: Վաղ թե ուշ, մար-
դը կհանգի սեփական ախտորոշման կարիքին և կցանկանա ի-
մանալ, թե ինչպիսի տեսք ունի մյուս կողմի ախտորոշումը: Բայց,

ամեն դեպքում, ավելի խոհեմ կլինեն սկսել անցյալի բուժումից՝ ձևակերպելով մնա՜ն հարց. «Ե՞րբ իրավիճակն սկսեց սխալ ընթանալ, և ի՞նչ կարելի էր անել այդ ժամանակ»: Փորձը ցույց է տալիս, որ խոսակցության այսպիսի մեկնարկն ավելի հաջող զարգացում է ունենում, քանի որ անցյալն այնքան վտանագավոր չէ, որքան ներկան: Կոնֆլիկտող կողմերից յուրաքանչյուրը հակված է մեղքը վերագրել մյուս կողմին, սակայն անցյալին վերաբերող հարցերում կողմերի միջև հաճախ հնարավոր է համաձայնության բարձր մակարդակ գտնել:

«Անցյալ նորմատիվ»-ից հանգիստ կարելի է անցում կատարել «ապագա նկարագրականին», այլ կերպ ասած՝ կանխատեսմանը: «Իսկ ձեր կարծիքով ինչպե՞ս սա կզարգանա հետագայում՝ նկատի ունենալով, որ այն, ինչ պետք է արվեր, չի արվել»: Այս հարցին ի պատասխան սովորաբար կարելի է տեսնել «ո՞վ - գիտի» հարցն արտահայտող որևէ ժեստ, քանի որ իրական պատասխանը խարսխված է առճակատման մեջ, որը, գուցե, տեղի է ունեցել կողմերի հնարավոր անգործության պատճառով:

Այսքանից հետո ժամանակն է ուղղակի ցատկելու տաք շիլայի՝ «անցյալ նկարագրականի» ախտորոշման մեջ. «Իսկ ի՞նչ է ընկած այս ամենի հիմքում»: Որից հետո ուղղակի կարելի է ցատկ կատարել դեպի կենտրոն՝ «նորմատիվ ապագա». «Ի՞նչ կարելի է անել դրա հետ»:

40 կոնֆլիկտների հիմքում գտնվող մեթոդը դիալեկտիկական է՝ կազմված է անցյալից ու ապագայից, նկարագրականից ու նորմատիվայինից: Երկխոսությունն ու նրա կողմերը ետ ու առաջ են նետվում այս երկու բևեռների միջև: Օրակարգը երաշխավորում է, որ համապատասխան ասպեկտների մեծ մասը կընդգրկվեն երկխոսության մեջ: Մի շտապեք, նախքան հաջորդ թեմային անցնելը համոզվեք, որ նախորդը շատ թե քիչ սպառվել է: Մի մոռացեք նաև, որ կարող եք երկրորդ շրջան վերցնել. «Հաշվի առնելով քիչ առաջ ասվածը՝ մենք պետք է վերադառնանք առաջին հարցին. ի՞նչ կարող էր արվել նախկինում»:

Հենց այստեղ էլ մոտենում ենք գերազանցմանը, փոխակերպմանն ու ստեղծագործական տարրին: Վերոնշյալ չորս կետերը, ընդհանուր առմամբ, հանգեցնում են մի քանի քաջ հայտների դիրքերի վերաձևակերպման: Այստեղ մեզ կարող է պետք գալ հիմնական գծապատկերը:

Կոնֆլիկտաբանը պետք է խթանի ստեղծագործականություն և զբաղվի ուսուցմամբ՝ առանց դա արտաքուստ ցույց տալու: Եղանակներից մեկը հետևյալն է. «Կոնֆլիկտում հաճախ կարելի է տեսնել ընդամենը երկու կամ երեք ծայրահեղ դիրքեր՝ այնքան ծայրահեղ, որ կայուն են կամ էլ ձեռք են բերվել բռնության արդյունքում: Եթե դրանք միակ հմարավոր ելքերն են, կոնֆլիկտը դատապարտված է բռնության: Այլ կերպ ասած, հարկ է փնտրել որևէ այլ՝ ավելի պոզիտիվ մի բան, որը ընդունելի կլինի բոլորի կողմերի համար: Կարո՞ղ է փոքր գծապատկերը օգտակար լինել այս կոնֆլիկտում»:

Ընդհանուր առմամբ, նպատակի իրագործման ճանապարհն այս պահից հարթ է, բայց կոնֆլիկտաբանին անհրաժեշտ է տեղեկությունների մեծ բազա, որը թույլ կտա խաղալ նույնականության և իզոմորֆիզմի վրա:

Երկխոսության գազաթնակետն է այն պահը, երբ բոլոր չորս օրակարգային կետերը՝ անցյալի ախտորոշումն, անցյալի բուժումը, ապագայի կանխատեսումն ու ապագայի բուժումը, կապվում են միմյանց հետ:

Կոնֆլիկտաբանը պետք է յուրաքանչյուր տրված տեղեկություն հիշի անգիր: Նշումներ անելը կամ խոսակցությունը ձայնագրելը լավ գաղափար չէ, եթե կողմերը լիովին համաձայն չեն դրա հետ: Հիշե՛ք՝ սա զրույց է: Երկու ապագա հեռանկարների միջև կապը կարող է չափազանց զգայուն լինել: Մի կողմից, խոսքը վերաբերում է նրան, թե ինչ կասի կոնֆլիկտի կողմը տեղի ունենալիք իրադարձությունների, մյուս կողմից՝ ինչ կարծիք կհայտնի կոնֆլիկտի մյուս կողմերի ակնկալիքների մասին և, վերջապես, ինչ նոր գաղափարներ առաջ կքաշի գերազանցման ու փոխա-

կերպման վերաբերյալ: Կողմերն ունեն իրենց կասկածները, բայց հույս ունեն, որ «այս ամենից ինչ-որ բան կստացվի»: Դեռ մնացել է հաղթելու փոքրիկ հույս կամ, գոնե, հույս, որ մյուս կողմը կպարտվի: Բոլոր դեպքերում առաջ քաշվող նոր գաղափարները հետաքրքիր են, նույնիսկ՝ գրավիչ:

Գոյություն ունի մի հին թեզիս այն մասին, որ եթե երկու (պարզեցնենք մինչև երկուսի) կողմերն ունեն նույն կանխատեսումն, ապա կոնֆլիկտի բռնի փուլը շուտով կավարտվի, և կոնֆլիկտը կլուծվի: Եթե թե՛ Ա-ն, թե՛ Բ-ն վստահ են, որ կոնֆլիկտում կհաղթի Ա-ն, ապա ի՞նչ իմաստ ունի բանակցությունները շարունակելը:

Վատ թեզիս. Բ-ն կարող էր, օրինակ, ցանկանալ, որ իրեն հաղթեն այնպես, որ մարդիկ եզրակացնեն, թե ինքը մեծ քաջությամբ պայքարել է հակառակորդի գերազանցող ուժերի դեմ: Եվ, ամեն դեպքում, Բ-ին շատ դժվար կլինի մյուս կողմին խոստովանելը, թե ինքը գնում է պարտության: Դուք կարող եք փորձել նաև մյուս համակցությունները, բայց դրանք, ընդհանուր առմամբ, հանգեցնում են նույն եզրակացությանը: Թեզիսը չափազանց ռացիոնալ է:

Երկու կողմերն էլ միշտ կհամեմատեն իրենց սեփական կանխատեսումները մյուս կողմի կանխատեսման վերաբերյալ իրենց կարծիքի հետ: Կոնֆլիկտաբանը չպետք է մոռանա, որ սա ոչ թե բանավեճ է, այլ երկխոսություն, որի նպատակը մյուս կողմին հակասության մեջ բռնելն է: Կոնֆլիկտաբանի հարցաշարում կարևոր հարցերից մեկը հետևյալն է. «Պատկերացրեք, որ ամեն ինչ ստացվում է այնպես, ինչպես դուք եք կարծում, ասել է թե՛ հաղթում եք դուք: Ինչպե՞ս կարծագանքեն մյուսները: Կընդունե՞ն՞ ձերանք ձեր հաղթանակը, թե՞ կսկսեն մտածել վրիժառության և փոխհատուցման մասին»:

Այլ ձևակերպմամբ՝ ի՞նչ կանխատեսում կարող ենք անել, եթե հաշվի առնենք իրավիճակի վերաբերյալ մյուս կողմի ապրումները, մասնավորապես, երկարաժամկետ հեռանկարում: Դա հա-

ճախ մոռացվում է: Չէ՞ որ որպես հետևանք կարող են շատ տհաճ խնդիրներ առաջանալ:

Լավ արդյունք կարելի է համարել իրավիճակը, երբ երկու կողմերն էլ համգում են եզրակացության, թե գերազանցումը նախընտրելի է բոլոր մյուս հնարավորությունների նկատմամբ (շարունակական պայքար, հեռացում, փոխզիջում): Իսկ, լավագույն դեպքում, գերազանցումը պետք է այնքան գրավիչ դառնա, որ մյուս չորս ելքերը պարզապես խամրեն, և կողմերի ողջ ուշադրությունը կենտրոնանա գերազանցմանը պատրաստվելու վրա:

Իդեալական կլիմի, եթե վերագրյալը բխի կողմերի ներքին համոզմունքներից: Կոնֆլիկտի երրորդ կողմը, որի դերում առավել հաճախ լինում են մեծ տերություններն ու «ռեալիստ քաղաքական գործիչները», իրականում հեռու է մնում իրականությունից, երբ սահմանափակում է կոնֆլիկտող կողմերին պատիժ և պարզևատրում ծայրահեղություններով: «Եթե չանեք այն, ինչ ես եմ ասում, ապա ռմբակոծված գորգ կդառնաք» կամ «Եթե անեք այն, ինչ ես եմ ասում, ապա ոսկե գորգ կստանաք»: Որոշ իմաստով կարող ենք ասել, որ նման ճնշման արդյունքում հնարավոր է ձեռք բերել զինադադար, բայց այն հիմնված կլիմի ոչ թե ներքին համոզմունքի, այլ վախի թթու համի կամ կաշառքի քաղցրության վրա: Մեծ տերությունը կարող է պարտադրել իր կամքը, բայց դա համեմատելի չէ կոնֆլիկտի գերազանցման հետ այնպես, որ կողմերը կարողանան ապրել դրա հետ՝ ոչ բռնի կերպով, ստեղծագործականորեն և խաղաղության մեջ:

Կոնֆլիկտաբանը երկխոսության մեջ ներկայացնում է իր ընդհանուր կոնֆլիկտաբանական գիտելիքները՝ օգտագործելով նույնականությունը (իզորֆիզմն) ու իր հմտությունները: Կոնֆլիկտի կողմերն էլ իրենց հերթին ներկայացնում են մանրամասներ կոնֆլիկտի մասին: Ասել է թե՛ նրանք հանդիպում են որպես հավասարներ, քանի որ միմյանց տալու բան ունեն:

Այդ ամենը տեղի է ունենում «*dia logos*»-ի՝ բառի միջոցով: Մատչելի լեզվով կազմվում են հարցեր, որոնք ոչ թե քննություն

են հիշեցնում, այլ նպաստում են երկխոսությանը: Փորձեք խուսափել ժխտում արտահայտող բառերից՝ «ոչ», «բայց», «սակայն»։ դրանք մյուս կողմի մոտ առաջացնում են պաշտպանական արձագանք: Հետևեք ձեր ժեստերի լեզվին: Ձանձրության արտահայտման ցանկացած ձև, օրինակ՝ ժամացույցին նայելու սովորությունը, կվնասի գործին: Մի ընդունեք ուսուցչի կեցվածք՝ ջանք թափելով մեջքն ուղղելու, ագրեսիվ կերպով աչքերը հառելու կամ էլ մարմինն առաջ թեքելու, ինչպես գիշատիչ կենդանին իր զոհի առաջ: Այդպիսի բացասական հույզերը չպետք է արտահայտվեն մարմնի լեզվում: Հանգիստ նստեք, հենվեք, ինչպես կհենվեիք հարմարավետ բազմոցին հաճելի զրույցի համար, ոտքերը միասին կամ մեկը մյուսի վրա խաչաձև դրված պահեք, ինչպես ավելի հարմար է: Հետևեք ձեր հագուստին. այն պետք է չեզոք լինի:

Բարդություններից խուսափելու համար նախընտրելի է տղամարդկանց և կանանց հետ երկխոսություններն առանձին կազմակերպել:

Որպես օրինակ, ներկայացնենք մի հատված ինդոնեզացի գեներալի (ԻԳ) և կոնֆլիկտաբանի (ՅԳ) միջև իրական երկխոսությունից.

ՅԳ – Շնորհակալություն այս զրույցին ինձ հրավիրելու համար: Կարո՞ղ եմք սկսել խոսել Ինդոնեզիայի ապագայի մասին:

ԻԳ – Ապագա՝ Դուք խաղո՞ւմ եք բառերի հետ: Ինդոնեզիան չունի՞ ոչ մի ապագա:

ՅԳ – Ոչ մի ապագա՞:

ԻԳ – Կոմունիստներն ամենու՛ր են, պառակտում են երկիրը:

ՅԳ – Կոմունիստնե՞րը: Հանրաքվե անցկացվեց Արևելյան Թիմուրում և հստակ մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախությանը: Նրանք բոլորը կոմունիստներ էին:

ԻԳ – Հնարավոր է՝ ոչ բոլորը: Կոմունիստները սկսեցին իրենց գործունեությունը Անգոլայում և Մոզամբիկում, այնուհետև եկան Լիսաբոն, բայց նրանց չհաջողվեց զավթել

- իշխանությունը: Այնուհետև հայտնվեցին այստեղ:
- ՅԳ – Գեներալ, ինչպիսի՞ն է Ինդոնեզիայի ռազմական ապագան:
- ԻԳ – Հա՛: Ամերիկացիները գալիս են: Քենամի ծրագիրը պատերազմից անմիջապես հետո. Միացյալ Նահանգների ռազմածովային նավատորմ կլինի Ինդոնեզիայում, որը կվերահսկի Հարավային Ասիան, Հարավարևելյան Ասիան և Արևելյան Ասիան: Արևելյան Թիմուրի անկախանալու, ինչպես նրանք են դա անվանում, հաջորդ օրը ԱՄՆ-ը ռազմական կստանա: Հիշե՛ք իմ խոսքերը:
- ՅԳ – Իսկ այլընտրա՞նքը:
- ԻԳ – Անվտանգությունն այս կղզիախմբում մեր, միայն մեր խնդիրն է:
- ՅԳ – Ինչպիսի՞ն է Ինդոնեզիայի տնտեսական ապագան:
- ԻԳ – Հա՛: Ավստրալիան գալի՛ս է: Նրանք անվանում են դա «խաղաղապահություն», մինչդեռ նավթապահություն է դա: Նրանք ցանկանում են ստանալ Թիմուրի և Դարվինի միջև գտնվող նավթի ողջ պաշարը: «Անկախության», ինչպես նրանք են դա անվանում, հաջորդ օրը ողջ տարածքում նավթահանություն կսկսվի: Հիշե՛ք իմ խոսքերը:
- ՅԳ – Իսկ այլընտրա՞նքը:
- ԻԳ – Կղզիախմբի բոլոր ռեսուրսները մերն են, միայն մերը:
- ՅԳ – Ի՞նչ կասեք Ինդոնեզիայի մշակութային ապագայի մասին:
- ԻԳ – Նկատի ունե՞ք կրո՞նը: Լավ, ես մուսուլման եմ, բայց ես չեմ սիրում արմատականներին: Մեզ անհրաժեշտ է կրոն, քանի որ այն զինվորներին ավելի կարգապահ է դարձնում, հնարավոր է՝ ինձ մույնպես, հա՛-հա՛-հա՛: Եվ ինձ դուր չեն գալիս իրենց կրոնը մյուսներին պարտադրող միսիոներները: Արևելյան Թիմուրի անկախ դառնալու, ինչպես նրանք են դա անվանում, հաջորդ օրը Վատիկանն այնտեղ կլինի, և կսկսվի «Ավետարանի քարոզը»:

Հիշե՛ք իմ խոսքերը:

ՅԳ – Իսկ այլընտրա՞նքը:

ԻԳ – Ապրել միասին՝ հանդուրժելով միմյանց:

ՅԳ – Ի՞նչ կասեք քաղաքական ապագայի մասին:

ԻԳ – Ամեն ինչ քանդվում է, մենք չունենք ապագա: Սկզբում Արևելյան Թիմուրը, այնուհետև Աչեխը, Մալակկան, Պապուա-Արիան, Ջայան և այլն, շատերի մասին դուք չգիտեք, հա՛: Մենք ապրել ենք միասին դարեր շարունակ, նույն միսն ու արյունն ունենք, ամուսնացել ենք միմյանց հետ և ամուր կապեր ունենք: Այս ամենը կտոր-կտոր կլինի մի քանի կոմունիստների ու արմատականների պատճառով:

ՅԳ – Իսկ այլընտրա՞նքը:

ԻԳ – Մենք կարող էինք միասին ապրել այս կղզիախմբում:

ՅԳ – Ի՞նչ կասեք դաշնության մասին, եթե յուրաքանչյուր մասը պահպանի սեփական մշակույթը, ունենա բաց սահմաններ, բայց արտաքին, անվտանգային ու ֆինանսական քաղաքականությունը վարվի համատեղ:

ԻԳ – Խորհրդային Միության նմա՞ն: Մենք գիտենք, թե ինչ տեղի ունեցավ այնտեղ:

ՅԳ – Այն դաշնությունն էր: Ողջ իշխանությունը պատկանում էր ռուսներին: Շվեյցարիայի օրինակն ավելի կիրառելի է:

ԻԳ – Կկու ժամացույցներո՞վ: Հա՛: Բայց Արևելյան Թիմուրը ցանկանո՞ւմ է անկախություն:

ՅԳ – Նրանք կարող էին լինել և՛ ազատ, և՛ միավորված Ինդոնեզիայի դաշնության հետ, ինչպես Շվեյցարիան կամ Լիխտենշտայնը՝ մեղմ սահմաններով:

ԻԳ – Դաշնություն: Միավորվա՞ծ: Հըմմմ: Ասացե՛ք՝ կարո՞ղ եք գալ իմ գրասենյակ վաղը առավոտյան՝ ժամը 08:00-ին: Ես ունեմ մի քանի ընկերներ, որոնց հետ կարող եմ քննարկել սա:

Կոնֆլիկտաբանը հավատարիմ է մնում «°»-ին և պահպանում հանգստությունը՝ չշոշափելով «կոմունիզմի» մասին վիճելի հարցը: Կոնֆլիկտի կողմը զրույցնը սկսում է «°»-ով: Բեկունը տեղի է ունենում այն պահին, երբ նա փոխում է այդ նշանը «°»-ի: Հենց այդ ժամանակ էլ սկսվում է իրական երկխոսությունը, փոխադարձ փնտրտուքն ու գերազանցման հայտնաբերումը: Սա սքանչելի փորձ է:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոգրյալ խորհուրդները օգտակար կարող են լինել նաև բանակցությունների ժամանակ: Սեղանը, որի շուրջ հանդիպում են կողմերը, չունի որևէ սահմանված ձև: Կողմերը կարող են տեղավորվել դեմ դիմաց, պատվիրակությունների առջնորդները՝ մեջտեղում՝ երկար սեղանի երկու կողմերում, միջնորդը կարող է նստել սեղանի անկյունում: Որոշ կոնֆլիկտող կողմեր նախընտրում են կլոր սեղանի շուրջ քննարկումները, որը խորհրդանշում է բոլորի միջև հավասարության նշան դնելը: Մեջտեղում չեզոք կողմերն են՝ թարգմանիչներն ու քարտուղարները: Անկախ սեղանի ձևից՝ կարող են լինել խորհրդատուների համար նախատեսված արտաքին շարքեր կամ շրջաններ:

Եթե կողմերը ոչ թե երկուսն են, այլ երեքը, չորսը, հինգը, վեցը և այլն, ապա բանակցությունների համար կարող է եռանկյուն, քառանկյուն, հնգանկյուն կամ վեցանկյուն սեղան օգտագործվել: Եթե կազմակերպվում է ոչ թե պարզապես բանակցություն, այլ համաժողով, ինչպես հաճախ արվում է ՄԱԿ-ում և ազգային ժողովներում, ապա սովորաբար գտնվում են դահլիճներ, որոնցում կա հարթակ համաժողովի ղեկավարության համար (նախագահ, անձնակազմ) և ելույթ ունենալու հնարավորություն այն մասնակիցների համար, ովքեր խոսելու են կամ իրենց տեղերից, կամ ամբիոնից: Բացի այդ, կան հանձնաժողովի համար նախատես-

ված սենյակներ: Բայց լավագույն վայրը սովորաբար սրճարանն է, որտեղ փոքր սեղանները կարող են տեղափոխվել, միացվել և այլն:

Գոյություն ունեն մասնաշաղկապներ: «ԹՐԱՆՍԵՆԴ»-ն իր դիրքորոշումն ունի սեղանների հետ կապված. ընդհանուր առմամբ, այս մեթոդում խորհուրդ է տրվում խուսափել դրանցից: Երկխոսությունը հիմնված է երես առ երես զրույցի վրա և կարող է լավագույնս իրականացվել միմյանց նկատմամբ որոշակի անկյան տակ թեքված երկու աթոռներով: Դեմ առ դեմ դրված աթոռները փաստարկի և հակափաստարկի անհաջող խորհրդամիջ են ճիշտ այնպես, ինչպես երկար սեղանը, իսկ իրար զուգահեռ դրված աթոռները պարզապես անհարմարավետ են միմյանց տեսնելու տեսանկյունից: Երկու բազմոցներ՝ իրար նկատմամբ 90 աստիճանով թեքված, և խմիչքների համար նախատեսված փոքրիկ սեղան. լավ է: Սենյակի կահավորանքը ևս կարևոր է. գոյություն ունի կոնֆլիկտի փոխակերպման ճարտարապետություն:

Երբեմն մասնակիցների քանակն ավելի մեծ է լինում: Այդ դեպքում չորսից հինգ հոգու համար նախատեսված տեղերով փոքր սեղանները՝ կլոր, քառակուսի, երկար, կարող են այնպես տեղադրվել կիսաշրջանաձև, որ բոլորը կարողանան տեսնել և լսել, թե ինչ է տեղի ունենում կենտրոնում և հեշտությամբ շրջվել: Գործնականում, երկխոսության խումբը մաս կդառնա բանակցային խումբ այն հարցի շուրջ, թե ինչպես կարող է խնդիրը լուծվել: Սենիմարի և բանակցությունների միջև սահմանագիծը գերազանցվում է: Եվ հենց դա է նպատակը, լավ սենիմարը լավ մոդել է:

Տարբերակենք *մեղմ* և *կոշտ* բանակցությունները: Բանակցությունների վերաբերյալ բավական օգտակար՝ Ռայմոնդ Ջաների «Փորձագետ բանակցողը» դասագրքում բանակցությունների մարտավարությունն ամփոփված է «Թշնամու թիկունքում» խորագրի ներքո:

Ոչ մի գեներալ կամ հրամանատար լուրջ հակառակորդի վրա չի հարձակվի դիմացից: Դա անխելք արարք կլիներ, եթե չասենք՝ ինքնակործան: Շատ ավելի նախընտրելի է հարձակվել անպաշտպան թևի վրա: Թշնամու էլեկտրամատակարարման գծերը նույնպես հարաբերականորեն խոցելի են, եթե մենք կարողանանք հասնել դրանց մեր սեփական ուժերով: Ռազմական ու լորտում այս խնդիրն իրականացվում է մարտավարական հրթիռների և պարաշյուտիստ-դեսանտավորների կիրառմամբ: Ավելի երկարաժամկետ հեռանկարում վաղուց ապացուցվել է քաղաքացիական տարածքներում թռուցիկների պայթեցման կամ ռադիոհեռարձակումների միջոցով հոգեբանական պատերազմի բարձր արդյունավետությունը: Բանակցային սեղանի շուրջ համարժեք գործառույթի վրա կազդեր գործողությունը թիկունքում, եթե կողմերից մեկը հարձակվեր հակառակորդին աջակցող խմբերի վրա՝ միաժամանակ ուժեղացնելով նրա ընդդիմախոսներին (էջ 145):

Սա հենց այն է, ինչն այս գրքում ստիպում է թերհավատորեն վերաբերել բանակցություններին: Բացի այն փաստից, որ լավագույնն ինչ դուրս է գալիս բանակցություններից, «հարթ փոխզիջումն» է՝ առանց գերազանցման ցատկի, խնդիրը այն չէ, որ հեղինակի կողմից օգտագործվել է պատերազմի փոխաբերությունն, այլ այն, որ դա ճիշտ փոխաբերություն է *կոշտ բանակցությունների* համար: Դրանք պատերազմի շարունակությունն են այլ միջոցներով: Ռազմաճակատի գծերը կոչվում են դիրքեր, գոյություն ունի պայքար նրանց միջև տարածության շուրջ: Գաղտնի է պահվում, թե որքան բան է կողմը պատրաստ զոհաբերել և ինչքան է պատրաստ նահանջել: Հաղթանակը բաժին է հասնում այն կողմին, ում սկզբնական դիրքն ամենամոտն է եղել բանակցությունների արդյունքին:

Ահա մի այլ օրինակ «*Բանակցողի ձեռնարկ*»՝ ավելի քիչ օգտակար գրքից (էջ 67-68). վեց մարտավարություններ ձեր փաստարկներն ավելի արդյունավետ դարձնելու համար.

- պաշտպանեք ձեր փաստարկները տպագիր փաստաթղթերով,
- ձեր դիրքը պաշտպանելու համար ներգրավեք հնարավորինս հեղինակավոր փորձագետներ,
- խուսափեք չհիմնավորված պահանջներ ներկայացնելուց,
- ընդունեք ձեր առաջարկի թույլ կողմերը, նախքան հակառակ կողմը դա կանի,
- եթե չեք կարող հերքել այն, ինչ ասվել է, ուշադրությունը տեղափոխեք որևէ այլ բանի վրա,
- ընտրեք ճիշտ պահը, ինչպիսին է ուրախ տրամադրությունը, գործարքն ավարտելու համար:

Սա տափակության և փոքր, էժանագին հնարքների համադրություն է՝ շատ հեռու նոր իրականություն ստեղծելու համար համախմբվելու որևէ փորձից:

Բանակցությունների մասին հետաքրքիր է Ռոջեր Ֆիշերի և Ուիլյամ Ուրիի *«Համաձայնության հասնելու ուղին. բանակցություններ առանց պարտվողների»* գիրքը՝ Հարվարդի բանակցային ծրագրից: Հաշվի առնելով Հարվարդի դերը, որն ԱՄՆ գերտերության ուղեղն է, գրքին պետք է թերհավատորեն մոտենալ: Սա է հաստատվում մաև երկրագնդի տրամագծորեն հակառակ մասերում գտնվող երկու կոնֆլիկտաբանների կողմից, ովքեր գրքի հեղինակի մասին հետևյալն են ասել. «Ֆիշերն այստեղ էր, և խոստացավ մեզ փող ԱՄՆ դեսպանատան կողմից, եթե մենք խոստանայինք կիրառել միայն նրա մեթոդը, միայն նրա գիրքը և ցուցադրել դա հրապարակավ»:

Հեղինակների կողմից ուսումնասիրվում են ԱՄՆ-ի և Իրանի միջև 1980 թ. բանակցությունները 52 դիվանագետների և դեսպանատան անձնակազմի ազատ արձակման վերաբերյալ, քանի որ նրանք պատանդ էին պահվում Թեհրանում ռազմատենչ ուսանողների կողմից: Հեղինակները ներկայացնում են ԱՄՆ-ի դիրքը՝ *ազատել պատանդներին* հակիրճ, պարզ և ճիշտ: Բայց սրան

հետևում է հոգեբանական մոդելը, թե ինչը կարող էր ուսանողների առաջնորդին ստիպել ասելու այդ կամ ոչ: Ոչինչ չի ասվում ԱՄՆ-ի կողմից Իրանի ներքին գործերին մշտական միջամտության՝ Մոսադեի դեմ հեղաշրջման, Շահին տրված իշխանության, Միացյալ Նահանգների դեսպանատանը Խոմեյնիի դեմ դիմադրության կազմակերպման մասին, մինչդեռ այս ամենը հաստատող փաստաթղթերը դեսպանատան անձնակազմն ի վիճակի չէր եղել այրել, և դրանք տպագրվել ու տարածվել էին ողջ Իրանով՝ որպես արձանագրություններ: Եվ այդ նյութը ուսանողների առաջնորդների հեղինակության մասին չէր:

Որքանով մեզ հայտնի է, 52 դիվանագետները դեռ գաղտնիություն էին պահպանում, բայց ուսանողների առաջնորդների դիրքը հեշտությամբ հասանելի էր և, ընդհանուր առմամբ, հետևյալն էր.

- ԱՄՆ-ը պետք է խոստովաներ իր միջամտությունը Իրանի ներքին գործերին,
- ԱՄՆ-ը պետք է ներողություն խնդրեր,
- ԱՄՆ-ը պետք է խոստանար ապագայում զերծ մնալ նման բաներից:

Սրանք հավակնոտ, բայց ոչ ստեղծագործական պահանջներ են գերտերությանը:

Նախագահ Քարթերը, ով շատ քիչ բան գիտեր Իրանի մասին, հարցրեց Պետդեպարտամենտին, թե արդյոք կա՞ր որևէ ճշմարտություն այս մեղադրանքների մեջ: Վերջինները, հավանաբար, բացասական պատասխան տվեցին՝ նշանակալի նյարդայնությամբ:

ԱՄՆ-ն իրականացրեց անհաջող և նվաստացուցիչ միջամտություն կոնֆլիկտին, բայց, ի վերջո, պատանդներն ազատ արձակվեցին համապատասխան վճարի դիմաց: Իսկ արվածի դիմաց բոլոր դափնիները տրվեցին ոչ թե Ջիմմի Քարթերին, այլ Ռոնալդ Ռեյգանին՝ նորընտիր նախագահին: Իսկ ԱՄՆ-Իրան կոնֆլիկտը, ինչպես քաջ հայտնի է, շարունակվում է ինչ օրս:

Ի՞նչ խորհուրդ կտար «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը: Ազատ արձակում՝ ներողություն խնդրելու դիմաց, և ճշմարտության ու հաշտության հանձնաժողով, ինչպես դա կանվանվեր մեր օրերում: Իսկ եթե ԱՄՆ-ը ներողություն չխնդրեր, ապա տարածել Իրանի ձեռքի տակ եղած ողջ ճշմարտությունն ամբողջ աշխարհով և մարդասիրական նկատառումներով ազատել արձակել պատանդներին՝ չպահանջելով որևէ բան դրա դիմաց: Աշխարհը կիմանա՝ ինչպիսի հետևություններ անել:

Սակայն գրքում ավելի լուրջ է բանակցությունների տեսությունը: Հիմնական գաղափարն այն է, որ որպես մեկնակետ պետք է վերցնել կողմերի շահերը, այլ ոչ թե նրանց դիրքերը: Ըստ հեղինակների՝ ամենախոր շահերը մարդկանց հիմնարար պահանջմունքներն են: Դիրքերը հաճախ *ձևակերպվում* են որպես անճկուն: Բայց հիմնարար պահանջմունքները, ինչպիսիք են ֆիզիկական բարեկեցությունը և ինքնությունը, ևս անճկուն են. եթե դրանք անարգված են կամ անտեսված, ապա բանակցություններն ընդհանուր անապահովությունից բացի ոչինչ չեն բերի: Եթե հիմնարար պահանջմունքները բավարարված են, ապա արդյունքը կլինի ընդհանուր անվտանգությունը: Պարտադիր չէ, որ շահերի մեջ լինի ավելի շատ ճկունություն, քան դիրքերի:

Այնուհետև ներկայացված է մեկ այլ *տեսություն*. կողմերը պետք է տեսականորեն հիմնավորեն, որ իրենց դիրքերը կբավարարեն իրենց իրական շահերը: Սակայն մնան վարժությունն օգտակար է տեսականորեն ավելի տաղանդավոր կողմի համար, ով չի օգնի բոլոր կողմերին իրենց դիրքերը հնարավորինս լավ ձևակերպելու հարցում, ինչպես կոնֆլիկտաբանը «ԹՐԱՆՍԵՆԴ» երկխոսությունում, այլ ավելի շուտ կփնտրի թույլ կետերը տեսության մեջ՝ անդրադարձնելով դիրքերը շահերին:

«ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդը երկխոսություն է փնտրում, մինչդեռ Ֆիշերի և Ուրիի մոդելը կարծես Հարվարդի համալսարանի սեմինար լինի:

Եվս մեկ գիրք կա, որն արժեն հիշատակել ոչ այնքան բովանդակության, որքան հեղինակի պատճառով: Խոսքը Էդվարդ դե Բոնոյի «Կոնֆլիկտներ. ավելի լավ եղանակ դրանք լուծելու համար» աշխատության մասին է: Գրքում կիրառվում է ոչ չափորոշիչային մի մոտեցում՝ որպես ստեղծագործական լուծումների հասնելու միջոց: Բնագավառում լինելով նոր ամձ՝ հեղինակը քիչ բան ունի կամ ոչինչ չունի առաջարկելու կոնֆլիկտի կենսական ցիկլերի մասին, չունի այնպիսի մի ասելիք, որ նախկինում շատ ավելի լավ ձևակերպված չլինի: Նա ունի առաջարկ, որն ավելի շուտ կազմակերպական բնույթի է. հիմնել ՎԱՄԿ՝ Վերազգային անկախ մտածողության կազմակերպություն՝ ֆորում, որտեղ կոնֆլիկտի կողմերը կարող են ունենալ մշտական երկխոսություններ միմյանց հետ՝ դեմ առ դեմ: Դե, ինչո՞ւ ոչ:

Նա իր ոչ չափորոշիչային մոտեցման օրինակը պրոյեկտում է մասնավոր կոնֆլիկտի վրա, բայց, ինչպես ասում են, պուդինգի մասին դատելու համար, այն պետք է համտեսել: Դարձյալ Իրանն էր և պատանդների ճգնաժամը: Հեռուստատեսության լրագրողը հեղինակին տվեց շատ ուղղակի մի հարց. «Ո՞րն է ձեր առաջարկը»: Սա լիովին արդարացի հարց է ցանկացած մեկին, ով ներկայացնում է իրեն որպես կոնֆլիկտների գծով մասնագետ, և խաղաղության ձգտող յուրաքանչյուր մեկը պետք է հստակ իմանա պատասխանը: Եթե կոնֆլիկտաբանն այս հարցին ի պատասխան ասելիք չունի, ապա չի էլ կարող բողոքել, որ ասելիք չունեն լրատվամիջոցներն ու քաղաքական գործիչները: Ինչևէ, նա ասաց.

Ինձ թվաց, որ իրանցի ուսանողների համար պատանդներ վերցնելու գլխավոր նպատակն այն էր, որ դա նշանակալիորեն կվշտացներ ԱՄՆ-ին: Եթե «ինչ-որ կերպ» ԱՄՆ-ը կարողանար համբերության նշաններ ցույց տալ ու շանտաժի չենթարկվեր, ապա պատանդներ պահելու մեջ իմաստ չէր լինի: Համբերության նշանները պատանդները կընկալեին որպես անհոգիություն կամ անտարբերություն (չնայած դա կնպաստեր իրենց՝ ավելի վաղ ա-

զատ արձակմանը): Այդ պատճառով ես առաջարկեցի, որ յուրաքանչյուր պատանդ, որպես փոխհատուցում այս անարդար ազատագրկման համար, օրական ստամար 1000 դոլար Միացյալ Նահանգների կառավարության կողմից: Այդպիսով, պատանդը կիմանար, որ ինչ-որ շահութաբեր բան է տեղի ունեցել, և որ այդ համբերությունն առնվազն անտարբերություն չէր նշանակում:

Նման առաջարկով վերոհիշյալ գրքի հեղինակն իրեն հեռացնում է կոնֆլիկտաբանության սահմաններից: Ինչպես Ֆիշերն ու Ուրին, նա ևս չի կարողանում պատկերացնել, որ ուսանողները կարող էին իրական մպատակ ունենալ: Դա կարելի է հասկանալ՝ չհամաձայնելով նրանց հետ: Եթե խոսենք Վաշինգտոնի և պատանդների միջև աննշան կոնֆլիկտի վերաբերյալ նրա առաջարկի մասին, ապա պետք է ասենք, որ առաջարկված լուծումը ստեղծագործական է: Բայց ԱՄՆ-ի և Իրանի միջև հասունացած մեծ կոնֆլիկտը պարզապես ծիծաղելի է: Եվ դա է հիմնական կոնֆլիկտը:

Վերջին օրինակը Մարշալ Ռոզենբերգի *«Ոչ բռնի հաղորդակցությունները»* գրքից է, որ պարունակում է շատ արժեքավոր նյութեր հաղորդակցությունների մասին, ինչպես նաև ներառում է ապրումակցման կարևորության մասին լավագույն խորհուրդներից մի քանիսը: Ռոզենբերգը մասնակցում էր մոտ 170 մուսուլման պաղեստինցի տղամարդկանց համար Բեթլեհեմում փախստականների ճամբարի մզկիթում կազմակերպված շնորհանդեսին: Հավաքվածներն ամերիկացիներին այնքան բացասական էին վերաբերում, որ մի մարդ, տեսնելով նրան, հանկարծ վերցատկեց և բղավեց. «մարդասպան»: Դրանից հետո տասնյակ այլ ծայեր բղավեցին նույնը. «մարդասպան», «մանկասպան»:

Ռոզենբերգը, ով կենտրոնացնում էր մարդու զգացմունքների և կարիքների վրա, իրեն մարդասպան անվանած մարդուն հարցրեց.

- Դուք զայրացած եք, որովհետև կցանկանայիք, որ իմ կառավարությունն իր ռեսուրսներն այլ կե՞րպ օգտագործեր:

- Այո՛, գրողը տանի, ես զայրացա՛ծ եմ: Կարծում եք՝ մեզ պե՞տք է ԱՄՆ-ում արտադրված արցունքաբեր գազը: Մեզ պետք է կոյուղի, ոչ թե արցունքաբեր գազ: Մեզ անհրաժեշտ է կացարան: Մեզ մեր սեփական երկիրն է պետք:
- Այսպիսով, դուք կատաղած եք: Երախտապարտ կլինեի՞ք որոշ աջակցության համար, որ բավարար կլիներ բարելավելու ձեր կենսապայմաններն ու ձեռքբերելու քաղաքական անկախություն:
- Դուք պատկերացում ունե՞ք, թե ինչ է դա՝ 27 տարի ապրել այնպես, ինչպես ես եմ ապրում իմ ընտանիքի, երեխաների և մնացածի հետ: Դուք ունե՞ք նվազագույն պատկերացում, թե ինչ տարիներ են եղել սրանք մեզ համար:
- Կարծես, դուք շատ հուսահատված եք և ցանկանում եք իմանալ՝ արդյո՞ք ես կամ մեկ ուրիշը կարող է իսկապես հասկանալ, թե ինչպիսինն է ձեր կյանքը:

Այլ կերպ ասած, Ռոզենբերգը դիրք չունի, այլ թարգմանում է մյուս կողմի բռնի լեզուն ավելի ոչ բռնի՝ «զգացմունքային» լեզվի:

Այն բանից հետո, երբ տղամարդն իրեն բավարարված զգաց, ես հասկացա, որ նա ի վիճակի է լսելու ինձ ու բացատրեցի ճամբարում գտնվելու իմ նպատակը: Մեկ ժամ անց նույն մարդը, ով ինձ մարդասպան էր անվանել, հրավիրում էր ինձ իր տուն՝ Ռամադանի ճաշի:

Եվ դրանով երկուսի միջև ծագած միկրո կոնֆլիկտը լուծվեց: Սա կոնֆլիկտի ռեզուկցիա էր դեպի միկրո մակարդակ: Բայց ի՞նչ կասեք ԱՄՆ-ի և Պաղեստինի միջև մակրո, մեզա կոնֆլիկտների մասին:

Գոյություն ունի՞ «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդի հետ լիովին համատեղելի բանակցությունների հայեցակարգ: Իհարկե, և դա այն է,

ինչ նկատի է առնվում *մեղմ բանակցություններ* հասկացությամբ տակ: Ակնհայտ է, թե ինչ է այն ենթադրում. կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստելուն պատրաստող կոնֆլիկտաբանի հետ, ապրումակցող, ոչ բռնի, ստեղծագործական երկխոսությունների փոխարեն կողմերը մտնում են միմյանց հետ ուղղակի երկխոսությունների մեջ:

Երկխոսությունը կարող է տեղի ունենալ կողմերի հավասար թվով ներկայացուցիչների միջև: Նրանք կփորձեն մտնել միմյանց կաշվի մեջ՝ հարցադրումներ անելու, ոչ թե բանավեճ հրահրելու եղանակով:

Եթե յուրաքանչյուր պատվիրակություն բաղկացած է, ասենք, հինգ անդամներից, ապա մեկնարկի եղանակներից մեկը կլինեն երկխոսության հինգ զույգեր կազմելը: Կարելի է դա անել այնպես, որ մասնակիցները հանդիպեն պաշտոնակից գործընկերոջ հետ. նախագահը՝ նախագահի, օգնականը՝ օգնականի, արտգործնախարարը՝ արտգործնախարարի: Հաջորդ օրը նրանք կարող են շարունակել, կամ կարող են փոխել գործընկերներին այնպես, որ բոլորը կարողանան երկխոսություններ ունենալ միմյանց միջև: Վերջում բոլորի գտած ելքերը պետք է ընդհանուր հայտարարի բերվեն: Բազմաթիվ փոքր վտակները պետք է մեկ գետ դառնան: Իսկ որպեսզի դա տեղի ունենա, կողմերին կարող է կոնֆլիկտաբան անհրաժեշտ լինել:

Եթե կողմերը մի քանիսն են, ապա խորհուրդ է տրվում կլոր սեղաններ ընտրել, որոնք չունեն ֆիքսված կենտրոն ու ծայրամաս: Եթե ժամանակը սահմանափակ է, երկխոսությունները կարող են սկսվել միաժամանակ մի քանի սեղանների վրա: Այնուհետև յուրաքանչյուր սեղան կընտրի զեկուցող, ով մնացածներին կներկայացնի տվյալ սեղանի շուրջ նստածների դիրքորոշումը:

Իդեալական կլինի որպես երկխոսությունների կազմակերպման վայր ընտրել խնջույքի սրահ հիշեցնող տեղ: Քննարկման համար կարելի է վերցնել ինչ-որ ընդհանուր օրինակներ՝ հեռու

տվյալ կոնֆլիկտից, այնուհետև քիչ-քիչ մոտենալ բուն պրոբլեմին: Սա այն եղանակն է, որով գործում է «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը:

Այլ կերպ ասած, տեղի է ունենում սահուն անցում «ԹՐԱՆՍԵՆԴ»-ի սեմինարից, որի նպատակն է իմանալ կոնֆլիկտի փոխակերպման մասին, դեպի բանակցությունների խիստ տարր պարունակող սեմինարներ: «Մենք կարծում էինք, թե եկել ենք այստեղ սովորելու, բայց շաբաթվա վերջում հայտնաբերեցինք, որ իրականում բանակցել ենք տարածաշրջանի կոնֆլիկտների վերաբերյալ մի քանի բավականին լավ առաջարկների շուրջ և, միևնույն ժամանակ, օգուտ քաղել միմյանց մեկնաբանություններից ու դասընթացի ղեկավարներից»: Հաճախ կարելի է գրանցել նման արդյունք, եթե ընտրված թեման «Աֆղանստանում և նրա շուրջ կոնֆլիկտները» է, այլ «Աֆղանստանի ապագան»: Եթե պետք է թեմա ձևակերպել Մերձավոր Արևելքի մասին, ավելի լավ է Իսրայելից, Պաղեստինից, Հորդանանից և Եգիպտոսից ժամանած լրագրողների խմբերի քննարկմանն առաջարկել «Մերձավոր Արևելքը, որում ես կցանկանայի ապրել», այլ ոչ թե «Մերձավոր Արևելքի կոնֆլիկտը» թեման (սա այն է, ինչ «ԹՐԱՆՍԵՆԴ»-ն իրականացրեց 2000 թ. հունիս ամսին): Փորձեք կառուցողականորեն խոսել ապագայի մասին, ոչ թե ապակառուցողականորեն՝ անցյալի՝ չմոռանալով, որ, վաղ թե ուշ, պետք է լինելու անցյալին ուշադրություն դարձնել:

Մեծ հարց է, սակայն, թե արդյոք բանակցությունների մասնակիցները ցանկանում են, կամ, եթե ցանկանում են, ի վիճակի կլինեն՝ կենտրոնանալ ապագան կառուցելու վրա:

Ոմանք կարող են դա իրենց արժանապատվությունից ցածր համարել, ինչպես ավագարկղում խաղալը: Ոմանք պատրաստ են կատարել ամենահնացած դիվանագիտական ծեսերը, որտեղ նշանակություն ունի խոսելու, հագնվելու, ուտելու և խմելու ոճը, բայց պատրաստ չեն բարդ ու ստեղծագործական խաղի: «Մենք այստեղ ենք բանակցությունները հաղթելու համար, ոչ թե դեպի երազանքների թագավորություն էքսկուրսիա կատարելու: Մենք

բոլորս գիտենք, թե ինչի վերաբերյալ է այս ամենը՝ նրա կամ իմ շահերի»։ Իենց նման դիրքորոշումների հետևանքով է, որ խորհուրդ է տրվում կազմակերպել նախապատրաստական երկխոսություն կոնֆլիկտաբանի հետ։

Կարո՞ղ են նրանք փոխել մեխանիզմը՝ հասնել բանավեճից երկխոսության, բացականչական նշանից՝ հարցական նշանի, հրամայականից՝ հաստատական եղանակի։ Իհարկե, անհատապես նրանք կարող են, քանի որ մենք խոսում ենք շատ ինտելեկտուալ, խելացի մարդկանց մասին։ Բայց ի վիճակի՞ են նրանք կատարելու անհաշտելի հակասությունից դեպի համագործակցություն անցումը որպես խումբ՝ վկաների ներկայությամբ. դա խնդրահարույց է։

Ընթերցողը հավանաբար նկատել է, որ այս էջերում արված առաջարկները փորձ են գերազանցելու երկխոսության և բանակցությունների միջև հակասությունը։ Երկու ծայրահեղ դիրքերն են *երկխոսությունը մեկ կողմի հետ առանձին և հաղթելու համար տարվող կոշտ բանակցությունները*։ Գերազանցումը ենթադրում է ուղղակի երկխոսություններ միմյանց հետ։ Չի ենթադրվում բանավեճ՝ հաղթելու կամ պարտվելու տեսլականով։ Ուղղակի երկխոսությունները կազմակերպվում են ոչ միայն զուգերով, այլ նաև խմբերով։ Երկխոսությունը առանցքային տարրն է։ Այն պետք է համալսարանական սեմինար կամ լավ զրույց հիշեցնի։ Դիվանագետները քաղաքակիրթ, բուրժուա մարդիկ են, այնպես որ երկուսն էլ պետք է ծանոթ լինեն։ Խնդիրը կարող է լինել ներքին հրահանգավորումը՝ «Պաշտպանե՛ք մեր ազգային շահերը»։ Նման հարաբերությունն ուղղահայաց է։ Նախարարության հետ այս հրահանգների վերաբերյալ երկխոսություն ունենալու համար պատվիրակություններում անհրաժեշտ են բարձր կարգավիճակ ունեցող անդամներ։

Մեղմ բանակցությունները նախընտրելի են կոշտ բանակցություններից։ Բայց հարց է առաջանում՝ կոշտ բանակցությունները նախընտրելի չե՞ն պատերազմից։ Այո, բառերը կարող են

լինել շատ կոշտ, վիրավորական, բայց դրանք մահացու չեն: Ավելի շուտ խնդիրն այն է, որ բանակցությունների ժամանակ մարդիկ հաճախ լի են կեղծ ակնկալիքներով: Խնդիրը պարտադիր այն չէ, որ բանակցողները համակվում են իրենց հույզերով, այլ այն, որ երբեմն մրանք չափազանց սառն են ընդհանրապես հույզեր ունենալու համար և մույնիսկ հպարտանում են դրանով: Երբեմն հույզերի արտահայտումը կարող է օգտակար լինել, ինչպես դա հաճախ լինում է դատարանում. «Նա կոտրվեց», «Նա սկսեց լաց լինել»:

Խնդիրը հաճախ ինտելեկտուալ դաշտում է: Նրանք անշնորհք են: Նրանք չեն տիրապետում խնդիրները, հակասությունները համակարգելու տեխնիկային, հիմնական փաստերին, տառապում են ապրումակցման և ստեղծագործականության բացարձակ պակասորդից, մինչդեռ խելամիտ ու ոչ բռնի քաղաքականություն են վարում սեղանի շուրջ: Մրցամակը կհասնի այն կողմին, որը լավագույնս պատրաստված է: Իսկ այդ կողմի անունը միջազգային բանակցություններում հաճախ ԱՄՆ է: Սա չի նշանակում, որ միայն ԱՄՆ-ում են ծնվում լավագույն գաղափարները, այլ այն, որ մյուս երկրները պետք է փորձեն համաձայնեցնել իրենց գործողությունները:

ԿԻՐԱԿԻ.

«ԹՐԱՆՍԵՆԴ» ՄԵԹՈԴԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Գյուղի խաչմերուկում բեռնատար մեքենան հարվածել է երկու տարեց կանանց: Վարորդը շտապում էր, որովհետև պարտավոր էր հասնել ինչ-որ գործի վերջնաժամկետին, իսկ կանայք ցանկանում էին այն, ինչ ցանկանում են բոլորը՝ անվտանգ ապրել իրենց կյանքը: Կոնֆլիկտաբանական լեզուն չի արտահայտում ողբերգության խորությունը, բայց այն հնարավորություն է ընձեռում հասկանալու՝ ինչպե՞ս ենք մենք վերաբերվում այս խնդրին:

Գոյություն ունեն երեք մոտեցումներ.

1. Կանչում են շտապ օգնություն: Երկու կանայք մահանում են հիվանդանոցի ճանապարհին: Հարուցվում է քրեական գործ, ընդունվում է դատավճիռ և նշանակվում պատիժ, ինչից հետո ավելացվում են խաչմերուկում առկա նախազգուշացնող նշանները:

2. Հրավիրում են ճանապարհային ճարտարագետ: Կառուցվում է կամուրջ հետիոտնի համար, ստեղծվում է շրջանցիկ ճանապարհ, տեղադրվում են պառկած ոստիկաններ:

3. Կազմակերպվում է համակարգային բանավեճ վերջնաժամկետների պահպանման, ժամանակի ճնշման վերաբերյալ՝ ընդհանրապես կապիտալիզմի և, մասնավորապես, մեքենաների կոշտ քննադատությամբ:

Ինչպե՞ս է «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը վերաբերվում նման իրավիճակին: Երկրորդ տարբերակն ամենաընդունելին է մեզ համար: Առաջին տարբերակը չի լուծում որևէ կոնֆլիկտ, այն միայն կարգ ու կանոն է հաստատում կոնֆլիկտից հետո: Երրորդ տարբերակը կարող է օգտակար լինել, միայն եթե այն հանգեցնի կոնկրետ գաղափարների, որոնք կարող են իրականացվել խելամիտ ժամկետում: Բայց երկրորդ տարբերակն առավելություն ունի, քանի որ այն կարող է իրականացվել նույն պահին կայուն կերպով, եթե

ընդունելի լինի կոնֆլիկտի կողմերի համար: Այս պարագայում կողմեր են ոչ միայն վարորդներն ու հետիոտները, այլ նաև համարային գործակալություններն ու քաղաքական կուսակցությունները: Ժամանակակից հասարակությունը չունի իմստիտուտներ, որոնք կստեղծեն կապ մեծ կուսակցությունների միջև ուղղակի երկխոսության մեջ, նախընտրելի են անուղղակի մոտեցումները:

Կամուրջ կառուցելու իդեան լավ գերազանցում է, բայց շրջանցիկ ճանապարհի ստեղծելու գաղափարն ավելի ստեղծագործական է: Շրջանցիկ ճանապարհը կարող է նաև գեղագիտական արժեք ունենալ, ինչպես Ֆրանսիայում: Երթևեկության թուլալատրելի արագության նվազեցումը ճանապարհի այդ հատվածում ավելի նախընտրելի լուծում է, քան լրացուցիչ լուսացույցների տեղադրումը, քանի որ շատ ավելի մատչելի տարբերակ է:

«ԹՐԱՆՍԵՆԴ»-ը ազատական է փոքր քայլերը խրախուսելու իմաստով, մարքսիստական՝ գերազանցման և հակասության դիալեկտիկայի վրա հիմնված լինելու իմաստով, և բուդդայական՝ մարդկային հիմնարար պահանջմունքները որպես հիմնական ուղեցույց ունենալու իմաստով: Նույնիսկ մեզա կոնֆլիկտների լուծման համար առաջարկները կարող են լինել ստեղծագործական, բայց հազիվ թե հեղափոխական լինեն՝ ավանդական իմաստով:

Աշխարհը փոփոխությունների կարիք ունի, և առաջարկները շատ խնդիրներ լուծելու համար են: Բայց առաջարկները նույնպես կարող են ստեղծել խնդիրներ: Մենք գիտենք, թե ինչ ունենք ներկայում, բայց վստահ չենք կարող լինել այն հարցում, թե ինչ կստացվի լուծումը գործարկելուց հետո: Ուստի, ավելի լավ է առաջ գնալ փոքր քայլերով, զգուշորեն և չկազմել մեծ, ժամանակատար ծրագրեր, որոնք կենթարկեն ամբողջ աշխարհամասեր ինչ-որ բանի, որը երբեք չի փորձարկվել ավելի համեստ մասշտաբով: Ինչո՞ւ է սա ավելի նախընտրելի. որովհետև մենք կարող ենք սխալվել:

Հաճոյախոսություն չէ ասելը, թե որևէ համաձայնություն փորագրվել է պողպատի կամ կերտվել՝ քարի վրա: *Ձեռք բերված լավ համաձայնությունից պետք է ակնկալենք այն անվավեր ծանաչելու, կամ չկատարելու հնարավորություն:* Կատարեք միայն այն, ինչ կարող եք չեղյալ հայտարարել: Պետք է հնարավոր լինի խելամիտ ծանուցումից հետո դուրս գալ համադաշնությունից: Դաշնությունը նույնպես պետք է այնպես կազմավորվի, որ այլ հնարավոր ելքեր մնան: Իհարկե, պետք է հուսալ, որ գտնված գերազանցումն այնքան հաջող կլինի, որ կդառնա նոր սոցիալական իրականություն, որն իր հերթին առաջ կբերի նոր հակասություններ, որոնք այնուհետև կարող են գերազանցվել, այլ կերպ ասած, կծնավորի պատմություն: Բայց եթե այն անհաջող է, ապա պետք է լինի ետ դարձի ճանապարհ՝ դեպի մեկնակետ:

Արժեքները հիմնական են, դրանք են սահմանում ուղղությունը: Բայց տեսություն նույնպես անհրաժեշտ է՝ որպես չհետազոտված տարածքի քարտեզ: Եվ անհրաժեշտ են տվյալներ՝ իմանալու համար, թե որտեղ ենք գտնվում: Բոլոր ճիշտ հետազոտությունները գործողության հետազոտություններ են: Բոլոր ճիշտ քաղաքականությունները գիտափորձ են, որտեղ արժեքների և տեսության վրա հիմնված գործողությունը կբախվի տվյալների հետ մարդկության անունից: Նման հետազոտությունը տեղի է ունենում արժեքների, տեսության և տվյալների եռանկյունու մեջ՝ հարմարեցնելով դրանք միմյանց:

Այս առաջարկներից մի քանիսի վերաբերյալ ընթերցողը կարող է ասել. «Լավ, բայց սա երբեք չի աշխատի»: Էկվադորի և Պերուի ու Սառը պատերազմի, և մյուս բոլոր դեպքերի մասին երկրների ղեկավարների արձագանքը առաջարկված լուծումներին հենց այդպիսին էր: Բայց դա թյուրըմբռնում է: Գոյություն չունի թեզիս, որ ամեն ինչ կաշխատի, քանի դեռ այն տեղավորված չէ խաղաղության անկյունագծի երկայնքով: Թեզիսն այն է, որ եթե ինչ-որ բան աշխատում է, ապա այդտեղ է լուծումը: Ակնհայտ է, որ կոնֆլիկտի փոխակերպման համար անհրաժեշտ է

ժամանակ: Ինչքան խորն է կոնֆլիկտի արմատը հիմնարար պահանջմունքների մեջ, այնքան կոնֆլիկտաբանը պետք է գերազանցման նոր սերմեր ցանի փոխակերպման համար, որպեսզի դրանք աճեն ու բարձրանան կոնֆլիկտի կողքին և, ի վերջո, ստվեր գցեն դրա վրա:

Գաղափարները նման են սերմերի: Դրանք պետք է կապ ունենան կողմերի իդեալական աշխարհների հետ և, եթե հնարավոր է, առաջանան այդ աշխարհներից՝ կոնֆլիկտաբանի օժանդակությամբ: Սերմերը պետք է կանոնավոր կերպով ջրել և այստեղ է, որ որոշակի դեր են խաղում խաղաղության լրագրությունը և կրթությունը: Եթե ապրումակցման վրա հիմնված ստեղծագործական գաղափարը պետք է իրականացվի ոչ բռնի եղանակով, ապա այն պետք է հասանելի լինի հանրային տարածությունում: Գաղափարը պետք է օգուտ քաղի հանրային բանավեճից: Չկա հավատ փակ դռների հետևում ձեռք բերված գաղափարների նկատմամբ, որոնք մնում են փակ, նախ և առաջ, թաքցնելու համար, որ ոչ մի լավ գաղափար չի առաջացել: Որպեսզի լավ գաղափարներն առաջանան հանրային տարածությունում, լրատվամիջոցներում, համոդիսադաիլիճներում, դրանք պետք է ձևակերպվեն ճաշի սեղանների շուրջ և իրականացվեն: Դրանք բառերով մարմնավորելու համար ինչ-որ մեկը պետք է արտասանի այդ բառերը: Եվ այդ մարդիկ պետք է պատրաստ լինեն, որ, ինչպես ասել է Շոպենհաուերը «նրան, ով ունի նոր միտք, սկզբում կծաղրեն, այնուհետև կհետապնդեն, մինչև վերջում ինչ-որ մեկը չասի. «Դա միշտ եղել է իմ համոզմունքը»»: Սա բեռ է, որին պետք է պատրաստ լինել:

Այս գրքում մի շարք «ահավոր» բաներ են ասվել ծայրահեղ դիրքերի մասին: Գիրքը երկու ծայրահեղականներին մեջքով շրջվելու մասին է՝ խեղդելով դրանք փոխզիջմամբ, իսկ հնարավորության դեպքում՝ գերազանցելով, փոխակերպելով դրանք: Բայց գծապատկերն ունի երկու առանցքներ, և կոնֆլիկտը հաճախ ձևակերպվում է որպես հակասություն երկու կողմերի միջև:

Ավելի բարդ կոնֆլիկտները և դրանց փոխակերպումն այս գրքի շրջանակներից դուրս են: Բայց գիրքը երկչափ չէ, նույնիսկ եթե սովորաբար մեկնակետը երկու կողմերն են: Մենք սկսում ենք երկուսից նաև այն պատճառով, որ աշխարհում շատերն են մեկնարկի նման կետ ընտրում: Սա պայքար է «լրիվ անկախության» համար՝ ի հակադրություն «ստրկության մեջ ապրելուն»: «*Patria o muerte!*»¹, «Ավելի լավ է լինել մեռած, քան կարմիր»:

Մեր խնդիրն է թուլացնել ծայրահեղականներին, տեղադրել նրանց նպատակները գծապատկերում, իսկ այնուհետև գտնել ստեղծագործական պատասխաններ մյուս երեք կետերի համար, որոնք հարցնում են՝ «Ո՞վ եմ ես»: Այնուհետև տեղի է ունենում այն, ինչ մենք բազմիցս տեսել ենք, օրինակ, Հյուսիսային Իռլանդիայում. խաղաղության անկյունագծի յուրաքանչյուր կետի հետևում կան շատ կամ քիչ գիտակցված դիրքորոշումներ, և այդ դիրքորոշումների հետևում կան կողմեր, որոնք կարող են մոբիլիզացվել, եթե հավատան, որ այն, ինչ նրանք մտածում կամ ասում են, կայուն է և կարող է շատերի կողմից ընդունվել:

Գծապատկերը տեղավորում է «Ո՞վ եմ ես» հարցի առնվազն հինգ պատասխան, ոչ թե երկու: Առարկությունը կարող է լինել այն, որ գիրքը արտաքսում է ծայրահեղականներին անկյուն՝ չտալով դրանց բավականաչափ ճանաչում: Կոնֆլիկտը հաճախ թաքնված է՝ ետին պլանի վրա: Ծայրահեղականները մտնում են ասպարեզ որպես հստակ նպատակների կրողներ, և դարձնում կոնֆլիկտը հրապարակային: Խնդիրն այն է, որ դրան հեշտությամբ հետևում է բռնությունը, իսկ բռնությամբ հմարավոր չէ կայուն լուծում գտնել: Այլ կերպ ասած, պահանջվում է գերազանցում և փոխակերպում: Իսկ դա պահանջում է իրական կոնֆլիկտաբանական աշխատանք, որը դուրս է ծայրահեղականությունից:

Գիրքը չափազանց լավատեսակա՞ն է: Այո, իսկ ո՞վ է ասել, որ լավատեսությունն ու իդեալիզմը՝ համադրված ռեալիզմի

¹ «*Patria o muerte!*» (իսպ.) - «*Հայրենիք կամ մահ*» (թարգ., *նշումը թարգմանիչի*)

տարրերով, սխալ են: Պարզապես մեզ անհրաժեշտ է ժամանակային հեռանկար, բայց ոչ շատ երկար: Անհրաժեշտ է ստեղծագործականություն, բայց ոչ չափազանց շատ:

Գաղափարախոսը, ով ցանկանում է գերազանցել և փոխակերպել ամեն ինչ և բոլորին, բացի իրենից, կոնֆլիկտաբան չէ:

Հետազոտողը, ով ուսումնասիրում է իրականությունը և գեղեցիկ կերպով ներկայացնում գրքում, որպես զսպաշապիկ հիշատակելով սոցիալական գիտության օրենքներն ու օրինաչափությունները, նույնպես կոնֆլիկտաբանական աշխատանքի մաս չէ: Այս զսպաշապիկը կրում է գիտության փիլիսոփայություն անունը, այն կոչվում է *պոզիտիվիզմ*: Գործնականում սա նշանակում է, որ անցյալում տեղի ունեցած ամեն ինչ, և որակապես ամեն մոր բան, որը կարող է տեղի ունենալ ապագայում, բացի անցյալի և անցյալի միտումների շարունակությունից, հետազոտողի ակտիվ մտահոգությունից դուրս է:

Կոնֆլիկտաբանական աշխատանքում խնդիրը մոր իրողություններ ստեղծելն է: Դրա համար երկար հեռանկարով տեսլական պետք է ունենալ, բայց ոչ հեռուստատեսություն (վերջին դիտողությունն ուղղված է այն բանի դեմ, որ հեռուստատեսությունն ամբողջ աշխարհում չի կարողանում կատարել խաղաղ միջոցներով խաղաղությանն ուղղված լավ աշխատանք): Հետազոտողը պետք է իջնի փղոսկրյա աշտարակից, և, գուցե, գաղափարախոսը պետք է մուտք գործի աշտարակ: «Միջազգային հարաբերությունների» գծով մասնագետը կգարմանա, երբ տեսնի, թե ինչքան շատ կողմեր կան կամ կարող են ստեղծվել այս աշխարհում: Դրանցից միայն մի քանիսն են պետություններ, իսկ հիմնական մասն ազգեր են: Պետական համակարգի պոզիտիվիստական վերլուծությունը վատ ուղեցույց է: Նոր դերակատարներ պետք է ստեղծվեն:

Այնուամենայնիվ, այն ինչ առաջարկվել է, կարող է բոլորովին չաշխատել՝ կոնֆլիկտի ողջ ձևավորումն ընդգրկել չկարողա-

նալու պատճառով: Դրա համար ավելի շատ վարպետություն է անհրաժեշտ, իսկ դա կարելի է սովորել:

Սկզբունքորեն, այո: Բայց նայեք դանիական *Մորգենավիսեն-Յուլանդիոսթենը*: 2002 թ. հունվարի 19-ը. «Ոստիկանությունը զինվում է ԵՄ զագաթնաժողովների համար»: Դանիան նախագահում էր ԵՄ-ը տարվա երկրորդ կեսին՝ 2002 թ. հուլիսի 1-ից, այնպես որ մենք խոսում ենք տասնմեկ կամ տասներկու հանդիպումների մասին: Նրանք ակնկալում էին բռնի ցույցեր: Չորս հազար ոստիկաններ պետք է վերապատրաստվեին: Մեքենաներ, ռադիո և այլ սարքավորումներ պետք է գնվեին 40 միլիոն կրոնա արժողությամբ՝ «կախված ընկալվող սպառնալիքից»: Իրավաբանները, դատարանները և բանտերը պետք է պատրաստ լինեին: Ծախսերի ընդհանուր գումարը գնահատվում էր 125 միլիոն կրոնա:

Ինչո՞ւ այդքան շատ բռնություն Համաշխարհային բանկի, ԱՄՆ-ի, ԱՀԿ-ի, Մեծ ութնյակի և ԵՄ զագաթնաժողովներին, և ոչ թե ՄԱԿ-ի մեծ համաժողովներին: Որովհետև ամեն ինչ անցկացվում է փակ դռների ետևում՝ միայն միմյանց ունկնդրող վերնախավով:

Որո՞նք են կողմերի նպատակները: Կառավարական վերնախավերը ցանկանում են աշխատել լռության և հանգստի մեջ, որը լիովին օրինական է: Բայց մարդիկ, ում նրանք կառավարում են, ցանկանում են լսելի լինել և մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը: Հայտնի լինելով որպես ժողովրդավարություն՝ սա նույնպես օրինական է:

Ինչպե՞ս մենք կարող ենք լրացնել այս բացը: Սա հենց այն է, ինչ ՄԱԿ-ն արեց այդքան լավ սկսած 1972 թ. Ստոկհոլմի շրջակա միջավայրի վերաբերյալ համաժողովից՝ ունենալով այլընտրանքային ֆորում համաշխարհային քաղաքացիական հասարակության համար, որը տեղի էր ունենում կառավարական համաժողովին զուգահեռ՝ նույն օրակարգով: Երկու համաժողովների միջև պետք է լինի հաղորդակցություն, իսկ դա սովորաբար լրագրողների խնդիրն է: Բայց միշտ պետք է լինի ինչ-որ մեկը, ով կունենա

մուտք երկուսին էլ, ով կարող է կատարել միջնորդական գործառնությո՜ւն:

Ե՛վ մեկը, և՛ մյուսը կխնայեր 125 միլիոն կրոնա: Ավելացրեք դրան մահ հազարավոր ԴԿ-ների աշխատողներից Կոպենհագենի ստացած եկամուտը: Քաղաքը կարող էր տեղավորել նրանց տրամադրության տակ եղած վրաններն իր գերազանց այգիներում և որոշ անվտանգության աշխատողներ: Սա եղանակ է, որով հասուն մարդիկ կկարգավորեին սրա մման իրավիճակը: Բայց ինչ-որ տեղ Զամաշխարհային Բանկում և այլն կա մտավոր արգելք ՄԱԿ-ից սովորելու դեմ, որը նույնպես ունի տնտեսությունը և ապրուստն իր օրակարգում: ՄԱԿ-ը մեծ ներդրում է ունեցել ժողովրդավարության զարգացման մեջ իր բաց ֆորումներով: Բայց Զամաշխարհային Բանկը, ԱՄՅ-ի, ԱԴԿ-ի, Մեծ ութնյակը և ԵՄ դեռ ապրում են ֆեոդալիզմի փուլում:

Մի այլ դեպք՝ *Վաշինգտոն Փոսթ/Ջրփեն Թայմս*՝ 1999 թ. նոյեմբերի 1:

Բողոքական և կաթոլիկ քրիստոնեությունը երկար ժամանակ պայքարել են այն խնդրի դեմ, որը ծագեց, երբ Մարտին Լյութերը ներկայացրեց իր 95 թեզիսները 1517 թ. հոկտեմբերի 31-ին: Դրանք դեռ հզոր են և լավ ընթերցվող:

Առանցքային կետը Աստծո ողորմածությամբ փրկության տեսությունն էր: Պարզ ասած, կաթոլիկները պնդում էին, որ դեպի փրկություն ճանապարհն անցել է հավատի և բարի գործերի միջով, մինչդեռ բողոքականները (լութերականներ) հավատում էին միայն հավատի միջոցով փրկությանը, որը վերականգնվում է ամեն օր: Մենք այստեղ խոսում ենք երկնքում հավերժության մասին, այդ պատճառով մուտքի տոմսը կարևոր է: Ուսմունքը մշակվել էր մանրամասնորեն Աուգսբուրգում 1530 թ.: Երկու քրիստոնեությունները տեղից չէին շարժվում, մինչդեռ երրորդը՝ ուղղափառը շեշտեց Աստծո ողորմածությունը: Փոխադարձ ատելությունն իր արտահայտումը գտավ 1618-1648 թթ. 30-ամյա դաժան պատերազմում:

30 տարի բանակցություններից հետո, 482 տարի անց՝ 1999 թ. հոկտեմբերի 31-ին Աուգսբուրգում երկու քրիստոնեությունները համախմբվեցին.

Միասին մենք խոստովանում ենք. միայն ողորմածությամբ, հավատով Քրիստոսի փրկարար գործին և ոչ մեր ինչ-որ արժանիքների համար, մենք ընդունվում ենք Աստծո կողմից և ստանում սուրբ հոգին, որը համալրում է մեր սրտերը՝ պատրաստելով և կոչ անելով մեզ բարի գործեր կատարել:

Երկար և ոչ շատ ազդեցիկ նախադասություն, որը բուրումն է բանակցությունների միջոցով փոխզիջմամբ: Բացի այդ, միակողմանի մղումը հավատից ողորմածության միջոցով դեպի բարի գործեր, թերևս, վկայում է լութերական կողմնակալության մասին:

«ԹՐԱՆՍԵՆԴ» վերլուծությունը կնկատեր, որ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը՝ բացասական գերազանցումը, գերակշռում էր պետությունից եկեղեցու անջատման և եվրոպայում այլ կրոնների՝ իսլամի և բուդդայականության տարածման միջոցով: Լուսավորությունը նույնպես ոգեշնչվել էր 1618-1648 թթ. երկու քրիստոնեությունների դաժանությունից:

Գոյություն ունի՞ և՛ մեկը և՛ մյուսը: Չնարավոր է, եթե մենք նայենք *արտաքին* գործողությանը և *ներքին* հավատին վերևից՝ Աստծո աչքերով, որպես նույն անծի երկու կողմեր. հավատի վրա հիմնված գործերի, և գործերի միջոցով ամրապնդված հավատի միջոցով, մենք գտնում ենք փրկություն Աստծո ողորմածությամբ:

Ավելի պարզ, բայց, թերևս, ավելի համաչափ: Այնուամենայնիվ կա հաղթանակ: Նիլս Բորի «Լույսը ալի՞ք է, թե՞ մասնիկ»-ի նման: Պատասխան՝ և՛ մեկը և՛ մյուսը, որը երբեմն անվանում են «ալիքամասնիկ»:

Սակայն այս ձևակերպումներն այնքան էլ դարակազմիկ չեն, որ 482 տարի պահանջվեր դրանք գտնելու համար: Բացատրուի՞

յուններից մեկն, իհարկե, այն է, որ կոնֆլիկտն ուներ ավելի խորը արմատներ, քան աստվածաբանական ձևակերպումներ՝ ճանապարհի դեպի ներքև Ռեյնը/Յյուսիսային և Բալթիկ ծովերը Միջերկրական ծովի դեմ, ու Յյուսիսային Եվրոպան Հաբսբուրգների/Հռոմեական կաթոլիկ կայսրության դեմ տնտեսական և քաղաքական խորը կառուցվածքներում:

Աստվածաբանական կոնֆլիկտը Աստծո կամքի մեկնաբանման մեջ ճիշտ լինելու մասին էր: Կոնֆլիկտն անհետանում է և՛ մեկի և՛ մյուսի միջոցով, որը պաշտպանում է երկու տեսակետներն էլ, բայց դիտարկում դրանք որպես թերի ներըմբռնում: Բայց այս օրինակը հետաքրքիր է միայն այն դեպքում, եթե և՛ մեկը և՛ մյուսն ավելին է, քան մասերի գումարը: Աստվածաբանական և ֆիզիկային առնչվող օրինակները ծառայում են նրա համար, որ հիշեցնեն մեզ, որ մենք հեշտությամբ ենք դառնում համակված հիմնախնդրի մի կողմով, ինչպես «ներքինը» կամ «արտաքինը», և պետք է սովորենք նայել հիմնախնդրին վերևից: Եղեք մի փոքր աստված՝ մարդկանց և լույսի ստեղծողը, ում համար արտաքին և ներքին մարդու, ու լույսի ալիքային և մասնիկային էության միջև բաժանումը մանրամասներ են Մարդկանց և Լույսի ամբողջության մեջ:

Այսպիսով, սա Կիրակի օրվա մեդիտացիան էր այս գրքում ուսումնասիրված բոլոր 40 կոնֆլիկտների շուրջ: Ուշադրություն դարձրեք բովանդակության վրա և ստուգեք, թե ինչպես են և՛ մեկը և՛ մյուսը, իսկ երբեմն նաև ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը գրավում ամբողջությունը մանրամասներից դուրս, որը հրապուրել է կողմերի երևակայությունը:

2003 թ. ապրիլի 6-ը նշանավորեց Իրաքը նվաճելու և նրա նավթն ու վարչակարգը վերահսկելու ԱՄՆ/ՄԲ զանգվածային հարձակման սկիզբը: Քրդական ինքնավարությունը և Իսրայելը/Պաղեստինը նույնպես օրակարգում էին: «ԹՐԱՆՍԵՆԴ»-ը կողմ է Մերձավոր Արևելքի վերակազմավորմանը ՄԱԱՀԳ-ի՝ Մերձավոր արևելքի անվտանգության և Համագործակցության համաժողո-

վի: Դաշնությունն Իրաքի համար, քրդական ինքնավարությունն Թուրքիայի, Սիրիայի, Իրաքի և Իրանի որոշ մասերում՝ այս ինքնավարությունների համադաշնությամբ: Եվ Սիրիայի, Լիբանանի, Իսրայելի, Պաղեստինի, Հորդանանի, Եգիպտոսի Մերձավոր Արևելքի համայնքը կարող է լինել հնարավոր ելքերի թվում: Բայց դա պահանջում է ամբողջական մոտեցում, որը հաճախ հայտնաբերվում է համաշխարհային քաղաքացիական հասարակությունում և միայն հազվադեպ կառավարություններում: Եվ, վերջինը, բայց ոչ վերջին հերթին, միջազգային իրավունքը հարգող ԱՄՆ:

Վերջապես, «ԹՐԱՆՍԵՆԴ» մեթոդի ամփոփումը խաղաղ միջոցներով խաղաղության համար: Մեթոդը ստեղծվում է, այն պատրաստի արտադրանք չէ: Բայց ահավասիկ մի քանի հիմնական առանձնահատկություններ տաս տարվա փորձից:

Բռնությունն ունի նորմալ պատմություն. անցում չփոխակերպված կոնֆլիկտի և բևեռացման միջով: Բռնությունից առաջ սովորաբար առկա է բևեռացում՝ հնարավոր հակառակորդների ապահովմանիզացմամբ: Եթե բացի այդ առկա է սպառազինություն՝ ֆիզիկական և/կամ վերբալ, ապա մենք կարող ենք խոսել Սառը պատերազմի մասին, և կիրառել այդ եզրույթը միկրո և մեզո մակարդակներում: Դրանից առաջ ինչ-որ տեղ սովորաբար առկա է չլուծված, չփոխակերպված կոնֆլիկտ՝ թարախակալում:

Բռնությունն ունի նորմալ ապագա. ավելի շատ բռնություն: «Բռնությունը ծնում է բռնություն»: Այլ կերպ ասած, խնդիրը կայանում է նրանում, թե ինչպես վերջ դնել օրինաչափությանը: Բռնության հետևանքով զոհի մոտ ոչ միայն վրիժառության և փոխհատուցման ցանկություն է՝ վերադառնալով կոնֆլիկտին բոլորովին այլ ելքով, հաղթողի մոտ առկա է նաև ավելի շատ հաղթանակներ տանելու ցանկություն. այն այնքան քաղցր է, որ կախվածությունը սարերի ետևում չէ:

Սրանից հեշտությամբ բխում են «ԹՐԱՆՍԵՆԴ»-ի հիմնական ծրագրերը.

- *Կոնֆլիկտի փոխակերպում*՝ կոնֆլիկտները թուլացնելու համար:
- *Խաղաղաշինություն*՝ դիրքորոշման մեջ և վարքագծում բեռնացման ու ապահունիզացման դեմ:
- *Խաղաղապահություն*՝ մեղմ մեթոդներով բռնությունը մարելու համար:
- *Չաշտություն*՝ բուժում և փակում բռնության արատավոր շրջանը քանդելու համար:

Բացի այդ, գոյություն ունեն աջակցող ծրագրեր, ինչպիսիք են խաղաղության լրագրությունը և խաղաղության մանկավարժությունը՝ բնակչությանը երկխոսության միջոցով խաղաղության առաջարկներին ու հարակից հիմնախնդիրներին մոտեք գործելու հնարավորություն տալու համար: Եվ այս ամենը տեղի է ունենում հակասությունների, վարքագծի և դիրքորոշումների լարված դաշտում՝ խորը մշակույթով, խորը վարքագծով և խորը կառուցվածքով՝ հոգու, մարմնի ու հասարակության ավելի խորը շերտերում:

Մենք կարծում ենք, որ սա հուզիչ է և յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել: Հայացք գցեք www.transcend.org կայքին և սկսեք ինքներդ: Օգնե՛ք ձեզ, գողացե՛ք այնքան շատ, ինչքան ցանկանում եք:

Մեկ կարճ, բայց կարևոր եզրափակիչ դիտողություն: Ոչ բոլոր անհամատեղելիությունները և հակասությունները պետք է գերազանցվեն, անհետանան և լուծվեն: Մաթեմատիկան համակված թշնամական է հակասությունների նկատմամբ: Երկու անհամատեղելի թեզիսներ ազդանշան են, որ ինչ-որ բան սխալ է գնացել, բայց ինչպես Մյոբիուսի ժապավենի դեպքում, նաև գերազանցման մարտահրավեր է՝ նոր մաթեմատիկա հայտնաբերելու և հնարելու միջոցով:

Բայց ինչ կասեք երրորդ հնարավորության մասին. *այս հասության հետ դուք կարող եք ապրել, շարունակել աշխատել*

դեպի գերազանցում, բայց չդառնալ մակերեսային պատասխանների զոհ:

Այսպիսով, ինչպե՞ս կարող է ամենագո, ամենագետ, ամենագոր և սիրող Աստված թույլ տալ այդքան շատ չարիք աշխարհում: Հնարավոր պատասխաններից մեկը կարող էր լինել Աստծո այս չորս հատկանիշներից մեկի կամ մի քանիսի ժխտումը, մեկ ուրիշը՝ այս հատկանիշների հետ համատեղելի ավելի խորը իմաստ փնտրելը: Հնարավոր է, որ Աստված ցանկանում է պատժել մեզ կամ ինչ-որ բան սովորեցնել: Իսկ հնարավոր է, որ այս ամենը սատանայի գործը լինի:

Բուդդիստ վանականի կողմից խնդրի ձևակերպման եղանակը հետևյալն է.

Դուք ճիշտ եք, որ գոյություն ունի հակասություն բուդդայականության երկու դրույթների միջև. «Դուք չունեք հավերժական, մշտական հոգի», և «Դուք կվերածնվեք մահից հետո»: Բայց դուք կարող եք ապրել այդ հակասության հետ: Շարունակեք փնտրել գերազանցում, բայց մի դարձեք որևէ հեշտ պատասխանի զոհը: Դուք կարող եք ժխտել առաջին դրույթը, այդ դեպքում դուք հարմարավետ կզգաք քրիստոնեական/մուսուլմանական վերածննդի հետ՝ դրախտում կամ դժոխքում: Դուք կարող եք ժխտել երկրորդ դրույթը, և արդյունքում դուք աթեիստ եք: Գտեք ինչ-որ ավելի լավ բան, վերադարձեք կրկին 20 տարի անց...

Ես վերածնվում եմ իմ երեխաներում, ես վերածնվում եմ իմ աշխատանքի արգասիքներում, ես վերածնվում եմ հիշողության մեջ, որը ես թողել եմ ետևում, ես վերածնվում եմ ոգեշնչման մեջ, որը ես փորձում եմ տալ այլ մարդկանց: Մենք կարող ենք կառուցել մեր կյանքը բոլոր չորսի շուրջը: Բայց գուցե ուշադրությունը պետք է կենտրոնացնել այն հանգամանքի վրա, որ վերածնունդը կարող է լինել ավելի բարձր մակարդակում կամ ավելի ցածր: Մեր, որպես մարդկանց խնդիրն է վերածնվել ավելի բարձր մա-

կարդակի վրա: Լավ կոնֆլիկտաբանական աշխատանքն ուղղված է հենց դրան:

Եվ դա մեզ բերում է ճանապարհի ավարտին: Յոթերորդ օրը նաև հանգստանալու լավ օր է նրանց համար, ովքեր այսքան հեռու են հասել: Վաղը դուք կսկսեք ավելի գիտակից կերպով խորհել այն մասին, թե ինչ կարելի է անել կոնֆլիկտների հետ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *There Are Alternatives! Four Roads to Peace and Security*. Nottingham: Spokesman Press, 1984 (available in seven languages).
2. *Gandhi's Politiske Etikk*, (With Arne Næss) Oslo: Tanum, 1955, Pax, 1986.
3. *Methodology and Development. Essays in Methodology*. Volume III. Copenhagen: Ejlers, 1988, chapter 2 on dialogue theory.
4. *Peace by Peaceful Means*. London, New York, New Delhi: Sage, 1996.
5. *Conflict Transformation by Peaceful Means*, Geneva: UN, 1998.
6. *Conflict Transformation by Peaceful Means*, Geneva: UN, 2000.
7. *Searching for Peace: The Road to TRANSCEND*, (With Kai-Frithjof Brand-Jacobsen) London: Pluto Press, second edition, 2002.
8. Edward de Bono, *The Use of Lateral Thinking*, London: Penguin, 1971.
9. Edward de Bono, *Conflicts, A Better Way to Solve Them*, London: Penguin, 1985 (quote from p. 89).
10. Julius Fast, *Body Language*, New York: PocketBooks, 1971.
11. Roger Fisher and William Ury, *Getting to YES: Negotiating Agreement without Giving in*, New York: Penguin, 1991 (quote from pp. 44–8).
12. George Fuller, *The Negotiator's Handbook*, Paramus NJ: Prentice Hall, 1991 (quote from pp. 67–8).
13. Arne Næss, *Livsfilosofi: Et personlig bidrag om følelser og fornuft*, Oslo: Universitetsforlaget, 1998.
14. Arne Næss, *Gandhi and Group Conflict*, Oslo: Universitetsforlaget, 1974.
15. Marshall B. Rosenberg, *Nonviolent Communication: A Language of Compassion*, Del Mar, CA: Puddle Dancer Press, 1999 (quote from pp. 11–12).
16. Raymond Saner, *The Expert Negotiator*, Haag: Kluwer Law International, 1997 (quote from p. 145).

ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ¹

ԱԱԲ	Ազգային ազատագրական բանակ	ELN (NLA)	Ejército de Liberación Nacional (National Liberation Army)
ԱԲՄՊԿՀ	Աշխարհի բժիշկները միջուկային պատերազմի կանխման համար	IPPNW	International Physicians for the Prevention of Nuclear War
ԱԼ	Ազգերի լիգա	LN	League of Nations
ԱԿԲ	Ախտորոշում, կանխատեսում և բուժում	DPT	Diagnosis, Prognosis, Therapy
ԱՀԽ	Ազատագրման հակահաբեկչական խմբեր	GAL (ALG)	Grupos Antiterroristas de Liberación (Antiterrorist Liberation Groups)
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	WHO	World Health Organization
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն	WTO	World Trade Organization
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ	IMF	International Monetary Fund

¹ Կազմված է թարգմանիչների կողմից

ԱՄՆՃԱԿ	ԱՄՆ-Ճապոնիա անվտանգության կազմակերպություն	AMPO	USA-Japan Security Treaty
ԱՊԿ	Ամերիկյան պե- տությունների կազ- մակերպություն	OAS	Organization of American States
ԲՀ	Բոսնիա և Հերցոգո- վինա	BiH	Bosnia and Herzegovina
ԲՀԱ	Բասկերի հայրենիք և ազատություն	ETA (BHF)	Euskadi Ta Askatasuna (Basque Homeland and Freedom)
ԴԿՀ	Դիրքորոշում, վար- քագիծ և հակա- սություն	ABC	Attitude, Behaviour and Contradiction
ԵԱՀԿ	Եվրոպայում անվ- տանգության և հա- մագործակցության կազմակերպություն	OSCE	Organization for Security and Cooperation in Europe
ԵԽ	Եվրոպայի խոր- հուրդ	CoE	Council of Europe
ԵՀ	Եվրոպական հա- մայնք	EC	European Community
ԵՄ	Եվրոպական միութ- յուն	EU	European Union
ԸՓՏ	Ընտրյալ ժողո- վուրդ, Փառավոր անցյալ և/կամ ա- պագա, Տրավմա	CGT	Chosen People, Glorious past and/or future, Trauma
ԹԽՀ	«ԹՐԱՆՍԵՆԴ» խա- ղաղության համալ- սարան	TPU	TRANSCEND Peace University

ԻՀԲ	Իռլանդական հան- րապետական բա- նակ	IRA	Irish Republican Army
ԻՀԿ	Իսլամական համա- ժողովի կազմակեր- պություն	OIC	Organisation of the Islamic Conference
ԿՀՁՈԻ	Կոլումբիայի հեղա- փոխական զինված ուժեր	FARC	Revolutionary Armed Forces of Colombia
ԿՄԱԿԺԿԱ	Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման առաքելություն	UNMIK	United Nations Interim Administration in Kosovo
ՀԱԱԱ	Հարավարևելյան ասիական ազգերի ասոցիացիա	ASEAN	Association of Southeast Asian Nations
ՀԱԳԱ	Համախառն ազգա- յին գաղափարների ավազան	GNIP	Gross National Idea Pool
ՀԵԱՀՀ	Հարավարևելյան Եվրոպայում անվ- տանգության և հա- մագործակցության համաժողով	CSCSEE	Conference on Security and Cooperation in Southeast Europe
ՀԽ	Հյուսիսային խոր- հուրդը		Nordic Council
ՀԿ	Հասարակական կազմակերպություն	NGO	Non- Governmental Organisation
ՄԱԱՀՀ	Մերձավոր արևելքի անվտանգության և համագործակցու-	CSCME	Conference for Security and Cooperation

	յան համաժողով		in the Middle East
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն	UN	United Nations
ՄԱԿ ԱԽ	ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ	UNSC	United Nations Security Council
ՄԱԿԺԿ	Միացյալ ազգերի կազմակերպության ժողովուրդների վեհաժողով	UNPA	United Nations People's Assembly
ՄԱԿ ՊՈԼ	ՄԱԿ-ի պաշտպանական ուժեր	UNPROF OR	United Nations Protection Force
Մեծ ութնյակ	Մեծ ութնյակի/ ութնյակի խումբ	G8	Great Eight/Group of Eight
ՄՍՖ (ԲԱՍ)	Բժիշկներ առանց սահմանների	MSF	Médecins Sans Frontières (Doctors Without Borders)
ՆԱՏՕ (ՅՊԿ)	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն	NATO	North Atlantic Treaty Organization
ՊԱԿ	Պաղեստինի ազատագրման կազմակերպություն	PLO	Palestine Liberation Organization
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն	OCDE	Organisation for Economic Co-operation and Development
ՎԱՄԿ	Վերազգային անկախ մտածողության կազմակերպություն	SITO	Supranational Independent Thinking

ՎԴԿ	պուքյուն Վարշավյան դաշին- քի կազմակերպուք- յուն	WTO	Organisation Warsaw Treaty Organization
ՕՊՈՒ	Օլսթերի պաշտպա- նական ուժեր	UDF	Ulster Defence Force

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս գործնական ձեռնարկում ցույց է տրվում, թե ինչպես հաղթահարել կոնֆլիկտները բոլոր մակարդակներում՝ անձնական կենցաղային կոնֆլիկտներից մինչև ռասայի, դասակարգի ու զենդերի հիմնախնդիրների վրա հիմնված կոնֆլիկտները, և, վերջապես, ազգային պետությունների կամ տնտեսական ու կրոնական գծերի երկայնքով միջազգային սահմանագծերի միջև խոշոր միջազգային կոնֆլիկտները:

Յոհան Գալթունգը խաղաղության հիմնախնդիրների ուսումնասիրությունների գծով աշխարհի ամենափորձառու պրոֆեսորն է և խաղաղության ուսումնասիրությունների գիտակարգի հիմնադիրը: Այս գիրքը դուրս է բերում անսահման բազմազանության գործածություններ, որոնց համար կոնֆլիկտների լուծման տեսությունը կարող է կիրառվել: Բացահայտելով հասարակության բոլոր մակարդակներում կոնֆլիկտների փոխկապվածությունը՝ Գալթունգը պնդում է, որ լուծումների հավասար բազմազանություն է մատչելի մեզ, եթե մենք ցանկանում ենք ուսումնասիրել դրանք:

Գիրքը կհետաքրքրի բոլոր նրանց, ովքեր գործ ունեն կոնֆլիկտների հետ ամեն օր, ինչպես ուսուցիչները, սոցիալական աշխատողները, ծնողները, զույգերը և խաղաղության ուսումնասիրությունների ուսանողները: Առաջարկելով օգտակար հուշումներ և գործնական խորհուրդներ 40-ից ավելի պատկերավոր օրինակներով՝ Գալթունգը ցույց է տալիս, թե ինչպես մենք կարող ենք գերազանցել դժվարությունները, որոնք հանգեցնում են կոնֆլիկտների բոլոր մակարդակներում:

Յոհան Գալթունգը հիմնել է խաղաղության հիմնախնդիրների հետազոտությունների միջազգային ինստիտուտն Օսլոյում

1959 թ. և խաղաղության մասին բազմաթիվ էսսեների ու գիտական աշխատությունների հեղինակ է: Նրան շնորհվել է ճիշտ ապրելակերպի պարգև (1987 թ.) և Նորվեգական մարդասիրական մրցանակ (1988 թ.) ու պատվավոր դոկտորի և պրոֆեսորի տասնյակ կոչումներ: Ներկայումս մա «ԹՐԱՆՍԵՆԴ». խաղաղության և զարգացման ցանցի տնօրենն է (www.transcend.com):

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յոհան Գալթունգ

ՀԱՂԹԱՅԱՐԵԼ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊԵԼ.

*Կոնֆլիկտաբանական աշխատանքի
մեթոդություն*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 14.06.2017:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 19.625:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am